Վերջին տարիներին Թուրքիայում հրատարակվել են մի շարք նոր արխիվային նյութեր պարունակող արժեքավոր աշխատություններ[1], սակայն չի կարելի համաձայնել, որ Teskilata-i Mahsusa (Հատուկ կազմակերպության) գործունեությունը հանգամանալից ուսումնասիրված է: Այդ իրականությունը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Նախևառաջ հարկ է նշել, որ Առաջին համաշխարհային պատերազմում կրած պարտությունից հետո, երբ իթթիհատական կառավարության և «Միություն և առաջադիմություն» կուսակցության առաջնորդները ստիպված էին լքել երկիրը, ռազմական նախարար Էնվեր փաշայի հրամանով «Հատուկ կազմակերպության» փաստաթղթերի մեծ մասը ոչնչացվեց: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին նման քայլի արդարացված լինելը, քանի որ 1918թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին օսմանյան խորհրդարանի 5-րդ հանձնաժողովում և 1919-1920թթ. երիտթուրքերի դատավարության ժամանակ, որտեղ հիմնական մեղադրանքներից մեկն առնչվում էր օսմանյան օրենքների շրջանցմամբ հայերի տեղահանության և ոչնչացման համար նախատեսված «Հատուկ կազմակերպության»–ը, հանձնաժողովին և դատարանին չհաջողվեց բավարար փաստեր հավաքել, իսկ նշված կազմակերպության հարցաքննվող անդամները, կապված լինելով գաղտնապահության երդմամբ, ամեն կերպ խուսափեցին կազմակերպության գործունեության մասին տեղեկություններ հաղորդելուց: Ինչպես նկատում է թուրք պատմաբան Օսման Սելիմ Քոջահանօղլուն. «Օրինակ՝ հարցաքննության և դատավարության ժամանակ «Հատուկ կազմակերպության» հարցում նույնիսկ շատ տեղեկացվածները որևէ տեղեկություն չհայտնեցին ո՛չ այդ գաղտնի կազմակերպության կառուցվածքի, ո՛չ էլ անդամների մասին: Հարկ եղած դեպքում այդ հարցում խիզախ ու անվախ գործեցին: Կարծում ենք՝ այդ գործելաոճն իթթիհատականների կարևոր առանձնահատկությունն է և մեզ հետևյալ եզրակացության է հանգեցնում. կարևոր ժամանակահատվածում «Միություն և առաջադիմություն» կուսակցության տարածման գործում գաղտնիությունը կարևոր ազդեցություն է ունեցել»[2]:

---

[1] Տե՛ս Atilla Çeliktepe, *Teşkilat-i Mahsusa'nin Siyasi Misyonu*, İstanbul: IQ Kültürsanat Yayincilik, 2002; Emin Demirel, *Teşkilat-i Mahsusa'dan Günümüze Gizli Servisler*, İstanbul: IQ Kültürsanat Yayincilik, 2002; Ergün Hiçyilmaz, *Teşkilat-i Mahsusa'dan MİT'e*, İstanbul: Varlik Yayinlari, 1990; Prof. Dr. Mustafa Balcioğlu, *Teşkilat-i Mahsusa'dan Cumhuriyet'e*, Ankara: Nobel Yayin Dağitim, 2001; Prof. Dr. Mustafa Balcioğlu, *Teşkilat-i Mahsusa Yahut Umur-u Şarkiye Dairesi*, Ankara: Dinamik Akademi, 2011; Ekrem Hayri Peker, *Teşkilat-i Mahsusa'dan Kuşçubaşi Eşref Bey*, İstanbul: Kurtaş Yayinevi, 2012; Berkay Sadi Türkol, *Teşkilat-i Mahsusa'nin Kurduğu Kahraman Grubu Emirber Fedaileri*, İstanbul: Kariyer Yayinlari, 2012:

[2] Osman Selim Kocahanoğlu, *İttihat-Terakki'nin Sorgulanmasi ve Yargilanmasi (1918-1919),* İstanbul, Temel Yayinlari, 1998, s. 18.

«Հատուկ կազմակերպության» պատմությունն ու գործունեությունը բավարար ուսումնասիրված չլինելու պատճառներից է այն, որ այդ կազմակերպությունը Թուրքիայի Ազգային հետախուզական ծառայության (Milli Istihbarat Teskilati MIT) հիմքն է, և կառույցը հիմնականում պահպանել է «Հատուկ կազմակերպության» գործելաոճն ու պահվածքը, իսկ այդ կազմակերպության «ֆիդայիները» ներկա թուրք հետախույզների համար օրինակ են ծառայում: Շատ գիտնականներ «Հատուկ կազմակերպության» հետ են կապում Թուրքիայում գաղտնի պետության ձևավորման սկիզբը[3]:

Եվս մեկ կարևոր հանգամանք կապված է նրա հետ, որ Թուրքիայի քաղաքական մտածելակերպում «Հատուկ կազմակերպության» հետ են կապված «բանակը մեզ սատարում է» (arkamizda ordu var) քաղաքական մտածելակերպն ու գործելաոճը: Այդ մտածելակերպը զգալիորեն նպաստել է հանրապետական Թուրքիայում ռազմական հեղաշրջումների միջոցով իշխանությունը զավթելուն:

Գիտական ուսումնասիրության համար դժվարություններ է հարուցում պատմական հետազոտության օբյեկտիվության հարցը, քանի որ «Հատուկ կազմակերպության» վերաբերյալ հիմնական սկզբնաղբյուրներ են նշված կազմակերպության անդամների հուշերը, ինչպես, օրինակ՝ Հուսամեթթին Էրդուրքի[4], Գալիբ Վարդարի[5], Արիֆ Ջեմիլի[6], կամ Օսմանյան կայսրության անկման շրջանի պետական գործիչների հուշերում «Թեշքիլաթ-ը Մահսուսա»–ին վերաբերող հատվածները[7]: Այսպես, ամերիկացի պատմաբան Ֆիլիփ Ստոդարդի «Օսմանյան կառավարությունը և արաբները 1911-1918. «Հատուկ կազմակերպության» ուսումնասիրություն» դոկտորական ատենախոսության համար հիմնական աղբյուրը այդ կազմակերպության ղեկավարներից մեկի՝ Քուշչուբաշը Էշրեֆի պատմածներն են[8]:

Թվարկված աշխատություններից «Հատուկ կազմակերպության» Կովկասյան ռազմաճակատում գործած Արևելյան վիլայեթների բաժանմունքի գործունեության լուսաբանման տեսակետից կարևոր նշանակություն ունի այդ բաժանմունքի ղեկավար անձերից մեկի՝ Արիֆ Ջեմիլի հուշերը, որոնք «Թեշքիլաթ-ը Մահսուսան» համաշխարհային պատերազմում» վերնագրով հրատարակվել են 1934 թ. «Վաքիթ» թերթում[9]:

---

3 Տե՛ս Suat Parlar, *Osmanli'dan Günümüze Gizli Devlet,* İstanbul, Bibliotek Yayinlari, 1997, s. 50; Bora İyiat, *Hunlardan Günümüze Türk derin Devlet,* Ankara Kripto Kitaplar, 2008:

4 Տե՛ս Hüsamettin Ertürk, *İki Devrin Perder Arkasi*, İstanbul, Sebil Yayinevi, 1996:

5 Տե՛ս *İttihat ve Terakki İçinde Dönenler*, Anlatan: Galib Vardar, Yazan: Sami Nafiz Tansu, İstanbul, Yeni Zamanlar Yayinlari, 2003:

6 Տե՛ս Arif Cemil, *I Dünya Savaşinda Teşkilat-i Mahsusa*, İstanbul, Arba Yayinlari, 1997; Arif Cemil (Denker), *İttihatçi Şeflerin Gürbet Maceralari*, İstanbul, Arba Yayinlari, 1993:

7 Տե՛ս Cemal Paşa (Bahriye Naziri ve 4 Ordu Kumandani), *Hatiralar,* İstanbul, Türkiye İş Bankasi Kültür Yayinlari, 2001, էջ 69-72:

8 Տե՛ս Dr. Philip Hendrick Stoddard, *Teşkilat-i Mahsusa. Osmanli Devleti ve Araplar 1911-1918. Teşkilat-i Mahsusa Üzerine Bir Ön Çalişma*, Çeviren: Tansel Demirel, İstanbul, Arma Yayinlari, 2003:

9 Տե՛ս Suat Parlar, *Osmanli'dan Günümüze Gizli Devlet,* İstanbul, Bibliotek Yayinlari, 1997, էջ 67:

Արևելյան վիլայեթների բաժանմունքը «Հատուկ կազմակերպության» չորս բաժանմունքներից մեկն էր, որն աչքի էր ընկնում մի շարք առանձնահատկություններով: Այդ առանձնահատկությունները պայմանավորված էին իր առջև դրված խնդիրների բնույթով: Ընդհանուր առմամբ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ «Հատուկ կազմակերպության» Արևելյան վիլայեթների բաժանմունքը գործունեություն էր ծավալում հետևյալ ուղղություններով՝

1. Չեթեների (հրոսակախմբերի) ստեղծում, որոնք կանոնավոր բանակի հետ համագործակցությամբ պետք է կռվեին ռուսական զորքերի դեմ:
2. Ռուսական կովկասյան բանակի թիկունքում ապստամբության կազմակերպում ու ղեկավարում:
3. Կովկասում լրտեսական ցանցի ստեղծում:
4. Հայ բնակչության տեղահանում ու ոչնչացում:

Հաշվի առնելով խնդիրների կարևորությունն ու առանձնահատկությունները՝ բաժանմունքի ղեկավար նշանակվել էր Հայոց ցեղասպանության հիմնական անմիջական կազմակերպիչներից մեկը՝ Իթթիհատի Կենտրոնական կոմիտեի անդամ դոկտոր Բեհաէդդին Շաքիրը: Ի տարբերություն «Հատուկ կազմակերպության» մյուս, օրինակ՝ աֆրիկյան կամ Ռումելիի (եվրոպական) բաժանմունքների, որոնք հիմնականում իրականացնում էին հետախուզական և ռազմական բնույթի գործողություններ, ղեկավարվում էին կադրային սպաների կողմից և ենթարկվում ռազմական նախարարությանը, Արևելյան վիլայեթների բաժանմունքն անմիջականորեն ենթարկվում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտրոնական կոմիտեին, և պատմության մեջ նրա անունն անքակտելիորեն կապված է հայերի տեղահանության և ոչնչացման գործընթացի կազմակերպման և իրականացման հետ: Այդ իրականության վերաբերյալ թուրք պատմաբան Սուաթ Փարլարը նշում է. «Կազմակերպության բնույթը չէին կարող որոշել խիզախ սպաներից կազմված և ռազմաճակատում կռվող «Հատուկ կազմակերպության» ստորաբաժանումները: Այդ կազմակերպության բնույթը որոշեցին ներքին ճակատում ծառայող և հայերի ցեղասպանությունը կազմակերպած այդ մարդասպանների ոհմակները»[10]:

Արևելյան վիլայեթների բաժանմունքի ղեկավար Բեհաէդդին Շաքիրի՝ Իթթիհատի ԿԿ-ի ազդեցիկ անդամներից մեկը լինելու հանգամանքը կարևոր է այն տեսակետից, որ հայկական վիլայեթների Իթթիհատի պատասխանատու քարտուղարները ենթարկվում էին նրան, և նա փաստացի իրականացնում էր պետական և կուսակցական ապարատի միավորումն ու համակարգումը: Մի քանի պատասխանատու քարտուղար ուղարկվեցին նաև Կովկաս, Իրան, Աֆղանստան գաղտնի գործունեություն ծավալելու և լրտեսական ցանց ստեղծելու հանձնարարությամբ[11]:

---

[10] Arif Cemil, *I Dünya Savaşinda Teşkilat-i Mahsusa*, İstanbul, Arba Yayinlari, 1997, s. 13-14.

[11] Տե՛ս Tahsin Üzer, *Eşkiyalik Tarihi ve Son Osmanli Yönetimi*, Ankara, Türk Tarih Kurumu Basimevi, 1999, էջ 336-338: Տե՛ս նաև Arif Cemil, *նշվ. աշխ.*, էջ 73:

«Հատուկ կազմակերպության» Արևելյան վիլայեթների կազմակերպման տարեթիվ պաշտոնապես համարվում է 1914թ. օգոստոս ամիսը: Բեհաէդդին Շաքիրի առաջնային նպատակն էր, որ նահանգապետերի (վալի) պաշտոնում նշանակվեն վստահված անձինք, որոնք պետք է կազմակերպեին հայ բնակչության տեղահանությունը: Այսպես, նրա առաջարկությամբ Տրապիզոնի նահանգապետ նշանակվեց նախկինում Ռիզեի մյութեսարիֆ[12] Ջեմալ Ազմին, Էրզրումի վալի՝ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի մտերիմ ընկերներից մեկը՝ Թահսինը[13]:

Ռուսական բանակի թիկունքում ապստամբության նախապատրաստման համար Արևելյան վիլայեթների բաժանմունքը կապեր հաստատեց հյուսիսկովկասցիների, կովկասյան թաթարների և վրացիների հետ: Հաշվի առնելով, որ հյուսիսկովկասցիների և կովկասյան թաթարների (ադրբեջանց թյուրքերի) համակրանքը թուրքերի կողմն էր, հատուկ ուշադրություն դարձվեց վրացիների հետ կապեր հաստատելու գործին: Բանակցությունների արդյունքում ռուսական կայսրության դեմ համատեղ պայքար ծավալելու վերաբերյալ համաձայնություն ձեռք բերվեց, որից հետո Տրապիզոնի շրջանում վրացիներից սկսեցին զինված հրոսակախմբեր կազմավորել: Ուշագրավ է Ռիզեի շրջանի «Հատուկ կազմակերպության» ղեկավար Ռըզա բեյի՝ 1914թ. օգոստոսի 23-ին Բեհաէդդին Շաքիրին գրված նամակը, որտեղ Ռըզան նշում է. «…քրիստոնյա վրացիները մեր դաշնակիցներն են: Աշխատում ենք նրանցից կազմակերպություն ստեղծել: Ամեն ինչ լավ է գնում»[14]:

Հետագայում կովկասյան ժողովուրդների հետ կապերն իրականացվում էին «Հատուկ կազմակերպության» կողմից ստեղծված «Կովկասյան միասնության կազմակերպության» (Kafkas Ittihat Cemiyeti) միջոցով[15]:

Էրզրումում Բեհաէդդին Շաքիրը և Իթթիհատի ականավոր գործիչներից Օմեր Նաջին հանդիպումներ ունեցան նաև Հ.Յ. Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչների հետ: Հանդիպումներն արտաքուստ նվիրված էին «ռուսների դեմ համատեղ պայքար ծավալելու» իթթիհատականների առաջարկի քննարկմանը, սակայն դրանց կազմակերպման տակ թաքնված իրական նպատակը հայերի «դավաճանության» մեջ համոզվելն էր: Այսպես, 1914թ. սեպտեմբերին Թալեաթին ուղղված հեռագրում Բ. Շաքիրը գրում է, որ Ռոստոմի հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ պարզել է, որ «…ռուսները նրանց խոստացել են տալ Երևանը, Նախիջևանը, Ադրբեջանը, Վանը, Դիարբեքիրն ու Ուրֆան և ռուս նահանգապետի գլխավորությամբ հայկական պետական միավորում (prenslik) ստեղծել»[16]: Նույն հեռագրում Շաքիրը Թալեաթից հրահանգ էր պահանջում ժանդարմերիայում ծառայող բոլոր հայերին հեռացնելու վերաբերյալ[17]:

---

[12] Հայտնի էր «sopali mutesarif»՝ «փայտով (ծեծող) մութեսարիֆ» անվամբ:

[13] Տե՛ս Arif Cemil, *նշվ. աշխ.*, էջ 42:

[14] Prof. Dr. Mustafa Balcioğlu, *Teşkilat-i Mahsusa Yahut Umur-u Şarkiye Dairesi*, Ankara, Dinamik Akademi, 2011, s. 156.

[15] Տե՛ս Arif Cemil, *նշվ. աշխ.*, էջ 48-49:

[16] Նույն տեղում:

[17] Նույն տեղում, էջ 49:

Կովկասյան ժողովուրդներին տրվող խոստումներն աճում էին համապատասխան նրանց օգնության անհրաժեշտության կարիքի գիտակցման չափի: Այսպես, Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերից կրած պարտություններից հետո, «Հատուկ կազմակերպությունը» կովկասյան ժողովուրդներին խոստանում էր ինքնավարություն կամ Ռուսաստանի և Թուրքիայի միջև ընկած բուֆերային անկախ ազգային պետությունների ստեղծում: Հետագայում իթթիհատականներն այդ խոստումները փորձեցին ներկայացնել որպես Օսմանյան կայսրության ծավալապաշտական նվաճողական ծրագրերի բացակայության փաստ: Այսպես, 1920թ. սեպտեմբերին Բաքվում կայացած Արևելյան ժողովուրդների առաջին համագումարում ունեցած իր ելույթում Բ. Շաքիրը նշում էր. «Ընկերներ, ես կարող եմ ապացուցել դա այն փաստով, որ երբ դեռ իմպերիալիստական պատերազմը շարունակվում էր, և գերմանական դաշինքն իրեն հաղթող էր զգում, թուրք ժողովուրդը և թուրքական կառավարությունը ցանկանում էին ստեղծել ադրբեջանական, հայկական և վրացական բուֆերային պետություններ: Եթե ենթադրենք, որ Թուրքիան զավթողական քաղաքականություն էր վարում, ապա ինչպես բացատրենք, որ թուրք ժողովուրդն ու թուրքական կառավարությունը քաղաքական գիծ էին տանում, որի էությունն այն էր, որ նա զուտ ցանկանում էր պաշտպանվել՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստեղծելով բուֆերային պետություններ»[18]:

«Հատուկ կազմակերպության» օգնությամբ պատերազմի առաջին ամիսներին հաջողվեց ռուսական զորքերի թիկունքում՝ Բաթումում, ապստամբություն կազմակերպել, որը, սակայն, ճնշվեց ռուսական զորքերի կողմից: «Հատուկ կազմակերպության» հրոսակախմբերին, այդ թվում՝ նաև բանտերից ազատված հանցագործներից կազմված չեթեներին, պատերազմի առաջին ամիսներին հաջողվեց մի քանի պարտություն մատնելով ռուսական զորախմբերին, գրավել Բարչքա և Արդվին քաղաքները, որտեղ նրանք կազմակերպեցին հայ բնակչության կոտորած: Այսպես, Արդվինում հայ բնակչության ոչնչացման կազմակերպիչն էր հետագայում Գրիգոր Զոհրապի և Վարդգես Սերենգուլյանի դահիճ Հալիլը: Ինչպես վկայում է 1919թ. այդ շրջանն այցելած թուրք պատմաբան և գրող Ահմեթ Ռոֆիք Ալթընայը, Հալիլն այնպիսի դաժանությամբ էր գործում, որ դեպքերից երեք տարի անց էլ «խեղճ հայ կանայք, թուրքական համազգեստ տեսնելով, սարսափահար փախչում էին»[19]:

Հարկ է նշել, որ «Հատուկ կազմակերպության» հրոսակախմբերն աչքի ընկան նաև մահմեդական բնակչության կողոպուտով ու թալանով: Մահմեդական բնակչության բողոքներից հետո Արևելյան վիլայեթների բաժանմունքի ղեկավարությունը ստիպված էր մի շարք անդամների, ինչպես, օրինակ՝ 1918թ. Կարսի Շուրայի ղեկավար Զահանգիրզադեին, ուղարկել Ստամբուլ: Այսպես, 1915թ. հունվարի 19/20 հեռագրով Բ. Շաքիրը տեղեկացնում է Թալեաթին. «Նախկինում Արդվինում չեթեի ղեկավար և պատերազմի ժամանակ իր վախկոտությամբ աչքի ընկած Գալատալը

---

[18] *Первый съезд народов Востока*, Баку, 1920, с. 78.

[19] Ahmet Refik Altinay, İki Komite, İki Kital, İstanbul, 1992, s. 42-43.

Հալիլ բեյն Արդվինի բնակչությունից մեծ քանակությամբ փող է հափշտակել: Նշված անձը փոստով իր հոր՝ Դենգելիզադե Ալի աղայի անունով կանանց վզնեռից պոկած ընդհանուր առմամբ 65 000 ղուրուշ արժողությամբ ոսկի է ուղարկել, ինչին ես ականատես եմ եղել: Խնդրում եմ Ձեր կարգադրությունն այդ կապոցը փոստից առգրավելու որպես հանցագործության ապացույց»[20]:

«Իր վախկոտությամբ աչքի ընկած» բնութագրումը վերաբերում է նաև «Հատուկ կազմակերպության» մի շարք հրոսակապետերի, որոնք փախչում էին ռազմաճակատից ռուսական զորքերի հետ բախումների ժամանակ, սակայն հետագայում՝ 1919-22թթ., ազգայնական շարժման հերոսներ դարձան, ինչպես Թոփալ Օսմանն ու Յահյա Քահյան: Դրա հետ մեկտեղ «Հատուկ կազմակերպության» հրոսակապետերի և բանակի սպաների միջև աճում էր հակակրանքը, այն աստիճանի, որ 3-րդ բանակի հրամանատար Մեհմեթ Վեհիբ փաշան սպառնացել էր ձերբակալել Բեհաէդդին Շաքիրին: Բանակը մեղադրում էր, որ «Հատուկ կազմակերպության» անկանոն հրոսակները ոչ թե օգնում, այլ խանգարում էին ռազմական գործողությունների ժամանակ, նրանց վրա հույս դնել չի կարելի, քանի որ կանոնավոր զորքերի հարձակման դեպքում առաջին փախչողները հենց հրոսակներն էին:

Փաստացի, Կովկասյան ռազմաճակատում «Հատուկ կազմակերպության» վերջին հաջողությունը 1914թ. նոյեմբերի 23-ին Մուրգուլի և Բորչքայի գրավումն էր, որից հետո Արևելյան վիլայեթների բաժանմունքը հիմնականում զբաղվել է հայ բնակչության տեղահանման և ոչնչացման կազմակերպմամբ և իրագործմամբ:

«ՀԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ (1914Թ. ՕԳՈՍՏՈՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ)

Արսեն Ավագյան

ԱՄՓՈՓՈՒՄ

1914թ. օգոստոսին ստեղծվեց «Հատուկ կազմակերպության» Արևելյան վիլայեթների բաժանմունքը, որը ղեկավարեց Իթթիհատի ԿԿ անդամ դոկտոր Բեհաէդդին Շաքիրը: Բաժանմունքը գործունեություն էր ծավալում հետևյալ ուղղություններով՝

ա. չեթեների (հրոսակախմբերի) ստեղծում, որոնք կանոնավոր բանակի հետ համագործակցությամբ պետք է կռվեին ռուսական զորքերի դեմ,

բ. ռուսական կովկասյան բանակի թիկունքում ապստամբության կազմակերպում ու ղեկավարում,

գ. Կովկասում լրտեսական ցանցի ստեղծում,

դ. հայ բնակչության տեղահանում ու ոչնչացում:

Կովկասյան ռազմաճակատում «Հատուկ կազմակերպության» Արևելյան վիլայեթների բաժանմունքի հրոսակախմբերը 1914թ. նոյեմբերի 2-ին գրավել էին Մուրգուլն ու Բորչքան, սակայն հետագա ռազմական բախումների ժամանակ լքել էին իրենց դիրքերը, ինչը լարվածություն էր ստեղծել բանակի և «Հատուկ կազմակերպու-

---

[20] *Başbakanlik Osmanli Arşivi* (BOA), DH. EUM. KLH, dosya 5, vesika 23, tarih 1333 Ra 4, s. 1.

թյան» միջև: Պատմության մեջ «Հատուկ կազմակերպության» Արևելյան վիլայեթների բաժանմունքը հայտնի դարձավ Տրապիզոնի և հայկական վեց նահանգների հայ բնակչության տեղահանության և ոչնչացման գործունեությամբ:

Բանալի բառեր՝ «Հատուկ կազմակերպության» Արևելյան վիլայեթների բաժանմունք, Բեհաէդդին Շաքիր, Արիֆ Ջեմիլ, հրոսակախմբեր, ապստամբություն, բուֆերային պետություններ, կողոպուտ, Հայոց ցեղասպանություն:

ACTIVITIES OF "SPECIAL ORGANIZATION" ON THE CAUCASIAN FRONT (AUGUST-DECEMBER 1914)

Arsen Avagyan

SUMMARY

The Branch of Eastern vilayets of the Special organization was established in August of 1914. The Branch was leaded by member of the Central Committee of the CUP, doctor Behaeddin Sakir. The Branch pursued the following objectives:

a. creation of gangs (cete) those with cooperation of armed forces will fight against Russian troops.
b. organizations of insurrection (rebelions) in the rear of the Russian army,
c. creating a spy network in the Caucasus,
d. destruction of the Armenian population.

2 November of 1914 on Caucasian front the units of the Branch of Eastern vilayets occupied the cities Murgul and Borchka, but in the subsequent battle with the Russian army units abandoned their positions and deserters, which led to tension in the relationship between the leadership of the Ottoman army and the "Special Organization". In the history the Branch of Eastern vilayets of the Special organization is known for his role in the organization of eviction and the destruction of the Armenian population of Trabzon and six Armenian vilayets.

Keywords: Branch of «Special organization» in Eastern vilayets, Behaeddin Shakir, Arif Jemil, gangs, rebellion, buffer states, looting, Armenian genocide.

ДЕЯТЕЛЬНОСТЬ «ОСОБОЙ ОРГАНИЗАЦИИ» НА КАВКАЗСКОМ ФРОНТЕ (АВГУСТ-ДЕКАБРЬ 1914 Г.)

Арсен Авагян

РЕЗЮМЕ

В августе 1914г. в структуре "Особой организации" было создано Отделение восточных вилайетов, которое возглавил член ЦК Иттихада доктор Бехаеддин Шакир. Отделение вело работу в следующих напрвлениях:

1) организация чет, которые в взаимодействии с армейскими частями должны были воевать против русских войск,
2) организация восстаний в тылу русской армии,
3) создание шпионской сети на Кавказе,
4) выселение и уничтожение армянского населения.

На кавказском фронте 2 ноября 1914г. четы Отделения восточных вилайетов заняли города Мургул и Борчку, но в последующих боях с частями русской армии оставляли свои позиции и дезертировали, что привело к напряжению в отношениях между руководством османской армии и «Особой организации». В истории Отделение восточных вилайетов «Особой организации» известно своей ролью в организации выселения и уничтожения армянского населения Трапезунда и шести армянских вилайетов.

Ключевые слова: Отделение «Специальной организации» в восточных вилайетах, Бехаэддин Шакир, Ариф Джамиль, банды, восстания, буферные государства, мародерство, Геноцид армян.

ՊՈԼԻՏԻՑԻԴԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մելինե Անումյան

Պոլիտիցիդ կամ քաղաքական սպանություն՝ եզրով է ցեղասպանագիտության մեջ սահմանվում ցեղասպանության զոհ հանդիսացող ազգի կամ ժողովրդի քաղաքական, հասարակական, ռազմական և մշակութային գործիչների կանխամտածված և զանգվածային ոչնչացումը ցեղասպանությունն իրականացնող դահճի կողմից: Նպատակը մեկն է՝ ցեղասպանության իրագործումից առաջ կամ ընթացքում զրկել տվյալ էթնոսին՝ ինքնապաշտպանության կազմակերպումն ստանձնելու կարող ուժից:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի բնորոշմամբ. «Քաղաքական սպանության նպատակն է գլխատել ցեղասպանության ենթակա ազգին և կոտրել նրա դիմադրողական ոգին, որը գործողությունների ազատության լայն դաշտ է ստեղծում ցեղասպանությունը կիրառող պետությունների և կառավարությունների համար՝ զանգվածային սպանդ կազմակերպելու առումով»[1]:

Հայոց ցեղասպանության դեպքում պոլիտիցիդի կամ քաղաքական սպանության մեկնարկը տրվեց 1915 թ. փետրվարին, երբ երիտթուրքական կառավարության հրահանգով բանակ զորակոչվեցին զենք կրելու ունակ շուրջ 60 հազար հայ տղամարդիկ: Դա ձևական զորահավաք էր, քանի որ հայ զինվորներից կազմվեցին բանվորական գումարտակներ, և նրանց ստիպեցին փորել սեփական գերեզմանները: Այդպիսով, հայ բնակչությունը զրկվեց մարտունակ ուժից[2]:

Քաղաքական սպանության հաջորդ փուլը հայ մտավորականների՝ քաղաքական, հասարակական և մշակութային գործիչների զանգվածային բնաջնջումն էր, որի սկիզբը դրվեց 1915 թ. ապրիլի 24-ին:

Հարվածն ուժգին էր հատկապես Կոստանդնուպոլսում, որտեղ բնակվում էր հայ մտավորականության սերուցքը՝ բազմաթիվ գրողներ, արվեստագետներ և գիտնականներ: Հայ ականավոր գործիչների ձերբակալությունները Կոստանդնուպոլսում անձամբ ղեկավարում էր Ստամբուլի ոստիկանապետ Բեդրի բեյը: Նրան աջակցում էին նաև քաղաքական գծով իր տեղակալը՝ Ռեշադը, և ընդհանուր անվտանգության պետ Ջանփոլադը: Ըստ երիտթուրքական իշխանությունների կողմից կանխավ պատրաստված սև ցուցակների՝ հատուկ կնքված ծրարներ էին ուղարկվել ոստիկանական բոլոր տեղամասերը[3]: Հին տոմարով 1915 թ. ապրիլի 11-ին, 12-ին և 13-ին տեղի ունեցան հայ քաղաքական, հասարակական և մշակութային գործիչների բազմաթիվ ձերբակալություններ: Այդ կալանավորումների մասին հետևյալն է պատմում Հայոց ցեղասպանությունը վերապրած մտավորականներից ազգային երեսփոխան Բյուզանդ Բոզաջյանը. «Վերջապես երբ գրասե-

---

1 Հովհաննիսյան Ն., *Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է*, Երևան, 2012, էջ 122-123:

2 Խրլոպեան Գէորգ Տ., *Ցեղասպանագիտութիւն*, Պէյրութ, 2006, էջ 104:

3 Արզումանյան Մ., *Հայաստան 1914-1917*, Երևան, 1969, էջ 320:

նեակ հասայ, հոն լիուլի տեղեկութիւն առի թէ ո՛ր դասակարգի անձնաւորութիւնք ձերբակալուած էին, եւ այն ատեն միայն համոզում գոյացուցի, թէ քաղաքական նշանակութիւն ունեցող դէպք մըն էր այս եւ թէ հայ մատնիչներու կողմէ նախապէս պատրաստուած ցուցակներու վրայ կատարուած էր: Նախասկիզբն էր այս հայ տարագրութեան դժոխային ծրագրին, զոր Իթթիհատական Կուսակցութեան դաւաճան պետերը պատրաստած էին Գերմանիոյ դժոխմբեր խորհրդով»[4]:

Ձերբակալված հայ մտավորականների առաջին խումբը շուրջ 200 հոգի ազատազրկվեց Ստամբուլի կենտրոնական բանտում՝ մեհթերիանեում: Կալանավոր 5 հայ հոգևորականներից ծայրագույն վարդապետ Գրիգորիս Պալաքյանը, ով հրաշքով ողջ է մնացել Եղեռնից, վերհիշում է. *«…ահա բանտին հսկայ երկաթեայ դռներն չարագուշակ ճռինչով մը, կրկին բացուեցան: Խուռներամ ներս հրուեցան բազմաթիւ դէմքեր, ամէնքն ալ ծանօթ յեղափոխական պետեր, հանրային գործիչներ եւ անկուսակցական եւ նոյնիսկ հակակուսակցական մտաւորականներ: Մէկ քանի ժամն անգամ մը, մինչեւ առաւօտ բանտ բերուած նորանոր ձերբակալեալներով, գիշերային խոր լռութեանը մէջ, բանտի ամրակուռ եւ բարձր պարիսպներուն եւրեւ, տակաւ եռուզեռն կ’աճէր, քանի բանտարկեալներու բազմութիւնը կը սպրսւարանար: Իբր թէ նոյն գիշերը՝ բանտին այդ խաւարչտին նկուղներուն մէջ ժամադիր եղած ըլլայի, Մայրաքաղաքի հայութեան հանրային աչքառու բոլոր գործիչներն, ժողովական, երեսփոխան, յեղափոխական, խմբագիր, ուսուցիչ, բժիշկ, դեղագործ, ապրամնաբոյժ, վաճառական, սեղանաւոր եւ այլ ամէն դասակարգէ ազգայիններ: Մէկէ աւելի անձեր բերուած էին նոյնիսկ սենեակի զգեստներով եւ հողաթափերով: (…) Ամէնքս ալ հեւրամուր էինք լուծելու այս առեղծուածը եւ պատասխան կը փնտռէինք սա հարցերուն, բայց ինչո՞ւ սա հարիւրաւոր ձերբակալութիւնները, եւ արդեօք ի՞նչ պիտի ըլլայ ասոր վախճանը»*[5]:

Քսանչորսժամյա բանտարկությունից հետո՝ 1915 թ. ապրիլի 25-ին, ձերբակալված հայ մտավորականները տարվում են Ստամբուլի Հայդարփաշա երկաթուղային կայարան, որտեղից էլ գնացքներով աքսորվում[6]: Հայ ականավոր գործիչների մի մասը՝ 75 հոգի, ճանապարհին առանձնացվում է և ուղարկվում Այաշ, իսկ մյուս մասը՝ Անկարա: Այաշ աքսորվածներին տեղավորում են քաղաքի ծայրամասում գտնվող «Սարը քըշլա» զորանոցում և սարսափելի կտտանքների ենթարկում[7]: Այաշի աքսորյալների շարքում են եղել հայ մտքի այնպիսի ականավոր ներկայացուցիչներ, ինչպիսիք են՝ հայտնի դաշնակցական գործիչներ Խաչատուր Մամուլյանը (Ակնունի), Գարեգին Խաժակը, Ռուբեն Զարդարյանը, Սարգիս Մինասյանը, ազգային երեսփոխաններ Հարություն Ձանգյուլյանը, Նազարեթ Տաղավարյանը, Համբարձում Բոյաջյանը (Մեծն Մուրադ), Հարություն Շահրիկյանը, բանաստեղծ Սիամանթոն, դերասան Ենովք Շահենը, վիպագիր Սմբատ Բյուրատը, բժիշկներ

---

[4] Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, «Նաւասարդ»-ի հրատարակութիւն, թիւ 4, Բ Տպագրութիւն, Ապրիլ 24, 1985, էջ 116:

[5] Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան, *Հայ Գողգոթան*, Ա հատոր, Գ տպագրություն, Անթիլիաս, 2003, էջ 107-108:

[6] Արզումանյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 321:

[7] Նույն տեղում:

Խաչիկ Պարտիզակյանը, Կարապետ Փաշայանը, Տիգրան Ալլահվերդին և այլք[8]: Նրանց շարքում գտնվող ազգային երեսփոխան Բյուզանդ Բոզաջյանի խոսքերով. «Այաշի մէջ բանտարկուած էին հայ մտաւորական դասակարգին ամէնէն կարկառուն դէմքերը, զոր կառավարութիւնը «քաղաքական յանցապարտ» տիտղոսով որակած էր»[9]:

Այաշի կալանավորներից հնչակյան գործիչ Համբարձում Բոյաջյանը կառավարության որոշմամբ ուղարկվեց Կեսարիա՝ իբրև թե տեղի ռազմական արտակարգ ատյանում դատվելու համար, սակայն կախաղան բարձրացվեց:

Այաշի աքսորյալները երբեմն խորհրդակցական գաղտնի ժողովներ էին գումարում այստեղ՝ Խաժակի կամ Ակնունու նախագահությամբ: Այդ ժողովներից մեկի ժամանակ կայացված որոշման համաձայն՝ նրանք հեռագրով դիմեցին Ներքին գործերի նախարարություն՝ խնդրելով կա՛մ դատել իրենց, կա՛մ ազատ արձակել, սակայն ապարդյուն[10]: 1915 թ. օգոստոսի կեսերին Անկարայի փոխնահանգապետ Աթըֆի հրամանով Այաշի աքսորյալները սպանվում են՝ քարկոծվելով և սվինահար արվելով: Ուշագրավ է, որ այաշցի տասնապետ Ֆաշիլօղլու Ռեֆիքը չի ցանկացել կրակել հայ երևելիների վրա, սակայն կատաղի կոմիսար Զեքի Հասանը և չավուշ Հուրշիդը գազանաբար կոտորել են նրանց: Չավուշ Հուրշիդը, Անկարա վերադառնալով, ցինիկաբար պատմել է. «Երբ կոտորածը սկսանք, սպանվողների աղիողորմ ճիչերով, վայնասուններով ձորը և լեռը կթնդար: Ես դոկտոր Փաշայանի աչքերը նախ փորեցի, ապա վիզը կտրեցի և ահավասիկ անոր ոսկի շղթան ու ժամացույցը»[11]:

Տարագրյալ մտավորականների մյուս խումբը (մոտ 150 հոգի) ուղարկվեց Չանքըրը: Այս խմբում էին գտնվում հայ մտավորական սերուցքի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են՝ Կոմիտաս վարդապետը, ծայրագույն վարդապետ Գրիգորիս Պալաքյանը, հայ ականավոր բանաստեղծ ու բժիշկ Ռուբեն Չիլինկիրյանը (Ռուբեն Սևակ), բանաստեղծ և դաշնակցական գործիչ Դանիել Վարուժանը, փաստաբան Գասպար Չերազը, «Սաբահ» պարբերականի խմբագիր և Ռամկավար ազատական կուսակցության ղեկավար Տիրան Քելեքյանը, «Բյուզանդիոն» թերթի խմբագիր Բյուզանդ Քյուչյանը, ուսուցիչ և դաշնակցական գործիչ Արմենակ Բարսեղյանը, «Ուստանի» խմբագիր Միքայել Շամդանջյանը, հրապարակախոս և պատմաբան Արամ Անտոնյանը, ուսուցիչ և դաշնակցական գործիչ Մովսես Պետրոսյանը, հնչակյան գործիչ Սամվել Թոմաջանյանը, դեղագործ և հանրային գործիչ Վահրամ Աստուրյանը, ճարտարապետներ Սիմոն Մելքոնյանը և Մանուկ Բասմաջյանը, օսմանյան բանկի պաշտոնյա Վաղինակ Պարտիզպանյանը և ուրիշներ[12]:

Նրանց մի մասին բաժանեցին երկու քարավանների, որոնցից առաջինում 52 հոգի էին, երկրորդում՝ 24: Այս երկու քարավաններն էլ աքսորվեցին Դեր-Զոր:

---

8 Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան, *նշվ. աշխ.*, էջ 118-122:

9 Թէոդիկ, *Յուշարձան Ապրիլ 11-ի*, Belge Yayinlari, 2010, էջ 204-205:

10 Թէոդիկ, *Յուշարձան նահատակ մտաւորականութեան…*, էջ 124:

11 Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 321-322:

12 Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան, *նշվ. աշխ.*, էջ 138-143:

Առաջին քարավանից միայն Պարոնյան ազգանունով (անունը չի հիշատակվում – Մ.Ա.) մի հայ բողոքական գրավաճառ ազատվեց աքսորից՝ իր հղած բազմաթիվ դիմումների շնորհիվ, և վերադարձավ Ստամբուլ: Առաջին խմբի մնացած բոլոր անդամներն անգթաբար սպանվեցին Էլբիստանի ճանապարհներին: Իսկ երկրորդ քարավանից փրկվեց միայն Արամ Անտոնյանը, ով հիվանդանոց տեղափոխվեց՝ ճամփին ոտքը կոտրելու պատճառով: Երկրորդ խմբի մյուս բոլոր մտավորականները բերվեցին Էլմա լեռան ստորոտ և սրախողխող արվեցին[13]:

Նրանցից 37 հոգի էին մնացել, այդ թվում՝ Ռուբեն Չիլինկիրյանը (Սևակ), Դանիել Վարուժանն ու Տիրան Քելեքյանը: 37 հոգու ազատ արձակելու և Ստամբուլից բացի իրենց ցանկացած տեղ գնալ թույլատրելու հրաման էր եկել: Այս ցանկ ընդգրկված 5 անձինք արդեն իսկ կա՛մ Պոլիս էին մեկնել, կա՛մ էլ մյուս քարավանների մաս կազմել: Սակայն դրանց փոխարեն արձակման ենթակա անձանց ցանկում բացակայում էին 5 մտավորականների անուններ, որոնց մեջ էին նաև Վարուժանն ու Սևակը: Վերջիններս հեռագրով դիմեցին Ստամբուլ՝ Ներքին գործերի նախարարություն, որպեսզի իրենց ևս այդ ցանկ ընդգրկեն:

Սակայն Չանքըրըի՝ Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզի գործադրած ջանքերով որոշվեց, որ այդ հինգը տեղափոխվեն Այաշ: Կարծես ճակատագրի չար քմահաճույքով նրանց մեկնելուց ընդամենը մեկ օր հետո Ստամբուլից հեռագրի պատասխանը եկավ, որ այդ հինգը ևս, մյուս 22-ի նման, ազատվեն աքսորից[14]:

Այս հինգը գազանաբար սպանվեցին 1915 թ. օգոստոսի 13-ին Թունեյ գյուղի ձորակում: Նրանց վրա հարձակվեցին դաշույններով զինված քրդերը՝ ավազակ Հալոյի գլխավորությամբ, հայ աքսորյալներին իջեցրին ձորը և սրախողխող արեցին: Ուշագրավ է, որ մինչ այդ հայ ականավոր բանաստեղծ ու բժիշկ Ռուբեն Չիլինկիրյանը (Սևակը) մահից փրկել էր քուրդ Հալոյի աղջկան: Քուրդ ավազակը հայ բժշկին առաջարկել էր մահմեդականություն ընդունել և իր դստերը կնության առնել՝ անխուսափելի մահից ազատվելու համար, սակայն կտրուկ մերժում էր ստացել[15]:

37 հոգուն ազատ արձակելու մասին հիշյալ որոշումը ևս զուտ ձևական բնույթ էր կրում, քանի որ իրականում նրանք կաշկանդված էին հազար ու մի արգելքներով և շարունակում էին հալածանքների ենթարկվել: Նրանց մեծ մասն սպանվեց փոխադրության անվան տակ: Սպանվածների մեջ էր նաև Տիրան Քելեքյանը, ով 30 տարի շարունակ պատմություն էր դասավանդել օսմանյան համալսարանում, խմբագրել «Սաբահ» օրաթերթը, կազմել ֆրանս-թուրքերեն բառարան: Նրան սպանեցին Սեբաստիայում՝ Ալիս գետի կամրջի մոտ[16]:

Հարկ է նշել նաև, որ Չանքըրըի՝ Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզը հետագայում՝ 1919-1920 թվականնե-

---

[13] Թէոդիկ, *Յուշարձան Ապրիլ 11-ի…*, էջ 227:

[14] Թէոդիկ, *Յուշարձան նահատակ մտաւորականութեան…*, էջ 137:

[15] Արզումանյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 323-324:

[16] *Նույն տեղում*, էջ 325:

րին, դատվել է Օսմանյան կայսրության Ռազմական արտակարգ ատյանի կողմից՝ Ստամբուլից Չանքըրը աքսորված հայերի սպանության մեղադրանքով[17]: Նրա գործը նախ քննվել է Միություն և առաջադիմություն կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների դատավարության շրջանակներում: Ամբաստանյալ Ջեմալ Օղուզը 1919 թ. դեկտեմբերի ու 1920 թ. հունվարի դատական նիստերի ընթացքում ձևացրել է, թե խելագարվել է, անընդհատ վիճաբանել է դատարանի նախագահի հետ և մինչև իսկ ինքնասպանության փորձ արել: Ի վերջո, նա կարողացել է համոզել դատարանի կազմին, որ իրեն հոգեբուժարան ուղարկեն: Թեև սկզբում ատյանը մերժել է նրա դիմումը, սակայն տասներորդ նիստում (1919 թ. դեկտեմբերի 29) նրա դատական գործն «առողջական խնդիրների» պատրվակով առանձնացվել է[18] պատասխանատու քարտուղարների դատական գործընթացից: Ջեմալ Օղուզի առանձին դատաքննությունը վերսկսվել է 1920 թ. հունվարի 27-ին: 1920 թ. փետրվարի 3-ի նիստում մեղադրյալի դեմ վկայություն է տվել հայ փաստաբան Գասպար Չերազը, ով դատարանին հայտնել է, թե ինքը Չանքըրը աքսորված լինելու պատճառով քաջատեղյակ է Դանիել Վարուժանի և Ռուբեն Սևակի սպանության մանրամասներին: Ըստ վկայի՝ Ջեմալ Օղուզն ինքն էր ուղարկել հայ մեծանուն բանաստեղծներին՝ այդպիսով կազմակերպելով նրանց սպանությունը: Գասպար Չերազը վկայություն է տվել՝ բոլոր փաստերի մասին դատարանին հայտնելով ճշգրիտ թվականներ և անուններ[19]: Հաջորդ նիստում, որը կայացել է 1920 թ. փետրվարի 5-ին, Ջեմալ Օղուզի դեմ ուղղված վկայությամբ է հանդես եկել Միքայել Շամդանջյանը, ով հաստատել է, թե հայ աքսորյալների երկու խմբերի ցանկերը (24 և 52-հոգանոց) կազմվել էին Չանքըրըում Ջեմալ Օղուզի կողմից, ով ավելի զորավոր էր, քան Չանքըրըի մութասարիֆ (սանջակի/մարզի կառավարիչ) Ասաֆ բեյը[20]: Ջեմալ Օղուզը 1920 թ. մայիսին դատաքննվել է հարյուրապետ Նուրեդդինի հետ միասին: 1920 թ. մայիսի 27-ին նրան դուրս են գրել հիվանդանոցից և վերստին բերել կենտրոնական բանտ, քանի որ դատարանը նրան դատապարտել էր 5 տարի և 4 ամիս ազատազրկման, ապա Մեծ Բրիտանիայի Գերագույն կոմիսարության պահանջով 1920 թ. օգոստոսի 2-ին նա հանձնվել է անգլիացիներին,

---

[17] Ջեմալ Օղուզը հայ մեծանուն բանաստեղծներ Դանիել Վարուժանի և Ռուբեն Սևակի, ինչպես նաև՝ Օննիկ Մաղազաջյանի, Դյոքմեջի Վահանի և հացավաճառ Արթին աղայի սպանության կազմակերպիչն էր: Ջեմալ Օղուզը մաս առ մաս տեղահանել էր Ստամբուլից Չանքըրը աքսորված հայերին և նրանց հանձնել Անկարայի նահանգապետ Աթըֆին: Նրան Քասթամոնուի իր պաշտոնակցի հետ հաջողվել էր պաշտոնանկ անել Քասթամոնուի նահանգապետ Ռեշիդ փաշային և բեկանել այստեղի հայերին տեղահանությունից զերծ պահելու կուսակալի որոշումը: «Ճակատամարտ» օրաթերթի բնորոշմամբ Ջեմալ Օղուզը «Իթթիհատի հին մէկ բարակն էր» (որսաշունը), ով որպես ծածկագրության պաշտոնյա՝ ներկա էր գտնվել նաև Ադանայի 1909 թ. ջարդին (տե՛ս «Դանիէլ Վարուժանի եւ Ռ. Սեւակի սպաննիչը ձերբակալուած», *«Ճակատամարտ»*, 5 ապրիլ, 1919, N 122 (1943):

[18] Տե՛ս Dadrian V., Akçam T., *"Tehcir ve Taktil", Divan-i Harb-i Örfî Zabitlari, İttihad ve Terakki'nin Yargilanmasi 1919-1922,* İstanbul: Bilgi Üniversitesi Yayinlari, 2008, էջ 155:

[19] «Ո՞վ սպաննեց երկու բանաստեղծները», *«Ճակատամարտ»*, 4 փետրվար, 1920:

[20] «Ճէմալ Օկուզի դատը», *«Ճակատամարտ»*, 6 փետրվար, 1920, N 373 (2194):

ովքեր 1920 թ. սեպտեմբերի 30-ին հայերի կոտորածների մեջ մեղադրվող մի շարք այլ թուրք պաշտոնյաների հետ նրան էլ են աքսորել Մալթա[21]:

Զանգվածաբար ձերբակալվեցին, աքսորվեցին և կոտորվեցին ոչ միայն Կոստանդնուպոլսի, այլ նաև գավառների հայ մտավորականները՝ բազմաթիվ գրողներ, մանկավարժներ, հասարակական գործիչներ (մոտ 800 հոգի): Նրանց մեջ էին Երուխանը, Թլկատինցին և ուրիշներ[22]:

Ցանկանում ենք առանձնահատուկ անդրադառնալ նաև օսմանյան խորհրդարանի անդամներից՝ ականավոր գրող, իրավաբան և հրապարակախոս Գրիգոր Զոհրապի և դաշնակցական գործիչ Վարդգես Սերենգուլյանի եղերական վախճանին: Նրանք մեղադրվում էին «պետական հանցագործության» մեջ և պետք է ներկայանային Դիարբեքիրի ռազմական արտակարգ ատյանին: Նրանց Ադանայի և Հալեպի վրայով տարան Ուրֆա, ապա տեղափոխեցին այստեղից մեկ ժամ հեռավորության վրա գտնվող Քարաքյոփրյու վայրը, որտեղ արդեն պատրաստ կանգնած էին զինված ավազակախմբերը՝ Չերքեզ Ահմեդի գլխավորությամբ, ով սպանեց նրանց՝ անասելի տանջանքների ենթարկելով[23]:

Այստեղ տեղին է մեջբերել այդ ժամանակաշրջանի թուրք գրող Ահմեդ Ռեֆիք Ալթընայի հուշերը՝ Գրիգոր Զոհրապի և Վարդգես Սերենգյուլյանի մարդասպանների վերաբերյալ. «Երբ Չերքեզ Ահմեդին բերող գնացքը ժամանել էր, ամեն կողմ ռազմական կարգապահության տակ էր առնվել: Ահմեդն իրականում Աֆիոնում էր ձերբակալվել և Էսքիշեհիր էր տարվում ոստիկանների ուղեկցությամբ: Գնացքից բարձրահասակ, մորթե գլխարկով, երիտթուրք պատվիրակների և նահանգապետերի ճամփորդական հագուստով, թավ մորուքով, նիհար դեմքով մեկը դուրս եկավ: Նրա հետևից միջահասակ և թխադեմ մեկն էլ էր գալիս՝ թավշե շալվարով: Բարձրահասակը Չերքեզ Ահմեդն էր, մյուսը՝ լեյտենանտ Հալիլը: Նրանք Հատուկ կազմակերպության միջոցով ուղարկված ավազակախմբերի ղեկավարներից էին: Հատկապես Հալիլի վաստակն ավելի մեծ էր: (…) Չերքեզ Ահմեդը հայկական ողբերգությունը հաստատող կարևոր փաստ էր: Այդ արյունալի դեպքի դրվագների մասին ցանկացա անձամբ գործած անձից լսել: Չերքեզ Ահմեդին հարցրի, թե ինչեր է արել արևելյան վիլայեթներում: «Եղբա՛յր,-ասաց,-այս վիճակը պատվիս դիպչում է: Ես ծառայել եմ այս հայրենիքին: Գնացեք և տեսեք՝ Վանը և շրջակայքը Կաաբայի եմ վերածել: Այսօր այնտեղ չեք կարող գեթ մի հայի հանդիպել: Ես այդքան ծառայեցի հայրենիքիս, իսկ հետո Թալեաթի պես սրիկաները պիտի Ստամբուլում սառը գարեջուր վայելեն, իսկ ինձ ոստիկանների ուղեկցությամբ այստե՞ղ բերեն: Չէ՛, դա վիրավորում է արժանապատվությունս»: (…) Ուզում էի Չերքեզ Ահմեդից ավելի շատ տեղեկություններ ստանալ: «Լա՛վ, իսկ Զոհրապին և մյուսներին ի՞նչ պատահեց»,– հարցրի ես: «Վա՛յ, չե՞ք լսել: Բոլորին էլ սատկացրել եմ»,-ասաց նա: Ծխախոտի ծուխը դեպի օդ մղելով՝ խոսքը շարունակեց՝ ձախ

---

[21] Տե՛ս Dadrian V., Akçam T., *նշվ. աշխ.*, էջ 88:

[22] Արզումանյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 326:

[23] Նույն տեղում, էջ 324-325:

ձեռքով բեղերը շտկելով. «Հալեպից դուրս էին եկել: Ճանապարհին հանդիպեցինք: Անմիջապես շուրջկալի մեջ առա նրանց ավտոմեքենան: Հասկացան, որ սատկելու են: Վարդգեսը ասաց. «Շա՛տ լավ, Ահմե՛դ բեյ, մեզ հետ այդպես եք վարվում, իսկ արաբների՞ն ինչ եք անելու: Նրանք էլ գոհ չեն ձեզանից»: «Դա քո գործը չէ, լակո՛տ»,-ասացի նրան և մաուզերի փամփուշտով ուղեղը ջնջխեցի: Հետո Զոհրապի օձիքից բռնեցի: Ոտքերիս տակ առա և գլուխը ճմլեցի[24]»:

Ամփոփելով նշենք, որ Մեծ եղեռնի ժամանակ նահատակված հայ ականավոր գործիչներից շատերը, ականատեսների վկայությամբ, մահից առաջ ափսոսանք են հայտնել՝ իրենց մշակութային գործունեությամբ նաև թուրքերին ծառայելու համար: Եթե ընկալելի է նախքան Ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մշակույթը զարգացրած արևմտահայ մտավորականության դյուրահավատությունը, ապա լրիվ անհասկանալի են թվում այն հայ գիտնականներն ու արվեստի գործիչները, ովքեր վերստին մեծ ներդրում ունեցան Թուրքիայի Հանրապետության գիտության և մշակույթի մեջ: Իսկ նմանների թիվը զարմանալիորեն, փոքր չէ:

Հարկ է նաև շեշտել, որ պոլսահայության հանդեպ քաղաքական սպանության կամ պոլիտիցիդի երևույթը նկատելի է անգամ մերօրյա Թուրքիայում: Թե՛ «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանությունը 2007 թ. հունվարի 19-ին, թե՛ թուրքական բանակում հայազգի Սևակ Շահին Բալըքչըի՝ ծառայության ընթացքում իրականացված դիտավորյալ սպանությունը 2011 թ. ապրիլի 24-ին՝ այդ խորհրդանշական օրը, և թե՛ պոլսահայ լեզվաբան Սևան Նշանյանի ազատազրկումը ևս պետք է դիտարկել որպես պոլիտիցիդի կամ քաղաքական սպանության մասնավոր դեպքեր:

Հայոց ցեղասպանության ժամանակ կիրառված պոլիտիցիդի հիմնական հետևանքը եղավ ոչ միայն Մեծ եղեռնի ընթացքում և դրանից անմիջապես հետո արևմտահայության գլխատումը, այլ նաև՝ հետագա տասնամյակներին Թուրքիայի Հանրապետության քաղաքացի հայության, հատկապես պոլսահայության ապաքաղաքականացումը: Հիրավի, վերջին հարյուրամյակում, չնայած պոլսահայ համայնքի ոչ սակավ թվին, Թուրքիայի հայերի կողմից չի հիմնվել որևէ քաղաքական կուսակցություն: Միայն վերջին տարիներին, պայմանավորված Թուրքիայի՝ ԵՄ-ի անդամակցության գործընթացով, ստեղծվել են մի քանի հայկական հայրենակցական միություններ, որոնց գործունեությունը, սակայն, անհնար է բնորոշել որպես քաղաքական:

Վերջապես, անհնար է անգամ պատկերացնել, թե հայկական և համաշխարհային մշակույթի մեջ դեռ որքան մեծ ներդրում կունենային Հայոց ցեղասպանության ժամանակ Կոմիտասի նման հոգեցնցում ապրած կամ նահատակված հայ արվեստի և մշակույթի գործիչներից շատերը, եթե նրանց ապրելու և արարելու հնարավորություն տրվեր:

---

[24] Ahmet Refik Altinay, *İki Komite, İki Kital, Bedir Yayinevi, İstanbul, 1999, ss. 49-52.*

ՊՈԼԻՏԻՑԻԴԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մելինե Անումյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց ցեղասպանության դեպքում պոլիտիցիդի մեկնարկը տրվեց 1915 թ. ապրիլի 24–ին, երբ սկսվեց հայ քաղաքական, հասարակական և մշակութային գործիչների զանգվածային ընաջնջումը: Հայ գործիչները մեծ ներդրում են ունեցել Թուրքիայի գիտության և մշակույթի մեջ: Հայոց ցեղասպանության ընթացքում զոհված նշանավոր հայ գործիչներից շատերը նախքան մահն ափսոսանք էին հայտնում թուրքերին իրենց մատուցած ծառայությունների համար:

Կոստանդնուպոլսի (Ստամբուլի) հայերի նկատմամբ պոլիտիցիդը շարունակվում է նաև ժամանակակից Թուրքիայում: Ինչպես «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի սպանությունը 2007 թ. հունվարի 19–ին, այնպես էլ հայ լեզվաբան Սևան Նշանյանի բանտարկությունն անհրաժեշտ է դիտարկել որպես քաղաքական հաշվեհարդարի մասնավոր դեպքեր:

Հայոց ցեղասպանության ընթացքում թուրքական իշխանությունների կողմից գործի դրված պոլիտիցիդի հիմնական արդյունքը դարձավ Թուրքիայի քաղաքացի հայերի հիմնական զանգվածի ապաքաղաքականացումը:

Բանալի բառեր՝ պոլիտիցիդ, հայ մտավորականություն, Հայոց ցեղասպանություն:

THE POLITICIDE IN THE CONTEXT OF THE ARMENIAN GENOCIDE

Meline Anumyan

SUMMARY

In the case of the Armenian Genocide, the start of the Politicide was given on April 24, 1915, when the Armenian political, public, and cultural figures' mass annihilation had begun.

Armenian scholars and cultural figures have greatly contributed to science and culture in Turkey. Before their death, many of the influential figures who died during the Armenian Genocide expressed regret for having served the Turks.

The Politicide toward the Istanbul Armenians is noticeable in modern-day Turkey, too. The murder of Hrant Dink, the chief editor of Agos, who was killed on January 19, 2007, as well as Armenian linguist Sevan Nisanyan's arrest should be observed as particular cases of political killing.

The primary consequence of the Turkish leadership's politicide (political killing) at the time of the Armenian Genocide was the depolitization of the Armenian citizens of Turkey.

Keywords: politicide, Armenian intelligentsia, Armenian genocide.

ПОЛИТИЦИД В КОНТЕКСТЕ ГЕНОЦИДА АРМЯН

Мелине Анумян

РЕЗЮМЕ

В Геноциде армян старт политициду был дан 24 апреля 1915 года, когда началось массовое уничтожение армянских политических, общественных и культурных деятелей. Армянские ученые и деятели искусств внесли большой вклад в науку и культуру Турции. Многие из погибших в ходе Геноцида армян влиятельных армянских деятелей перед смертью выражали сожаление в том, что служили туркам.

Явление политицида в отношении армян Константинополя заметно также в современной Турции. Как убийство главного редактора газеты «Акос» 19 января 2007 г., так и заключение в тюрьму армянского лингвиста Севана Ншаняна необходимо рассматривать в качестве частных случаев политического насилия.

Основным следствием политицида, примененного турецким руководством во время Геноцида армян, была деполитизация армян-граждан Турции.

Ключевые слова: политицид, армянская интеллигенция, Геноцид армян.

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1908-1914ԹԹ.)

Սուրեն Մանուկյան

Ցանկացած ցեղասպանության իրականացման համար չափազանց կարևոր նախապայման է բնակչության մեծ զանգվածների ներգրավումը սպանության գործընթաց: Հայոց ցեղասպանության կազմակերպիչները դեռևս մինչև Առաջին աշխարհամարտը քայլեր ձեռնարկեցին Օսմանյան կայսրության հարյուր հազարավոր մուսուլմանների հավաքագրումը հայերին ոչնչացնելու գործընթացի մեջ ապահովելու ուղղությամբ:

Այս պարագայում վճռական նշանակություն էր ձեռք բերում ցեղասպանական միջավայրի ձևավորումը: Այս ամբողջ գործընթացը տեղի ունեցավ երիտթուրքական հեղաշրջումից քիչ անց, երբ նոր իրավիճակը թույլ տվեց ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հասարակությունն առավել ընկալունակ դարձրին ատելության գաղափարների տարածման նկատմամբ: Իր հերթին հայ բնակչությունը, տրվելով երիտթուրքերի կարգախոսներին, կորցրեց զգոնությունը և անպատրաստ գտնվեց գալիք արհավիրքին դիմագրավելու համար: Առաջին աշխարհամարտը հարմար առիթ ընձեռեց այս ամբողջ գործընթացը բյուրեղացնելու համար: Իթթիհադական կուսակցության վերնախավը, օգտագործելով պետական ամբողջ ռեսուրսները՝ նյութական, կազմակերպչական, ուժային և քարոզչական, ներգրավեց այս «նախագծի» մեջ կայսրության գրեթե ամբողջ մուսուլմանական բնակչությանը[1]:

Մեր կողմից փորձ է արվել կառուցվածքային վերլուծության ենթարկել Օսմանյան կայսրությունում ձևավորված ցեղասպանական միջավայրը, մասնավորապես առանձնացնել ու դրա բաղադրիչները: Այս փուլերի բաժանումը, իհարկե, խիստ պայմանական բնույթ ունի: Յուրաքանչյուր փուլ կարող է համընկնել և փոխլրացվել մեկ այլ, կամ մի քանի այլ փուլերի հետ, որոշ փուլերը երբեք հանդես չեն գալիս «մաքուր» տեսքով, սակայն կարծում ենք, որ առանձնացման այս փորձը հնարավորություն է ընձեռում ավելի ամբողջական հասկանալու հակահայկականության ձևավորման և այն ցեղասպանական բնույթի վերածելու ամբողջ խորքային գործընթացները, որոնք ընթանում էին օսմանյան հասարակությունում Հայոց ցեղասպանության նախօրեին:

«Մշակութային արմատներ»

Ցեղասպանական միջավայրի ձևավորումը մեկ օրում տեղի չի ունենում, այն երկարատև ձևավորված վերաբերմունքի, կարծրատիպերի և մոտեցումների մի ամբողջություն է, որը պայմանական կարելի է անվանել «մշակութային արմատներ»:

[1] Հասարակության մասնակցության տարբեր աստիճանների մասին տե՛ս Մանուկյան Ս., Հայոց ցեղասպանության ոճրագործների հիերարխիայի հարցի շուրջ, «*Ցեղասպանագիտական հանդես*», 2(2014), էջ 100-126:

Տարբեր ցեղասպանությունների ժամանակ հասարակությունները տոգորված են լինում դարավոր ատելությամբ որոշակի թիրախ խմբերի նկատմամբ, ինչը համապատասխան պայմանների առկայության դեպքում տանում է դեպի զանգվածային սպանություններ: Նման երևույթի մասին է խոսում իր վիճահարույց գրքում պատմաբան Դանիել Գոլդհագենը, ով շեշտում է մի հատուկ հակասեմականության մասին, որը Գերմանիայի բնակչության մեջ առաջացրել էր հրեաներին մահվան դատապարտելու անհրաժեշտության մասին համոզմունք[2]: Նման պատկերն էր ձևավորվել Օսմանյան կայսրության թուրք բնակչության մի զգալի հատվածի մեջ հայերի նկատմամբ:

Երկար ժամանակ հայերի վերաբերյալ գոյություն ունեին երեք հիմնական կարծրատիպեր, որոնց հիման վրա էլ կառուցվեցին հակահայկական քարոզչության հաջորդ աստիճանները: Հայերը մուսուլմանական պատկերացումներում հանդես էին գալիս իբրև «անհավատներ», իբրև ստորադասներ և իբրև հնարավոր զոհեր:

ա. Հայերն իբրև «անհավատներ»

Հակաքրիստոնեական տրամադրությունները բավականին տարածված էին Օսմանյան հասարակությունում: Հայերը առօրյա կյանքում հաճախ պիտակավորվում էին իբրև «անհավատներ»՝ «գյավուրներ», և պատահական չէ, որ դա օգտագործվում էր կոտորածներ կազմակերպելու համար: Օրինակ՝ 1909 թ. Ադանայի ջարդի ժամանակ մուսուլմանական հոգևորականները հատուկ կրոնական հրովարտակ՝ ֆեթվա հաստատեցին այն մասին, որ իսլամն ընդունում էր քրիստոնյաների սպանությունը, ինչը մեծապես դյուրացրեց ամբոխին հայերի սպանության գործընթաց ներգրավելու գործը[3]: Երբ Օսմանյան կայսրությունը երկու անհաջող՝ Տրիպոլիտանական և Բալկանյան պատերազմների ժամանակ պարտվեց «քրիստոնյա» պետություններից, դա անդրադարձավ նաև երկրի ներսում ապրող քրիստոնեական բնակչության նկատմամբ թշնամանքի աճի վրա[4]: Ավելին, թեև Հայոց ցեղասպանության ճարտարապետները տոգորված չէին կրոնական զգացումներով[5], սակայն նրանք նույնպես շատ լավ հասկանալով, որ մուսուլմանական հասարակության մեջ իսլամը կարող է դառնալ լավագույն գործիքը հասարակության մեծ մասին համա-

---

[2] Goldhagen Daniel Jonah, *Hitler's Willing Executioners: Ordinary Germans and the Holocaust*, New York, Vintage Books, 1997, p.14.

[3] Տե՛ս Duckett Ferriman, *The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor, during April, 1909*, Yerevan: The Armenian Genocide Museum-Institute, 2009, էջ 16-17, Ադոսիդես Ա., *Հայեր և երիտթուրքեր. Կիլիկիայի կոտորածները*, Երևան: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2011, էջ 16:

[4] Տե՛ս Փափազյան Վ., *Իմ հուշերը*, II, Բեյրութ: Համազգային, 1952, էջ 155:

[5] Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, New York and Oxford: Berghahn Books, 1995, p. 5: Մորգենթաուն նաև նշում է, որ Թալաաթին իսլամը բոլորովին չէր հուզում, և ընդհանրապես կուսակցության բազմաթիվ առաջնորդներ արհամարհանք էին տածում ցանկացած դավանանքի հանդեպ: Նա հաճախ էր կրկնում. «Ես ատում եմ բոլոր քահանաներին, րաբբիներին ու խոջաներին» (Morgenthau Henry, *Ambassador Morgenthau's Story*, Garden City, NY: Doubleday, Page & Company, 1918, p. 20).

խմբ՛նելու համար, Առաջին Աշխարհամարտի հենց սկզբին՝ 1914 թ. նոյեմբերի 14-ին, օգտագործեցին «սրբազան պատերազմի»՝ ջիհադի հայտարարումը:

Որպես արտաքին թշնամիների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեմ պայքարի միջոց՝ այն այդքան էլ արդյունավետ չգտնվեց, սակայն ուղղեց կայսրության բնակչության կրոնական ֆանատիզմը դեպի «ներքին թշնամիներ»: Այն դարձավ չափազանց լավ միջոց ցեղասպանությունն իրականացնելու համար: Ջիհադի հայտարարումը տվեց սպանություններին յուրատեսակ կրոնական լեգիտիմացում: Հետագայում կարելի է տեսնել՝ ինչպես հենց կրոնական կարգախոսների ներքո և կրոնական գործիչների առաջնորդությամբ էին հաճախ տեղերում իրականացվում հայերի կոտորածները:

բ. Հայերը որպես ստորադասներ

Օսմանյան կայսրության մեջ ֆունդամենտալ իրողություններ մեկ խմբի՝ թուրքերի գերիշխանությունը և մեկ այլ խմբի՝ հայերի /նաև այլ քրիստոնյաների/ ենթակայությունը: Այս անհավասարությունը հիմնավորվում էր իսլամի իրավական համակարգով, որը ոչ մահմեդական հպատակներին ստորադասում էր մինչև երկրորդ կարգի քաղաքացիների կարգավիճակի[6]: Միլլեթների համակարգը ճանաչում էր ոչ մուսուլմանների իրավունքը դավանելու սեփական կրոնը, սակայն քրիստոնյա «զիմմիները»[7] տարբեր ձևերով հարստահարվում էին: Օրինակ՝ նրանց արգելված էր զենք կրել և ձի հեծնել, նրանց խոսքը դատարանում չուներ նույն կշիռը, ինչ մուսուլմանի խոսքը: Նույնիսկ հատուկ եզրույթ՝ «ռայա»[8], ներմուծվել էր պաշտոնական փաստաթղթեր քրիստոնյային նկարագրելու համար[9]: Հայերի տները մշտապես ավելի բարձր էին հարկվում, հողերը բռնազավթում էին: Ամենօրյա ճնշումները, հայ

---

[6] Տե՛ս Adalian Rouben Paul, "The Armenian Genocide," in *Centuries of Genocide: Essays and Eyewitness Accounts*, edited by Samuel Totten, William S. Parsons, and Israel W. Charny, London and New York: Routledge, 2004, էջ 60–62:

[7] Զիմմի (արաբ.՝ պայմանագրի մարդիկ), մուսուլմանական պետություններում այլակրոն (հատկապես քրիստոնյա և մովսիսական) համայնքներին պատկանող հպատակներ: Անվանումն առաջացել է արաբական արշավանքների ընթացքում (VII դարում), երբ նվաճողները որոշ ժողովուրդների թույլատրեցին դավանել իրենց կրոնը: Արաբները պաշտպանում էին այդ ժողովուրդների կրոնական համայնքները՝ պայմանով, որ նրանք հպատակվեն իրենց, օգնեն «անհավատների» դեմ մղվող «սրբազան» պատերազմում և գլխահարկ վճարեն:

[8] Ռայա (արաբ.՝ հպատակներ, հոտ), սկզբնական շրջանում այսպես էին անվանում պետության բոլոր հպատակներին, հետագայում այս անվանումը ստացավ վիրավորական բնորոշում և օգտագործվում էր միայն քրիստոնյաների նկատմամբ:

[9] Մանրամասն տե՛ս, օրինակ՝ Setian Shahkeh Yaylaian, *Humanity in the Midst of Inhumanity*, Bloomington, IN: Xlibris Corporation, 2011, էջ 91; Melson Robert F., *Revolution and Genocide: On the Origins of the Armenian Genocide and the Holocaust*, Chicago: University of Chicago Press, 1992, էջ 249; Balakian Peter, *The Burning Tigris: The Armenian Genocide and America's Response*, New York: HarperCollins, 2003, էջ 40–43; Bat Ye'or, *Islam and Dhimmitude: Where Civilizations Collide*, Madison and Teaneck, NJ: Fairleigh Dickinson University Press, 2001, էջ 372:

գյուղացու նկատմամբ կիրառվող բռնության տարբեր ձևերը ստեղծում էին Օսմանյան կայսրության հայկական բնակչության մշտական ճնշման իրավիճակ[10]:

Հոգեբանական տեսակետից ամենավտանգավորն այն փաստն էր, որ այլ խմբի իրավունքների բացակայություն ընկալվում էր իբրև բնականոն իրավիճակ, բնական երևույթ: Այն չէր քննարկվում, չէր դառնում բանավեճի թեմա, և երբ ինչ-որ մեկը փորձում էր սասանել այդ համակարգը, դա դառնում էր զարմանքի և վրդովմունքի աղբյուր, որին սովորաբար հետևում էր հաստատված համակարգին մարտահրավեր նետած խմբի նկատմամբ ագրեսիան[11]: 1908 թվականից հետո հարաբերությունները հայերի և թուրքերի միջև պաշտոնապես փոփոխվում են սահմանադրությամբ, սակայն ամենօրյա կյանքում այս փոփոխություններն ընդամենն ավելացնում էին առանց այդ էլ բարդ փոխհարաբերություններում գոյություն ունեցող լարվածությունը:

գ. Հայերը որպես պոտենցիալ զոհեր (անպատժելիություն և կոտորածների ավանդույթ)

Օսմանյան կայսրությունն ուներ քաղաքական խնդիրները բռնությամբ, ընդհուպ մինչև կոտորածների միջոցով լուծելու ավանդույթ: Այս մեթոդներն օգտագործվեցին հույների, սերբերի, բուլղարների, ասորիների և հայերի[12], ինչպես նաև կայսրության այլ փոքրամասնությունների պարագայում: Երիտթուրքերը շարունակեցին այս քաղաքականությունը:

Հայկական կոտորածների ավանդույթն ուղեկցվում էր անպատժելիությամբ: Նրանց կազմակերպիչները և իրականացնողները միշտ մնում էին անպատիժ: Ավելին, նրանցից շատերը ներգրավվում էին սպանությունների հաջորդ շրջանի: Ուշագրավ է Ադանայի՝ 1909 թ. կոտորածներին մասնակից 42 թուրքի դեմ առաջադրված մեղադրանքի[13] նկատմամբ վերաբերմունքը: Թեև նրանք կոտորածների

---

[10] Տե՛ս մասնավորապես Göçek Fatma Müge, "Reading Genocide: Turkish Historiography on 1915," in *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, edited by Ronald Grigor Suny, Fatma Müge Göçek, Norman M. Naimark, Oxford: Oxford University Press, USA, 2011, pp. 58-60: Շատ փաստաթղթեր կարելի է գտնել հետևյալ աղբյուրում՝ *Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey, 1892-93*. Turkey, No. 3 (1896), London, 1896; *Геноцид армян в Османской империи: сборник документов и материалов*, (Сост.: М. Г. Нерсисян, Р.Г. Саакян). 2-е изд., Под ред. Нерсисян М.Г., Ереван: изд. "Айастан", 1982:

21 Սէյմի Ապրիլ 26-ի նիստի արձանագրութիւնները տե՛ս Հ.Հ.Կ.Պ.Պ.Ա. ֆոնտ 222, ցուցակ 1, գործ 197:

22 «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 113:

23 Բաթումի համաձայնագիրը ստորագրուեց Յունիս 4-ին: Բանակցութիւնների մանրամասնութիւնները տե՛ս Ալեքսանդր Խատիսեան, *Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը*, ք. Հրատարակութիւն, Բէյրութ: Համազգայինի տպարան, 1968, էջ 85-94. իսկ համաձայնագրի եւ դրա երեք յաւելուածների բովանդակութիւնը՝ էջ 154-56: Համաձայնագրի պատճէնը ֆրանսերէնով, տե՛ս Հ.Հ.Կ.Պ.Պ.Ա. ֆոնտ 200, ցուցակ 1, գործ 12, էջ 2-13: Կովկասի եւ Թուրքիայի միջեւ առկախ մնացած հարցերը պիտի լուծուէին Պոլսում: Այդու՝ մինչեւ Նոյեմբեր ամիսը Ալեքսանդր Խատիսեանը, Աւետիս Ահարոնեանը եւ Միքայէլ Պապաջանեանը Բաթումի համաձայնագիրը բարեփոխելու համար ապարդիւն ջանքեր էին ի գործ դնում:

Հայաստանի անկախացումով որոշ չափով կասեցուեց կոտորածների յաճախանքը, ի հարկէ, եթէ հաշուի չառնենք հայկական հողին կառչած թաթարների ու թուրքերի շարունակական խլրտումներն ու ահաբեկչութիւնները: Հայերը աւելի մեծ վտանգի տակ էին մուսաւաթականների ձեւակերպած «Ազրբէյջան» կոչուած հանրապետութիւնում, ուր ապրում էին ցրուած: Թաթարներից կազմուած այս նորաստեղծ կուսակցութեան բուն նպատակը Ազրբէյջանը օտարներից մաքրելն էր: Սա թաթարների համար գրաւիչ գաղափարախօսութիւն էր, որ ենթադրում էր մաքրագործումներ եւ ջարդ եւ որ Մուսաւաթ կուսակցութեան շարքերը լցրեց: Մուսաւաթական հրահանգների շարքում էր նաեւ յարձակում ճակատից վերադարձող զինուորների վրայ, սպանութիւն եւ զէնքերի իւրացում:

Դէպի Բաքուի աշխատանքային կոմունայի ստեղծումը

Իւրայատուկ իրավիճակ ունէր Բաքուն: Անդրկովկասի այս միակ ճարտարարուեստականացած քաղաքում, ցարական կայսրութեան փլուզումից յետոյ, տիրում էր բանուորա-զինուորա-նաւաստիների խորհուրդը՝ Բոլշեւիկ փոքրամասնութեամբ: Այդ իրողութիւնն է արտացոլում 1918-ի Յունուար 1-ին գումարուած Պատգամաւորների Խորհրդի մօտաւոր պատկերը՝ 300 պատգամաւորներից 60-ը միայն բոլշեւիկներ, 50-ը ձախ սոցիալիստ-յեղափոխականներ, 45-ը աջ սոցիալիստ-յեղափոխականներ, 55-ը դաշնակցականներ, 52-ը մուսաւաթականներ եւ ուրիշներ[24]: 1917-ի վերջերից Բաքւում գործում էր նաեւ հայ Ազգային Խորհուրդը՝ Թիֆլիսի մարմնին ենթակայ: Կազմի անդամներն էին՝ Աբրահամ Գիւլխանդանեան, Խանասորի Վարդան, Կ. Պարոնակեան, որին փոխարինեց Սարգիս Արարատեանը, Լեւոն Աթարբէկեան, Հայկ Տէր-Միքայէլեան, Ն. Տէր-Ղազարեան: Հրաւիրուեցին կազմին մասնակցելու Ռոստոմը, Յովհաննէս Քաջազնունին եւ բժիշկ Իսախանեանը: Խորհրդակցական ձայնով մասնակցում էին Զաբել Եսայեանը եւ Ռուբէն Քաջբերունին՝ որպէս արեւմտահայերի ներկայացուցիչներ: Կազմի համար որպէս քարտուղար աշխատում էր Ռուբէն Դարբինեանը՝ այդ ժամանակ՝ Ա. Չիլինգարեան[25]: Ռոստոմը Բաքու էր եկել բոլշեւիկեան յեղափոխութեան առաջացրած շփոթի մէջ ռուս բանակի հայ սպաներին եւ զինուորներին ի մի հաւաքելու եւ Ղարաբաղի ու Երեւանի ճամբով ռազմաճակատ ուղարկելու[26]: Բայց զինուած թաթարների յաճախակի յարձակումները խոչընդոտեցին ծրագիրը. նրանք նոյնիսկ երկաթուղին հսկողութեան տակ առնելով, արգիլեցին զինուորների փոխադրութիւնը: Այս

---

[24] Տե՛ս Սերգէյ Մելիք-Եօլչեան, «Բագուի հերոսամարտը», «Հայրենիք» ամսագիր. Գ. Տարի, թիւ 7, 1925: Հեղինակը, որպէս Հ.Յ.Դ. ներկայացուցիչ, եղել է անդամ Բաքուի Խորհրդի եւ նրանից բխած Գործադիր Մարմնի, որ ընտրուած էր հինգ մեծ կուսակցութիւնների ներկայացուցիչներից: Բաքուի Խորհրդի մասին այլ թուեր է ներկայացնում Ռանըլդ Սիւնին *The Baku Commune, 1917-1918* աշխատութեան մէջ: Նա նշում է երկու աղբիւր՝ բոլշեւիկների թիւը 48-ը 200-ի վրայ, կամ 51-ը 190-ի վրայ:

[25] «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 157: Կազմը ներկայացնում էր Դաշնակցութիւն, Ժողովրդական, Սոցիալիստ-յեղափոխական եւ Սոցիալիստ-դեմոկրատ Մենշեւիկ կուսակցութիւնները: Տե՛ս նաեւ «Բագուի հերոսամարտը», էջ 115:

[26] «Ռոստոմ» (Բէյրութ, Հրատ. Հ.Յ.Դ. Համազգայինի, «Վահէ Սեթեան» տպարան, 1979), էջ 208:

բանակայինները յետագային միացան Ռոստոմի նախաձեռնած զօրաշարժին՝ Բաքուի հայ բնակչութեանը թուրք բանակի դէմ պաշտպանելու:

Բնական է, որ Բաքուի տարազան բնակչութեան մէջ կարող էին անհամաձայնութիւններ եւ բախումներ առաջանալ, բայց թէ՛ Բաքուի Խորհուրդի եւ թէ նրա գործադիր մարմնի մէջ կար համագործակցութիւն եւ դա՝ մեծաւ մասամբ բոլշեւիկ ղեկավար՝ Պրոկոֆի (Ալեօշա) Ձափարիձէի տարած համերաշխ գործունէութեան քաղաքականութեան շնորհիւ:

Բաքուի վարչական այս դրուածքը խախտուեց երբ Ստեփան Շահումեանը, որպէս Բոլշեւիկ Ռուսաստանի ներկայացուցիչ եւ Կովկասի Յատուկ Կոմիսար, 1918-ի Փետրուարի կէսերին Բաքու հասաւ: Շահումեանի ներկայութեամբ բնականաբար բարձրացաւ բոլշեւիկեան ազդեցութիւնը Բաքուի Խորհրդի մէջ:

Դաշնակցութիւն-Բոլշեւիկ համագործակցութիւնը յամենայնդէպս շարունակուեց: Դաշնակցութեան նպատակը՝ թուրքական վտանգի դէմ հայ բնակչութեան պաշտպանելն էր. իսկ Շահումեանի տեսանկիւնից դատելով, Դաշնակցութիւնը զինուորական ուժ ունէր, որին ինքը կարիք ունէր: Խորհրդահայ պատմաբան՝ Լենդրուշ Խուրշուդեանը Ասկանազ Մռաւեանին յղում կատարելով հաստատում է թէ «երբ 1918 թուականին Բաքուն կռւում էր թուրքերի դէմ, եւ հիւսիսային Կովկասում ստեղծւում էին դաշնակցական կոմիտէներ, Բաքուի համար կամաւորներ հաւաքագրելու նպատակով, ինքը՝ Մռաւեանը ընկ. Շահումեանից հրահանգ է ստացել աջակցել այդ դաշնակցական կազմակերպութիւններին՝ նրանց Բաքուի պաշտպանութեան գործում օգտագործելու համար»[27]: Սա ի հարկէ Շահումեանի համար գործնական օգտակարութեան բնոյթ էր կրում, որ հակասում էր իր սկզբունքներին եւ անդադար կոչերին, այն է՝ սովետների եւ ոչ ազգային կառոյցների շուրջ համախմբուել: Նման մի կոչում նա ցաւ է յայտնում թէ, «… ռեւոլիւցիոն սովետների փոխարէն մենք ունենք ռէակցիոն բուրժուական կամ կալուածատիրական ազգային խորհուրդներ [ընդգծումը բնագրից], որոնք ազգային կառավարութիւնների դեր են խաղում: Ինտերնացիոնալ սովետական կարմիր գուառդիայի փոխարէն մենք ունենք ռէակցիոն տարրերի կողմից ղեկավարուող ազգային գնդեր»[28]: Այդ սկզբունքային նկատառումը ժամանակի եւ իրավիճակի թելադրանքով նա պիտի մի կողմ դնէր:

Բաքուի հայ բնակչութեան ինքնապաշտպանութեան համար 1918-ի Մարտ 5-ին կազմուեց գերագոյն զինուորական մարմին: Կազմին մասնակցում էին հայ սպաներ՝ գնդ. Բախտամեանը, գնդ. Ղազարեանը եւ Խանասորի Վարդանը: Հայերի այս զօրաշարժը մեծ դժգոհութիւն առաջացրեց Բաքուի Գործադիր Կոմիտէի անդամ մուսաւաթականների մէջ: Հայ գումարտակների զօրահանդէսը աւելի գրգռեց նրանց թշնամանքը: Ռասուլզադէի բորոքը, ուր նա դատապարտում էր Շահումեանին՝ հայերի կողմը բռնելու եւ ազգային հակումներ ցոյց տալու համար,

---

[27] Լ. Խուրշուդեան, *Սովետական Ռուսաստանը եւ Հայկական Հարցը*, Երեւան: Հայաստան հրատարակչութիւն, 1977, էջ 128:

[28] Շահումեան, *«Երկեր»*, էջ 66:

հրատարակուեց կենտրոնի պաշտօնական օրգան՝ «Իզվեստիա» թերթում: Շահումեանը ինքնարդարացման նպատակով խոստացաւ ցրել հայկական զօրամասերը ու նոյնիսկ Ազգային Խորհուրդը ու բացատրեց, թէ հայ բոլշեւիկները ի սէր աշխատաւոր մասսաների այդ ազգային միաւորումների դէմ են պայքարում ամբողջ Կովկասում[29]: Բայց այդ օրերին, մուսաւաթականները արդէն հետաքրքրութիւն չունէին Գործադիր Կոմիտէի մէջ մնալու եւ աստիճանաբար հեռացան՝ իրենց փան-թուրանական նպատակները իրագործելու:

1918-ի Մարտ 18-ին թաթարները, Մուսաւաթի գլխաւորութեամբ Բաքուի Բոլշեւիկ իշխանութեան դէմ ապստամբութեան դուրս եկան եւ շուտով յարձակումները դէպի Բաքուի հայ բնակչութիւնը ուղղուեցին: Համազասպի հայկական ջոկատը պաշտպանութեան դիմեց. միայն հայ զօրամասերի ուժին չյենուելու համար, Շահումեանը նաւատորմի մի քանի բոլշեւիկ նաւերի ուժին դիմելով «Յեղափոխական Պաշտպանութեան Կոմիտէ» կազմեց՝ իր, Ջափարիձէի եւ Գրիգոր Կորգանովի (Ղորղանեան) ղեկավարութեամբ: Մի քանի օրում հնարաւոր դարձաւ թաթարներին յետ մղել:

Ապրիլ 13-ին Սովնարկոմին գրած մի երկար զեկոյցում, Շահումեանը ընդունում էր, որ հայկական զօրամասերը մեծ օգնութիւն էին Բաքուի պաշտպանութեան մէջ, բայց «Դաշնակցութեան պարտիային, թէեւ նա մեզ առայժմ պաշտպանում էլ է ամէն բանում, առայժմ ոչինչ մի խոստացէք եւ ոչինչ մի տուէք: Նրանց ուժեղացնել այլեւս պէտք չէ»[30]: Շահումեանի այս կողմնորոշումը ամբողջովին համընկնում էր Մոսկուայում կազմուած Հայկական Գործերի Կոմիսարիատի հայ բոլշեւիկ ղեկավարների քաղաքականութեանը, որ յստակ հակազգային, հակադաշնակցական ուղղութիւն ունէր, դէմ էր Կովկասի ազգային բաժանումներին եւ պիտի թշնամական կեցուածք ցուցաբերէր անկախ Հայաստանի գաղափարին եւ գործէր նրա գոյութեան դէմ: Հայաստանի անկախութիւնից յետոյ, նոյն ոգով, Սովետների հինգերորդ համագումարը, 1918 Յուլիսին կազմուած, որոշում է կայացնում «դաշնակների ամէն տեսակ գործունէութիւնը դիտել որպէս դաւաճանութիւն»[31]: Այս բոլորով հանդերձ, Շահումեանը մեծ համարում ունէր Ռոստոմի նկատմամբ, որի դերը Բաքուի իրարու դէմ ելած խմբակցութիւնների միջեւ միասնութիւն ստեղծելու մէջ անժխտելի էր:

Բաքուի յաջող պաշտպանութիւնից ոգեւորուած, Շահումեանը ձգտում էր պայքարել «մուսուլմանական նացիոնալիստների» եւ «հայ նացիոնալիստների քաղաքականութեան դէմ» եւ ամբողջ Կովկասում խորհրդային կարգեր հաստատել: Այդ նպատակի իրագործման ճանապարհին, Ապրիլ 8-ին լուծարուած էր յայտարարել բոլոր ազգային խորհուրդները, իսկ ազգային զօրագնդերը պիտի լուծարուէին կամ յանձնուէին Ռազմա-Յեղափոխական Կոմիտէին: Հրամանը կատարուել էր:

---

[29] Նոյն տեղում, էջ 100-101:

[30] Նոյն տեղում, էջ 143-147:

[31] Գաբրիէլ Լազեան, *Հայաստան եւ Հայ Դատը*, վերահրատարակութիւն, Թեհրան: Արմէն հրատարակչական, 1985), էջ 196: Մէջբերումը կատարուած է Վ. Ի. Լենինի «Երկեր», հատոր 35-ի էջ 377-ից:

Համազասպի կազմակերպած հայկական զօրամասերը Կարմիր Բանակի մէջ էին առնուել: Այսպիսով, Բաքուում տիրում էր բոլշեւիկեան իշխանութիւն եւ ղեկավարւում Բաքուի Ժողովրդական Կոմիսարների Սովետի միջոցով, որին նախագահում էր Շահումեանը: Բաքուն «աշխատանքային կոմունա» էր դարձել:

Այնուամենայնիւ, Բաքուում շարունակւում էին թաթարների խլրտումներն ու յարձակումները հայ բնակչութեան վրայ: Տարածուել էր օսմանեան բանակի առաջխաղացման լուրը եւ թաթարները ոգեւորուած այս անգամ թուրքերի օգնութեան էին սպասում: Բաքուի բոլշեւիկ իշխանութիւնը մեծ բանակ էր կազմակերպում օսմանեան բանակին դէմ դնելու համար, որից յետոյ պիտի անցնէր Գանձակ եւ Թիֆլիս՝ խորհրդային կարգեր տարածելու ամբողջ Անդրկովկասում:

Մայիսի կէսերին Բաքուում կազմակերպուած բանակը Ջօր. Յակոբ Բագրատունիի ղեկավարութեամբ թաթարներին սանձելով շարժւում է դէպի Գանձակ, ուր մուսաւաթականների ուժն ու ազդեցութիւնն էր կենտրոնացած: Շահումեանը իր նպատակն էր հետապնդում, իսկ հայկական գումարտակը գնում էր թուրքերից վրէժ լուծելու եւ Թիֆլիսի վրայով Հայաստանին օգնութեան հասնելու:

Բայց դէպքերը Բաքուից անդին տարբեր ընթացք էին ստանում: Շահումեանը դժգոհ էր: Յունիս 23-ին Լենինին յղած նամակում գրում է, «Մեր դրութիւնը միջազգային տեսակէտից իսկապէս սոսկալի է: Անկախ Վրաստան, անկախ Ազրբէյջան, որպէս թէ անկախ Հայաստան»[32]:

Յունիս 5-ին սկսել էր Բաքուի բանակի հակա-յարձակողական գործողութիւնը թուրք-ազրբէյջանական ուժերի դէմ: Բաքու էր հասել նաեւ Լազար Բիչերախովը իր զօրամասով եւ Բաքուի պաշտպանութեան պետ էր նշանակուել: Բիչերախովի գալը մեծ ոգեւորութիւն էր ստեղծել. բայց թուրք ռազմական գործողութիւնները ուժեղ էին:

Ցեգնանքն այտեղ է, որ միեւնոյն ժամանակ երբ Շահումեանը Թուրքիայից սպառնացող վտանգի մասին անդադար զեկոյցներ էր յղում Մոսկուա եւ թուրք-գերմանական համաձայնութիւնը Կովկասի խորհրդային իշխանութեան ամենամեծ թշնամին էր համարում, երբ Բաքուի պրոլետարիատի անունից երդւում էր ո՛չ մի կաթիլ նաւթ չտալ թուրքերին, Լենինը թուրքերին բարեկամութեան ձեռք մեկնած համաձայնութիւններ էր կնքում եւ գերմանացիներին Բաքուի նաւթից խոստանում: Նա լուր է ուղարկում Շահումեանին, որ գերմանացիները Բեռլինում Ռուսաստանը ներկայացնող Ադոլֆ Եօֆֆէին խոստացել են արգիլել թուրքերի յարձակումը Բաքուի վրայ եթէ նաւթ տրուի իրենց[33]: Եւ իրօք, Մայիս 31-ին Եօֆֆէն բողոքել էր Բրեստ-Լիտովսկի համաձայնագիրը խախտելու եւ Անդրկովկասեան երկաթուղու անօրինական օգտագործման կապակցութեամբ: Իրականութեան մէջ այդ գնացքներով թուրք բանակն էր դէպի Բաքու փոխադրւում[34]: Ըստ ռուս-գերմանական գաղտնի համաձայնութեան, Գերմանիան ընդունում էր Ռուսաստանի իշխանու-

---

32 Շահումեան, *«Երկեր»*, էջ 324:

33 Նոյն տեղում, էջ 143-147:
«Հայաստան և Հայ Դատը», էջ 196:

34 Hovannisian Richard G., *Armenia on the Road to Independence*, էջ 217-18:

թիւնը հարաւային եւ արեւելեան Կովկասում եթէ իրեն տրուէր Վրաստանի հովանաւորութիւնը եւ նաւթ Բաքուից: Բոլշեւիկ Ռուսաստանը չէր դադարել Հայաստան, Ազրբէյջան, Վրաստան հանրապետութիւնների բաժանուած Կովկասը իր ներքին գործը համարելուց: Այդ ծիրի մէջ Ստալինը Շահումեանին յղած Օգոստոս 8 թուակիր նամակում իր եւ Լենինի կողմից յայտնում էր, թէ պիտի ստիպի Գերմանիային ընդունել այդ իրողութիւնը եւ եթէ Ռուսաստանը պարտաւոր լինի Վրաստանը զիջելու, ապա՝ միւս երկուսը չի զիջի[35]:

Չնայած Լենինի հաւաստիացումներին թուրքական յարձակումները աւելի էին ուժգնացել: Այս անգամ, Էնվերի եղբայր՝ Նուրի Փաշան հայատեաց մոլուցքով դէպի Բաքու՝ տեղի թաթարներին եւ Խալիլ Փաշայի հրամանատարութեան տակ կռուող ու Բաքուի դռներին մօտեցած թուրք բանակին օգնութեան էր շտապում: Վտանգաւոր իրավիճակը եւ անհաւասար կռուի հեռանկարը տեսնելով, Բիչերախովը իր զօրամասը առած Յուլիս 26-ին դիրքերը թողեց ու հեռացաւ:

Բաքուի պաշտպանութիւնը միայն ներքին ուժերով հնարաւոր չէր: Շահումեանը դիմել էր Մոսկուային ռազմական օժանդակութիւն ուղարկել: Կարելիութիւններից մէկն էլ անգլիացիներին դիմելն էր, որին դէմ էր Շահումեանը: Նրա կարծիքով դա նշանակում էր հրաժարուել Ռուսաստանի, Բաքուի եւ Անդրկովկասի անկախութիւնից[36]: Բացի այդ, նա կասկածում էր, որ անգլիացիները մեծ ուժ կը տրամադրեն եւ շահագրգռուած կլինեն կռուել Անդրկովկասում խորհրդային իշխանութիւն հաստատելու համար[37]:

Բաքուի Սովետի Յուլիս 25-ի ընդլայնուած արտակարգ նիստում հարց բարձրացուեց անգլիացիների օգնութեանը դիմելու մասին: Գերակշռող էր այն կարծիքը, թէ անգլիացիները պիտի հրաւիրուեն Բաքուի պաշտպանութեանը օժանդակելու: Այդ պայմաններում Բաքուի իշխանութիւնը պիտի հրաժարուէր Կենտրոնական Սովետական իշխանութիւնը ճանաչելուց եւ կոալիցիոն կառավարութիւն պիտի կազմուէր: Շահումեանը չկարողանալով կարծիքները իր կողմ թեքել, զայրոյթով ներկայացրեց Կոմիսարիատի հրաժարականը: Նրա կարծիքով, Դաշնակցութիւնը դաւաճանել էր իրեն եւ իր քուէով նժարը բոլշեւիկ իշխանութեան դէմ էր թեքել[38]: Իսկ Մոսկուայի խոստացած զօրքը ուշանում էր: Ըստ Գաբրիէլ Լազեանի, Շահումեանը Յուլիս 29-ին Լենինից նամակ էր ստացել ուր նա գրում էր, «զօրքեր ուղարկելու նկատմամբ միջոցներ ձեռք կառնենք, բայց հաստատապէս խոստանալ չենք կարող»[39]:

Յուլիս 30-ին Շահումեանը Բանուորա-գիւղացիական-նաւաստիների Խորհրդի արտակարգ նիստ է հրաւիրում Ժողկոմսովետի հրաժարման մասին բացատրութիւն տալու համար: Ըստ Սերգէյ Մելիք-Եօլչեանի, քաղաքում տիրող խուճապի պատճառով, 300 անդամներից ներկայ են լինում 70-80 հոգի միայն: Այդ նիստում

---

35 «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 159:

36 Շահումեան, «Երկեր», էջ 360:

37 Նոյն տեղում, էջ 369:

38 Նոյն տեղում, էջ 387-90:

39 *«Հայաստան եւ Հայ Դատը»*, էջ 196:

Շահումեանը ներկայացնելով իրավիճակը, դրա պատասխանատուութիւնը բարդում է դաշնակցականների վրայ եւ նրանց դաւաճան որակում[40]: Իսկ ժողովրդին բացատրութիւն տալու համար, յայտարարում է, թէ քանի որ քաղաքի յանձնումը անխուսափելի է, «Չցանկանալով խանգարել բնակչութեանը՝ օգտագործել վերջին միջոցը՝ յաղթողի գթասրտութեան անձնատուր լինելու ցանկութիւնը, Ժողովրդական Կոմիսարների Սովետը որոշեց հրաժարուել»[41]: «Հայրենիք» ամսագրի իր յօդուածում Մելիք-Եօլչեանը յիշում է իր բողոքը Շահումեանին՝ Բաքուի հայ բնակչութեան սպառնացող վտանգին ի տես նրա հրաժարուելու եւ հեռանալու կապակցութեամբ: Շահումեանը պատասխանում է, «Մենք կատարում ենք համաշխարհային յեղափոխութիւն, որի ժամանակ ժողովուրդներ ու ազգեր կարող են ոչնչանալ: Ի՞նչ ցաւ, եթէ սոցիալիզմը իրագործելու համար անգամ հայ ազգը զոհուի»: Նոյնանման արտայայտութիւն է վկայագրում Գրիգոր Ամիրեանը: Նրա ասութեամբ, Սեպուհի եւ Մուրադի հետ հանդիպման ընթացքում, Շահումեանը նորից անգլիացիներին հրաւիրելու դէմ է խօսել՝ տրամաբանելով, որ եթէ անգլիացիները մտնեն այլեւս չեն հեռանայ Բաքուից, իսկ թուրքերին ռուսները կարող են դիւրութեամբ հեռացնել: Իսկ երբ նրան հարց են տուել, թէ հապա ի՞նչ կլինի հայերի վիճակը եթէ թուրք բանակը Բաքու մտնի, Շահումեանը պատասխանել է, «Համաշխարհային յեղափոխութեան յաղթանակի համար ի՞նչ նշանակութիւն ունի հայ ժողովրդի գոյութիւնը»[42]: Յիշենք որ յայտնի ֆիդայիներ՝ Սեպուհը եւ Մուրադը Վոլգայի ափերից Բաքու էին եկել յատկապէս հայ բնակչութեան պաշտպանութեանը մասնակցելու:

Անհաւատալի է լենինեան քաղաքականութեան զոհ, այս մոլեռանդ բոլշեւիկի վարած քաղաքականութիւնը եւ որքան դիպուկ Ռուբէն Խուրշուդեանի դիտարկումը՝ «Հայ բոլշեւիկները կուրօրէն հետեւեցին լենինեան քաղաքականութեանը եւ օբիեքտիւօրէն ուղի հարթեցին սեփական ժողովրդի կործանման համար»[43]:

Անելանելի իրավիճակում որոշւում է քաղաքը յանձնել արդէն 15 մղոնից սպառնացող Նուրի Փաշայի զօրքին: Ժողկոմսովետը հրաժարուելով իր լիազօրութիւններից, գոյքեր, ռազմամթերք, զինուորական հագուստեղէն, բանկային հարստութիւն եւ այլն նաւերի վրայ բարձած հեռանում է քաղաքից: Նոյն գիշեր, Դաշնակցութեան Կենտրոնական Կոմիտէի ժողովը լուր առնելով, որ Պարսկաստանում տեղակայուած Լայընըլ Դանսթըրվիլի զօրքը պատրաստ է օգնութեան գալու, որոշում է քաղաքը չյանձնել եւ շարունակել պաշտպանութիւնը: Միեւնոյն ժամանակ Կասպից Ծովի ռազմական նաւատորմի կենտրոնական կոմիտէն Բաքւում մնացած նաւատորմի մասնակցութեամբ ստեղծւում է «Դիկտատուրա Կասպիան Նաւատորմի» (Ցենտրոկասպիայի դիկտատուրա): Կազմին մասնակցում են հայ ներկա-

---

[40] Մելիք-Եօլչեան, *Բագուի Հերոսամարտը*, «Հայրենիք » ամսագիր, գ. Տարի, թիւ 9, Յուլիս, 1925:

[41] Շահումեան, *«Երկեր»*, էջ 397:

[42] Տե՛ս Գրիգոր Ամիրեանի յօդուածը *«Ռոսկում»* հատորում, էջ 389:

[43] Տե՛ս Ռուբէն Խուրշուդեանի «Եղեռնը եւ Բոլշեւիզմը» յօդուածը «Հայոց Ցեղասպանութիւն, Պատճառներ եւ դասեր» հատորում՝ «Անլռելի Զանգակատուն» Մատենաշար (Երեւան, հրատարակութիւն Ազգային Հարցի եւ Գենոցիդի Ուսումնասիրութեան Կենտրոնի, 1995), էջ 21-35:

յացուցիչներ՝ Ալեքսանդր Առաքելեան, Սերգէյ Մելիք-Եօլչեան, Աւետիս Օհանջանեան, յետոյ՝ Ռոստոմ[44]:

Բաքուն պաշտպանելու մի վերջին ճիգով, բանակը եւ հայկական զօրամասերը դէմ են դնում Նուրի Փաշայի յարձակմանը: Այդ կռւում զոհւում են մեծ թուով հայ մարտիկներ: Դրանց մէջ էր նաեւ Մուրադը (Սեբաստացի): Յուլիս 31-ին սկսած կռուին Օգոստոս 5-ին գալիս է միանալու անգլիացի Ստոքսը իր 40 զօրականներով՝ զարմանք եւ յուսախաբութիւն պատճառելով ղեկավարութեանը: Յետոյ հասնում են մի երկու այլ զօրամասեր, ընդհանուր 1500-2000 զինուոր: Դանստըրվիլի խոստացած ուժերը Բաքու չեն հասնում: Միջագետքի անգլիական ուժերի ընդհանուր հրամանատար զօր. Մարշըլը դէմ էր Բաքուի գործողութեանը[45]: Իսկ նոյն օրերին, Օգոստոս 26-ին, Բաքւում հրատարակուել էր Ռուսաստանի ժողովուրդներին ուղղուած Անգլիայի արտաքին գործոց նախարար Արթըր Բալֆուրի կոչը, ուր նա պաշտպանում էր Ռուսաստանի ամբողջականութիւնը եւ դատապարտում նրա անդամահատութիւնը[46]:

Հայերի վերջին կոտորածը 1914-1918 պատերազմական ժամանակահատուածում

Օգնական ուժեր ստացած թուրքական զօրքը Օգոստոս 29-ին նոր յարձակման է դիմում: Անհաւասար կռւում մէկ առ մէկ ընկնում են Բաքուի պաշտպանութեան դիրքերը: Ստացւում է քաղաքը յանձնելու վերջնագիր, ի հարկէ, հաւաստիացնելով, որ հայ բնակչութեանը վտանգ չի սպառնում եւ եթէ ցանկանան կարող են հեռանալ քաղաքից: Սեպտեմբեր 15-ին, երբ հայկական թաղերը վառւում էին կրակների մէջ, Յենտրօկասպիայի Դիկտատուրան հեռանում է քաղաքից: Հեռանում են նաեւ հայ ղեկավարութեան մեծ մասը, իսկ թուով 163.000 ոչ-մուսուլման բնակչութիւնից 50.000-ը միայն: Դրանցից առաջ անգլիական զօրամասերը սպառնացող վտանգի տակ Պարսկաստան էին անցել:

Յատկանշական է, որ օսմանեան բանակը Բաքուի դռներին կանգնած սպասել էր՝ տեղի թաթարներին առիթ տալով, որ իրենց աւանդական կողոպուտի ու սպանդի բաժինը առանձին վայելեն: Թուրք եւ թաթար զօրախմբերը մուսուլման բնակչութեան միացած շարունակում են անասելի վայրագութիւնները մինչեւ յաջորդ օր երբ յաղթական զօրքը քաղաք է մտնում: Կատարուած ամենապահպանողական հաշուարկով, 70-80 հազար հայ բնակչութիւնից զոհուել էր 30.000-ը:

Բաքուի գրաւման մասին հետաքրքիր բացայայտումներ է կատարում Վահագն Տատրեանը: Ըստ պատմագէտին, խուսափելու համար Բրեստ-Լիտովսկի համա-

---

[44] Այս մասին վկայում է Մելիք-Եօլչեանը «Հայրենիք» ամսագրի իր յօդուածում, ինչպէս նաեւ Սիմոն Վրացեանը՝ «Հայաստանի Հանրապետութիւն» ում, էջ 170-71:

[45] Kazenzadeh Firuz, *The Struggle for Transcaucasia, 1917-1921,* (New York: Philosophical Library, 1951, էջ 140: Հեղինակը օգտագործել է Դանստըրվիլի 1932-ին հրատարակած *The Adventures of Dunsterforce* –ը:

[46] Տե՛ս Մասուրեան Ս., «Ռուսաստանը բեկման շրջանում», «Հայրենիք » ամսագիր, Ե. Տարի, թիւ 12, Հոկտեմբեր, 1927:

ձայնագիրը խախտած լինելու մեղադրանքից, Էնվերը իր բնակարանում տեղադրուած գաղտնի հեռագրով կարգադրում է Խալիլ Փաշային Բաքուն գրաւել: Ապա՝ երբ Խալիլ Փաշան Բաքուի գրաւման լուրն է հաղորդում կենտրոնին, Էնվերը պաշտօնական հեռագրով կշտամբում է նրան եւ կարգադրում Կարս վերադառնալ. իսկ գաղտնի հեռագրով շնորհաւորում է նրան եւ իր խնդակցութիւնը յայտնում: Բաքուի գրաւման փաստի առջեւ կանգնած, գերմանացիները մի ձիաւոր ջոկատ են ուղարկում՝ հայերի ջարդը կասեցնելու համար, բայց թուրքերը մի երկու կամուրջ պայթացնելով արգիլում են նրանց մուտքը քաղաք[47]:

Դարձեալ, ի՞նչ էր Մոսկուայի հակադարձը: Օսմանեան արտաքին գործոց նախարարութեան յղած Սեպտեմբեր 20-ի թուակիր մի երկար բողոքագրով, Չիչերինը դատապարտում էր Բաքուի ոչ-մահմեդական բնակչութեան ջարդը եւ յիշեցնում Կարսի, Արդահանի եւ Բաթումի բնակչութեան կոտորածները[48]: Միեւնոյն ժամանակ նա կարգադրում է Եօֆէին Բեռլինում գերմանացիներին բողոք ներկայացնել թուրքերի կողմից Բրեստ-Լիտովսկի համաձայնագրի խախտման կապակցութեամբ ու յիշեցնել թուրք բանակի վայրագութիւնները Կարս-Արդահան-Բաթում գծի վրայ եւ մինչեւ Բաքու: Իսկ Թալէաթը Բեռլինում փորձում էր Անդրկովկասում թուրքական աւելի մեծ ազդեցութիւն եւ միջամտութեան իրաւունք ապահովել: Բաքուի (նաթահորերի) գրաւումով այս անգամ արդէն խորհրդային շահերն էին խնդրոյ առարկայ: Բայց դրա լուծումը պիտի մնար յետագային՝ երբ Կարմիր Բանակը ներս կը մտնէր՝ Ազրբէյջանի անկախութիւնը տապալելու եւ նաթահորերին տէր կանգնելու:

Ռուսեւգերման եւ ռուսեթուրք բանակցութիւնները շարունակուեցին: Արծարծուեց Չիչերինի յղած վերջնագիրը: Սովնարկոմը չեղեալ յայտարարեց Բրեստ-Լիտովսկի համաձայնագիրը: Բայց, դէպքերը այլ ընթացք էին ստացել: Մօտալուտ էին Քառեակ գինակցութեան պարտութիւնը, Երիտթուրքերի կառավարութեան անկումը եւ Մուդրոսի զինադադարը: Հաստատուած իրողութիւնը այն էր սակայն, որ Բաքուից վռնտուել էին թուրքին ատելի հայերը եւ բոլշեւիկները եւ Ազրբէյջանի անկախ հանրապետութեան մայրաքաղաքը Գանձակից Բաքու էր փոխադրուել:

Քաղաքական եւ դիւանագիտական խառնակ իրավիճակը իրենց շահին օգտագործելով, թուրք բանակը եւ թուրքի դրդումներով աւելի հայատեաց դարձած թաթարները կարողացան իրականացնել Երիտթուրքերի նիւթած ցեղասպանութեան այս վերջին գործողութիւնը եւս Բաքւում Պատերազմը աւարտին չհասած:

Հետեւութիւններ

Գրչի արագ հարուածով փորձեցի նկարագրել իրավիճակն ու կարեւոր իրադարձութիւնները՝ 1917, Հոկտեմբեր (Նոյեմբեր) – 1918, Սեպտեմբեր ճակատագրական ժամանակաշրջանում՝ ներկայացնելու համար այն հակադիր ուժերը որոնց ներ-

---

[47] Dadrian Vahakn, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Providence, Oxford: Berghahn Books, 1995), էջ 385:

[48] Հ.Հ.Կ.Պ.Պ.Ա. ֆոնտ 200, ցուցակ 1, գործ 80, էջ 60-62:

գործումը եւ անհաշտ բախումները Անդրկովկասում եկան դիւրացնելու թուրքի ցեղասպանական գործողութիւնների շարունակականութիւնը. Այս անգամ Օսմանեան Կայսրութեան տարածքից անդին՝ Անդրկովկասում, մինչեւ վերջինը՝ Բաքուի հայ բնակչութեան դէմ՝ նախքան Պատերազմի աւարտը:

Նկարագրութեանս ընդմիջից արտացոլում գտած հայ ժողովրդի գոյութեան եւ նրա ազգային շահերի դէմ գործող կարեւոր ազդակները ցանկագրութեան պէս ներկայացնում եմ ներքեւում:

- Բոլշեւիկեան յեղափոխութիւնը, որին հետեւեց կովկասեան ճակատի պարպումը, որը եւ Արեւմտահայաստանի անկման կարեւոր պատճառը դարձաւ.
- Ապա՝ Բրեստ-Լիտովսկի համաձայնագիրը, որը թուրքերին ազատութիւն տուեց հայկական հողերի վրայ առաջանալու եւ աւէր ու կոտորած գործելու:
- Լենինեան քաղաքականութեան անտարբեր կեցուածքը դէպի հայկական հարցը եւ Չիչերինի անարդիւնք, որոշ չափով էլ ձեւական բողոքները գերմանացիներին ու թուրքերին ուղղուած՝ ի հակադարձութիւն թուրք բանակի ոտնձգութիւններին: Այդտեղ էլ Հայկական Հարցը բոլշեւիկների ձեռքում խաղաքարդ էր միայն:
- Սովնարկոմի կամ Լենինի հետապնդած քաղաքականութիւնը, որի գործադիր ձեռքերն էին ու դեռ աւելի հրահրողը Ստեփան Շահումեանը Կովկասում եւ Հայկական Գործերի Կոմիսարիատը Մոսկուայում: Այս վերջինս իր գոյութեան նպատակից շեղուելով, իր ծաւալած գործունէութեամբ դարձաւ հայ ժողովրդի ազգային շահերի եւ անկախութեան պայքարի դէմ բարձրացած պատնէշ:
- Կովկասի ժողովուրդներին եւ Բաքուի նաւթին կապուող գերման-բոլշեւիկ գաղտնի համաձայնութիւնները:
- Հայ բոլշեւիկների մոլեգին անհանդուրժողութիւնը Դաշնակցութեան եւ նրա իւրաքանչիւր նախաձեռնութեան դէմ: Այս վարքագիծը ընդհանրապէս գործում էր ի շահ բոլշեւիզմի տարածման եւ ինտերնացիոնալիստական պրոլետարական յաղթանակի եւ ի վնաս հայ ազգային շահերի:
- Անհանդուրժող մուսաւաթականների եւ թուրքերի կողմից գրգռուած թաթարների խլրտումներն ու ահաբեկչութիւնները՝ անջատ սպանդներ ու կողոպուտ:
- Դարձեալ թաթարների յարձակումներ երկաթուղագծի վրայ որ արգելք դարձաւ հայ բանակայինների համախմբումն ու փոխադրութիւնը կովկասեան ճակատ:
- Անդրկովկասի երեք ազգութիւնների՝ վրացիների, հայերի եւ թաթարների միջեւ անլուծելի հարցերը՝ խառն բնակչութիւն, հողային պատկանելիութեան եւ սահմանային հարցեր, քաղաքական եւ դիւանագիտական ասպարէզում միասնութեան բացակայութիւն: Վրացի ղեկավարների շեշտուած ազգայնականութիւնը, որ Անդրկովկասի բարձր ղեկավարութեան իրենց դիրքերից, ընդհանուր շահերը զոհում էին վրացական շահերին: Ապա՝ մուսուլման ժողովուրդների մէջ քաղաքական նպատակներով հակա-քրիստոնեայ միտումների հրահրումը, որ բերում էր գրգռութիւնների, անկարգութիւնների եւ խլրտումների:
- Դաշնակից պետութիւնների անտարբեր կեցուածքը դէպի կովկասահայութիւնը եւ մանաւանդ անգլիական քաղաքականութիւնը Կովկասում:
- Բաքուի ղեկավարութեան սխալ որոշումը անգլիական ուժեր հրաւիրելու: Դրա

հետեւանքով, բացի այն որ անգլիացիները կռուի ընթացքի վրայ որեւէ ազդեցութիւն չունեցան, նրանց ներկայութիւնը նախ՝ պատրուակ էր թուրքերի համար Գերմանիոյ օրհնութեամբ Բաքու մտնելու՝ Դաշնակիցներին Անդրկովկասից վտարելու համար, եւ յետոյ, առիթ՝ Բաքուի Կոմիսարիատի համար հրաժարուելու եւ քաղաքից հեռանալու:

Աշխարհաքաղաքական այս բարդ ու իրարամերժ իրադարձութիւնների յորձանուտի մէջ բռնուած հայ ժողովուրդը տանուլ տուեց՝ թէ՛ իր անկախութեան կործանման եւ թէ թուային կորստի տեսակէտից: Այստեղ, ի հարկէ, անարդար կլինի բացառել ներքին ու արտաքին ոլորտներում թոյլ տրուած սխալները: Բայց պէտք է նաեւ տեսնել հայ ժողովրդի ազգային շահերի ընդհուպ մինչեւ նրա գոյութեան դէմ բոլշեւիկեան ամբողջատիրական ծրագրերի եւ թուրքական փան-թուրանական ձգտումների ներգործութիւնը, եւ մանաւանդ՝ այդ երկու հզօր ուժերի ժամանակաւոր զօրակցութիւնը:

Հաւատալով Ջորջ Սանթայեանայի այն արտայայտութեան, թէ "Those who cannot remember the past are condemned to repeat it"[49] (նրանք ովքեր չեն կարողանում յիշել անցեալը դատապարտուած են այն կրկնելու), եւ որպէսզի անցեալի սխալները չկրկնուեն, այս սեղմ ու հպանցիկ զեկոյցս եզրափակում եմ «Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշեւիկ Յարաբերութիւնների Ոլորտում 1917-1921» աշխատութեանս վերջին հաստատումս կրկնելով:

Պատմութեան մէջ պարզապէս խորանալ եւ նրանից դասեր քաղել է պէտք[50]:

ՀԱԿԱԴԻՐ ՈՒԺԵՐԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵԿԱՆ ԴԻՒՐԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՐՔԻ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԵՒ ՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ՝ ՆԱԽՔԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՒԱՐՏԸ

Ռուբինա Փիրումեան

ԱՄՓՈՓՈՒՄ

Բոլշեւիկեան յեղափոխութեանը հետեւող քաոսային մթնոլորտում, կովկասեան տարաբնոյթ եւ իրարամերժ ուժեր իրենց ազդեցութեան դաշտը տարածելով առճակատման անցան՝ իւրաքանչիւրը նախկին Ցարական կայսրութեան կովկասեան նահանգների տարածքային եւ ժողովրդագրական վերաբաժանումներն ի շահ իրեն իրականացնելու: Մուսաւաթականներ, հայ բոլշեւիկներ, Բոլշեւիկ Ռուսաստանի կենտրոնական իշխանութեան քաղաքականութիւնը վարող Բաքուի Սովնարկոմ, գերմանացիների եւ անգլիացիների դերակատարութիւն, բոլշեւիկների գաղտնի համաձայնութիւններ՝ գերմանացիների եւ Երիտթուրքերի հետ, մոլեռանդ թաթարների շարունակական յարձակումներ հայերի դէմ, ահա՛ կարեւորները այն գործօնների, որոնց անյաղթահարելի համադրութիւնը եկաւ խոչընդոտելու հայ ժողովրդի գոյատեւման տենչն ու յարատեւման պայքարը եւ դիւրացրեց օսմանեան

---

[49] George Santayana, *The Life of Reason*, vol. 1 (1905), p. 284.

[50] «Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշեւիկ Յարաբերութիւնների Ոլորտում 1917-1921», էջ 389:

բանակի յառաջխաղացքը դէպի Բաքու՝ իրագործելու համար օսմանեան վերջին ցեղասպանական գործողութիւնը հայերի դէմ՝ նախքան Պատերազմի աւարտը:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանութիւն, Բոլշեւիկեան յեղափոխութիւն, Անդրկովկաս, Առաջին աշխարհամարտ:

CONFLICTING FACTORS AT WORK IN TRANSCAUCASIA FACILITATED THE CONTINUATION OF THE TURKISH GENOCIDE OF ARMENIANS BEFORE THE END OF WWI

Rubina Peroomian

ABSTRACT

In the chaotic atmosphere, after the Bolshevik revolution, conflicting factors went into play and fractions entered into open war against each other for the territorial and demographic redistribution of the former Tsarist Russia's provinces in Transcaucasia. The Musavatists, the Armenian Bolsheviks and the long arm of Moscow's central government, the Baku Sovnarkom, the Germans and the British presence, the secret agreements of Bolsheviks with the Germans and the Young Turks, the sporadic attacks and massacres of Armenians by fanatically religious Tatars, all worked to foil the Armenian quest for survival and paved the way for the Ottoman army to advance toward Baku to realize the last genocidal act against Armenians just before the end of WWI.

Keywords: Armenian Genocide, Bolshevik Revolution, Transcaucasia, First World War.

КОНФЛИКТНЫЕ ФАКТОРЫ В ЗАКАВКАЗЬЕ, ОБЛЕГЧИВШИЕ ПРОДОЛЖЕНИЕ ОСУЩЕСТВЛЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН ДО ОКОНЧАНИЯ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Рубина Пирумян

РЕЗЮМЕ

В хаотичной атмосфере после большевистской революции конфликтующие факторы и группировки вступили в открытое противостояние, вступив в игру против друг друга с целью территориально-демографического перераспределения провинций бывшей царской России в Закавказье.

Мусаватисты, армянские большевики и длинная рука центрального правительства Москвы, бакинский Совнарком, немцы и британское присутствие, тайные соглашения большевиков с немцами и младотурками, периодические нападения и погромы армян фанатично религиозно настроенными татарами– все эти факторы работали против борьбы армян за выживание, для того, чтобы проложить путь османской армии на Баку и осуществить последний акт Геноцида армян незадолго до окончания Первой мировой войны.

Ключевые слова: Геноцид армян, Большевистская революция, Закавказье, Первая мировая война.

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ՎԵՐԱԲԱՆԱՁԵՎՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Հարություն Մարության

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ձեռնարկների ու միջոցառումների մի զգալի մասն ուղղված էր աշխարհին և Թուրքիային: Սա օրինաչափ էր և ակնկալվում էր, որ այդպես էլ պետք է լինի: Սակայն Ցեղասպանության 100-րդ տարելիցը նաև մի յուրօրինակ սահմանագիծ է, ելակետ ներհայկական խնդիրների լուծման իմաստով: Եվ դրանք քիչ չեն[1]: Ստորև համառոտ շեշտադրվում է ընդամենը մեկ կետ:

Հայոց ցեղասպանությանն առնչվող ամենամյա հիշատակումների ժամանակ, որպես կանոն, շեշտադրումներն արվում են «ցեղասպանության զոհերին», երբեմն էլ, որպես լրացում, հիշվում են հայ ֆիդայիները, ինքնապաշտպանական մարտերը: Սակայն այս «լրացումը», այնուամենայնիվ, մաս չի կազմում պաշտոնական, ինստիտուցիոնալ ձևակերպման, ինչը, մեր համոզմամբ, ուզում ենք դա թե ոչ, բերում է զոհի կաղապարի, զոհի մշակույթի գոյատևմանը նպաստելուն[2]:

Մինչդեռ Հայոց ցեղասպանության ու մասնավորապես Առաջին աշխարհամարտի տարիներին առկա էին նաև այլ իրողություններ: Ռուսական կայսրության Գլխավոր հրամանատարության պաշտոնական տվյալներով պատերազմի սկզբից ի վեր Արևմտյան և Կովկասյան ճակատներում կռվող հայազգի զինվորների թիվը կազմում էր մոտ 300 հազ. մարդ: Ձևավորվեցին յոթ հայկական կամավորական ջոկատներ՝ իրենց կազմում ունենալով 6 հազ. հոգի[3]: 1916 թ. նոյեմբերին ֆրանսիական զորքերի կազմում ստեղծվեց հայերից բաղկացած Արևելյան լեգեոնը (ավելի քան 5 հազ. զինվոր), որը 1918 թ. դեկտեմբերին վերանվանվեց Հայկական լեգեոն[4]:

Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրությունում տեղ գտան հայերի մի շարք ինքնապաշտպանական կռիվներ: Նախ՝ նշենք քաղաքներն ու խոշոր բնակավայրերը. Շատախ/Թաղ (1915 թ. ապրիլի 1-մայիսի 14), Վան (1915 թ.

---

[1] Առաջարկությունների փաթեթն առաջին անգամ բարձրաձայնվել է 2013 թ. մարտին-ապրիլին, առանձին հրապարակման ձևով լույս է տեսել 2014 թ. (տե՛ս Մարութեան Յ., *Առաջարկութիւններ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի նշմանն ընդառաջ*, «Ազդակ» ապրիլեան բացառիկ, Բեյրութ, 2014, էջ 17-24):

[2] Անդրադարձ երևույթի պատճառներին տե՛ս Մարության Հ., *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Վարաբաղյան շարժումը*, Երևան, «Գիտություն» հրատարակչություն 2009, էջ 63-66, 70-72:

[3] Աղբյուրները վկայում են, որ կամավորական շարժմանը մասնակցել ցանկացողների թիվը շատ ավելի մեծ էր ոչ միայն Հայաստանից և Անդրկովկասից, այլ նաև Ռուսաստանի մյուս վայրերից, արտասահմանյան երկրներից, սակայն Կովկասյան բանակի հրամանատարությունը, ղեկավարվելով կառավարության ցուցումներով, գիտակցաբար չգնաց կամավորների թվի ավելացման (տե՛ս Арутюнян А. О. *Кавказский фронт 1914-1917 гг.*, Ереван, издательство “Айастан”, էջ 296, 297, 317):

[4] Տե՛ս *Армянский вопрос. Энциклопедия* (отв. ред. Худавердян К. С.), Ереван, Главная редакция Армянской энциклопедии, 1991, էջ 59:

ապրիլի 7 – մայիսի 3), Շապին-Գարահիսար (1915 թ. հունիսի 2-29), Մուշ (1915 թ. հունիսի 26-29), Ֆընտըճագ (հուլիսի 6 – 26/օգոստոսի 3), Ուրֆա (1915 թ. սեպտեմբերի 29 – հոկտեմբերի 23), Հաճըն (1920 թ. ապրիլի 1 – հոկտեմբերի 15), Այնթապ (1920 թ. ապրիլի 1 – 1921 թ. փետրվարի 8)։ Գավառներից. Գավաշ (Վասպուրական)՝ 1915 թ. ապրիլի 3 – մայիսի 11, Փեսանդաշտ (Շատախի գավառ, Վասպուրական)՝ 1915 թ. ապրիլի 14 – մայիսի 10, Յոզղատ գավառի (Անկարայի նահանգ) հայկական գյուղեր՝ 1915-1917 թթ., Սասուն՝ 1915 թ. ապրիլ – օգոստոս, Մուսալեռ (1915 թ. օգոստոսի 7 – սեպտեմբերի 12), Խնուս գավառի հայկական գյուղեր (1915 թ. մայիս), Խոտորջուրի գավառ (1918 թ. հունվարի 20 – մայիս)[5]։

Վերոբերյալից հետևում է, որ որոշ վայրերում հայերը դիմադրել են շատ կարճ, այլ տեղերում՝ շաբաթներ և ամիսներ շարունակ, կազմակերպված ու չկազմակերպված, զինված ու շատ քիչ զենք-զինամթերքով։ Երևույթը շատ բազմադեմ է, գնահատականները՝ տարբեր, սակայն հստակ է մեկ բան. հայ քաղաքացիական բնակչությունը ոչ քիչ դեպքերում հենց այնպես չի կոտորվել, չի «մորթվել ոչխարների նման», ինչպես երբեմն հնչում է հարցին պակաս տեղյակ, առավելապես ոչ մասնագիտական շրջանակներում, տարբեր խավերի ներկայացուցիչների առօրյա խոսք ու զրույցում։ Կարծում ենք, որ «ոչխարի նման մորթվող ժողովուրդը» չէր կարող 1918 թ. մայիսին՝ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, պետականության բացակայության պայմաններում, բռունցքվել և հաղթական ինքնապաշտպանական ճակատամարտ մղել Սարդարապատում և Ապարանում, դիմակայել Ղարաքիլիսայում՝ այդ կերպ արդեն արևելահայությանը փրկելով սպասվող ցեղասպանությունից[6]։

Սակայն հայկական իրականության մեջ արդեն շուրջ մեկ դար պաշտոնական կամ ոչ պաշտոնական նշվում է «Հայոց ցեղասպանության զոհերի» հիշատակի օրը։ Հայտնի ու դեռևս անհայտ ինքնապաշտպանության կռիվների մասնակիցները այս կերպ նույնպես ներառվում են «զոհերի» շարքը։ Տասնամյակներ շարունակ հենց միայն նմա՛ն շեշտադրումն իր հետևից բերում է նաև թերարժեքության բարդույթների դրսևորումներ, ցեղասպանության հիշողությունը որպես բեռ ընկալելու երևույթներ, որոշ դեպքերում էլ՝ դրանից «ազատվելուն» ուղղված գործողությունների անհրաժեշտության գիտակցում։

Հայտնի իրողություն է, որ հիշողության վրա հենված քաղաքականությունը

---

[5] Խնդրի շուրջ քիչ չի գրվել, սակայն վերջին տարիներին լույս տեսած ընդհանրացնող բնույթի, նաև նոր խոսք պարունակող աշխատությունները պատկանում են Ռուբեն Օսիկի Սահակյանի գրչին, որոնցից և օգտվել ենք (տե՛ս Սահակյան Ռ. Օ., *Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին*, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 2005։ Նույնի՝ *Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թվականին և ՀՅ Դաշնակցությունը*, Երևան, «Հայ Դատ» հիմնադրամ հրատարակչություն, 2010)։

[6] Որոշ վերլուծությունների համաձայն՝ այդ ճակատամարտերի հետևանքով կանխվեց Թիֆլիսի գրավումը և էապես հետաձգվեց Բաքվի անկումը (այն տեղի ունեցավ սեպտեմբերի 15-ին)։ Վերջին պարագան կարևորվում է հատկապես այն հանգամանքով, որ այդ կերպ գերմանական բանակը, որ Մառնի երկրորդ ճակատամարտն էր վարում, չստացավ իր համար այնքան անհրաժեշտ վառելիքը՝ Բաքվի նավթը։

բյուրեղացվում է տասնամյակների ընթացքում, և նրա ազդեցությունը հասարակության վրա միանգամից ու անմիջապես չէ, որ երևում է: Երբեմն հիշողության գործոնը լոկ ինքնաբուխ դրսևորվում է տվյալ հասարակության համար ճգնաժամային պահերին, երբեմն, համապատասխան մշակվածության պարագայում, մշտապես ներկա է հասարակության ամենօրյա կյանքում, նրա ինքնադրսևորման և ինքնության անքակտելի մասն է կազմում: Այդ քաղաքականությունը բաղկացած է միմյանց հետ անտեսանելի թելերով կապված բազմաթիվ կտորներից, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած կարող է և էական չթվալ երկրի քաղաքական ուղղությունը մշակողների համար, սակայն, թերևս, այդ տարրերի համակցումն է, որ կազմում է հիշողության վրա հենված քաղաքականության ամբողջությունը:

Ցանկացած հասարակական երևույթ, որպեսզի այն ավելի ընկալելի լինի, հնարավոր լինի դրան լիարժեք գնահատական տալ ու անել անհրաժեշտ հետևություններ, նախընտրելի է դիտարկել համեմատությունների լույսի ներքո, քանզի հե՛նց համեմատությունների ճանապարհով է, որ ավելի լավ է երևում ցանկացած ազգային երանգ ունեցող երևույթի դրական ու բացասական կողմերը: Արդ, ի՞նչ կերպ վարվեցին նման պարագայում հրեաները:

Հրեաների պարագայում Հոլոքոստի տարիներին զինված դիմադրությունները համեմատաբար ավելի քիչ էին կամ, ավելի ճիշտ կլինի ասել, բնույթով էին տարբեր (մասնակցություն ընդհատակյա գործունեությանը ու այդպիսով՝ Դիմադրության շարժմանը, պարտիզանական ջոկատներին, դիմադրությանը համակենտրոնացման ճամբարներում և այլն), սակայն Հոլոքոստի պատմաբանները խիստ հետևողականորեն մեծ ուշադրություն են հատկացնում այդ թեմային ու մասնավորապես Վարշավայի հրեական գետտոյի՝ ֆաշիստների դեմ ուղղված ապստամբությանը (1943 թ. ապրիլ-մայիս): Եվ եթե հայոց պարագայում Ցեղասպանության զոհերի հիշատակի օր է նշվում Կոստանդնուպոլսի հայ մտավորականության զանգվածային ձերբակալությունների և աքսորի սկզբի օրը, ապա հրեաների դեպքում երկարատև քննարկումներից հետո Հոլոքոստի հիշատակի օր է որոշվել հրեական Նիսան ամսվա 27-րդ օրը: Պաշտոնապես այն կոչվում է «Հոլոքոստի և հերոսության հիշատակի օր» կամ «Հոլոքոստի նահատակների և հերոսների հիշատակի օր» կամ (Holocaust and Heroism Remembrance Day կամ Holocaust Martyrs' and Heroes' Remembrance Day, եբրայերեն՝ Yom Hashoah): Հրեական խորհրդարանը 1953 թ. այդ օրն ընտրել է այն պատճառով, որ այն միջանկյալ տեղ է գրավում Վարշավայի գետտոյի ապստամբության սկզբի և Իսրայելի Անկախության օրվա միջև: Այսպես թե այնպես Հոլոքոստի հիշատակի օրը, ի տարբերություն հայկականի, մի զգալի չափով վերաբերում է պայքարի, կռվելու, մարտնչելու գաղափարին[7]: Նկատենք, որ հրեից ցեղասպանության թանգարանի, որը պաշտոնապես կոչվում է «Յադ Վաշեմ. Հոլոքոստի նահատակների և հերոսների [մասին] հիշողության [ապահովման] իրավասու մարմին» (Yad Vashem. The Holocaust Martyrs'

[7] Հարցի շուրջ տե՛ս նաև՝ Մարության Հ., Հայոց ցեղասպանության և հրեաների հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները, *«Պատմաբանասիրական հանդես»*, 2011, թիվ 2:

and Heroes' Remembrance Authority), արդեն իսկ անվանումը հուշում է ցուցադրության ուղղվածության, հետևաբար և այցելուների շրջանում ի՛նչ տիպի ինքնության տարրերի ամրապնդման կամ ձևավորման նպատակադրման մասին[8]: Հուշահամալիրը հիմնադրված է 1953 թ. պետության խորհրդարանի որոշմամբ, և ազգային հուշահամալիրի գործառույթները հստակորեն ամրագրված են հիմնադիր օրենքում[9]: Օրենքի ինը հոդվածները պարզաբանում են, թե ո՛վ պետք է հիշվի՝ զոհերը, ընտանիքները, համայնքները, հերոսները, հրեա զինվորները, պարտիզանները, վերջիններիս օժանդակողները և նրանք, ովքեր փորձում էին բարձր պահել իրենց արժանապատվությունը: Այսպիսով, ինը հոդվածներից վեցը հասցեագրված են պայքարին, դիմադրությանը: Սա բավական հստակ դրույթ է: Եվ դրա լուսաբանումը Յադ Վաշեմի հիմնական խնդիրներից է[10]:

Հայոց պարագայում նման քայլեր չեն ձեռնարկվել: Անցել է հարյուր տարի: Ունենք Ցեղասպանության տարիների ինքնապաշտպանական կռիվների դեռևս լիարժեք գնահատականի սպասող իրողությունը, ունենք շուրջ քսանհինգամյա ազգային պետականություն, արցախյան հաղթանակների գործոնը: Կարծում եմ՝ վաղուց ժամանակն է վերաիմաստավորել հիշողության օրվա խորհուրդը, ձևափոխել այն, իրականացնել առնվազն շեշտադրումների փոփոխություն և շրջանառության մեջ դնել այլ բանաձևում. «*Հայոց ցեղասպանության զոհերի և ինքնապաշտպանական կռիվների հերոսների հիշատակի օր*»:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ՎԵՐԱԲԱՆԱԶԵՎՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Հարություն Մարության

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը նաև մի յուրօրինակ սահմանագիծ է կամ ելակետ ներհայկական խնդիրների լուծման իմաստով: Մասնավորապես Հայոց ցեղասպանության ամենամյա հիշատակումների ժամանակ, որպես կանոն, շեշտադրումներն արվում են «ցեղասպանության զոհերին», երբեմն էլ, որպես լրացում, հիշվում են հայ ֆիդայիները, ինքնապաշտպանական մարտերը: Սակայն այս «լրացումը», այնուամենայնիվ, մաս չի կազմում պաշտոնական, ինստիտուցիոնալ ձևակերպման, ինչը բերում է զոհի կաղապարի, զոհի մշակույթի գոյատևմանը նպաստելուն: Մինչդեռ հայ զինվորականներն ակտիվորեն մասնակցել են Առաջին համաշխարհային պատերազմի ռազմական գործողություններին, իսկ Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրությունում տեղ են գտել հայերի

---

8 Մանրամասն անդրադարձ այս հարցերին տե՛ս Haβ M., *The Politics of Memory in Germany, Israel and the United States of America*, "The Canadian Centre for German and European Studies, Working Paper Series" Number 9, էջ 6-12: Հարցի շուրջ տե՛ս նաև Մարության Հ., *Հայ ինքնության պատկերագրությունը…*, էջ 65:

9 Տե՛ս http://www.yadvashem.org/yv/en/about/pdf/YV_law.pdf:

10 Տե՛ս Haβ M., *նշվ. աշխ.*:

մի շարք ինքնապաշտպանական կռիվներ: Առաջարկվում է վերաիմաստավորել ապրիլի 24-ի հիշողության օրվա խորհուրդը և շրջանառության մեջ դնել «*Հայոց ցեղասպանության զոհերի և ինքնապաշտպանական կռիվների հերոսների հիշատակի օր*» բանաձևումը:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, ինքնապաշտպանություն, հերոսներ, հիշատակի օր:

THE PHENOMENON OF SELF-DEFENSE DURING THE YEARS OF THE ARMENIAN GENOCIDE AND THE PROBLEM OF REFORMULATION OF THE MEMORY DAY

Harutyun Marutyan

SUMMARY

The Genocide Centennial is also a milestone and a starting point for addressing of national issues as well. As a rule, every year references to the Armenian Genocide tend to focus on the "genocide victims" and sometimes by extension on the Armenian fedayis and self-defense battles. Yet no official mention of them is made, which perpetuates the victim mentality on a scale of the whole nation. Meanwhile soldiers of Armenian descent actively participated in the hostility of the WW1, and during the Genocide several self-defense battles of Armenian people took place in the Ottoman Empire. It is suggested to review and reformulate the meaning of the April 24 Remembrance Day and rephrase the commonly accepted wording into "*The Armenian Genocide Victims and Self-Defense Battles' Heroes Remembrance Day.*"

Keywords: Armenian Genocide, self-defense, heroes, memory day.

ФЕНОМЕН САМООБОРОНЫ В ГОДЫ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА ПЕРЕФОРМУЛИРОВКИ ДНЯ ПАМЯТИ

Арутюн Марутян

РЕЗЮМЕ

Столетняя годовщина Геноцида армян – это также своеобразный рубеж, отправная точка для обращения и к внутриармянским проблемам. Как правило, каждый год дискуссии и публикации о Геноциде армян концентрируются на жертвах и только иногда, в дополнение к этому, упоминаются фидаины и бои самообороны. Однако это дополнение не является частью официальной, институциональной формулировки, что приводит к укреплению образа жертвы. Между тем в годы Первой мировой войны армянские воины активно участвовали в боевых действиях, а в годы Геноцида армян в Османской империи имели место оборонительные бои армянского населения. Предлагается переосмыслить День памяти 24 апреля и ввести в оборот иную формулировку – "*День памяти жертв Геноцида и героев самообороны*".

Ключевые слова: Геноцид армян, самооборона, герои, день памяти.

THE ARMENIAN VOLUNTEER MOVEMENT DURING WWI AS GROUNDWORK FOR POLITICAL SOVEREIGNTY: SOME PRELIMINARY INSIGHTS

Taline Papazian

The current article is part of a new research focusing on the interaction between armed conflicts and political cognitions among Armenians from the end of the 19th century up to the foundation of contemporary Republic of Armenia[1]. It also holds a comparative dimension with the same research question for the Jewish case, under the same time period. The question will be to ask whether physical mass violence has been conducive to representations of national sovereignty, and if so, what was the content of that concept for political and military leaders during WWI: territorial? demographic? political? military?

Being at a very early stage of my research, I will not attempt at bringing an answer to this question here. What I will do instead is lay the hypothesis and give the factual background retrieved from secondary sources necessary to future analysis for the period of WWI. Thus, the following is no attempt at a comprehensive review of the volunteer movement during WWI, but very modestly a summary of the elements that will be used in the later analysis. Temptative design of a number of arguments that will be investigated in the future research will be sketched here. I should also add that, parallel to the volunteer movements of Transcaucasia, I have started studying the same issues regarding the Armenian Legion formed under the auspices of Boghos Nubar Pasha[2]. These two, mostly parallel –although they sometimes met and joined efforts- episodes are in themselves proof of the plurality of political conceptions and objectives among Armenians at the time of WWI, something we will witness even more glaringly with the "double delegation" at the negotiation tables of the Allies between 1918 and 1921. In this article, I will be focusing on the impact of mass physical violence on political ideology and design. It will survey WWI's Caucasian front, from 1914, with the decisions to form Armenian units pertaining to the Russian army, up to the treaty of Batum in 1918, which is the first act terminating war for Armenians (first, because until 1920 war was actually almost uninterrupted and it is possible to argue that those episodes were a continuation of WWI battles and political issues) and also the first official act of the RA.

My hypothesis, on which I will be working for the next years, is that statehood may not be the most relevant entry to analyze political cognitions of Armenians in the 19th and 20th century: although a state came into existence at the end of WWI, it was very much unanticipated and unwanted. Rather than state then, I want to question the relevance of sovereignty as an entry into Armenian contemporary politics. Although this may

---

1 This issue has been the subject of my Ph.D., which can be found in France under the title: *Dynamique de conflit dans la construction d'un Etat contemporain: le cas de la République d'Arménie et la question du Haut-Karabakh* (2011, IEP de Paris). A publication is in process.

2 Archival materials on the Armenian legion can be found at Boghos Nubar library in Paris. They will form important first-hand materials of my research regarding the episode of the *Légion d'Orient*.

sound surprising at first sight, it becomes less so if one is ready to leave aside Western conceptions of sovereignty as supreme authority detained by a state on a territory, at least for the time being, and focus on what it meant for Armenians on the ground. Consequently, one of the objectives of this research regards Armenian historiography on statehood: the issue of physical security may be another entry to further enlighten the analyses of the Armenian experience of statehood. Was there something like an understanding, an awareness, of sovereignty among Armenian political and military leaders during WWI? My hypothesis is that organizations and involvement into war efforts may have been conducive to such conceptions. In that scenario, war is not only synonymous of destruction and loss –human, territorial-, it was also an opportunity provider for more autonomy and eventually to reach some of the goals of the Armenian national leaders, all judgment on the quality of this achievement aside.

From the beginning of WWI up to the withdrawal of the Russian army

Deprived of almost all experience of sovereignty (as opposed to self-rule) for centuries, we have to consider competing contentions of sovereignty for the Armenian leaders of that time. On the one hand, sovereignty was a legal-political concept imported from the West. Applied to the political context of the Empires in which Armenians were living, that concept basically meant that supreme authority over the territories inhabited by Armenians was detained and exercised by the Sublime Porte and by the Tsar. On the other hand, however, within the context of Russian and Ottoman Empires, the reality of sovereignty was that:

- Not all of the territories inhabited by Armenians were actually under complete control, especially on the margins of the Empires, near the farthest borders.
- There were local administration structures, through community leaders, especially church and later on civic leaders. Within the scope of this article, civic leaders of interest are para-military and political leaders.

As a result of the second point, national elites, where political and military forces in great part conjoined, clustered in both Empires. By the time of WWI, these elites, having sometimes very divergent and competing views on what the Armenian future was to be like, were without a doubt, the dominant leading force at the level of the Armenian communities in both Empires.

As a result of the first point, many were the interspaces where violence could unfold, first against the Armenians and later for and by themselves in the margins of the Empires (Transcaucasia, especially Baku, Karabakh; Eastern provinces of the Ottoman Empire). By the time of WWI, Armenians had accumulated enough firsthand military experience, both in the state armies of their suzerain and through their own self-defense organizations to push for military initiatives and objectives of their own within the context of WWI and the Caucasian front.

Պատմական այս իրադարձություններին առընթեր հյուսվել է նաև ժողովրդական երգը.

«…Սասուն գավառ անպտուղներով,
Պարապապպար բարձր լեռներով,
Դեմ կանգնեց միշտ թուրք զորքին.
Սասուն բուրե տաք արյան հոտ»[25]:

«Տաք արյան հոտ» էր բուրում նաև Վանի շրջակա գյուղերում, որտեղ թուրքերը հասցրել էին տեղում բնաջնջել հազարավոր հայերի: Այդ մասին է վկայել ամենայն

---

[23] Նույն տեղում, վկ. 1, էջ 74, 75:

[24] Նույն տեղում, վկ. 9, էջ 94, 95:

[25] Նույն տեղում, վկ. 627, էջ 619:

հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, երբ Ալ. Շիրվանզադեի հետ ականատես էին դարձել նրանց աներևակայելի դաժան գործողությունների հետքերին. «…Որտեղ հասցրել են՝ կոտորել են հայերին, - գրել է Հովհաննես Թումանյանն իր հուշերում, - գլխավորապես՝ տղամարդկանց ու հետները տարել գեղեցիկ կանանց: Եվ եթե ժամանակ են ունեցել, ռուսական բանակի և հայ կամավորների սարսափը շատ մոտ չի եղել, բարբարոսական զվարճություններ են հորինել. խաչել են, կենդանի մարդկանց զանազան մասերը կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել՝ մինչև կեսը դրել են պղնձի մեջ ու կեսից ներքև եփել, որ մյուս կեսը՝ կենդանի տեսնի ու զգա… Շիկացած երկաթներով կտրել են մարմնի զանազան տեղերը և կրակի վրա խորովել, կենդանի խորովել են: Ծնողների առաջ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ՝ ծնողներին…»[26]:

Այդ ահավոր խժդժությունները նկատի ունենալով՝ ականատես վերապրող **Արծրուն Հարությունյանը** (ծնվ. 1907 թ., Վան) եզրակացրել է. *«Ինքնապաշտպանությունը ծավում է, երբ ժողովրդի նկատմամբ բռնություն է լինում»*[27]:

Ուստի Սասունում, Մուշում, Շատախում, Վանում, Բիթլիսում, Շապին-Գարահիսարում և այլ վայրերում մղված ինքնապաշտպանական հերոսամարտերը հթթիհատական կառավարության կիրառած բռնությունների դեմ ըմբոստացող արևմտահայության ազնիվ ոգորումներն էին, նրանց բողոքի ձայնը՝ ուղղված աշխարհին.

«…Վան փոքրիկ քաղաք գավառակներով,
Լցվան դիակներ հարյուր հազարով,
Ներկվեցավ դաշտը կարմիր արյունով,
Չայն տվին ամպեր, երկինք ու աստղեր,
Այնպես կգոռան ու կիրամայեն,
Որ Եվրոպան և Ամերիկան լսեն»[28]:

Սակայն ո՛չ Եվրոպան և ո՛չ էլ Ամերիկան չմիջամտեցին, միայն ռուս զինվորներն ու հայ կամավորներն էին, որ սատարեցին… Հայկական կամավորական հինգ ջոկատների միավորումով ստեղծված Արարատյան գունդը 3.300 հայ կամավորներով ապրիլի 15-ին Քանաքեռ-Երևան-Էջմիածին-Իգդիր ճանապարհով մեկնում է Արևմտյան Հայաստան: Բայազետ հասնելով՝ նրանք միանում են գեներալ Նիկոլաևի զորաջոկատին, որն առաջադրանք ուներ գլխավոր հարվածն ուղղել Վասպուրականի տարածքում թուրքական մեծաքանակ կանոնավոր զորքերի և քրդական ավազակախմբերի դեմ:

Շատախի ինքնապաշտպանական մարտերի ականատես **Անդրեաս Գյուլանյանը** (ծնվ. 1905 թ., Շատախ) մանրամասնորեն պատմել է Վանի հերոսամարտի դրդապատճառները. *«…1894-1896 թթ. տեղի ունեցած հայկական կոտորածներից*

---

[26] Թումանյան Հովհաննես, *Երկերի ժողովածու*, հ. 6, Երևան, 1959, էջ 212, 213:

[27] Սվազլյան Վ., *նշվ. աշխ.*, վկ. 40, էջ 147:

[28] Նույն տեղում, վկ. 628, էջ 619:

անցել էր քսան տարի, արդեն 1915 թ. գարունն էր: Երիտթուրքերը Կ. Պոլսից կարգադրել էին Վանի նահանգապետ Ջևդեթ փաշային, որը Թալեաթի, Էնվերի, Ջեմալի դաժան գործակատարն էր, կոտորել Վանի, Շատախի հայությանը:

Առաջին հերթին ձերբակալեցին և գլխատեցին Շատախի հայտնի ղեկավար Հովսեփ Զոլոյանին, որը ՀՅԴ-ի ղեկավարն էր՝ Վանի կողմից նշանակված դեռևս 29 մարտի 1915 թվից: Նա Շատախի գայմագամի ծանոթն էր, բայց փողոցով անցնելիս նրան իր հինգ ընկերների հետ ձերբակալեցին ու տարան Շատախի Թաղ կոչվող կենտրոնը: Նրա ընկերներից էր Տիգրան Բաղդասարյանը, որը ռուս-թուրքական ճակատում վիրավորվել, ազատվել և եկել էր Շատախ: Նա գնում է և գայմագամին ասում.

– Ինչու՞ եք բանտարկել Հովսեփ Զոլոյանին, չէ՞ որ նա գավառի հայկական դպրոցների տեսուչն է և բանտարկության ենթակա չէ:

Շատախի գայմագամ Մեյթի բեյը, որը ֆրանսիական կրթություն էր ստացել, պատասխանում է.

– Ոչինչ, որ Հովսեփ Զոլոյանին ձերբակալել ենք: Նա սենյակում նստած է, շուտով ազատ կարձակենք իր ընկերներով, պայմանով, որ հիսուն-վաթսուն երիտասարդ թաղեցիների իրենց զենքերով պիտի բերեք հանձնեք մեզ, այն ժամանակ կազատենք Հովսեփ Զոլոյանին:

Տիգրան Բաղդասարյանը պատասխանում է.

– Թուրքական կառավարությունը արդեն հինգ-վեց ամիս է՝ զորահավաք է հայտարարել, և Թաղի բոլոր երիտասարդները զորակոչվում են՝ կռվելու ռուսների դեմ: Մենք զինված մարդ չունենք:

Գայմագամը պատասխանում է.

– Մենք ամեն ինչ գիտենք:

Դու մի ասի՝ Շատախի ղեկավարությունը Հովսեփ Զոլոյանի անմիջական ղեկավարությամբ դեռևս մեկ-երկու ամիս առաջ՝ մարտ-ապրիլ ամիսներին 1915 թվի, հաշվի են առել՝ Շատախի հիսունհինգ հայկական գյուղերում որ գյուղացին ինչ զենք և քանի պատրոն ունի: Կազմակերպել են խմբեր, որոնք Թաղի տներում և Շատախի կարևոր հայկական գյուղերում ինքնապաշտպանական մարտեր պիտի մղեն, երբ որ թուրքական կողմը դիմի հայասպանության: Իսկ Շատախում մոտ տասներկու հազար հայություն կար, որից հազար երկու հարյուրը՝ Թաղ քաղաքատիպ ավանում: Այդ բոլոր ցուցակները գտնվելիս են եղել Հովսեփ Զոլոյանի գրպանում: Խուզարկության ժամանակ հայտնվել են:

Երբ Տիգրան Բաղդասարյանը գայմագամի մոտից վերադառնում է Թաղ՝ իր տուն, հաջորդ օրը մի ուրիշ ընկերոջ հետ նորից գնում է գայմագամի մոտ, որ նորից խնդրեն Հովսեփ Զոլոյանի ազատվելը: Բայց գայմագամը նորից նույնն է ասում: Բացի այդ, գայմագամը կարգադրում է իր ոստիկաններին՝ Շատախի երկու-երեք գյուղերում, տուրքեր հավաքելու պատրվակով, սպանել մի քանի հայի: Կարգադրված էր նաև քյուրդ ավազակապետերին, որ նրանք սպանեն Շատախի չորս-հինգ անմեղ հայ երիտասարդների: Այնպես որ թուրքերն արդեն սկսել էին հայերի բնաջնջումը:

Դեռ 1914 թ. ուշ աշնանից պահակախմբեր (որոնք գորտոններ էին կոչվում) էին դրված Շատրախի բոլոր մեծ գյուղերում, որոնց թվում երկու պահակախումբ դրված է լինում Սևրկին գյուղում, մի պահակախումբ՝ գյուղի տներին մոտ, իսկ մյուս պահակախումբը՝ գյուղից հինգ կիլոմետր հյուսիս՝ Արտոս լեռան ստորոտին, որտեղից սկսվում է, պատմաբան Ա-Դոյի խոսքերով, «Շատրախի հոչակավոր ձորը», որի արևելյան կողմից Կաուկան լեռնաշղթան է, մյուս կողմից՝ Ռչտունյաց լեռնաշղթան: Հյուսիսից դեպի հարավ ձորն է, որի հովիտներում, սարերի լանջերին տարածված են վարելահողերը, մարգագետինները:

Հովսեփ Չոլոյանի բանտարկության մանրամասները պարզելուց հետո Շատրախի Թաղ կենտրոնում հրավիրվում է գյուղերի փորձված, հասակավոր մարդկանց և երիտասարդների ժողովը, որոնք պիտի խորհրդակցեին, թե ինչ անեն: Որոշում են ընտրել ինքնապաշտպանության զինվորական մարմին:

1. Ընտրվում են երեք հոգի՝ Տիգրան Բաղդասարյան, Սամվել Մեսրոպյան (Թաղից) և Ազատ Սիմոնյան (Սևրկինից):

2. Որոշում են մեկ-երկու օրվա ընթացքում կտրել Թաղից դեպի հյուսիս՝ Վան տանող հեռախոս-հեռագրի սյուները, որպեսզի գավառապետը չկարողանա կապվել նահանգապետ Զևդեթի հետ:

Հայերը սուրհանդակներ ունեին՝ լուր ուղարկելու համար:

3. Այդ երկու օրվա մեջ ոչնչացնել Սևրկին գյուղում երկու պահակակետերը, որովհետև այդտեղից ճանապարհները գնում են Ատրանով և Հայոց ձորով դեպի Վան:

Ես անձամբ ականատես եմ եղել, իմ մոր հետ, գյուղի բարձունքներից մեկում այդ կռվին, որը տեղի ունեցավ Սևրկին գյուղում: Որոշեցին, որ կանայք, փոքր երեխաները գնան սարերը, մինչև կռիվը վերջանա:

Մարտի 31-ին Արշակ Պետրոսյանի խումբը (Սևրկին գյուղից) Հաշկանց գյուղից գալիս է Սևրկին գյուղի եզրը և այնտեղ մնացած հայ կովողները՝ հայտնի ֆեդայի Բագիկ Պետրոսյանի ղեկավարությամբ, գյուղի չորս կողմը մարտիկներ են դասավորել, և երբ Արշակ Պետրոսյանը հասնում է գյուղի եզերքը, ազդանշանով մի գնդակ է արձակում: Բագիկ Պետրոսյանը իր գյուղի տներից մեկի դիրքից բղավում է թուրքական պահակախմբի ղեկավարին՝ Բայրի օնբաշիին, անձնատուր լինել: Բայց թուրքերը անձնատուր չեն լինում: Եվ սկսվում է երկկողմանի կրակը: Թուրքերի պետը գյուղի նորակառույց դպրոցի պատուհանում դիրք է բռնում և կրակում է հայերի վրա, երկկողմ հրաձգություն է տեղի ունենում: Ամբողջ գյուղը մեր աչքի առաջ եռում էր: Մենք մորս հետ սարում, քարի տակից տեսնում էինք: Մոր քառասուն կրակոց եղավ: Ամեն ինչ դադարեց: Երկինքը ամպոտ էր, բայց ցուրտ չէր: Ես, մորս ձեռքը բռնած, իջա ձորը, եկանք գյուղ, ինչպես այլ կանայք եկան գյուղ և պատմեցին, թե ինչ է տեղի ունեցել: Սպանվել է Բայրի օնբաշին, և իր օգնականն ու նրանց ասկյարները իջևանատան պատուհանից իրենց հրացանները գցում են ներքև և ձեռքերը բարձրացնում, անձնատուր լինում: Մերոնք բանտարկում են նրանց՝ մի պատառ հայ կնոջ տանը: Սևրկին գյուղի կռվի մանրամասները հասնում են Վան: Վանի նահանգապետ Զևդեթ փաշան կանչում է հայ նշանավոր գործիչ Իշխանին (ղարաբաղցի), կարգադրում է նրան (Իշ-

հանը ընտրվել էր Վանի մեծը). «Մի քանի ուրիկանների հետ գնա Շատախ, տես՝ ինչու է կոիվ լինում: Գնա՛, հանգստացրո՛ւ»:

Իշխանը դեռ Սևրկին գյուղի ճամփի կեսը չհասած, ուրիկանների հետ, Հայոց ձորի Հիրճ գյուղում (Շատախ-Վանի մեջտեղում) մութը վրա է հասնում: Թուրք ուրիկանապետը Իշխանին ասում է.

- Մութը ընկավ, ինչպե՞ս շարունակենք: Արի Հիրճ գյուղում հանգստանանք, առավոտը գնանք Շատախ, հանդարտեցնենք հայերին:

Բայց դա խաբեություն էր: Երբ Իշխանը իր չորս ընկերներով գիշերում է, թուրք ուրիկանները նրանց սպանում են, գիշերով թաղում, հողն էլ վրան ծածկում: Նույն օրը Զևդեթ փաշան կանչում է Պոլսի մեջլիսի անդամ Վռամյանին, որը գործում էր Վանում: Տանում է Վանա լճի ափ, Ավանց գյուղը, քար է լցնում փոպրակի մեջ, կապում է նրա վզին և Վանա լճի մեջ խեղդում: Բայց, բարեբախտաբար, Վռամյանին հաջողվում է մինչ այդ մի նամակ գրել Արամ Մանուկյանին, որը Վանի ինքնապաշտպանության ապագա ղեկավարն էր: Մի երկտող է գրում, տալիս իր կնոջը, որ եթե Զևդեթը Արամին կանչի, նա չներկայանա, քանի որ նրան էլ կսպանեն»[29]:

Վերոհիշյալ ականատես վերապրող **Երվանդ Շիրակյանը** նկարագրել է Վանի հերոսամարտի սկիզբը. *«…Երբ լուրը հասավ Վան, վանեցիները կազմեցին Ռազմական խորհուրդ և պարիսպավորեցին Վանը, դիրքեր սարքեցին: Իսկ Վանի մեջտեղում կար թուրքական ղշլա: Վանեցիները այն վառեցին և մեջտեղից վերացրին»*[30]:

Ականատես վերապրող **Պատրիկ Սարոյանը** (ծնվ. 1906 թ., Վան) նկարագրել է հերոսամարտի սկիզբը. *«… Սկսվեց կոիվը: Հայերը լսել էին, որ թուրքերն ասում են. «Վանը թուրքերին պետք է մնա»: Մի քանի օր առաջ թուրքերն ու քրդերը հարձակվել էին քաղաքի հայերի իանութների վրա, թալանել էին: Վանում գործում էին դաշնակցական, ռամկավար և հնչակյան կուսակցությունները, որոնք, վրանգը տեսնելով, միացան և հանդես եկան միասնաբար: Քաղաքում բերդի վրայից անընդհատ հրացաններով կրակում էին: Երկու հորեղբայրներս՝ Ղևոնդն ու Մարտիրոսը, սկսեցին մասնակցել կոիվներին: Մարտիրոսը ընտանիք ուներ, իսկ Ղևոնդը ամուրի էր: Նրանց հաց ու ջուր ես ու Վրույրը՝ Մարտիրոսի տղան, տանում էինք, որ ուտեն: … Մայիսի սկզբին սկսվեց թնդանոթների որոտը: Մեր տղաներին մեր մայրերը աղջկա շորեր էին հագցրել և երեսները ցեխուտել էին: Թուրքերը նոր տեսակ թնդանոթներ էին օգտագործում, որոնք ականներ էին գցում մեր տների վրա: Դրանք երկար հավանգի ձև ունեին: Հաճախ չէին պայթում, մեր կանայք զգուշությամբ ականազերծում էին»*[31]:

Ականատես վերապրող **Սիրակ Մանասյանը** (ծնվ. 1905 թ., Վան, Կեմ գյուղ) շարունակել է նախորդի միտքը. *«…Ամեն առավոտ Վանի փողային նվագախումբը նվագելով մաս էր գալիս՝ երեխաները նրա եւրևից: Արդեն Վանի ապստամբությունն սկսված էր: Մի հայ ասաց մեզ՝ երեխաներիս. «Գնացեք փամփուշտներ հավաքեք,*

---

[29] Նույն տեղում, վկ. 26, էջ 619:

[30] Նույն տեղում, վկ. 41, էջ 147:

[31] Նույն տեղում, վկ. 38, էջ 144:

բերե՛ք, որ նորը պատրաստեն»: Մենք գնացինք փամփուշտներ հավաքեցինք, տվեցինք արհեստանոցին:

Հասավ օրը, երբ կոիվն ուժեղացավ Վանում, Այգեստանում: Վասպուրականցիները, որ հավաքվել էին այնտեղ, մեծ կամքի ուժով պաշտպանեցին և՛ Այգեստանը, և՛ Վանի կենտրոնը՝ Քաղաքամեջը: Մերոնք ուժեղ մարտեր մղեցին և՛ Այգեստանում, և՛ Քաղաքամեջում: Թուրքերը լսելով, որ ռուսական զորքը Սալմաստից գալիս է Վան, խուճապահար սկսեցին հեռանալ: Մերոնք հարձակվեցին, ոչ միայն թուրքերին ոչնչացրին, այլև մեծ ավար ձեռք բերեցին՝ հրետանի, փամփուշտներ և այլն»[32]:

Իսկ ականատես վերապրող **Մանվել Մարությանը** (ծնվ. 1901 թ., Վան, Բերդաշեն գյուղ) ներկայացրել է վանեցիների ինքնապաշտպանության կազմակերպված բնույթը. *«...Մուր երկու հարյուր հոգի զենքի տակ էին, չորս հարյուր հոգի դիրքերն էին պատրաստում գիշերները: Ով մթերք ուներ, բերավ Առաջնորդարան: Ամեն մարդ պաշտոն ուներ: Այգեստանի միջից մի խենթ աղջիկ ղրկել էին, որ հայերից լուր առնեն, բայց նա վերադարձին սպանվեց: Մեկ թուրքի կաշառեցին, որ երկրորդ տրանի Քաղաքամեջ, որով հայտնում էին, թե մեկ շաբաթ դիմացեք, ռուսական զորքը գալիս է: Թուրքերը, այդ լսելով, կամաց-կամաց հեռացան: Մենք երեխա էինք, բայց չէինք վախենում, փամփուշտ էինք հավաքում: Հայրս ճարպարապետ էր, դիրքերու շինությունը կիսկեր: Քահանաները և վարդապետները ևս կռվում էին: Թուրքերը բյուրեղին էին գցում մեզ վրա: Հիշում եմ, երբ կոիվը վերջացավ, մի թուրք եկավ, ասաց. «Ամբողջ մորթված դիակներ են: Քահանան մորթված է եկեղեցու շեմին, գլուխը Մարիամ Աստվածածնի նկարի առաջ է դրված»:*

Թուրքական բանակից հետո ո՛ր գյուղը մտանք, դիակներ էին, գազազած շները, կատուներն ու անգղները հոշոտում էին դիակները, որոնց թուրքերը սպանել էին ու լցրել փոսերի մեջ. նրանք առանց աղոթքի հողին հանձնվեցին: Վասպուրականցիները երեսուն-քառասուն զոհ տվեցին, բայց անպաշտպան ժողովրդից հազարներ զոհվեցան: Ես ինչ որ պատմում եմ, ականատեսի հուշերս են: Ռուսական բանակը մուտեցավ: Առաջ կամավորական բանակը մտավ, և մենք փրկվեցինք: Եթե նրանք չգային, մենք էլ Ուրֆայի, Շապին-Գարահիսարի նման կոչնչանայինք:

Մենք՝ երիտասարդներս, գնացինք կամավորներին դիմավորելու: Առաջին խումբը Նժդեհի խումբն էր, որ եկավ: Այդ խմբի մեջ իմ մորեղբոր տղան էլ կար: Այդ գիշեր մեզ հյուր եկավ Նժդեհը»[33]:

Վերոհիշյալ ականատես վերապրող **Երվանդ Շիրակյանը** նկարագրել է ռուսական զորքի և հայ կամավորների մուտքը Վան. *«...1915 թ. ապրիլի 6-ից մինչև մայիսի 4-ը մենք պաշտպանվում էինք շատ հաջող: Մայիսի 4-ին ռուսական զորքը մտավ Վան, որի մեջ էր վեց հազար հոգուց բաղկացած հայկական բանակը՝ Զորավար Անդրանիկի ղեկավարությամբ: Ռուսական ղեկավարությունը ընտրեց Վանի ղեկավար Արամ Մանուկյանին: Այսպես ապրեցինք մինչև հուլիսի սկիզբը»*[34]:

---

[32] Նույն տեղում, վկ. 35, էջ 139:

[33] Նույն տեղում, վկ. 32, էջ 133:

[34] Նույն տեղում, վկ. 41, էջ 147:

Վերոհիշյալ ականատես վերապրող **Սիրակ Մանասյանը** շարունակել է դեպքերի նկարագրությունը. *«…Մայիսի 6-ին Վանի բերդի վրա ծածանվեց Հայաստանի դրոշակը: Վասպուրականցիները մեծ սիրով ընդունեցին ռուսական զորքերին և հայ կամավորներին՝ Անդրանիկ փաշայի ղեկավարությամբ: Երբ ուրախություն էր համատարած, մեզ մուրեցավ մի ռուս օֆիսեր և նկարեց՝ ես էի, մայրս էր և եղբայրս: Այդ ժամանակ սկսում է Ռուսաստանի հեղափոխությունը, որը հարկադրեց ռուսական զորքին եւր վերադառնալ Ռուսաստան, որոնց հետ նաև շատ գաղթականներ՝ դեպի Հայաստան»*[35]:

Ականատես վերապրող **Պատրիկ Սարոյանը** նկարագրել է Վանի հերոսամարտի հաղթանակը և թուրքերի փախուստը. *«…Մայիսի 5-ին, երբ հաղթանակը եղավ, թուրքերն սկսեցին փախչել նավակներով ծովի վրայից: Նրանք փախցնում էին իրենց ընտրանիքներին: Հաղթական վանեցիները մեծ նվագախմբով Այգեստանից եկան Քաղաքամեջ և միմյանց սկսեցին համբուրել:*

Այգեստանը Քաղաքամեջից հեռու էր չորս-հինգ կիլոմետր տարածությամբ: Հետո ռուսական զորքը մուրեցավ Վանին: Հայրս ինձ բարձրացրել էր իր ուսին, որ ես լավ տեսնեմ: Վերջապես լսվեց ձիերի դոփյուն: Առաջին հերթին Վանին մուրեցավ Անդրանիկը, հետո՝ Դրոն, Համազասպը, Գայը: …Հետո գեներալ Նիկոլաևը կազմակերպում է Վանի կառավարությունը, որը և սկսում է գործել:

Հուլիսի 15-ին գեներալ Նիկոլաևը պահանջում է, որ հայերը գաղթեն, որ թուրքական զորքը հսկայական ուժ է սրացել և հարձակման է պատրաստվում: Հայ ղեկավարները՝ Արամ Մանուկյանը և այլք, հրաժարվում են գաղթել և ասում են գեներալ Նիկոլաևին. «Մենք առանց օգնության հաղթեցինք, մենք ունենք կամքի ուժ, որ պաշտպանենք մեր երկիրը», բայց Նիկոլաևը և Անդրանիկը, որպես ղեկավար, ռուսների հետ համաձայնվում են նահանջել: Տիրեց իրարանցում»[36]:

Երվանդ Շիրակյանը նկարագրել է իրենց՝ վանեցիների կազմակերպած ժողովը, որպեսզի չգաղթեն. *«…1915 թ. հուլիսի սկզբին ռուսական ղեկավարությունը կարգադրեց հայերին գաղթել: Վանեցիները ընդհանուր ժողով կազմակերպեցին, որտեղ բռնեն ելույթներ ունեցան երիտասարդները, որոնք չէին համաձայնվում գաղթել, բայց և այնպես մեծերը համաձայնվեցին»*[37]:

Իսկ շատախցի **Անդրեաս Գյուլանյանը**, որը մանրամասն պատմել էր Վանի հերոսամարտի դրդապատճառների մասին, անդրադարձել է նաև ռուս գեներալի գաղթի հրահանգին. *«…1915 թ. հուլիսի վերջերին ռուսները Վանա լճի հյուսիսային և հարավային մասով միանում են, սակայն այդտեղ տեղի է ունենում մի դեպք: Թուրքերին հաջողվում է յոթ կիլոմետրով ճեղքել ճակատը, և ռուսները նահանջում են: Հինգ-վեց օրվա մեջ՝ կռվելով եւր են քաշվում մի քանի հարյուր կիլոմետր, հասնում են Ալաշկերտ, Արաղայի դաշտը, մինչև Բերկրի են հասնում: Ստեղծվում է վտանգ Վանի հայության համար:*

---

[35] Նույն տեղում, վկ. 35, էջ 139:

[36] Նույն տեղում, վկ. 38, էջ 144:

[37] Նույն տեղում, վկ. 41, էջ 147, 148:

Վանում գեներալ Նիկոլաևը կանչում է Արամ Մանուկյանին, ասում.

- Վանում մոտ քսանչորս հազար հայ բնակչություն և գավառների գաղթականություն կա կուտակված, ժողովրդին պետք է գաղթեցնել Արևելյան Հայաստան:

Սկսվում է Վանի նահանգի և Շատախի գավառի գաղթը: Այն սկսվեց օգոստոսի սկզբին»[38]:

Եվ երբ ռուսական զորքերը նահանջում են, ստիպված նրանց հետ Արևելահայաստան է գաղթում նաև Վանի, Սասունի, Շատախի, Շապին-Գարահիսարի, Բիթլիսի, Ալաշկերտի, Բայազետի, Բաբերդի, Էրզրումի և այլ բնակավայրերի հայությունը: Նրանք արցունքներով, բայց ճարահատյալ, թողնում են իրենց Երկիրը՝ հազարամյակների բնօրրանը, ու մղկտալով ընկնում են գաղթի ճամփան:

Գաղթի ողբերգությունը ճաշակած ականատես վերապրող **Եղիազար Կարապետյանը** (ծնվ. 1886 թ., Սասուն) գաղթականների անունից հրաժեշտի խոսք է գրել իր հուշ-վկայության վերջում. *«...Թույլ տվեք կանգնել այս բարձր սարի վրա, վերջին անգամ «Մանթ բարով» ասել որբացած հայրենիքին, նրա սրբավայր տաճարներին, հուշարձաններին, ծաղկաբույր լեռներին, արգավանդ դաշտերին, գետերին ու աղբյուրներին և որպես գաղթական մարդ՝ իմ սակավաթիվ հայրենակիցների հետ հյուրընկալվել ու ապրել դեռ սովի, գաղթի ու արյունահեղության մատնված Արևելյան Հայաստանում»*[39]:

Այդ ազգային աննկարագրելի վիշտն իր հորինած եղերերգի մեջ է խտացրել մշեցի վերապրող **Շողեր Տոնոյանը** (ծնվ. 1901 թ.).

«Անտեր թողինք Մշո անուշ դաշտ-դուրան,
Սուրբ օթևան, տուն ու տանիք ու վաթան,
Մատուռ ու վանք, գիրք ու կանոն, Ավետարան,
Մնաց անտեր, մնաց՝ ընկավ շան բերան»[40]:

Գաղթի ճամփան իսկական ողբերգություն էր: Ականատես վերապրող **Աղասի Քանքանյանը** (ծնվ. 1904 թ., Վան) դառնությամբ վերհիշել է. *«...Գաղթը ահավոր իրադարձություն է մի ժողովրդի համար, որը դարեր շարունակ ապրել է իր հարազատ երկրում: Մեր ընտանիքն էլ պատրաստվեց: Մայրիկիս ղեկավարությամբ որոշվեց, թե ինչ վերցնենք մեզ հետ, որ դիմանանք տասը օրվա հետիոտն ճամփորդությանը:*

Մեր հարազատ տունը մենք թողել ենք 1915 թ. հուլիսի 13-ին, ժամը տասնմեկին: Նախքան տնից դուրս գալը մայրիկս հավաքեց ընտանիքի անդամներին, լացակումած համբուրեց բոլորին և ասաց՝ մենք գնում ենք դժվարին ու անհայտ մի ճանապարհ, թե ինչ կպատահի մեզ հետ՝ չգիտենք: Ձեր խնդիրն է, որ դուք դիմանաք և խումբապի մեջ չկորցնեք հայրիկին ու մայրիկին:

---

[38] Նույն տեղում, վկ. 26, էջ 120:

[39] Նույն տեղում, վկ. 1, էջ 81:

[40] Նույն տեղում, վկ. 653, էջ 630:

Մենք փնից դուրս եկանք: Դուռը չփակեցինք, մի տեսակ քարացել էինք, դարձել էինք անզգա: Սկսեցինք շարժվել դեպի գլխավոր փողոցն՝ Խաչփողան: Տներից նորանոր ընտանիքներ էին դուրս գալիս և միանում իրար: Թափորը մեծանում էր ու շարժվում դեպի առաջ: Մենք մինչև Իգդիր հասնելը տասը օր ճանապարհ անցանք, անձրևի տակ, արևի տակ, ցեխերի մեջ՝ կիսաքաղց ու ծարավ: Ճանապարհին քրդերը հաճախ վրա էին տալիս, մարդկանց կոտորում, թալանում: Դա հատկապես տեղի ունեցավ Բանդիմահու կամուրջի մոտ, որտեղ կուտակում էր տեղի ունենում: Այդ կամուրջից ինչքա՜ն մայրեր, երեխաներին գրկած, ջուրն են նետվել, որ թուրքերի ու քրդերի ձեռքը չընկնեն: Ճանապարհին ովքեր սպանվում էին, ովքեր մահանում էին, թողնում էին ճանապարհի եզրին, շատ դեպքերում ծածկում էին հողով, շատ դեպքերում՝ ոչ: Մնթաղ դիակներ տեսնելով՝ ես այնպես եմ ազդվել, որ սրտացել եմ տխրացավ, և մինչև հիմա այդ շարունակվում է: Ես լիաթոք չեմ կարող ուրախանալ» [41]:

Վանեցի գաղթական **Վարազդատ Հարությունյանը** (ծնվ. 1909 թ.) ևս նկարագրել է գաղթի ճամփաներին ժողովրդի կրած դժվարությունները. *«…Խաչփողան փողոցից դուրս եկանք: Մեր ունեցածը բարձել էինք կովի վրա, որն իր համար անասվոր բեռը իր թիկունքից գցեց ու փախավ: Սրտիպված մեր ունեցածը մենք շալակեցինք, դուրս եկանք Վանից, դեպի Բերկրի բարձրացանք:*

Բանդիմահու կամուրջով անցնելիս վանեցիները շատ զոհ ունեցան: Կամուրջը նեղ էր, այնքան ցավալի էր… Ամենից կատաղի կոիվների մենք հանդիպեցինք Բերկրիի մոտ: Ռուսական զորքերը երեխաներին վերցրել էին ռուսական ֆուրգոնների վրա, և քրդերը, որոնք էս ժամանակ վարձված էին՝ հայերին կոտորելու համար, հարձակվեցին մեզ վրա: Ֆուրգոնները շուռ էին գալիս: Երեխաները ջուրն էին թափվում, և մեզ ուղեկցող ռուս զինվորները քրդերին քշեցին, որ ձորի բերանը բացեն: Նրանք քրդերին քշեցին, ձորի բերանը բացեցին, իրենք վերադարձան: Ինձ նստեցրել էին ֆուրգոնի մեջ» [42]:

Ականատես վերապրող **Արծվիկ Թերեզյանը** (ծնվ. 1910 թ., Վան) արցունքներով է պատմել. *«…Մենք ութը հոգի էինք գաղթի ժամանակ: Ճանապարհը շատ դժվար էր, բոլորը հոգնած էին, սոված: Ճամիին մեռածներին թողնում էինք ու առաջ անցնում, քանի որ թուրքերը մեզ հետապնդում էին: Ռուսական զորքը մեզ տիրություն էր անում: Սուիսարի բաժանեցին: Մենք մնացինք անտեր, անտիրական: Որբ մանուկներին հավաքում էին, ինձ ու քրոջս՝ Արմիկին ևս դրեցին փակ սայլի մեջ ու տարան նախ՝ Իգդիր, ապա՝ Անիպեմզա, հետո՝ Երևան. Նորքի Ս. Աստվածածին եկեղեցու մոտ էր մեր մանկատունը, որի ղեկավարն էր օր. Ազնիվը: Այդ մանկատունը Ամերկոմի մանկատունն էր»* [43]:

Վերապրող **Սրբուհի Մուրադյանը** (ծնվ. 1911 թ., Բիթլիս, Ս. Խաչ գյուղ) նույնպես իր սրտառուչ հուշերն է պատմել գաղթի ճամփի մասին, երբ թուրքերը հետապնդել են իրենց. *«…Մի բացատում շատ գաղթականներ էին եկել հավաքվել՝ երկրի տարբեր*

---

[41] Նույն տեղում, վկ. 33, էջ 135:

[42] Նույն տեղում, վկ. 48, էջ 162:

[43] Նույն տեղում, վկ. 49, էջ 163:

գավառներից: Եկել էին, մի աղբյուրի մոտ նստրուել, մի քիչ ջուր խմել, հանգստացել: Այդ խմբերի մեջ էինք նաև մենք: Կաքավիկ մայրս խուրջինի երկու աչքերի մեջ դրել էր իր փոքրիկ երեխաներին՝ միակ տղա Մուրադիկին և մի աղջկան, իսկ երկու մեծ աղջիկներս՝ ես ու քույրս, նրա ձեռքերից էինք բռնել: Հանկարծ մի թուրք հայտնվեց. նա տեսավ մորս կախարդիչ գեղեցկությունը և քարացավ, հետո սկսեց կրակել մեզ՝ երեխաներիս վրա, որ մորս փախցնի: Բայց մայրս իր անթարու տրակից հանեց ատրճանակը և կրակեց նրա ճակատին: Թուրքը ընկավ, բայց ես էլ էի վիրավոր: Ես ձեռքս երկարացրի, մորս փեշը հազիվ բռնեցի: Նա տեսավ, որ ես վիրավոր եմ, տարավ ինձ աղբյուրի մոտ, վերքս մաքրեց, լվաց, ջուր խմեցրեց: Մի քարայրում գիշերեցինք: Թուրքերը գիշերով հարձակվեցին մեզ վրա ու կրակեցին: Մայրս իր մարմնով մեզ վրա պառկեց, որ մեզ գնդակ չկպնի: Երբ թուրքերը հեռացան, մայրս մեզ մեկիկ-մեկիկ համբուրեց: Բայց Մուրադիկ եղբորս արյունը նրա բերանը լցվեց: Մայրս շատ լաց եղավ ու ողբաց, ձեռքերով գերեզման փորեց նրա համար, ու լուսադեմին մենք ճամփա ընկանք: Բավական գնացել էինք: Հանկարծ ձիերի դոփյուն լսվեց: Մայրս կարծեց՝ թուրքերն են կրկին հարձակվել, մեզ ասաց.

- Ավելի լավ է՝ Արազ գետի ջրի մեջ նետվենք, քան թե թուրքերի ձեռքն ընկնենք:

Խեղճ մայրս խուրջինը ուսին դրեց՝ մեջը երկու երեխայով, իմ ձեռքը բռնեց, և ջուրը նետվեցինք: Բայց եկողները ռուս զինվորներ էին, զգացին, որ մայրս հուսահատությունից իրեն և մեզ գցեց ջուրը, իսկույն նետվեցին ջրի մեջ և մեզ ազատեցին, տարան ռուս գեներալի մոտ: Մայրս որպես շնորհակալություն հանեց իր հրացանը և տվեց ռուս գեներալին ու ասաց, որ դրանով ինքը մի թուրք ասկյար է սպանել»[44]:

Գաղթական դարձած **Վարդուհի Փոթիկյանը** (ծնվ. 1912 թ., Վան) ցավագնորեն է վերհիշել այդ սարսափելի թոհուբոհը. *«…Ժողովրդի հետ գալիս էինք: Ճամփին ես կորա: Ռուս զինվորները ինչքան կորած երեխեք կային, հավաքել լցրել էին կաչկի* (սայլակ - ռուս.) *մեջ: Ճամփին գիտե՞ն ինչ տեսանք… Մի, իմ դուշմանը չտեսնա էդ օրը: Վոյ, սև ըլեր էդ օրը: Մենք եկել հասել ենք Բերկրիի կարմունջի մոտը: Մեկ էլ ժողովուրդը գոռաց՝ փախեք: Մթանը տեսանք, Բերկրիի ձորը նեղ ձոր էր, գետը չհասած՝ քրդերը վրա տվեցին: Հայերը, որ փախնում էին, ուրները սոթ էր տալիս, ընկնում էին գետը, խեղդվում: Ո՛րը անասունով էր ուզում անցնել, ո՛րը մտնում էր ջուրը՝ ջուրը տանում էր: Գոռում էին, ճչում, լաց լինում: Քրդերը կրակում էին մեզ վրա: Մերը մանուկը ուրացավ…*

Մտքեր մնա Բերկրիի գյալին, ինչքան մարդոց գլուխ կերավ…

Ռուսները ինչքան կորած երեխա կար, հավաքել, լցրել էին մի չոլի մեջ: Ես երկու ամիս մնացի ռուների մոտ: Օղորմած մերս եկավ ինձ գտավ…»[45]:

Ականատես վերապրող **Ղազար Գևորգյանը** (ծնվ. 1907 թ., Վան, Հայոց Ձոր, Հնդստան գյուղ) ևս նկարագրել է գաղթի ճամփի դժվարությունները. *«…Արևնամուտ էր: Հանկարծ կիրճի հարավային կողմից լսվեց հրացանների կրակոց, և գիլանցի քրդերի լոլոն ինչեց՝ խփեք, հայ խփեք: Նրանք կամուրջի ելքը կտրեցին: Ոմանք էլ*

---

[44] Նույն տեղում, վկ. 21, էջ 113:

[45] Նույն տեղում, վկ. 54, էջ 166, 167:

քարավանի եւրևից եկողների ճամփան կտրեցին, իսկ զիլանցիների որոշ մասը, թաքնված ժայռերի հետևում, կրակում էր անցնող գաղթականների վրա՝ հույս ունենալով, որ նրանք, անցնելով ինքնապաշտպանության, կթողնեն իրենց ունեցվածքը, և իրենք էլ կհափշտակեն: Սակայն Վանի նահանգի հերոս ժողովուրդը, որը կարողացել էր մինչև այդ պաշտպանել իր պատիվը համիդյան ավազակախմբերից, մեծ զոհեր տալով, չհուսահատվեց: Բայց եղան նաև մարդիկ, որոնք իրենց նետեցին Բանդիմահիի սրընթաց ալիքների մեջ՝ հույս ունենալով անցնել մյուս ափը, սակայն ալիքները տարան նրանց:

Ջինված կամավորները անմիջապես դիրքավորվեցին: Սակայն քրդերը նախօրոք մտածված ամրացել էին քարաժայռերին, ունենալով բարձր դիրք և միևնույն ժամանակ անտեսանելի կրակում էին անզոր գաղթականների վրա: Շատերը զոհվեցին: Սկսեցին նաև անասունները: Այսպես տևեց երկու ժամ, մինչև որ օգնության հասավ Բերկրի գյուղում հանգստացող կազակական մի կայազոր: Կամուրջն ազատվեց: Այդ գիշեր, առանց հանգիստ առնելու, գաղթականությունը շարունակեց իր ճանապարհը: Կարծես բախտը մեզ ժպտաց: Կակոն, լինելով ճարպիկ, գյուղի մի քանի երիտասարդների հետ զբաղված էր անասունների խնամքով: Իսկ ես և մայրս, մեր եզները բարձած, գյուղացիների հետ շարժվում էինք առաջ: Հասնելով Բերկրի՝ մեզ այլևս թույլ չտվին առաջ գնալ, կայազորի հրամանատարը հաղորդեց, որ օգնական ուժեր են ուղարկել, մի քանի ժամից ճանապարհը կազատվի: Մի գիշեր մնացինք Բերկրիում: Հաջորդ առավոտյան շարունակեցինք մեր ճանապարհը: Մինչև մեր շարժվելը հասավ նաև Կակոն՝ իր ոչխարի հոտերով, և մենք նորից բռնեցինք մեր գաղթի ճամփան:

Անցնելով կամուրջով՝ կիրճում մենք ականատես եղանք մեր գաղթական հարազատների դիակներին: Թե ինչպիսի տեսարան էր, սոսկալի է անգամ վերհիշել, չնայած որ հայը այդպիսի տեսարանների շատ է արժանացել թուրք բարբարոսների կողմից:

Ես միայն կվերհիշեմ մի դեպք մի մարդու մասին, որը իր ժամանակին մեր գավառի համար եղել է հեղինակավոր դեմք, եղել է մեր գյուղի տերը: Դա Մկրտիչ աղան էր: Բնակվում էր Վան քաղաքում: Ինքը, լինելով կալվածատեր, մեր գյուղը իր նախնիների կալվածքն էր եղել, գյուղում ուներ հիանալի կառուցված փուն-բերդ, որը երկուհարկանի էր, դեռ մինչև գաղթը մնում էր նրա այգին՝ հինգ-վեց հեկտար տարածությամբ, երեք մետր բարձրությամբ պարսպապատ: Գյուղի եկամտի կեսը պատկանում էր նրան: Գյուղում նրան կոչում էին Մկո (Մկոյի պարիսպ, Մկոյի բերդ, Մկոյի արտեր և այլն): Ահա գաղթի այդ ճանապարհին մենք հանդիպեցինք նրան մի սայլի վրա նստած՝ հովանոցը գլխի վերևը բռնած: Գաղթի ճամփին նա զոհ գնաց մի պատահական գնդակի: Երևելի կալվածատիրոջ անփառունակ մահը կարծես ի ցույց էր բոլոր անցնող գաղթականներին, որպեսզի նրանք չցավեին իրենց կորցրածի համար:

Անցնելով Բանդիմահու կամուրջը՝ մենք մեզ զգացինք կարծես ազատ վտանգներից: Մի քիչ հանգիստ առանք, որպեսզի ուժ հավաքենք գալիք ճանապարհի համար: Թե քանի օրից հասանք Իգդիր, այդ չեմ հիշում: Հիշում եմ, երբ հասանք Իգդիր՝ Ռուսահայաստանի մեջ, սկսեցինք վաճառել մեր անասունները տեղացի հայերին՝ թող-

նելով մի քանի բարձկան անասուններ, որոնց բարձելով մեր ուրելիքը՝ առաջացանք դեպի Երևանի նահանգի մի շարք գավառներ, ինչպես այն նախատեսել էր կառավարությունը»[46]:

Ականատես վերապրող **Թովիկ Բաղդասարյանը** (ծնվ. 1901 թ., Վան, Հայոց Ձոր, Հնդստան գյուղ) շարունակել է նախորդի պատմածը. *«…Հարյուր հազարավոր գաղթականներ լցվել էին, որոնք իրենց փրկությունը համարում էին Երևան հասնելը: Մորս, երեխաների հետ հասանք Բանդիմահու փրփրադեզ գետը: Ես խնդրեցի մորս, որ գնամ ջուր շիեմ երեսս: Ես գնացի, հանկարծ կարկտաբեր մի բան սկսվեց: Քրդերը պաշարել էին հանդիպակաց ձորի վերին մասը, կրակում էին, մարդիկ գլորվում էին: Ես տեսնում էի, թե ինչպես եկողներն իրենց գցում էին ջուրը: Ես էլ հանվեցի, նետվեցի ջուրը: Մինչև գետի կեսը որ հասա, ջրի հոսանքը ինձ տարավ ներքև: Դիակները հարյուրներով գալիս էին իրար եւրևից, քշվում էին դեպի ծով: Հանկարծ մի փեշ կպավ ինձ, մի կին բռնել էր ծառից: Ես նրա փեշից կպա ու կամաց-կամաց դուրս եկա: Ես էդ կնոջ ազատածն եմ: Ո՛վ էր այդ կինը՝ չգիտեմ: Դուրս եկանք գետից՝ մրսում եմ, դողում եմ: Ես մի ոուս զինվորի խնդրեցի, որ մեզ նստեցնի ձիու վրա: Ձին չգնաց: Իջա: Տեսա՝ մի կով կա: Բեռնակիր կովի ջվալները ընկել էին, մեջը գաթա կար: Ես սոված էի, կերա: Մի մարդ ինձ նստեցրեց կովի վրա ու կապեց պարանով: Ժողովուրդը գոռում, գոչում է, ամեն մեկը իր հարազատին է փնտրում:*

Ես էլ երեկոյան մյուսների հետ մի տեղ հասա, նստեցինք հանգստանալու: Ես իջա, կովի պարանը կապեցի ոտքիս, պառկեցի: Մրսածում եմ՝ ինչ եղան մերոնք: Մեկ էլ մի ձայն լսեցի, տեսնեմ՝ ամուսնացած քույրս է: Փաթաթվեցինք: Ես կովի հետ առաջ գնացի: Գրա մորս, քույրերիս, մորաքույրս նստել էր կանաչների վրա՝ վայ-վոյ էին անում, ողբում էին իմ մահը: Հանկարծ ինձ որ տեսան, ձեռքերի վրա բարձրացրին: Շարունակեցինք, հասանք Արաղայի դաշտը, հետո Օրգով, որը ոուսական սահմանն էր: Առաջին օգնությունը հայերին տվին, հաց բերին, բաժանեցին: Մենք սկսեցինք առաջին անգամ ախորժակով բոքոն ուտել: Երկու-երեք օր մնացինք, հետո Իգդիրի վրայով դեպի Էջմիածին եկանք»[47]:

Վանեցի **Վարազդատ Հարությունյանը** շարունակել է վերջինիս միտքը. *«… Արաքս գետն անցանք: Եկանք, Էջմիածնի վանքի պատերի տակ գաղթականները լցված, փիֆի համաճարակից օրական հարյուրավոր մարդիկ էին մեռնում: Վիճակը շատ ծանր էր: Տներն անգամ հիվանդանոց էին դարձել: Եղբայրս՝ Գուրգենը, երբ մահացավ, ես տեսա, թե ինչպես փայտը թարս ու շիրակ շարում են իրար վրա, այնպես էլ մեռելներին էին իրար վրա շարում, որ գիշերը գտնեն եղբայրական գերեզմանը գցեն:*

Հայրս տեսավ, որ մենք ևս պիտի մեռնենք, մեզ հավաքեց, տարավ Թիֆլիս: Այնտեղ էին հորեղբայրս՝ Տեր-Հարությունյաններն իրենց ընտանիքով, որոնք 1896 թ. դեպքերից հետո գաղթել էին: Ես, մայրս, հայրս, եղբայրս՝ Արծրուն Հարությունյանը՝

---

[46] Նույն տեղում, վկ. 42, էջ 150:

[47] Նույն տեղում, վկ. 31, էջ 129:

Արաքսյայի հայրը: Մեզ տեղավորեցին Արամյան հիվանդանոցում: Այնտեղ տիֆից վախճանվեց հայրս:

Մենք մեզ գտանք որբանոցում: Ես, քույրս և եղբայրս Բարեգործականի որբանոցում ենք մեծացել, որի շեֆությունը Հովհաննես Թումանյանն էր իրականացնում: Նա որդեգրել էր երեք տղաների՝ ապագա բանաստեղծ Վաղարշակ Նորենցին, գրականագետ Նորայր Դաբաղյանին և Միհրան Թյությունջյանին: Թիֆլիսի Ծիրանավոր վանքի բակում էր որբանոցը: Ուխտավորները գալիս էին մատաղ անելու, և մենք անվում էինք, բայց հետո դժվարացավ:

Մեր հայոց լեզվի ուսուցիչ Ծերուն Թորգոմյանը հրատարակում էր «Համբավաբեր» հանդեսը, 1916 թ. մարտ ամսվա համարում լույս է տեսել մեր որբանոցի լրիվ ցուցակը: Այդտեղ ես երկու հարյուր չորս համարում եմ, ընդամենը յոթը տարեկան, եղբայրս՝ ինը, քույրս՝ տասնմեկ տարեկան: Ծնված օրս հայտնի չէր, ես գրեցի նոյեմբերի 29-ը՝ հայ ժողովրդի վերածնունդի օրը»[48]:

Ուշագրավ է, որ գրեթե բոլոր գաղթական վերապրողներն առանձին երախտագիտությամբ են հիշում ռուս զինվորների մարդկային ու հոգատար վերաբերմունքը, ինչպես նաև հայ կամավորների նվիրվածությունը տառապյալ գաղթականների նկատմամբ:

Հիշարժան է **Պարույր Խաչատրյանի** (ծնվ. 1908 թ., Ալաշկերտ) վկայությունը. *«Մեծ եղեռնի ժամանակ ես փոքր էի, բայց հիշում եմ: Մեր ընտանիքը բաղկացած էր՝ հայրս, մայրս, երկու հորեղբայրներս, եղբայրներս՝ Ռուբենը, Խոսրովը, քույրս՝ Հեղինեն: Քանի որ մենք փոքր էինք, ռուսները մեզ դրին սայլի վրա ու բերին: Ճամփին տեսանք՝ գյուղերը վառվում էին, տներ-մարագներ ծխի-մխի մեջ կորած: Ասացին՝ մեջը հայերին լցրել են ու վառել: Մուրադ գետը արյուն էր դարձել: Ամեն կողմ դիակներ էին լողում... Զորի մեջ թուրք զինվորները հայ աղջիկներին տարել էին, փլկորացրել և սպրիպել պարել: Մեր կամավորները տեսնում են, հարձակվում են նրանց վրա, թուրք զինվորներին կոտորում են և աղջիկներին ազատում»*[49]:

Ականատես վերապրող **Նեկտար Գասպարյանը** (ծնվ. 1910 թ., Արդվին, Տանձուտ գյուղ) հուզումով է պատմել, թե ինչպես իրենց Տանձուտ գյուղի դպրոցի տնօրեն **Վարդան Մազմանյանը** լսելով, որ հաջորդ օրը թուրքերը հարձակվելու են իրենց գյուղի վրա և հայերին պիտի կոտորեն, թրքուհու շորեր է հագնում ու ծպտված գիշերով հասնում Արդվին, որտեղ ռուսական զորքն էր: Ներկայանում է հրամանատարին, խաչ հանում, որ իրեն հավատան ու խնդրում ռուսների օգնությունը, որոնք գիշերով ճամփա են ելնում դեպի Տանձուտ. *«...Թուրքերը երբ տեսնում են ռուսական զորքի մուտքը Տանձուտ, գլխապատառ սկսում են փախչել: Ռուսները գալիս են, սկսում են օգնել հայերին և ասում են. «24 ժամից մենք պիտի հեռանանք, ով որ պատրաստ լինի, մեզ կմիանա»: Ինձ, քրոջս՝ Անուշին և փոքրիկ եղբորս ռուս զինվորները իմանալով, որ մենք որբ ենք, սահնակի վրա խուր կար փռված, վրան իրենց շինելը փռեցին, վրան մեզ նստեցրին, մեզ վրա էլ մի ուրիշ շինել*

[48] Նույն տեղում, վկ. 48, էջ 162:

[49] Նույն տեղում, վկ. 64, էջ 180:

ծածկեցին, որ չմրսենք, իրենց պայոկից էլ մեզ բաժին հանեցին, կերակրեցին ու բերին հասցրին Ախալքալաքի զինվորների զորանոցը: …Ութսուն տարուց ավելի է անցել, բայց ես մինչև այսօր չեմ կարող մոռանալ իմ սիրելի վաղամեռիկ հայրիկին, մայրիկին, քեռուն, հարևաններին, տատիկին, մեր բոլոր ազգականներին, որոնք գազանաբար սպանվեցին և մեզի թողին անտեր ու անօգնական: Իմ ամբողջ կյանքում ես միշտ հիշում եմ այդ սարսափելի տեսարանները, որոնք տեսել եմ իմ աչքերով, և ես երբեք հանգիստ չունեմ: Այնքա՜ն եմ արցունք թափել… Օտարները չուզեցին մեզ օգնել, ոուսները մեզ օգնեցին»[50]:

Կարելի է անվերջ շարունակել ականատեսների վկայությունները, բայց որպես եզրակացություն՝ մեջբերենք **Ծիրանի Մաթևոսյանի** (ծնվ. 1900 թ., Խարբերդ, Չմշկածագ գյուղ) խորիմաստ խոսքը. *«…Էդ ժամանակ ոուսը Երզնկայումն էր: Ոուսը ֆուրգոններով հայերին տարավ Երզնկա: Կազարմաները լցվեցին հայերով… Անդրանիկ փաշան՝ լիս դառնա. եկավ մեզ քշեց, բերեց, Հայաստան-երկիր հանեց, բայց ամեն ինչ կորցրինք: Էս մի թեթև մասն եմ քեզ պատմել, բալա՛ ջան, եթե բոլորը պատմեմ, յոթ օր, յոթ գիշեր չի պրծնի… Թուրքը թող մեռնի՛. էդ սաՂ ինքը արեց մեր գլխին: Երկրից էլ զրկվանք, ջանից էլ զրկվանք, հարստությունից էլ զրկվանք: Հիմա էլ անամոթները ասում են, թե հայերն են իրանց կոտորել: Մեր ոսկիները, տուներըՀ հողերը մնացին թուրքին: Ես զարմանում եմ՝ ոնց հայերը չեն կարողանում թուրքի հախից գալ: Թող գիրք ըլլի, էս բոլոր պատմածները, թող կարդան աշխարհի մարդիկ, որ իմանան՝ ով է մեղավորը, ով է արդարը, ով է տուժվածը…»*[51]:

Քանի որ գաղթի ու տարագրության դժվարին պայմաններում օրագրություն գրելն անհնար էր, ականատես վերապրողների հաղորդած հուշ-վկայություններն ու պատմական տարաբնույթ երգերը դաջվել են նրանց հիշողության մեջ՝ օրագրության նման օրը օրին, տեղը տեղին արձագանքելով Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատի պատմական յուրաքանչյուր իրադարձությանը, միմյանց լրացնելով, հաստատելով ու հիմնավորելով կատարված դաժան իրողությունները, քանի որ հայ ժողովուրդն ի՛նքն է կրել այդ բոլոր անասելի տառապանքները, հետևաբար՝ ժողովուրդն ի՛նքն է այդ զանգվածային ոճրագործության առարկան (object): Եվ ինչպես ամեն մի հանցագործություն բացահայտելիս դատարանում որոշիչ են վկաների ցուցմունքները, նույնպես և այս պարագայում պետք է հենվել նաև ականատես վերապրողների վկայությունների վրա, որոնցից յուրաքանչյուրը ապացուցողական նշանակություն ունի Հայոց ցեղասպանության ճանաչման, հատուցման, ինչպես նաև Հայկական հարցի արդարացի լուծման գործում:

---

[50] Նույն տեղում, վկ. 81, էջ 198, 199:

[51] Նույն տեղում, վկ. 113, էջ 263:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԻ ՄԱՍԻՆ

Վերժինե Սվազլյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց ցեղասպանության ականատես վերապրողներից 55 տարիների ընթացքում Հայաստանում և սփյուռքում իմ գրի առած, ձայնագրած, տեսագրած և ուսումնասիրած ժողովրդական 700 միավոր նյութերը ներկայացնում են Արևմտյան Հայաստանի (ինչպես նաև՝ Կիլիկիայի և Անատոլիայի) 150 տեղավայրերի հայության կյանքն ու բարքը, հասարակական, քաղաքական իրադարձությունները (գաղթն ու ջարդը) և նրանց բարոյահոգեբանական ցավագին ապրումներն ու մտորումները:

Ականատես վերապրողների հաղորդած հուշ-վկայությունները և երգ-վկայությունները վերաբերում են նաև Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատին, որը տեղի է ունեցել նրանց աչքի առաջ: Նրանք պատմել են թուրքական կառավարության զինահավաքի, զորահավաքի, Սարիղամիշի ճակատամարտի, արևմտահայության տխուր վիճակի, նրանց արդար ու ազնիվ ոգորումների (ընդվզումներ և ինքնապաշտպանական մարտեր), ինչպես նաև ռուսական զորքի ու կամավորների ուղեկցությամբ դեպի Արևելյան Հայաստան գաղթի մասին:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, երիտթուրքեր, ականատես վերապրողների վկայություններ, ռուս զինվորներ, Կովկասյան ճակատ, Առաջին համաշխարհային պատերազմ:

THE TESTIMONIES OF THE EYEWITNESS SURVIVORS OF THE ARMENIAN GENOCIDE ABOUT THE CAUCASIAN FRONT OF THE WORLD WAR I

Verjiné Svazlian

SUMMARY

The 700 units of popular materials I have written down, tape- and video-recorded in the course of 55 years from the survivors of the Armenian Genocide in Armenia and the Diaspora describe the public-political events of the time, the life and the lifestyle of the Armenians originally from 150 localities of Western Armenia (including Cilicia) and their sorrowful moral-psychological experiences.

In these memoir-testimonies and song-testimonies, the eyewitness survivors have referred also to the events occurred at the Caucasian front during World War I, which had taken place before their eyes. They have narrated their impressions concerning the arm-collection and the mobilization, organized by the Turkish government, the battle of Sarighamish, the grave condition of the Western Armenians, their righteous and noble

struggles (their rebellions and self-defensive battles) and their emigration to Eastern Armenia with the Russian soldiers and the volunteers.

Keywords: Armenian Genocide, Ottoman Empire, Young Turks, testimonies of the eyewitness survivors, Russian soldiers, Caucasian Front, First World War.

СВИДЕТЕЛЬСТВА ОЧЕВИДЦЕВ ГЕНОЦИДА АРМЯН О КАВКАЗСКОМ ФРОНТЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Вержине Свазлян

РЕЗЮМЕ

На протяжении 55 лет, собранные и записанные (в том числе и на аудио- и видео носители), а также исследованные мною материалы (700 единиц) свидетелей-очевидцев Геноцида армян в Армении и в диаспоре, представляют жизнь и быт, общественно-политические события (депортация и резня), морально-психологические трагические переживания и размышления армян из более чем 150 местностей Западной Армении (а также Киликии и Анатолии).

Воспоминания-свидетельства и песни-свидетельства очевидцев относятся также к событиям на Кавказском фронте во время Первой мировой войны. Они свидетельствовали о военных сборах и мобилизациях, организованных турецким правительством, о Сарыкамышском сражении, тяжелом положении западных армян, их справедливой борьбе (восстания и самооборонительные бои), а также о переселении армян в Восточную Армению в сопровождении русской армии и добровольцев.

Ключевые слова: Геноцид армян, Османская империя, младотурки, свидетельства очевидцев, русские солдаты, кавказский фронт, Первая мировая война.

UN JOURNALISTE SUR LE FRONT DU CAUCASE : RÉCIT ET CONNAISSANCE DU GÉNOCIDE DES ARMÉNIENS DURANT LA GRANDE GUERRE

Joceline Chabot, Richard Godin, Sylvia Kasparian

Introduction

À l'automne de 1914, lorsque la guerre éclate entre l'Empire ottoman allié de l'Allemagne et de l'Autriche-Hongrie et les pays de l'Entente – France, Grande-Bretagne et Russie – les affrontements sur la frontière russo-turque tournent rapidement à l'avantage des troupes russes dirigées par le général Nikolaï Nikolaïevitch Ioudenitch. Jusqu'à la révolution de 1917, l'armée russe est présente sur le front du Caucase et en Asie Mineure où elle occupe des villes importantes comme Trébizonde, Erzeroum, Van. C'est dans le contexte de l'avancée des Russes en Asie mineure au printemps de 1916 que le correspondant du quotidien français *Le Journal*, Henry Barby, arrive à Erzeroum.

À compter de cette date, il est un des rares journalistes français à accompagner les troupes russes sur ce front. À ce titre, il devient le témoin privilégié des conséquences des dévastations et des crimes qui, depuis l'année précédente, ont frappé la population civile arménienne. Pendant les mois qui suivent, à l'aide de sa traductrice, l'écrivaine arménienne Zabel Essayan, Barby recueille les récits des victimes et des témoins des massacres survenus en Arménie. Il rédige des articles pour *Le Journal*, articles qui sont repris par plusieurs journaux français et étrangers.

Durant la Grande Guerre, le massacre des Arméniens de l'Empire ottoman va retenir l'attention de l'opinion internationale[1]. C'est ainsi que la presse s'empare de la nouvelle, alors que les maisons d'édition publient de nombreux ouvrages relatant les événements qui secouent l'Asie Mineure. Par exemple, en français, les ouvrages d'Émile Doumergue[2] et de René Pinon[3], paraissent en 1916. En traduction française, ceux d'Herbert Adams Gibbons[4], du vicomte Bryce[5] et d'Henri Morgenthau[6] sont publiés respectivement en 1916, 1917 et 1919. Parmi cette masse importante d'ouvrages, celui d'Henry Barby paraît en 1917 sous le titre, *Au pays de l'épouvante. L'Arménie martyre*[7] (Photo 1).

---

1 Becker Annette and Winter Jay, "Le génocide arménien et les réactions de l'opinion internationale," in *Vers la guerre totale. Le tournant de 1914-1915*, ed. J. Horne, Paris: Tallandier, 2010, 291-13.

2 Doumergue Émile, *L'Arménie, les massacres et la question d'Orient*, Paris: Foi et Vie, 1916.

3 Pinon René, *La suppression des Arméniens. Méthode allemande – Travail turc*, Paris: Perrin, 1916.

4 Gibbons Herbert Adams, *Les derniers massacres d'Arménie. La page la plus noire de l'histoire moderne,* Paris: Nancy: Berger-Levraut, 1916.

5 Bryce James, *Le traitement des Arméniens dans l'Empire ottoman, 1915-1916. Documents présentés au vicomte Grey of Fallodon secrétaire d'Etat aux Affaires étrangères*, Laval: Impr. G. Kavanagh, 1917.

6 Morgenthau Henri, *Mémoires de l'ambassadeur Morgenthau. Vingt-six mois en Turquie*, Paris: Payot, 1919.

7 Barby Henry, *Au pays de l'épouvante. L'Arménie martyre*, Paris: Albin Michel, 1917.


HENRY BARBY
CORRESPONDANT DE GUERRE DU JOURNAL

Au Pays de l'Épouvante

L'ARMÉNIE MARTYRE

Préface de M. Paul Deschanel
de l'Académie Française
Président de la Chambre des Députés

PARIS
ALBIN MICHEL, Éditeur
22, rue Huyghens, 22

Photo 1. Couverture du livre Au pays de l'épouvante et de son auteur Henry Barby (source : http://www.acam-france.org/bibliographie/auteur.)

À l'époque, l'écho et les résonnances de son témoignage sont importants, si bien que son livre sera d'ailleurs traduit en russe et en arménien dès 1919. Cela tient aussi bien à l'originalité et à la qualité des sources utilisées et des personnes rencontrées durant ses pérégrinations qu'à son statut de grand reporter, témoin oculaire des événements.

Dans le cadre de cet article, nous analyserons la forme et le contenu du témoignage d'Henry Barby. Plus précisément, nous chercherons à répondre aux questions suivantes: dans quel contexte Barby rédige-t-il ce témoignage? À quelles formes narratives le récit emprunte-t-il? En plus des informations factuelles, quelles représentations ce récit peut-il livrer sur le génocide des Arméniens dans le cadre de la Grande Guerre sur le front caucasien?

Nous avons abordé l'entreprise testimoniale d'Henry Barby par l'approche croisée de trois disciplines: l'histoire, la linguistique et les sciences de la communication. Cette triple lecture nous permet de contextualiser le récit testimonial en tant que trace du passé, d'explorer les mondes lexicaux ainsi que les représentations des événements narrés et de décrire les pratiques journalistiques ainsi que le contexte de production médiatique dévoilant les limites intrinsèques de ce récit. Bien qu'il soit acquis que le travail journalistique de Barby a fait l'objet de publications répétées dans les journaux de l'époque, il n'est pas interdit d'avancer l'hypothèse selon laquelle son livre constitue davantage une enquête journalistique *stricto sensu* destinée à révéler une situation humanitaire exceptionnelle et violente, plutôt qu'un simple carnet de notes de voyage.

Notre analyse nous permettra d'établir: d'abord, la position privilégiée d'observateur du témoin Barby, le journaliste dans sa quête objective de faits; ensuite, les différentes formes narratives journalistiques qu'il imprime au récit; finalement, la capacité à qualifier les faits dans un souci de représentation.

Notre article comprendra donc trois parties. La première sera axée sur le parcours journalistique d'Henry Barby pour mieux comprendre les circonstances de la construction de son témoignage. La deuxième présentera la forme et le contenu de son témoignage afin d'en cerner le statut dans l'économie générale du discours sur le massacre des Arméniens durant la Grande Guerre. La troisième partie interrogera sa capacité à s'inscrire comme témoignage-ressource pour la connaissance du génocide des Arméniens.

Barby, un reporter dans la Grande Guerre

L'ouvrage d'Henry Barby est bien connu des spécialistes du génocide des Arméniens, alors que le parcours biographique de l'auteur demeure lacunaire. En effet, les recherches effectuées jusqu'à maintenant ne nous ont malheureusement pas permis de trouver beaucoup d'informations à son sujet. À partir des éléments biographiques dont on dispose, nous brosserons un tableau rapide de son parcours professionnel.

Né en 1876, Henry Barby serait décédé en 1935 (bien que cette date ne soit pas clairement établie). En revanche, ce qui est certain, c'est qu'à compter de 1910, Barby est correspondant pour *Le Journal*, l'un des quatre grands quotidiens qui dominent la presse française à l'époque de son âge d'or[8]. En 1912, le reporter couvre le conflit qui oppose la Serbie à l'Empire ottoman dans le cadre des guerres balkaniques. À l'annonce du conflit austro-serbe à l'été de 1914, il retourne en Serbie comme correspondant du *Journal*. À la suite de cette expérience, Barby rédige un ouvrage intitulé *L'Épopée serbe : l'agonie d'un peuple*, publié chez Berger-Levrault en 1916[9]. Deux ans plus tard, il relatera encore une fois son aventure serbe dans un second livre intitulé: *La guerre mondiale. Avec l'armée serbe de l'ultimatum autrichien à l'invasion de la Serbie*. Au printemps de 1916, il se retrouve à la frontière russo-turque. À partir de ce moment, il accompagne les troupes russes engagées sur le front du Caucase.

Selon ses dires, il arrive à Erzeroum au mois de mars en provenance de Tiflis et de Sarikamish, c'est-à-dire plus d'un an après la terrible défaite de l'armée ottomane face aux Russes, alors que pratiquement le territoire est vidé de sa population arménienne[10]. Après cinq jours d'un voyage qu'il qualifie de pénible, Barby brosse un tableau expressif de la ville qui se livre à son regard:

> […] Erzeroum, au fond du cirque que forment les hauteurs, m'apparaît, enfin, rose sous le soleil couchant, qui accroche des flammes d'or aux coupoles des mosquées et aux fines aiguilles des minarets. À l'horizon

8 Bellanger Claude et al., *Histoire de la presse française, tome III, De 1871-1940*,Paris: PUF, 1972, p. 298.

9 BDIC-Service archives, *Henry Barby (1876-19..)*

10 Barby Henry, *Au pays de l'épouvante*, pp. 19-20.

> mauve et gris, c'est la plaine marécageuse où coule la Karé-Sou, une des branches de l'Euphrate[11].

En avril, il est à Trébizonde occupée par les Russes, puis, deux mois plus tard, en juin, il est de retour à Erzeroum. En juillet 1916, il est peut-être à Kharpout, son récit demeure imprécis à ce sujet, mais il semble avoir parcouru les agglomérations arméniennes de cette région dévastée par les Turcs. En compagnie de volontaires arméniens et de troupes russes, il se rend ensuite à Van, probablement au début du mois de juillet, il visite les ruines d'une partie de la ville suite à la résistance menée par les Arméniens contre les Turcs[12]. En août 1916, il est à Erzindjan dont la prise par les troupes russes lui permet d'approfondir son enquête sur les massacres des populations civiles arméniennes[13].

Barby poursuit son périple à travers les paysages désolés de l'Asie Mineure sans toutefois être toujours très précis quant à la chronologie de ses déplacements et aux endroits visités. Par exemple, a-t-il été à Dzéghag ou lui a-t-on rapporté l'histoire de cet enfant de huit ans retrouvé seul dans le village en ruine? A-t-il visité Khnis-Kalé, pris et repris par les Russes et les Kurdes? Plus tard, on retrouve Henry Barby à Tiflis où il recueille les témoignages de nombreux orphelins rescapés du génocide. C'est d'ailleurs peut-être à Tiflis en 1916, mais plus sûrement à Bakou, qu'il rencontre et collabore avec l'écrivaine arménienne très réputée Zabel Essayan. En 1916 et 1917, celle-ci réalise pour Barby plusieurs traductions de l'arménien au français[14].

En 1918, Barby se trouve toujours en Transcaucasie afin de couvrir la résistance arménienne contre les Turcs et les bolchéviques. Autour de ces événements, il rédige un nouveau livre au titre évocateur: *Les extravagances bolchéviques et l'épopée arménienne*, publié en 1919. Après la guerre, Barby aurait continué à travailler pour *Le Journal* jusqu'à une date indéterminée. Dans les années trente, il a écrit plusieurs articles pour la collection *Monde et Voyages, revue de l'actualité universelle* chez Larousse.

Si l'on se fie à ces quelques éléments biographiques, Henry Barby incarne en son temps la figure du correspondant de guerre, du grand reporter, figure qui a émergé, selon l'auteur Phillip Knightley, à l'époque de la guerre de Crimée[15]. Aventuriers, baroudeurs, écrivains, les grands reporters sont les héros du journalisme. À travers ses récits, Barby relate les faits, dépeint les lieux et narre ses rencontres, mais il cherche aussi à offrir aux lecteurs une vision de l'événement. Sa narration, empreinte d'exotisme et de tragique, allie volontiers les genres: récit de voyage, témoignage à chaud, et enquête de terrain. Pour

---

[11] Barby Henry, *Au pays de l'épouvante*, pp. 19-20.

[12] Barby Henry, *Au pays de l'épouvante*, pp. 127.

[13] Barby Henry, *Au pays de l'épouvante*, pp. 90.

[14] C'est ce que nous apprend Marc Nichanian dans sa postface à l'ouvrage d'Hayg Toroyan and Zabel Essayan, *L'Agonie d'un peuple*, Paris: Classiques Garnier, 2013, pp. 154-56.

[15] Knightley Phillip, *Le correspondant de guerre. De la Crimée au Vietnam, héros ou propagandiste?*, Paris: Flammarion, 1976.

mieux situer le statut de ce témoignage, la deuxième partie de notre article examinera la forme narrative qu'emprunte l'ouvrage *Au pays de l'épouvante.*

Barby, le témoin voyageur

La construction narrative du témoignage de Barby est complexe: le récit ne suit pas une progression linéaire, mais procède plutôt d'une progression éclatée. En effet, le récit que livre Barby des événements survenus sur le front du Caucase et en Asie Mineure est formé de fragments, de scènes, d'épisodes qui, par un effet d'accumulation, nous livrent un tableau saisissant du drame qui frappe l'Arménie. Le récit est à la fois *diegesis* et *mimesis*, parfois l'auteur rapporte les faits efficacement, alors qu'à d'autres moments il s'efface et représente directement une scène dialoguée à laquelle nous semblons assister.

խախտվել է, և ՀՅԴ-ն, որը Բոստոնում լույս տեսնող «Հայրենիք» պարբերաթերթի էջերում ձեռնամուխ էր եղել հայ կամավորական շարժումներին ի նպաստ մասնավոր հանգանակություններ իրականացնելուն, հեռացվել է Հանձնախմբի կազմից[7]: Կովկասում հայ կամավորական շարժմանը սատարելու նպատակով հանգանակվել էր 160.000 դոլար, որից ԱՊԱՀ-ը՝ 60.000, իսկ առանձին ՀՅԴ-ն՝ 100.000 դոլար (ընդ որում՝ 1914 թ. Ամերիկայի Կենտրոնական կոմիտեն /ԿԿ/ երկրի ինքնապաշտպանական ծրագրերի համար տրամադրել է 5.900 դոլար[8]):

Անտանտի տերությունների առջև Հայ դատը ներկայացնելու նպատակով 1912 թ. Փարիզում հիմնված Ազգային պատվիրակության նախագահ, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանագիտական ներկայացուցիչ Պողոս Նուբարի և Կահիրեում գործող Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) ջանքերով Եգիպտոսի օրինակով մի խումբ ամերիկահայերի կողմից (դոկտոր Սմբատ Մ. Գաբրիելյան, Միհրան Սվազլյան /Սվազլը/, պատվ. Խաչատուր Կ. Պենննեյան և այլք) ԱՄՆ-ում ևս ստեղծվել էր ***Ազգային շահերի պաշտպանության միությունը*** (ԱՇՊՄ): Այն բաղկացած էր հայ քաղաքական երեք կուսակցություններից, Հայ առաքելական և Հայ ավետարանական եկեղեցիներից ու ՀԲԸՄ-ից ընտրված ներկայացուցիչներից: ՀՅԴ-ն հրաժարվել է ենթարկվել Ազգային պատվիրակության և անձամբ Պ. Նուբարի հսկողությանը և գործել է անկախ ընդհուպ մինչև 1917 թ. սկիզբը[9]:

Պ. Նուբարի ջանքերով Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախումբն ու Ազգային շահերի պաշտպանության միությունը համագործակցված զգալի օգնություն են առաքել Սբ. Էջմիածին՝ ի նպաստ հայ գաղթականների, Կովկասում ապաստանած փախստականների ու կամավորների: Ծրագրված էր նաև բոլոր միջոցներով սատարել Փարիզի Ազգային պատվիրակությանը՝ Կիլիկիայի ազատագրման ու Եվրոպայում և Ամերիկայում Հայ դատի պաշտպանությունը հետամտող նրա քաղաքական, դիվանագիտական և ռազմական բնույթի ջանքերին:

1915 թ. սեպտեմբերին ազգային վերոհիշյալ երկու կազմակերպությունները (ԱՊԱՀ և ԱՇՊՄ) միավորվել են որպես ***Ազգային պաշտպանության Ամերիկայի միություն*** (ԱՊԱՄ)՝ աջակցելու Փարիզի Ազգային պատվիրակությանը: Միությունը բաղկացած էր ազգային վեց կուսակցությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչներից (ՍԴՀԿ, ՎՀԿ, ՀՍՌԿ, ՀԲԸՄ, Հայ առաքելական և Հայ ավետարանական եկեղեցիներ): Նոր միության կազմում էին Միհրան Սվազլըն (ատենապետ), Ա. Նազարեթյանը (ատենադպիր), Բաբկեն եպս. Կյուլեսերյանը և այլք[10]:

---

[7] Տե՛ս Ճիզմէճեան Մ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 202:

[8] Տե՛ս Տօնապետեան Գ., *նշվ. աշխ.*, հ. Բ, էջ 268:

[9] Տե՛ս *Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի*, էջ 9, 10: Հայկ Վ., *Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը*, Նիւ Եորք, 1959, էջ 994: *The Armenians in Massachusetts*, Boston, 1937, p. 52. Թէոդիկ, *Ամէնուն տարեցոյցը*, ԺԲ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 283:

[10] Տե՛ս *Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի*, էջ 9, 10: Ճիզմէճեան Մ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 202:

Միության անդրանիկ հանգանակությունը տեղի է ունեցել Բոստոնում աննախադեպ խանդավառության պայմաններում: Ժամանակակիցների գնահատմամբ. «Խուռներամ բազմութիւն մը լեցուած էր *Ֆրանքլին Եունեըն* ժողովասրահը, որոնց մէջ նկատելի էր Պոստոնի եւ շրջակայքի առեւտրականներու ամբողջութիւնը: Անոնցմէ շատեր նախօրօք արդէն արձանագրուած էին նշանակալի գումարներ, աստնցմով ապահովուած էր հանգանակութեան յաջողութիւնը»[11]:

ԱՊԱՄ-ի գործունեությունը գնահատվել և օրհնվել է Ամենայն հայոց կաթողիկոսի՝ 1915 թ. հոկտեմբերի 17-ի թիվ 1799 կոնդակով[12]:

Ազգային պաշտպանության Ամերիկայի միության ջանքերով կազմակերպվել են հայրենանպաստ հանգանակություններ, որոնց արդյունքը բաժանվել է հետևյալ սկզբունքով. գումարի 100% բաժնի 25%-ը Հայոց կաթողիկոսի միջոցով՝ Կովկասի հայ կամավորներին, 25%-ը կրկին կաթողիկոսի կամ Պ. Նուբարի միջոցով՝ Կովկասում ապաստանած հայ կարոտյալներին, իսկ մնացած 50%-ը ուղարկվել է Փարիզի Ազգային պատվիրակությանը: Հետագայում, Պ. Նուբարի կարգադրությամբ, որոշվել է հանգանակությունների արդյունքները լիովին առաքել անձամբ կաթողիկոսին՝ գումարի կես բաժինը հատկացնելու Կովկասի կամավորներին, իսկ կեսը՝ փախստականներին: Միությունն իր գոյության ընթացքում նյութական ու բարոյական զգալի օգնություն է տրամադրել նաև Կիլիկիո կաթողիկոսին, Կ. Պոլսի հայոց պատրիարքին, Թիֆլիսում Հայաստանի վերաշինության հանձնախմբին, ինչպես նաև Ամերիկյան նպաստամատույց ընկերությանը, Ռուս-ամերիկյան նպաստից ընկերությանը և այլոց: Միությունը բժշկական օգնություն, սնունդ, հագուստեղեն է առաքել Կովկասում ապաստանած հայ փախստականներին, մշտապես կապ պահպանել ԱՄՆ-ի պետական շրջանների ու հայասեր ամերիկացիների հետ, ջանքեր գործադրել՝ վերականգնելու ՀՅԴ-ի հետ համագործակցությունը[13]:

Առաջին աշխարհամարտի սանձազերծումը և հայերի դիրքորոշումը

1914 թ. հունիսի 28-ին Բոսնիայի Սարաևո քաղաքում Ավստրո-Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունն առիթ դարձավ արդեն իսկ հասունացած Առաջին աշխարհամարտի սանձազերծման համար: Օգոստոսի 1-ին Գերմանիան պատերազմ է հայտարարել Ռուսաստանին, իսկ օգոստոսի 2-ին կնքվել է գերմանա-թուրքական դաշնակցային գաղտնի պայմանագիրը, ըստ որի Օսմանյան կայսրությունը՝ որպես Գերմանիայի դաշնակից, պարտավորվում էր հանդես գալ Ռուսաստանի դեմ: Թուրքական բանակի ընդհանուր գործողություններն ապահովելու էր Լիման ֆոն Սանդերսի գլխավորած գերմանական զինվորական առաքելությունը (միսիա)[14]:

---

[11] Տե՛ս Ճիզմէճեան Մ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 203:

[12] Նույն տեղում, էջ 204:

[13] Տե՛ս *Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի*, էջ 10, 11:

[14] Տե՛ս Կիրակոսյան Ջ., *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը. 1914-1916 թթ.*, Երևան, 1965, էջ 93, 201:

1914 թ. նոյեմբերի 3-ին Օսմանյան կայսրությունը պատերազմ է հայտարարել Անգլիային, Ֆրանսիային, Ռուսաստանին: Շատ չանցած Բուլղարիան ևս միացել է Գերմանիային և նրա դաշնակիցներին[15]:

Արդեն 1914 թ. նոյեմբերի 8-ին Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսը դիմել է Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին՝ շեշտելով հայերի համընդհանուր գործնական նվիրվածությունը ռուսական շահերի պաշտպանությանը, ուստի խնդրել է, որպեսզի Ռուսաստանը պաշտոնապես հայտարարեր Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներին (Վան, Էրզրում, Բիթլիս, Սեբաստիա, Դիարբեքիր, Խարբերդ) և Կիլիկիային ինքնավարություն շնորհելու մասին, որով և «ավարտվելու էր նրա (Ռուսաստանի) պատմական միսիան օսմանյան լծի տակ դարերով ճնշված քրիստոնեական ժողովուրդների ազատագրման գործում»[16]:

Ի. Վորոնցով-Դաշկովն ամեն կերպ խրախուսում էր հայ հոգևոր, ռևևոր և քաղաքական ղեկավարներին, մասնավորապես ՀՅԴ-ին, սպասվող պատերազմի դեպքում ռուսական բանակի համար կազմակերպել առաջապահ ջոկատներ: Հատկանշական է նաև այն, որ Առաջին աշխարհամարտի նախօրեին ցարական գրաքննությունն արգելել էր ՀՅԴ-ի դեմ վատ բան գրել, ընդհակառակը, Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչությունն այդ օրերին արձանագրել է. «Դաշնակցություն կուսակցությունը վերջին ժամանակներս ոչ մի ռևոլյուցիոն գործունեություն չի դրսևորում և բացառապես զբաղված է զինվորականների ջոկատների կազմությամբ, ուսուցումով և Թուրքիա ուղարկելով թուրքական կառավարության դեմ պայքարի համար, որ թույլ է տվել կայսերական մեծության փոխարքան Կովկասում»[17]:

Արդեն 1914 թ. վերջին և 1915 թ. սկզբին հայ կամավորական շարժումը լայն ծավալ էր ընդգրկել: Կամավոր զինվորագրվել են հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ: Դաշնակցությունն ընդամենը երկու ամսվա ընթացքում Կովկաս էր առաքել 800 կամավոր[18]: Միաժամանակ 120 հազար հայ զորակոչվել էր նաև ռուսական բանակ, որից 80 հազարը կռվել է արևմտյան ճակատում թուրքական զորքերի դեմ[19]: Ընդհանուր առմամբ, պաշտոնական տվյալներով, պատերազմի ողջ ընթացքում ռուսահպատակ 2 մլն հայերից ավելի քան 250 հազարը, այսինքն՝ 100-ից 13-ը, զորակոչվել էր ռուսական բանակ[20]:

Հայ կամավորական շարժման հապշտապ կազմակերպումն ընդամենը ռուսական կառավարության ձեռնարկած հակաքայլն էր երիտթուրքական կառավարության արդեն իսկ նախատեսված և գործնական տեսք ստացած ծրագրի, որով

---

15 Տե՛ս Ճիզմէճեան Մ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 194:

16 Կիրակոսյան Զ., *նշվ. աշխ.*, էջ 194, 195:

17 Նույն տեղում, էջ 182:

18 Տե՛ս Թէոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 282: Լազեան Գ., *Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր)*, Գահիրէ, 1946, էջ 202:

19 Տե՛ս Մնացականյան Ա. Ն., Հակոբյան Հ. Ղ., *Ջորավար Անդրանիկ*, հ. Ա, Մոսկվա, «Վերնատուն», 1991, էջ 112:

20 Տե՛ս Կիրակոսյան Զ., *նշվ. աշխ.*, էջ 189:

նախատեսվում էր Անդրկովկասը նվաճել աբխազ, վրացի, թաթար շահագրգիռ ուժերին ներգրավելու միջոցով: Ռուսաստանի դեմ ապստամբություն բարձրացնելու և թուրքական բանակի գործողությունները դյուրացնելու նպատակով թուրքական կառավարությունը մեծ դեր էր վերապահում նաև հայերին՝ հույս ունենալով, որ նրանք ևս կմասնակցեն մեծ ծրագրի իրականացմանը[21]: Այդ նպատակով երիտթուրքերը նույնիսկ դիմել են իրենց երբեմնի դաշնակից ՀՅԴ-ին, որն Էրզրումում իր ընդհանուր ժողովն էր գումարել՝ այդտեղ ուղարկվելով 27 թուրք գործակալներ: Վերջիններս պիտի փորձեին համոզել թուրքական բանակի կազմում աջակից հայկական կամավորական ջոկատներ կազմել, որպեսզի Անդրկովկասում հակառուսական անխուսափելի ապստամբության դեպքում դրանք ոտքի ելնեին Ռուսաստանի դեմ[22]: Այդ դավադիր զինակցության դիմաց թուրքերը հայերին խոստանում էին Կարսը, Երևանի նահանգը, Գանձակի նահանգի հայաբնակ մասը, Վանը, Բիթլիսը և Էրզրումի կուսակալության մի մասը՝ կազմելու ինքնավարություն թուրքական պետության հովանավորության ներքո[23]: Հայերը մերժել են թուրք բանագնացների առաջարկը՝ այն համարելով վտանգավոր և կործանարար: Նման պայմաններում բնական էր, որ Ռուսաստանն էլ իր հերթին, ելնելով երկրի քաղաքական շահերից և հենվելով հայերի ռուսական կողմնորոշման վրա, պետք է ապահովեր իրեն համակիր ուժերի ներկայությունը խնդրահարույց հարավում:

Կովկասում հայկական կամավորական գնդերի կազմակերպումը

Առաջին աշխարհամարտի սանձազերծումով արևմտահայության կյանքի ու գույքի անձեռնմխելիության պահպանման համար Օսմանյան կայսրությունում ստեղծված անբարենպաստ ու օրեցօր վատթարացող պայմանները (այդ թվում՝ հայ առևտրականների ու վաճառականների սեփականության և ունեցվածքի թալան և այլն) պատճառ են դարձել օսմանցիների դեմ Կովկասում կռվող ռուսական ցարական զորքերին սատարելու նպատակով այդտեղ հայրենասեր հայերից բաղկացած ջոկատների կազմակերպմանը: Կամավորական շարժման նշանաբանն էր՝ «Ինքնավարութիւն վեց վիլայէթներու և անոնց անբաժան մասը կազմող Կիլիկիայի՝ Ռուսաստանի հզօր հովանաւորութեան տակ»[24]:

Քանի որ Ամենայն հայոց կաթողիկոսի լիազորությամբ Հայկական հարցը հետապնդելու նպատակով Պողոս Նուբարի նախագահությամբ Եվրոպայում՝ Փարիզում, արդեն գործում էր Ազգային պատվիրակությունը, ուստի Կովկասում հայ կամավորական զորաբանակները ղեկավարելու համար 1912 թ. փետրվարին Թիֆլիսում հայոց հոգևոր առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի նախագահությամբ հիմնվել էր Ազգային բյուրոն:

---

21 Նույն տեղում, էջ 191:

22 Նույն տեղում, էջ 197: Ճիզմէճեան Մ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 195:

23 Տե՛ս Ճիզմէճեան Մ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 205:

24 Լազեան Գ., *Հայաստանը եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու*, Գահիրէ, 1942, էջ 81:

Կամավորագրման գործընթացն աննախադեպ աշխուժություն է առաջացրել հայկական գաղթօջախներում: Շուտով կամավորական շարժման կենտրոններ են ստեղծվել ԱՄՆ-ում, Բուխարեստում, Թիֆլիսում: Ազգային բյուրոն, մասամբ Արևմտյան (եվրոպական, ամերիկյան) և Արևելյան (կովկասյան) բյուրոներով, համակարգում էր բացառապես ՀՅԴ-ն, իսկ ԱՄՆ-ի և Բալկանների բյուրոները հիմնականում ՍԴՀԿ ազդեցության տակ էին[25]:

Կովկասում կամավորական շարժումը կազմակերպելու նպատակով Թիֆլիսում գործող Հայոց ազգային բյուրոյի կողմից 1914 թ. սեպտեմբերին ստեղծվել էր Հայոց կամավոր խմբերի կարգադրիչ մարմին, որը որոշել էր տարբեր ուղղություններով Օսմանյան կայսրություն մուտք գործելու նպատակով կազմել կամավորական չորս զորախմբեր (գունդ)՝ 2.500 կովողներով (առաջինում՝ 1.500, մյուս երեքում՝ 400-500-ական հոգի)[26]: Այդ նպատակով Արևմտյան բյուրոյի հանձնարարականով 1914 թ. օգոստոսի 12-ին Բուլղարիայի Վառնա քաղաքից Կովկաս էր ժամանել զորավար Անդրանիկ Օզանյանը[27]: Կովկասի փոխարքայի օգնական գեներալ Միշլաևսկին Անդրանիկին առաջարկել է կազմակերպել կամավորների Առաջին գունդը[28]: Էջմիածնի ճեմարանի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, Մոսկվայի, Պետրոգրադի, Կիևի, Խարկովի, Օդեսայի համալսարանների հազարավոր երիտասարդներ կամավորագրվել են Անդրանիկի մոտ ծառայելու: Կամավորագրվել են նաև ԱՄՆ-ից և Պարսկաստանից ժամանած բազմաթիվ հայեր[29]: Շուտով կազմակերպվել են նաև մյուս գնդերը. Երկրորդը՝ Դրոյի (Դրաստամատ Կանայան), Երրորդը՝ Համազասպի (Սրվանձտյան), Չորրորդը՝ Քեռիի (Արշակ Գալֆայան), հետագայում Հինգերորդը՝ Վարդանի (Խանասորցի Սարգիս Մեհրաբյան) ՀՅԴ-ի հրամանատարության ներքո, ապա նաև Վեցերորդը՝ Հովհաննես (Աղունիկ) Քանփոլատյանի ՍԴՀԿ-ի ղեկավարությամբ: Բոլոր գնդերն ունեին իրենց խորհրդանիշ դրոշները[30]:

Արդեն 1914 թ. աշնանը կամավորական շարժման կազմակերպումն ընթացքի մեջ էր: Ազգային բյուրոյի կոչերից ոգևորված՝ կարճ ժամանակում ոչ միայն Կովկասից և Ռուսաստանի մյուս շրջաններից, այլ նաև Եվրոպայից և աշխարհի տարբեր կողմերից (Բուլղարիա, Ռումինիա, Եգիպտոս, Կիպրոս, Ֆրանսիա, Պարսկաստան) և հատկապես հեռավոր ԱՄՆ-ից, մեծ խանդավառությամբ խումբ-խումբ Կովկաս են շտապել վրեժով ու ատելությամբ, բայց և ազատատենչ ոգով տոգորված հարյուրավոր հայազգի անձնուրաց երիտասարդ կամավորներ՝ համալրելու

---

[25] Տե՛ս *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962*, խմբ.՝ Արսէն Կիտուր, հ. Ա, Պէյրութ, 1962, էջ 469:

[26] Տե՛ս Լազեան Գ., *Հայաստանը եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու…*, էջ 186: Լազեան Գ., *Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր)…*, էջ 81: Սիմոնյան Հր., *Անդրանիկի ժամանակը*, գիրք Ա, Երևան, 1996, էջ 387:

[27] Տե՛ս Ճիզմէճեան Մ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 206:

[28] Տե՛ս *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962*, հ. Ա, էջ 469:

[29] Տե՛ս Մնացականյան Ա. Ն., Հակոբյան Հ. Ղ., *նշվ. աշխ.*, հ. Ա, էջ 112:

[30] Տե՛ս Սիմոնյան Հր., *նշվ. աշխ.*, էջ 387: Ճէրէճեան Եղ., *Պանդուխտ*, Պէյրութ, 1999, էջ 19: Լազեան Գ., *Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր)…*, էջ 186: Լազեան Գ., *Հայաստանը եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու…*, էջ 81: Ճիզմէճեան Մ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 206:

նոր կազմվող գնդերը[31]: «Ձմայլումով կըսեինք անճառելի եռանդն ամեն անոնց, որոնք տուն, գործ ու քոլեջ կամ համալսարան կլքեին՝ դեպի Հայաստանի ռազմաճակատը վազելու աճապարանքով»[32], - նշել է ականատեսը:

ՍԴՀԿ Ամերիկայի բյուրոյի հրամանատարության ներքո գործել է Վեցերորդ գունդը, որը հետագայում մասամբ ներառել է նաև Վերակազմյալ հնչակյան և Հայ սահմանադիր ռամկավար կուսակցությունների, ինչպես նաև անկուսակցական ներկայացուցիչների փոքրաթիվ խմբերը, որոնք Ազգային բյուրոյի կուսակցական-նակենտրոն գործունեության հետևանքով դուրս էին մնացել[33]:

1914 թ. նոյեմբերի 3-ին Առաջին գունդը մեկնել է Ջուլֆայի ճակատ, Երկրորդը՝ հոկտեմբերի 24-ին Իգդիրից շարժվել է Վանի ուղղությամբ, Երրորդ գունդը նոյեմբերի 1-ին շարժվել է դեպի Սարիղամիշ, Չորրորդը նոյեմբերի 6-ին՝ Թորթումի ճակատ, Հինգերորդը կրկին բռնել է Վանի ուղղությունը, Վեցերորդ գունդը շարժվել է դեպի Բասենի ճակատ, իսկ Յոթերորդը՝ որպես պահեստային ուժ, նորից դեպի Վան: Այնպես որ հայ կամավորական գնդերը՝ որպես առաջապահ և տեղանքին ծանոթ ուժեր, տեղաբաշխված էին Էրզրումից մինչև Ջուլֆա՝ սկիզբ ունենալով Գր. Ավշարյանի Վեցերորդ գունդը և վերջը՝ Ջորավար Անդրանիկի Առաջին գունդը, որոնց միջև ցրված էին մյուս գնդերը[34]:

Ընդհանուր առմամբ պաշտոնական տվյալներով բոլոր յոթ կամավորական գնդերում կռվող զինվորների ընդհանուր թիվը կազմել է 6.000-7.000, որոշ տվյալներով՝ 10.000, որոնք բաղկացած էին ձիավոր և հետևակ վաշտերից: Յուրաքանչյուր գնդում կար երեքական գումարտակ՝ 100-150 զինվոր պարունակող չորսական վաշտերով կամ հարյուրյակներով[35]: Ընդ որում, ԱՄՆ-ից և եվրոպական երկրներից տարբեր ճանապարհներով հայրենիքի ազատագրմանը մասնակցելու նպատակով եկել էր շուրջ 3.000 հայ[36]:

Կամավորները ցրված էին Կովկասյան ճակատում կռվող ռուսական բանակներում և կատարում էին առաջապահի և հետախույզի դեր՝ որպես տեղանքին, բնակչությանը, լեզվին ու բարքերին ծանոթ: Ռուսական զորքերի ճակատը տարածված էր Բաթումից մինչև Պարսկաստան, իսկ կամավորները դիրքավորվել էին Էրզ-

---

31 Տե՛ս Կարապետյան Մ., *Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները կովկասյան ռազմաճակատում (1914-1917 թթ.)*, Երևան, 1999, էջ 38: Լազեան Գ., *Հայապահանը եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու…*, էջ 81:

32 Կիրակոսյան Զ., *նշվ. աշխ.*, էջ 187:

33 Տե՛ս *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962*, հ. Ա, էջ 469: Ճիզմէճեան Մ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 208:

34 Տե՛ս Աւետեան Մ., *Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ Զօր. Անդրանիկ (Վերլուծական հայեցողութեամբ եւ վաւերական տուեալներով)*, Փարիզ, 1954, էջ 159-160:

35 Տե՛ս Չոփուրեան Եդ., *Մեծ պատերազմը եւ հայ ժողովուրդը (Անդրանիկ, Մուրատ եւ Պօղոս Նուպար)*, հ. 1, Կ. Պոլիս, 1920, էջ 22: Կարինեան Գ., *Ազգային հերոս Զօր. Անդրանիկ եւ իր պատերազմները. Զօր. Անդրանիկ Էրզրումի ճակատին վրայ*, Բարիզ, Յ. Թիւրապեան հրատ., 1953, էջ 184: Աւետեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 160:

36 Տե՛ս Դեմոյան Հ., *Հայկական ազգային խորհրդանշաններ. Զինանշաններ, դրոշներ, պարգևներ*, Երևան, 2012, էջ 266:

րումից մինչև Դիլման: Վեցերորդ գունդը կռվում էր Էրզրումի կողմում՝ կազմելով կամավորական շղթայի վերին օղակը[37]:

Ռուսական բանակի հետ գործակցող հայ կամավորական խմբերը զգալի հաջողություններ են արձանագրել Վանի, Բիթլիսի, Էրզրումի գրավումների ժամանակ՝ արժանանալով ռուսական գերագույն հրամանատարության բարձր գնահատանքին ու պարգևներին[38]:

Հայ քաղաքական կուսակցությունների դերը կովկասյան կամավորական շարժման կազմակերպման գործում

Չնայած արևմտահայ հայրենակիցների պահանջով կամավորական շարժումը պետք է անկուսակցական բնույթ ունենար, սակայն, ինչպես վկայում են փաստերը, կամավորական շարժման կազմակերպման գործում հայկական կուսակցություններից գլխավոր դերակատարությունը պատկանում էր Հայ հեղափոխական դաշնակցությանը:

Սկզբնապես Թիֆլիսի Ազգային բյուրոն հրահանգել էր արտերկրի դաշնակցականներին, որ կամավորներ չուղարկեն, այլ միայն դրամ հանգանակեն, քանի որ իրենք պետք ունեն «աւելի նիւթական օժանդակութեան, քան թէ կամաւորներու, որոնցմէ շատ կայ Կովկասի սահմաններուն մէջ»[39]: Դրանով Ազգային բյուրոն նպատակ ուներ նաև հնարավորինս հսկելու կամավորական գնդերի կուսակցական կազմը, որպեսզի այն բաղկացած լիներ առավելապես վստահելի գինվորականներով՝ դաշնակցականներով:

Այդուհանդերձ, անկարելի էր տարերային հոսքը կանգնեցնել: Բուլղարիայից, Ռումինիայից, ԱՄՆ-ից «հարիւրաւոր երիտասարդներ կը վազէին Կովկաս, մտնելու կամաւորական շարքերու մէջ»[40]:

Բազմաթիվ վկայություններ արձանագրել են այն ցավալի փաստը, որ Թիֆլիսում հավաքված ոչ դաշնակցական կամավորները «կը լքուին երեսի վրայ, որոնցմէ կը խլուին բոլոր զէնքերն ու պատերազմական կազմածները»[41]:

Եթե Կովկասում կամավորական շարժման նախաձեռնողները դաշնակցականներն էին, ապա Բուլղարիայում, Ռումինիայում և ԱՄՆ-ում այդ շարժմանը հիմնականում ուժ էին տալիս Սոցիալ-դեմոկրատ հնչակյանները[42]:

Կովկասյան կամավորական շարժումը և ՀՅԴ-ն

Հակառակ կամավորական շարժման կազմակերպչական տարաձայնությունների՝ ՀՅԴ-ն հրատարակել է բավական ստվար տեղեկատվական նյութ՝ փաստաթղթեր, շրջաբերականներ, թղթակցություններ: Այսպես, ըստ ՀՅԴ Ամերիկայի Կենտրո-

---

[37] Տե՛ս Չոփուրեան Եդ., *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 22:

[38] Տե՛ս *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962*, հ. Ա, էջ 470:

[39] Չոփուրեան Եդ., *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 20:

[40] Նույն տեղում, էջ 20, 21:

[41] *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962*, հ. Ա, էջ 469-470:

[42] Տե՛ս Չոփուրեան Եդ., *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 21:

նական կոմիտեի (ԿԿ) տեղական կոմիտեներին ուղղված Շրջաբերականի, կամավորները Կովկաս պիտի մեկնեին 1914 թ. հոկտեմբերի 1-ին Նյու Յորքից՝ Կարգադիր հանձնախմբի հասցեից՝ իրենց հետ ունենալով երկու լուսանկար, 100-ական դոլար, բժշկական քննության վկայաթուղթ և կոմիտեի վարչության կողմից հաստատված հանձնարարագիր[43]:

Այդ նույն ժամանակ ՀՅԴ Ամերիկայի ԿԿ-ն Երկրում *«Մարդու եւ Դրամի»* անհետաձգելի անհրաժեշտության մասին շրջաբերականներով դիմել էր իր կոմիտեներին՝ շեշտելով. «…Ընկերներ, ձեզ կը մնայ ամենայն եռանդով առաջ տանիլ նիւթականի գործը. դրամի անյետաձգելի պէտքը ունինք: Անմիջապէս փոխադրեցէք ձեր մօտ գտնուած գումարները: Եթէ կարելի է, արտակարգ հանգանակութիւններու ձեռնարկեցէք: Եթէ հնարաւոր է ներքին փոխառութիւն մը յաջողցուցէք: Ամէն գործ մէկ կողմ դրած՝ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ համար դրամ հաւաքելու մասին խորհեցէք: …Ինքնապաշտպանութեան պէտքը աւելի քան երբէք հրամայական դարձած է: Ստացած ենք հեռագիրներ, որ դրամ կը պահանջեն. նոյնիմաստ հեռագիրներու կը սպասենք օր առ օր: Անհրաժեշտ է որ կօմիտէները հրապարակային հանգանակային ժողովներ սարքեն: Ուժերը տասնապատկելով ժողովուրդը պարտականութեան հրաւիրել»[44]: Եվ կամ՝ «նկատի ունենալով որ ներկայ րոպէն պատմական է եւ կուսակցութիւնը նիւթական խոշոր կարիք ունի», որոշվել է «ամենալայն չափով եւ ուժեղ թափով» կազմակերպել հանգանակություններ՝ ի նպաստ երկրի ինքնապաշտպանության, ինչպես նաև կազմել հատուկ քննությունից անցած Կովկաս մեկնելիք կամավորների ցուցակը և այն ներկայացնել Կովկասի Հայ սպայակույտին[45]:

1915 թ. հունվարի 23-ին Ժնևից ՀՅԴ ներկայացուցիչները դիմել են Ամերիկայի ԿԿ-ին՝ մինչև գարուն զինված խումբ հավաքագրելու և ուղարկելու համար[46]: ՀՅԴ-ն, հանձին Ռոստոմ Զավարյանի, նաև բանակցել է բրիտանական իշխանությունների տարբեր շրջանների հետ Հայկական հարցի և կամավորական խմբերի կազմության շուրջ և արդյունքների մասին փետրվարին տեղեկացրել ԱՄՆ, «յատկապէս՝ որովհետեւ կամաւորները Ամերիկայի շրջանէն կ’ակնկալուին»[47]: Ու թեպետ ՀՅԴ-ի կամավորները գործում էին նաև Եգիպտոսում՝ անգլիական բանակի կազմում, ԱՄՆ-ից խոստացված էր 5.000 հոգի: Այդուհանդերձ, նպատակահարմար էր սկզբում քիչ թվով ընտրովի ուժեր ընդգրկել՝ «գլխաւորապէս այնպիսիներին, որոնք մասնակցել են կռիւներին, զինուորութիւն են արել, առնւազը մարզւել են Ամերիկայում», ընդ որում՝ երիտասարդներին, քաջերին, առողջներին, նախ՝ վստահելի բանակ ունենալու համար, հետագայում կամավորների թիվը կամացկամաց ավելացնել՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՅԴ-ն ստիպված պիտի լիներ որոշ ծախսեր իր վրա վերցնել: Սակայն Երկրից հասնող անմխիթար

---

43 Տե՛ս Տօնապետեան Գ., *նշվ. աշխ.*, հ. Բ, էջ 267:

44 Նույն տեղում, էջ 263, 264:

45 Նույն տեղում, էջ 268:

46 Նույն տեղում, էջ 274:

47 Նույն տեղում, էջ 277:

տեղեկությունները «աւելի եւս կը գօտեպնդեն Ամերիկայի ընկերները, որպէսզի օր առաջ կամաւորական խումբեր կազմուին եւ երկիր ուղարկուին»[48]:

Ըստ «Հայրենիք» երկօրյայի, «Կամաւոր երթալու անդիմադրելի պահանջ կայ. մեր ընկերներէն շատերը իրենց անձնական րիսքով գացին, իսկ մենք կը սպասենք հրահանգի»[49]: Շուտով սկսվել է կամավորական խմբերի կազմության զորակոչ: 1915 թ. ապրիլի 3-ին ՀՅԴ–ի Ամերիկայի ԿԿ-ն իր մասնաճյուղերին ուղղված «Խիստ գաղտնի Թիվ 2 Շրջաբերականով» ճշտել է առաջիկա անելիքները. «Հայ կամաւորական գնդերու գործունէութիւնն ալ աւելի ակներեւ եւ բեղմնաւոր դարձնելու համար, միտք յղացած է տասնեակ մը օդանաւ վարողներ եւ անթել հեռագիր գործածողներ պատրաստել»[50]: Հետաքրքրություն էին ներկայացնում հիշյալ ասպարեզներում կամավորության թեկնածուների քանակը, անգլերենի իմացության մակարդակը (գրել, կարդալ), քաղաքացիությունը (ԱՄՆ, Կանադա), կրթությունը (միջնակարգ, բարձրագույն), տեխնիկական պատրաստվածությունը, տարիքը, ընտանեկան վիճակը, ԱՄՆ-ում ունեցած հարազատների մասին տեղեկություններ, ՀՅԴ անդամության տարիների փորձառությունը (ստաժ): Հանձնարարված էր ընտրել ներկայացված թեկնածուներից հարմարագույններին: Շատ չանցած՝ 1915 թ. ապրիլի 15-16-ին, ՀՅԴ Ամերիկայի ԿԿ-ն պաշարված Վանից հետևյալ նամակն է ստացել. «…Խիստ ընդհարում Վան եւ Շատախ: 10 օրէ ի վեր թնդանօթներ կորոտան քաղաքի վրայ, ոչ մի վնաս մեզմէ: Շատախ 15 օր է կռւի մէջ է: Ժողովրդի տրամադրութիւնը բարձր. ժողովրդի վերջին յոյսը ձեզ վրայ: Օր մը ուշանալը անգամ դաւաճանութիւն: Շտապեցէք, ժողովրդի փրկութեան համար շուտ հասնել»[51]: Եվ կամ մայիսի 3-ին Սոֆիայից ստացված հեռագիրն ահազանգել է. «Պօլսի մէջ դաւադրութիւն հայերու հանդէպ: Մեր բոլոր ընկերները եւ ժողովուրդի մտաւորական տարրը, նոյնիսկ նախարար Մարտիկեան, նախորդ պատրիարքը եւ կղերականներ ձերբակալուած: Կացութիւնը սոսկալի. կազմակերպեցէք անմիջապէս բողոքի միթինկներ միջազգային հողի վրայ եւ դիմեցէք կառավարութեան իր ազդեցութիւնը բանեցնելու համար Պօլսի դեսպանին միջոցով. այլապէս հայ ժողովուրդը կը բնաջնջուի»[52]:

ՀՅԴ Ամերիկայի ԿԿ-ն, ապա նաև Կարմիր խաչը, արձագանքելով Երկրից ստացված հեռագրերին, դիմել են Վաշինգտոն, որպեսզի երկրի կառավարությունն իր դեսպանի միջոցով ազդի թուրքական իշխանությունների վրա կայսրության բոլոր նահանգներում տեղի ունեցող ջարդերը դադարեցնելու պահանջով: Նույն բնույթի դիմումներ են ուղարկվել նաև Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ռուսաստանի արտաքին գործերի նախարարություններին[53]:

---

[48] Նույն տեղում, էջ 278, 280:

[49] Նույն տեղում, էջ 281, 287:

[50] Նույն տեղում, էջ 283, 284:

[51] Նույն տեղում, էջ 284, 285:

[52] Նույն տեղում, էջ 287, 288:

[53] Նույն տեղում, էջ 287, 290:

Ի վերջո, ՀՅԴ Ամերիկայի ԿԿ-ն, հաշվի առնելով Երկրի տարբեր շրջաններում ստեղծված ծանր դրությունը, նպաստամատույց դրամահավաքին զուգընթաց 1915 թ. մայիսի 10-ի շրջաբերականով կոմիտեներին է փոխանցել նաև կամավորական խումբ Կովկաս ուղարկելու մասին որոշումը՝ պահանջելով այդ ուղղությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկել[54]:

Հարկ է նշել, որ, անսալով *«Երկիր երթալու ու կռուելու»* հայրենակիցների, ինչպես նաև կուսակցական ընկերների կոչերին, ամերիկահայ Առաջնորդարանը նախքան Միջկուսակցական խորհրդաժողովին միանալը դիմել էր Վաշինգտոնում դաշնակից տերությունների դեսպաններին ԱՄՆ-ից հայ կամավորներ ուղարկելու պատրաստակամությամբ: Անգլիան և Ֆրանսիան մերժել էին, իսկ Ռուսաստանը դեսպանի միջոցով հավանության էր արժանացրել այդ առաջարկը՝ պայմանով, որ հայկական կողմն ինքը հոգար կամավորների բոլոր ծախսերը: Ռուսական կառավարության՝ 1915 թ. մայիսի 28-ի հեռագրում մասնավորապես նշված էր. «Հայ կամաւորները, որոնք Դաշնակցութեան կը պատկանին, պէտք է առանձինն յիշուին արտասահմանի հայ գաղթականութեանց կողմէ ներկայացուելիք անուններուն ցանկին մէջ եւ այդ ցանկը Փեթրօկրատ ղրկուելով իւրաքանչիւր Դաշնակցականի ընդունուելու հարցը հոն պիտի որոշուի»[55]:

«Հայրենիքի» տեղեկագրմամբ 160 հոգուց բաղկացած ամերիկահայ դաշնակցական երիտասարդների առաջին խումբը Կովկասի կամավորական շարժմանն «իր արիւնը դնելու» նպատակով 1915 թ. հունիսի 2-ին ռուս-ամերիկյան «Ցար» նավով դուրս է եկել Նյու Յորքից և հունիսի 21-ին «ամենաալպահով գծով» հասել Արխանգելսկ: Տեղական իշխանությունների կողմից լավ ընդունելության արժանանալով՝ ամերիկահայ կամավորների խումբն անմիջապես մեկնել է Թիֆլիս: Օգոստոսի 29-ին ԱՄՆ-ից մեկնել է 260 կամավորներից բաղկացած երկրորդ խումբը, որը բավական դժվարությունների է հանդիպել: Սեպտեմբերի 12-ին ռուսական անցագրով մեկնել է 154 հոգուց բաղկացած կամավորների երրորդ խումբը, իսկ հոկտեմբերի 1-ին՝ 34-հոգիանոց վերջին՝ չորրորդ խումբը: Ընդհանուր առմամբ, կովկասյան կամավորական շարժմանը մասնակցելու համար Ամերիկայի ՀՅԴ-ից անդամագրվել էր 608 մարդ[56]:

1915 թ. հունիսի 23-ին «Դրօշակի» խմբագրությանն ուղղված նամակում ՀՅԴ Ամերիկայի ԿԿ կովկասյան կամավորական շարժման կուսակցականից ավելի համազգային լինելու մասին հետևյալն է հայտարարել. «Կեանքի ու պայքարի գերազանցապէս այս պատմական օրերուն երբ ամբողջ Կովկասը – պատիւ իրեն – Հայ Ազատագրութեան Գործը դարբնելու ջանքեր կընէ, մենք, հեռաւոր եղբայրներս, բնականաբար չէինք կրնար անմասն մնալ այդ ընդհանուր Շարժումին ու մեր մասնակցութիւնը բերինք վեհ գործին: …Նկատելով պայմանները բացառիկ ու հայ ազատագրութեան կռիվներու նշանակութիւնը ընդհանրապէս եւ ամերիկա-

54 Նույն տեղում, էջ 291, 292:

55 Նույն տեղում, էջ 260, 298, 303:

56 Նույն տեղում, էջ 298, 303, 305:

հայ գաղութին մասնաւորապէս, որ պատմական այս ներկայ րոպէին մենք չունինք կուսակցական ոչ մէկ գործ, այլ մեր գործը համազգային է եւ, որ մենք մեր կուսակցութեան բարոյական եւ նիւթական աջակցութիւնը Ազգային Բիւրոյին տրամադրութեան տակ դրած ենք»[57]:

«Հայ Ազատագրութեան Դարբնոցի Մեծ Գործին» ամերիկահայ կամավորների հավաքագրման մանրամասների և հանձնարարականների մասին տեղեկություններ է հաղորդել ՀՅԴ Ամերիկայի ԿԿ-ն 1915 թ. հուլիսի 7-ին իր մասնաճյուղերին ուղղած «Խիստ գաղտնի Թիվ 6 շրջաբերականում», որտեղ հետևյալ նախազգուշացումներն ու հանձնարարականներն են տրվել կամավորագրվել ցանկացողներին. «Կամաւորական թեկնածուները մտահան ընելու չեն այն պարագան, որ իրենք *զարճալայր* չեն երթար, այլ *կուռվայր*, ու ըստ այնմ ալ իրենց դիրքն ճշդելու ու քայլեր առնելու են»[58]: Յուրաքանչյուր կոմիտեի հանձնարարվել է «կարելի եղածին չափ *շատ* եւ *իրենց ծախքով գացող կամաւորներ* գտնելու, ըլլան անոնք չեզոք, ընկեր թէ ուրիշ կուսակցականներ»[59]: Կամավորության բոլոր թեկնածուները՝ հին թե նոր, պարտավոր էին համապատասխան դիմումներ լրացնել, փորձառու և հմուտ բժշկի մոտ քննություն անցնել, ինչպես նաև հիմնավորել զինվոր մեկնելու դրդապատճառները: Կամավորության թեկնածուն իր դիմումն ու բժշկական քննության վկայականը ներկայացնելուց և ընտրվելուց հետո տեղական կոմիտեի միջոցով նախօրոք՝ 1-2 շաբաթ առաջ, պիտի տեղեկանար հավաքվելու տեղի ու ժամանակի մասին, ինչը զինվորական կարգապահությամբ պետք է գաղտնի պահվեր: Թեկնածուն պետք է զերծ լիներ և զգուշանար սեռական հիվանդություններից, եթե վարակակիր էր, մեկնելու իրավունք չուներ, իսկ եթե մեկնել էր, պատկան մարմինները նրանց զինվոր չէին ընտրում: Կուսակցական կոմիտեներն իրավունք չունեին հոգալու կամավորների ճանապարհածախսը, այլ այն պիտի հոգացվեր ոչ կուսակցական միջոցներով՝ անձնական, նվիրատվական և այլն, բացառություն էին կազմում զինվորական փորձառություն և արժանիքներ ունեցող, սակայն միջոցներ չունեցող կամավորները, որոնց հարցով Կենտրոնական կոմիտեն էր զբաղվելու: Այնպես որ բժշկական քննության, ճանապարհածախսի և մնացած այլ ծախսերը հոգալու էին կամավորագրվածները: Նրանցից յուրաքանչյուրը Նյու Յորքից Պետրոգրադ մեկնելու պահին պետք է ունենար առնվազն 100 դոլար, որպեսզի վճարեր 57 դոլար 50 սենթ ճանապարհածախսը, իսկ մնացածը հատկացներ Պետրոգրադից Թիֆլիս ուղեվարձի, ինչպես նաև հարակից այլ ծախսերի համար: Այդ պայմաններում բնական է, որ նախապատվությունը տրվելու էր նրանց, ովքեր իրենց ճանապարհածախսով պիտի մեկնեին[60]:

Համաձայն «Հայրենիք» պարբերաթերթի՝ 1915 թ. հուլիսի 31-ին հաղորդած տվյալների՝ մինչև այդ պահը ՀՅԴ ԿԿ-ն կամավորական շարժման համար հան-

---

[57] Նույն տեղում, էջ 294, 295:

[58] Նույն տեղում, էջ 296:

[59] Նույն տեղում:

[60] Նույն տեղում, էջ 296, 297:

գանակել էր 100,600 դոլար: Միաժամանակ, որպես ամերիկահայ գաղութին ուղղված հրամայական պահանջ, հայտարարվել է՝ «Դրամ, Մարդ, Ռազմամթերք», իսկ պաշտոնական կոչում ասված էր. «…Անոնք, որոնց սրտին մէջ դեռ չէ մարեր հայրենիքի սէրը, թող դիմեն դէպի հայրենիքի սահմանները, տաճկական բռնակալութիւնը ջախջախելու: Անոնք որոնք կարող են, շատով, անոնք որոնք անկարող են, քիչով պէտք է մասնակցին, որպէսզի հայկական կամաւորներու օգնութեան հասնինք ամենալայն չափով: Օգնենք որ կուին հայ կամաւորները: Օգնենք, որ աւերակներէն յարութիւն առնէ մեր Ինքնավար Մանուկ Հայաստանը»[61]:

Բայց և այնպես, արդեն 1915 թ. սեպտեմբերի 5-ին Սիմոն Վրացյանը «Հայրենիքի» ավագ խմբագիր Շահան Նաթալիին Իգդիրից հղած նամակում, ներկայացնելով երկրում տիրող իրավիճակը, նշել է ԱՄՆ-ից այլևս հայ կամավորներ ուղարկելու աննպատակահարմարության մասին՝ թե՛ ազգի մի հատվածը պահպանելու և թե՛ ամերիկահայերի նվազ մարտունակությունը պատճառաբանելով. «…Այստեղի գործերի մասին կարող ես գաղափար կազմել թերթերից ու իմ թղթակցութիւններից: Գործերը վատ չեն գնում: Մեր կամաւորները արժանի են ամէն տեսակ գովասանքի: Ցաւալին երկրի վիճակն է եւ գաղթականների թշուառ կացութիւնը: Եւ յոյս էլ չկայ, որ մօտիկ ապագայում կարելի լինի այդ թշուառներին վերադարձնել դէպի իրենց մոխրակոյտերը: Շատ զոհ տուինք, չափազանց թանգ գնով պիտի ստանանք մեր ազատութիւնը, եթէ, ի հարկէ, ստանանք: …Այլեւս կամաւորներ պէտք չեն Ամերիկայից: Այստեղ արդէն բաւականաչափ մարդկային նիւթ կայ մեր խմբերը լրացնելու եւ պահելու համար, եւ այստեղի մարդիկ շատ աւելի յարմար են իբրեւ կամաւորներ: Այս պայմաններում ոչ մի միտք չունի հազարներ ծախսել եւ այդտեղից մարդ բերել, երբ այդ մարդիկ կարող են այդտեղ մնալով՝ դրամ աշխատիլ, թէ իրենց ընտանիքը պահել եւ թէ այստեղ գործի համար դրամ ղրկել: Չպէտք է մոռանալ, որ այժմ մնացած հայերին պահելն էլ մեծ ազգասիրութիւն է: Բացի այս՝ պէտք է ի նկատի ունենալ եւ մի ուրիշ կարեւոր հանգամանք. փորձը ցոյց տուեց, որ Ամերիկայից եկողները շատ թերի են իբրեւ կամաւոր, եթէ չասենք բոլորովին անպէտք: Նախ՝ բաւական տկարակազմ են, մանաւանդ թոյլ ոտքերից, եւ չեն դիմանում այստեղի ծանր պայմաններին: Շատերը իսկոյն հիւանդանում են եւ չեն կարողանում շարունակել, ոմանք էլ վախենալով դժւարութիւններից՝ հէնց կէս ճանապարհից յետ են քաշւում: Միւս կողմից Ամերիկայից եկողները չափազանց պահանջկոտ են եւ կարգապահութեան չենթարկւող: Չեն կարողանում տանել մեր խմբերի իւրայատուկ պայմանները եւ շատ վեհերոտ են և ուրիշներին էլ վարակում են: Ոմանք պահանջում են, որ իրենց անպատճառ ձիաւոր դարձնեն, ուրիշներ՝ անպատճառ ուզում են խմբապետներ ու հրամանատարներ դառնալ…»[62]:

ՀՅԴ-ն ցավով արձանագրել է ինչպես ամերիկահայության շրջանում, նույնպես և իր շարքերում տիրող տագնապալի չափերի հասնող հուսալքության մասին, ինչը բացատրել է 1915 թ. աղետալի դեպքերով, գաղթականության թշվառ վիճակով,

---

61 Նույն տեղում, էջ 298, 299:

62 Նույն տեղում, էջ 311, 312:

ռուսական իշխանությունների կողմից Կովկասում կամավորական խմբերի նկատմամբ գործադրված ճնշումներով և սկիզբ առած դասալքությամբ: Վերջինս նաև հետևանք էր «ամերիկահայ կամաւորներու շարքերէն ներս տիրող անկարգապահութեան»[63]:

Կամավորական գնդերի լուծարումով և հրացանաձիգ գնդերի ստեղծումով, որոնք «դարձեալ գոնէ երեւութապէս կը փոխարինեն նախկին կամաւորական գունդերը», Հյուսիսային Ամերիկայի ՀՅԴ Պատգամավորական ժողովը որոշել է շարունակել բարոյապես ու նյութապես աջակցել Ազգային բյուրոյին՝ որպես «մեր քաղաքական իտէալները հետապնդող մարմնի», որը «ռազմադաշտին վրայ կամաւորական գունդեր եւ դիւանագիտական հետապնդումներ» էր իրականացնում[64]:

Կովկասյան կամավորական շարժումը և ՍԴՀԿ-ն

Ի տարբերություն ՀՅԴ-ի, այլ էր ՍԴՀԿ-ի պարագան, որը վաղուց իր կապերը խզել էր իթթիհատականների հետ և տակավին 1913 թ. կուսակցության 7-րդ պատգամավորական ժողովում վճռել էր ամեն գնով տապալել իթթիհատական կառավարությունը[65]: Իթթիհատականներն էլ իրենց հերթին սկսել էին ակտիվ հալածանք հնչակյանների դեմ, քանի որ սրանք լեգալ գործունեությանը զուգընթաց իրականացնում էին նաև անլեգալ՝ գաղտնի, գործունեություն: Ահա թե ինչու ռուս-թուրքական պատերազմի հենց սկզբից արտերկրում ՍԴՀԿ-ն ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել այդ շարժմանը: ՍԴՀԿ-ի գործիչ Ստեփան Սապահ-Գյուլյանը կամավորական շարժման միջոցով պատերազմին մասնակցելը համարում էր «բացարձակ և հրամայական», իսկ հակառակը՝ «կորստաբեր, աղետալի, խաբուսիկ»: Արշակ Չոպանյանն իր հերթին Ամերիկայի Վերակազմյալ հնչակյաններին ուղղված նամակում Առաջին աշխարհամարտն անվանել է «սրբազան» պատերազմ, որով բոլոր հայերը պետք է հետաքրքրվեն[66]:

Հնչակյան կամավորների կազմակերպման նախաձեռնությունն իր վրա էր վերցրել Ռումինիայի Թաղական խորհուրդը Պետրոս Գալֆայանի գլխավորությամբ: Ընտրվել էր երեք հոգուց բաղկացած հանձնախումբ, որն էլ կազմել էր 107 հոգուց բաղկացած առաջին զորախումբը, ապա՝ երկրորդ և երրորդ խմբերը: Շուտով մոտավորապես 3.000 կամավոր կենտրոնացել էր Թիֆլիսում[67]:

Կամավորագրման գործընթացն առանձնակի աշխուժությամբ է ընդունվել ԱՄՆ-ի հնչակյան մասնաճյուղերի կողմից: ՍԴՀԿ Ամերիկայի Գործադիր մարմինը հրատարակել է կամավորագրության հրավիրող «Կարմիր կոչ» անունով հայտնի իր ուղերձը՝ հասցեագրված տարածաշրջանի բոլոր մասնաճյուղերին: Այսպես, ՍԴՀԿ Ռեյսինի մասնաճյուղում կամավորագրման աշխատանքները ղեկա-

---

63 Նույն տեղում, էջ 324, 332:

64 Նույն տեղում, էջ 334:

65 Տե՛ս Չոփուրեան Եդ., *աշվ. աշխ.*, հ. 1, էջ 21: *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962*, հ. Ա, էջ 470:

66 Նույն տեղում, էջ 21: Կիրակոսյան Զ., *աշվ. աշխ.*, էջ 183:

67 Տե՛ս *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962*, հ. Ա, էջ 471:

վարում էր Վահան Մորլյանը: Կազմակերպված հրապարակային ժողովի ընթացքում հանգանակվել էր 1.200 դոլար[68]:

1915 թ. մարտի 12-ին մեկնել է ամերիկահայ կամավորների առաջին խումբը, որն Արխանգելսկով հասել է Կովկաս: Նրանց ղեկավարն էր մշեցի Պանդուխտը: Երկրորդ խումբը նույն ճանապարհով դուրս է եկել մարտի 10-ին՝ Ալեքսանդր Մնացականյանի գլխավորությամբ, երրորդ խումբը՝ նոյեմբերի 21-ին՝ Ս. Շահենի գլխավորությամբ[69]:

Հնչակյան տարեգրության մեջ ևս նշվում է, որ «Ազգային Բիւրօն խտրական ոգիով կը մօտենար Հնչակեան կազմակերպութեան և ամէն ջանք կը թափէր ցրուել զանոնք, առարկելով թէ՝ անձէ աւելի դրամի պէտք ունինք»[70]

Հնչակյան խմբին են միացել նաև ամերիկահայ կամավորները, որոնք, սակայն, հալածվելով՝ «…գանելով Ազգային Բիւրոյէն, յուսալքուած դարձեալ Ամերիկայ կը վերադառնան», ինչպես օրինակ՝ Մորլյանը: Հակառակ միջկուսակցական ոտնձգությունների՝ նրանք, որոնք չէին հուսահատվել, ընդդիմանալով կամավորական շարժման նկատմամբ Ազգային բյուրոյի դրսևորած կուսակցական վերաբերմունքին, ինչպես նաև բյուրոյի կողմից մերժվելով առանձին գունդ կազմելու համար արտերկրում հանգանակված գումարների նկատմամբ իրավունքից, անջատվել էին և կարճ ժամանակ անց մաս կազմել ձևավորվելիք հնչակյան Վեցերորդ գնդին[71]:

ՍԴՀԿ-ի կենտրոնական վարիչ մարմինը Ամերիկայի ազգային միության, հնչակյան մարմինների, ինչպես նաև ազգային տարբեր կազմակերպությունների ու անհատների նյութական աջակցությամբ կարողացել էր կազմել «Ազգ. Պիւրօյի կողմէ լքուած կամաւորներէն գունդ մը», որը, ստանալով ռուսական կառավարության արտոնությունը, ձևավորվել է որպես Վեցերորդ գունդ՝ սպա Հովհաննես Ձանփոլատյանի հրամանատարությամբ[72]: 1915 թ. մարտի 13-ին Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախումբը Սբ. Էջմիածնի կաթողիկոսության միջոցով Վեցերորդ գնդի համար առաքել էր 1.500 դոլար, իսկ մայիսի 13-ին ամերիկահայերի կողմից ուղարկվել էր 3.409 ռուբլի 40 կոպեկ[73] և այլն: Երբ կովի ժամանակ նահատակվել է Հ. Ձանփոլատյանը, նրան փոխարինելու է եկել երիտասարդ սպա Գրիգոր Ավշարյանը (Ավշարով), «որուն դրօշին տակ հաւաքուեցան դաշնակցութենէ հալածական բոլոր կամաւորները», այդ թվում նաև՝ ԱՄՆ-ից եկած ռամկավար, վերակազմյալ հնչակյան և ոչ կուսակցական կամավորները[74]:

---

68 Տե՛ս Ճէրէճեան Եղ., *նշվ. աշխ.*, էջ 14:

69 Տե՛ս Կարապետյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 40:

70 Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962, հ. Ա, էջ 471:

71 Տե՛ս Ճէրէճեան Եղ., *նշվ. աշխ.*, էջ 19: *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962*, հ. Ա, էջ 471:

72 Տե՛ս Չոփուրեան Եդ., *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 22: *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962*, հ. Ա, էջ 471:

73 Տե՛ս Ճէրէճեան Եղ., *նշվ. աշխ.*, էջ 19, 22:

74 Տե՛ս Աւետեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 159: Չոփուրեան Եդ., *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 22:

Արդեն 1915 թ. ԱՄՆ-ում՝ Բոստոնում, հիմնվել է Հայ ազգային զինվորական խորհուրդը (ՀԱԶԽ) [Armenian National Military Society – ANMS], որը կազմակերպել է «Հրայր» զինված խումբը՝ նպատակ ունենալով ամերիկահայ երիտասարդներին մարզել՝ միանալու բնօրրանում ծավալվող ազատագրական շարժումներին: ԱՄՆ-ի դրոշի կողքին ամերիկահայ կամավորներն ունեին նաև կարմիր-սպիտակ-կանաչ գույներով իրենց եռագույն դրոշը, որին ի պատիվ նույն թվականին ՀԱԶԽ-ը նույնիսկ թողարկել է «Յարգանք Դրօշակին» խորագրով փոստային բացիկ՝ դրանով իսկ նպատակ ունենալով ԱՄՆ-ում հայ կամավորական շարժմանն ընդգրկուն և կազմակերպված բնույթ հաղորդել: 1915 թ. մայիսի 31-ին հավաքագրվել էր ամերիկահայ հնչակյան կամավորների Ավշարյան Ա խումբը, որի մասին է փաստում նաև պահպանված նույնպիսի եռագույն դրոշը՝ համապատասխան գրությամբ[75]:

Այնպես որ, ինչպես կամավոր Ե. Չոփուրյանն է նշել. «Այն բազմաթիւ Պուլկարահայ, Ռումանահայ և Ամերիկահայ երիտասարդները, որոնք իրենց Հնչակեանի հանգամանքովը դուրս ձգուած էին Ազգային Պիրոյի գունդերէն, եղան ատաղձը Վեցերորդ գունդին…»[76]:

Վեցերորդ գունդը նոր էր կազմակերպվել, երբ որոշակի կուսակցական, ինչպես նաև հասարակական շրջաններում շրջանառվում էր այն կարծիքը, թե այդ գունդը, Ազգային բյուրոյից անկախ գործելով, չպիտի կարողանար գոյություն ունենալ: Բայց և այնպես 1.500 քաջերից բաղկացած «…6րդ գունդը, կազմուած կանոնաւոր վաշտերով, հարիւրակներով, յիսնեակներով, ռազմազինուած բոլոր յարմարութիւններով ուղղուեցաւ պատերազմի դաշտը»[77]:

1915 թ. հունիսի 18-ին Վեցերորդ գունդն անցել է հարձակման՝ գիշերով գաղտագողի սողալով թշնամու դիրքերը և առավոտյան անակնկալ հարձակվելով Բասենի դաշտում: Հրամանատարն էր 25-ամյա Գր. Ավշարյանը[78], ով ավարտել էր ռուսական գիմնազիա, ստացել զինվորական կրթություն. «…եղած է իսկական անձնուէր հայրենասէր մը, ռազմագիտական բարձր կարողութիւններով օժտուած: Գ. Աւշարեան կովկասեան կամաւորական գունդերու մէջ աչքառու դեր մը ունեցաւ իր գունդով, որուն տարած յաղթանակները հասան այնպիսի բարձրութեան մը, որ ձարական բանակներու հիացմունքին արժանացան»[79]: Իսկ զորավար Բարաթովը Թիֆլիսի քաղաքապետ Ալ. Խատիսյանին ուղարկած հեռագրում գովեստով է արտահայտվել հրամանատար Գր. Ավշարյանի և նրա գնդի մասին՝ նշելով, որ «ան իր յաղթանակներով ճակատագրական դեր խաղաց թրքական ճակատի վրայ»[80]:

Վեցերորդ գունդը՝ որպես գեներալ Բարաթովի հրամանատարության տակ գործող ռուսական բանակի առաջապահ ուժ, դաժան մարտեր է մղել Էրզրում-Երզնկա դժվարին գծի վրա: 1915 թ. գարնանը զորագունդը Ալեքսանդրապոլից

---

[75] Տե՛ս Դեմոյան Հ., *նշվ. աշխ.*, էջ 267, 272, 280:

[76] Չոփուրեան Եդ., *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 26:

[77] Նույն տեղում, էջ 26: *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962*, հ. Ա, էջ 472:

[78] Տե՛ս Չոփուրեան Եդ., *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 26-28:

[79] Աւետեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 238:

[80] Նույն տեղում, էջ 239:

շարժվել է դեպի Կարս, որտեղ Առաքելոց եկեղեցում տեղի է ունեցել կամավորների հանդիսավոր երդումը, ապա Բասենի դաշտով շարժվել է դեպի Էրզրում, Բաշ, Չըլգանի, Ղարաղութ, Դահար գյուղերը: 1915 թ. ապրիլից Վեցերորդ գունդը կատաղի դիմադրություն է ցույց տվել թուրքական բանակին Տեկերում, Ձորագյուղում, Ակբեբայում, Թութախում, Էսմերում, Իուչգզլարում, Աշկալայում, Բռնակապանում, Գյավուրինջիում, Մամախաթունում, Վաթոքում, Բագառիճում, Գեոքթաղում, Հյոբեկղաղում, Բռնաշենում: 1915 թ. հունիսի 20-29-ին տեղի ունեցած դաժան մարտերից հետո ավելի քան 100 նահատակ կամավորների կյանքի գնով Վեցերորդ գնդին հաջողվել է գրավել ռազմավարական նշանակություն ունեցող Չախմախլը լեռը: Հունիսի 22-ին Շարյան գետի ափին՝ Բասենի դաշտում, մղվող ճակատամարտի ամենաթեժ պահին վիրավորվել և հերոսաբար զոհվել է նաև հրամանատար Գր. Ավշարյանը[81]: Մերձիմահ նա իր սուրը փոխանցել է գնդի Բ վաշտի ղեկավար Հայկ Բժշկյանին (Գայ) և պատգամել. «Հա՛յկ, վերցո՛ւր սուրը և անցիր բանակին գլուխը»[82]:

Ականատես-մասնակցի գնահատմամբ. «Քաջամարտիկ 6-րդ գնդի Բ վաշտի առիւծները, ինչպէս լափող լաւայ, առաջ կ՛երթային ջարդելով, տրորելով և գետնին հաւասարեցնելով ճանապարհը փակող քրդական ձիաւորները և թրքական յառաջապահները»: Շուտով շատ ավելի պատասխանատու հարձակումներ են հանձնարարվել Վեցերորդ գնդին, որ «յաղթանակէ յաղթանակ կը սլանար»[83]:

Գրաված տարածքները ռուսական բանակին հանձնելուց և կարճատև վերականգնողական դադարից հետո հերոսական գունդը գրավել է Ալպեղա, Ճանպաղ, Չադ, Դալեկ գյուղերը: Այնպես որ մինչև նոյեմբերի 9-ը Բասենի դաշտն ամբողջությամբ և Ալաշկերտի հովտի մեծ մասը մաքրված էին թշնամուց: Սակայն նոյեմբերի 10-ին թուրքական բանակը, անցնելով հակահարձակման, գրավել է Քյոփրյուքեոյը: Ծանր մարտերը շարունակվել են մինչև նոյեմբերի 15-ը:

1915 թ. դեկտեմբերի 24-ից մինչև 1916 թ. հունվարի 6-ը ռուսական բանակն անցել է ընդհանուր հակահարձակման՝ ջախջախելով և խուճապահար փախուստի մատնելով թուրքական բանակին դեպի Էրզրում: Սարիղամիշի գործողությունից հետո երկրորդ կարևոր գործողությունն Էրզրումի օպերացիան էր (թուրքական բանակի կորուստը կազմել է շուրջ 66.000 զինվոր), որը հայկական կամավորական Վեցերորդ գնդի մասնակցությամբ ավարտվել էր փետրվարի 2-ին ռուսական բանակի փայլուն հաղթանակով՝ վճռելով ամբողջ Կովկասյան ճակատի ելքը[84]:

1916 թ. փետրվար-մարտ ամիսներին Վեցերորդ բանակը՝ որպես առաջապահ ուժ, գրավել էր թուրքական երեք կարևոր ամրություն և «Կարսի Դուռ» կոչված դիրքից մտել Էրզրում, ապա՝ Մամախաթուն: Այնպես որ Վեցերորդ գունդն անմահ անուն է թողել հայ հերոսամարտի պատմության մեջ՝ դառնալով առաջին կամա-

---

81 Տե՛ս Ճէրէճեան Եղ., *նշվ. աշխ.*, էջ 22, 23, 26: Աւետեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 238: Չոփուրեան Եղ., *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 28:

82 *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962*, հ. Ա, էջ 472:

83 Չոփուրեան Եղ., *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 27, 28:

84 Տե՛ս Ճէրէճեան Եղ., *նշվ. աշխ.*, էջ 26:

վորական գունդը, որը գործուն մասնակցություն է ունեցել նաև Էրզրումի շուրջ ծավալված կռիվներին և առաջինը մտել Էրզրումի բերդ: «Վեցերորդ գունդը հոն էր, ուր կար դժուարին գործ մը կատարելիք և ատոր համար ալ տուաւ ամենաշատ զոհերը»: Այն գերմարդկային ճիգերով կարողանում էր հաղթել 15-20 անգամ ավելի թշնամական ուժերին[85]:

Երբ Հ. Բժշկյանը երրորդ անգամ վիրավորվել ու տեղափոխվել էր հիվանդանոց, Վեցերորդ գնդի հրամանատար էր դարձել Պանդուխտը (Միքայել Սերյան), ով, գնդի կազմավորման հենց սկզբից ԱՄՆ-ի ՍԴՀԿ Քերվիլի մասնաճյուղի 28 կամավորների գլուխն անցած, ԱՄՆ-ից ժամանել էր Կովկաս և դարձել հրամանատար Հ. Ջանփոլատյանի օգնականը: Շուտով Պանդուխտին էին միացել նաև 350 ամերիկահայ նորեկ կամավորներ և մեկնել Կարս՝ զորավարժությունների: Կամավոր Արամ Չորբաջյանի գնահատմամբ՝ «Պանդուխտ շատ սիրուած եւ կորովի գնդապետ էր»[86]:

Հետագայում ևս շուրջ 350 կամավորից բաղկացած Պանդուխտի հնչակյան զորագունդը՝ Մարգարի, Անուշավանի, Արսեն Կիտուրի խմբապետությամբ, մինչև վերջ մեծ դեր է կատարել Անդրանիկի Առաջին գնդում[87]:

Արդեն 1917 թ. Նյու Յորքի հայկական եկեղեցու գավթում հավաքագրվել էր ամերիկահայ կամավորների թվով յոթերորդ խումբը[88]: «Ամերիկայից եկած կամաւորները գրեթէ բոլորն էլ գալիս են իրենց սեփական ծախսով և միաժամանակ իրենց հետ բերում են մեծ քանակութեամբ ընտիր զէնքեր: Սակայն ցաւօք սրտի պէտք է ասել, որ բոլոր բերած զէնքերը, դրանց հետ նաև բազմաթիւ դաշտային հեռախօսներ և հեռադիտակներ Թիֆլիսի մաքսատանը ենթարկւում են րեկվիզիցիայի Նիկոլայ Նիկոլայեվիչի և գեն. Եանուշեվիչի[89] նենգ և հայատեաց կառավարութեան կողմից և մինչև վերջն էլ չեն տրւում իրենց տէրերին, - մի հանգամանք, որ յետագայում մեծապէս նպաստեց ամերիկահայ կամաւորական շարքերում լքումն առաջանալուն», - հիշատակվում է Ազգային բյուրոյի տեղեկագրում[90]:

Ընդհանուր առմամբ 1915-1918 թթ. հնչակյան կամավորական շարժումը գտնվել է Արտեմիսի, Լազոյի, Նշան Միրաքյանի, Սարգիս Մաթևոսյանի, Ազաբեկովի, Ա. Երեցյանի, Սյունիքի, Հաճի Նազիքի, Հայկ Բժշկյանի, Արմաղանյանի, Գր. Ավշարյանի, Հ. Ջանփոլատյանի և Պանդուխտի ձեռքերում: Կազմակերպիչ-ղեկավարներն էին Լազոն, Արշակ Բաբյանը և Ս. Տաշիրը (Հովյան)[91]:

---

[85] Նույն տեղում, էջ 26, 28: Չոփուրեան Եդ., *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 26:

[86] Ճէրէճեան Եղ., *նշվ. աշխ.*, էջ 9, 16, 19-20, 28, 74:

[87] Տե՛ս *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962*, հ. Ա, էջ 471:

[88] Տե՛ս Դեմոյան Հ., *նշվ. աշխ.*, էջ 268:

[89] Նիկոլայ Նիկոլաևիչ Յուդենիչ՝ Կովկասյան ճակատի շտաբի պետ, գեներալ: Յանուշկևիչ – բանակի գլխավոր շտաբի պետ, ինֆանտերիայի գեներալ (տե՛ս Կարապետյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 18, 19):

[90] *Համառօտ տեղեկագիր Հ. Կ. Ազգային Բիւրօի գործունէութեան. 1915-1917 թթ.*, էջ 5, 6:

[91] *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962*, հ. Ա, էջ 471:

Բայց և այնպես Վեցերորդ գնդի ձևավորումից և դժվարին ճակատամարտերում փայլուն հաղթանակներ արձանագրելուց հետո իսկ հնչակյան կամավորները դարձյալ «հալածանքի առարկայ դարձան Ազգային Պիւրոյի կողմէ, ուրացուելով անոնց գոյութիւնը»[92]: Այսպես, հնչակյան գնդի ռազմական գործողությունների ընթացքում իշխան Հովսեփի Արղությանի հրամանատարությամբ կազմվել էր նույն՝ Վեցերորդ գունդ անունով զորախումբ[93], մինչև որ ռուսական հրամանատարությունը, տեղեկանալով այդ մասին, վավերացրել էր Գր. Ավշարյանի հրամանատարության ներքո գործող Վեցերորդ գնդի գոյությունը, իսկ իշխան Արղությանի գունդն անվանել Յոթերորդ:

Կովկասյան կամավորական շարժումը և ՀՍՌԿ-ն

Հայ սահմանադիր ռամկավար կուսակցությունը Կովկաս կամավորներ ուղարկելու ծրագրին առանձնապես կողմնակից չէր և դրա անհրաժեշտությունը չէր տեսնում՝ «քաջ գիտնալով որ կռուողներ չէին պակսիր հոն, եթէ պէտք էր աջակցիլ, նիւթական օգնութիւնը աւելի էական կը նկատէր»: Իսկ ՀՅԴ Ազգային բյուրոյի նկատմամբ վստահություն չուներ, քանի որ «կը կասկածէր թէ անիկա կամաւորական շարժումը կը գործածէր զուտ կուսակցական շիլ շարժառիթներու, պրօպականդի եւ շահագործումներու իբր լաւագոյն միջոց»[94]: Այդուհանդերձ, Կովկասում կամավորական շարժման ծավալմանը զուգընթաց, ռամկավար ղեկավարությունը, իր իսկ գնահատմամբ, «հասարակաց կարծիքի եւ օրուան պահանջի մղումին տակ կ'որոշէ այդ շարժման տրամադրել ուժ մը իր հայրենասէր շարքերէն», մասնավորապես ԱՄՆ-ում գտնվող վանեցիներից: Անհրաժեշտության դեպքում կամավորների շարքերը ենթակա էին համալրման: 1915 թ. օգոստոսի 5-ին Անուշավան Տեր-Մկրտիչյանի ղեկավարությամբ ռամկավար կամավորների խումբը ռուսական նավով մեկնել է Արխանգելսկ, այնտեղից՝ Պետրոգրադ, տեղի հայության ներկայացուցիչ Ալեքսանդր Ասրբեկյանից ստացել 700 ռուբլի նվեր և շարժվել Թիֆլիս: Այնտեղ նրանց առաջարկվել է կռվել Ազգային բյուրոյի հովանու ներքո: Վանի առաջին նահանջից հետո մանավանդ, երբ պարզ էր դարձել, որ Ազգային բյուրոն գործում էր միայն ՀՅԴ-ի հրահանգներով, ռամկավար ներկայացուցիչն այդ մասին հաղորդել է ԱՄՆ՝ շեշտելով, որ «ամերիկահայ կամաւորներու պէտքը չըզգացուիր Կովկասի մէջ»[95]:

Միաժամանակ ՀՍՌԿ Ամերիկայի շրջանակը Միքայել Հովհաննիսյանի ղեկավարությամբ Վաշինգտոնում կազմակերպած խիստ գաղտնի ժողովում որոշել է հոգալ նաև Վանի ինքնապաշտպանության նյութական ծախսերը: Նրանք իրենց գործունեությունը համակարգել են «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանի հետ, իսկ Վանում նրանց ներկայացուցիչն էր Շավարշ Հովիվյանը: Հիշար-

---

92 Աւետեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 159:

93 Նույն տեղում, էջ 160:

94 Ճիզմէճեան Մ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 208:

95 Նույն տեղում, էջ 209, 210:

ժան է ռամկավարների՝ Լոուելում կազմակերպած շրջանային հանգանակիչ հավաքը, որին մասնակցել է Լոուրենսից, Հեյվըրհիլից, Նիշուայից, Բոստոնից, Լիննից, Նյուբրիփորթից, Չելսիից և այլ վայրերից ժամանած նվիրատուների խուռներամ բազմություն: ՀՍՌԿ Ամերիկայի վարչությունը Վանի ինքնապաշտպանության ռազմական կարիքների համար երկու անգամ հանգանակել էր օսմանյան հազար ոսկու չափ գումար[96]:

Շուտով Թիֆլիսում կազմվել էր Հայաստանի վերաշինաց հանձնաժողով, որը Վանի գյուղացիության հետ միասին դիմել և ստացել էր կովկասյան իշխանության թույլատրությունը՝ ստանձնելու Վանում տեղական միլիցիայի դերը, ինչպես նաև օգնելու քաղաքապետություն հաստատելու ծրագրին: Վանի կառավարչի պաշտոնում Արամ Մանուկյանին փոխարինած ռուս նահանգապետ ցարական գնդապետ Տերմենի օրոք քաղաքագլուխ էր դարձել Ավետիս Թերզիբաշյանը, իսկ ոստիկանապետն էր Արմենակ Եկարյանը: Վերջինիս գլխավորությամբ հավաքագրվել էր 200 հոգուց բաղկացած միլիցիա, որի կորիզը կազմել են Պողոս Նուբարի կոչով ԱՄՆ-ից կապիտան Ջիմ Չանգալյանի ղեկավարությամբ ժամանած մի խումբ ամերիկահայ Վերակազմյալ հնչակյան կամավորներ[97]: Ռամկավար կուսակցությունը ներկայացված էր քաղաքապետության, ոստիկանության, ինչպես նաև հաշտարար դատարանի համար թեկնածուներով[98]: 1915 թ. հոկտեմբերի վերջերին ՍԴՀԿ և Սահմանադիր ռամկավար կուսակցությունների օժանդակությամբ և մի խումբ արհեստավորների ու գյուղացիների ուղեկցությամբ միլիցիան շարժվել է դեպի Վան: Արդեն 1916 թ. ամռանը Վան վերադարձողների թիվը հասել է 40.000-ի: Ջիմ Չանգալյանն իր սահուն անգլերենի իմացությամբ շահել էր Վանի կառավարիչ գնդապետ Տերմենի համակրանքը[99]: Քաղաքագլուխ Ա. Թերզիպաշյանի գնահատմամբ, եթե Արմենակ Եկարյանի դիրքերը խախտված էին, և նա մեկուսացված էր, ապա Ջիմ Չանգալյանի «դիրքն ամուր է, պատճառն այն է՝ որ ան՝ իր սահուն անգղիերէնովը եւ համարձակ ձեւերովը, կրցած է շահիլ գնդապետ Տէրմէնի անձնական համակրանքը»[100]: Մանավանդ, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ցարական գնդապետը խստապահանջ վերաբերմունք ուներ հայ կամավորների նկատմամբ: Ջորավար Անդրանիկի բնութագրմամբ. «Ան ալ [Տերմենն] այն կարծիքէն է, թէ հայ կամաւորները՝ իրենց տիսիբլինի պակասովը, գէշ օրինակներ եղած են ռուս զինուորին համար, եւ, անոր այս կարծիքը՝ առանց դերի չէ մնացած կամաւորական խումբերը լուծելու եւ զանոնք ռուս բանակին մէջ ձուլելու որոշումին մէջ»[101]:

---

[96] Նույն տեղում, էջ 212-214, 281:

[97] Տե՛ս Աւետեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 172:

[98] Տե՛ս Թէրզիպաշեան Ա., *Անդրանիկ*, Բարիզ, 1942, էջ 258: Քաջունի Եղ., *Անդրանիկի եւ հայկական առաջին հարուածող զօրամասի հետ*, Նիւ Ճըրսի, 1976, էջ 206:

[99] Տե՛ս Աւետեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 172: Թէրզիպաշեան Ա., *նշվ. աշխ.*, էջ 258: Քաջունի Եղ., *նշվ. աշխ.*, էջ 206:

[100] Թէրզիպաշեան Ա., *նշվ. աշխ.*, էջ 261:

[101] Նույն տեղում, էջ 261:

Կովկասյան հայկական կամավորական գնդերի ցրումը

1915 թ. կեսերից ցարական կառավարությունը միջոցներ է ձեռնարկել հայկական կամավորական գնդերը ցրելու և դրանք ռուսական բանակի մեջ ձուլելու ուղղությամբ: Արդեն 1915 թ. դեկտեմբերի կեսերին ցարը, բարձր գնահատելով Կովկասյան ճակատում հայ կամավորական գնդերի անփոխարինելի դերը, այդուհանդերձ հրամանագիր է ստորագրել դրանք ցրելու վերաբերյալ՝ պատճառաբանելով այնտեղ տիրող ցածր կարգապահությունը[102]: Մանավանդ որ Էրզրումի գրավումով, երբ ռուսական բանակի տիրապետության տակ էր անցնում հայկական բարձրավանդակի զգալի մասը, կամավորական առանձին գնդերի գոյությունն այլևս անհրաժեշտություն չէր: Այդուհանդերձ, կամավորական գնդերի լիակատար լուծարումը ձգձգվել է մինչև 1916 թ. մարտի վերջը, մինչև որ ռուսական գլխավոր հրամանատարության և Թիֆլիսի հայկական ազգային իշխանությունների միջև համաձայնություն է ձեռք բերվել[103] դրանք վերածելու ռուսական բանակի կազմում գործող 6.000 զինվորներից բաղկացած Հայ հրացանաձիգ գնդերի (Հայ նշանաձիգ վաշտ)[104]: Ռուսական բանակի անբաժան մաս կազմող և միևնույն իրավունքներից ու պարտականություններից օգտվող Հայ հրացանաձիգ գնդերը համալրվելու էին կամավորական գնդերում եղած մարտիկներով, իսկ հրամանատարները բացառապես հայ սպաներն էին լինելու: Նախատեսվում էր առաջինը վերակառուցել և ռուսական զինվորական կարգապահության ենթարկել Վեցերորդ գունդը, որտեղ մեծամասնություն էին կազմում արտասահմանի տարբեր երկրներից ժամանած հայ կամավորները: Ստեղծվելիք մյուս հրացանաձիգ գնդերի հրամանատարներն էին Բեժանբեկովը, Հովսեփյանը, Տեր-Նիկողոսյանը: Որոշ ժամանակով հետաձգվել էր Անդրանիկի Առաջին և Դրոյի Երկրորդ գնդերի վերակազմությունը[105]:

Արդեն 1915 թ. դեկտեմբերին ռուսական գերագույն հրամանատարության որոշմամբ կովկասյան հայ կամավորական խմբերի լուծարումը համընդհանուր լքման պատճառ էր դարձել շարքերում. հեռացել էին կամավորների զգալի մասը՝ արևմտահայերն ու ամերիկահայերը: Միաժամանակ առաջ էին եկել նաև հարակից դժվարություններ՝ կապված նպաստի, բժշկության, հաշմանդամության, հետդարձի և այլ նյութական ծախսերի հետ: Ազգային բյուրոն Բոստոնի կենտրոնական կոմիտեի միջոցով վճարել էր միայն 430 ամերիկահայ կամավորի վերադարձի ճանապարհածախսը՝ ընդհանուր 60.600 ռուբլի արժեքով, ինչպես նաև նվիրատվություններից ու կազմակերպված տարբեր վաճառահանումներից ստացված գումարով սահմանել նպաստ զոհված կամավորների ընտանիքներին և այլն[106]:

---

[102] Տե՛ս Կիրակոսյան Ջ., *նշվ. աշխ.*, էջ 200: Սիմոնյան Հր., *նշվ. աշխ.*, էջ 522:

[103] Տե՛ս Սիմոնյան Հր., *նշվ. աշխ.*, էջ 523: Կիրակոսյան Ջ., *նշվ. աշխ.*, էջ 200:

[104] Տե՛ս Մարմարեան Ա., Ջօր. *Անդրանիկ եւ իր պատերազմները*, Կ. Պոլիս, 1920, էջ 266, 269, 270: Չոփուրեան Եդ., *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 71:

[105] Տե՛ս Սիմոնյան Հր., *նշվ. աշխ.*, էջ 523:

[106] Տե՛ս *Համառօտ տեղեկագիր Հ. Կ. Ազգային Բիւրօի գործունէութեան*, էջ 7, 8, 9, 10:

Արտերկրից, մասնավորապես ԱՄՆ-ից ժամանած կամավորների հիմնական զանգվածը, այլևս չցանկանալով ծառայել, ցրվել է: Այնպես որ արդեն 1916 թ. սեպտեմբերին հայ կամավորական ջոկատները հիմնականում ցրված էին[107]:

Թեև կամավորական շարժման լուծարումով ամերիկահայ կամավորների զգալի մասը վերադարձել է ԱՄՆ, սակայն քիչ չեն եղել նաև նորաստեղծ ազգային գումարտակներ ներգրավվածները:

Կովկասում կամավորական շարժման լուծարումով արևմտահայության շրջանում չի մարել հայրենի տարածքներն ազատագրելու և իր ժողովրդի ապրելու բնական իրավունքը պաշտպանելու սրբազան զգացումը, և նա ձեռնամուխ է եղել կամավորական նոր շարժում կազմակերպելուն: Այդ նպատակով արտասահմանի, մասնավորապես ԱՄՆ-ի հայությունը կարևոր բացատրական աշխատանք է իրականացրել դաշնակից տերությունների շրջանում՝ նրանցից ակնկալելով ինչպես քաղաքական ու դիվանագիտական, այնպես էլ նյութական ու ռազմական աջակցություն[108]:

Ամերիկահայերի նյութական աջակցությունը կամավորական շարժմանն ու կարոտյալներին

Ամերիկահայության հայանպաստ ջանքերի շնորհիվ 1916 թ. հոկտեմբերի 21-22-ը ԱՄՆ-ի նախագահի ու Կոնգրեսի որոշմամբ երկրով մեկ հայտարարվել է «Հայոց օր», և, ի պաշտպանություն Հայ դատի, շուրջ 400 քաղաքներում կազմակերպվել են Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացվող բռնությունները դատապարտող հավաքներ, բողոքի ելույթներ ու ցույցեր, ինչպես նաև ազգանպաստ բազմաթիվ միջոցառումներ, հանգանակություններ և այլն: Ամերիկյան ժողովուրդն իր սրտակցությունն ու համերաշխությունն է արտահայտել իթթիհատական պետությունում հետապնդվող ու հալածվող քրիստոնյա ազգություններին և նրանց ի նպաստ նվիրաբերել ավելի քան 30 մլն դոլար[109]:

Ամերիկահայությունը Կովկաս կամավորներ ուղարկելուց բացի, զգալի նյութական նպաստ է հատկացրել վերոհիշյալ շարժմանը:

Այսպես, Ադանայի ջարդերից (1909 թ.) փրկված և նոր երկրում ապաստանած կիլիկիահայերն իրենց հոգևոր առաջնորդի միջոցով 1914 թ. հոկտեմբերի 30-ին նամակով դիմել են ԱՄՆ-ում Ռուսաստանի դեսպան Բախմեևտևին՝ հայտնելով, որ տարագրության մեջ գտնվող կիլիկիահայությունն իր վրա է վերցնում ամերիկահայ կամավորների հանդերձավորման և Ռուսաստան մեկնելու ծախսերը: Զինման և ռազմաճակատի հարցերը տնօրինելու էին ռուսական իշխանությունները[110]:

Լայն թափ էին ստացել նաև ՀՅԴ Կալիֆոռնիայի, Միջին Արևմտյան, Արևելյան և Կանադայի շրջաններում հանգանակիչ հավաքները, որտեղ շարքային անդամ-

---

[107] Տե՛ս Սիմոնյան Հր., *նշվ. աշխ.*, էջ 523, 525:

[108] Տե՛ս Ավագյան Ք., *Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.)*, Երևան, 2000, էջ 111-115:

[109] Տե՛ս Հայկ Վ., *նշվ. աշխ.*, էջ 994: Թէոդիկ, *նշվ. աշխ.*, 1922, էջ 284:

[110] Տե՛ս Կարապետյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 40:

ներն ու համակիրները «լիաբուռն կը մասնակցին հանգանակութիւններուն». մինչև 1915 թ. մարտի կեսը հանգանակվել էր 87.500 դոլար[111], որը շուտով, ըստ «Հայրենիք» երկօրյայի խմբագրակազմի անդամ Շահան Նաթալիի հաղորդած տվյալների, հասել է 100.000-ի, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ հիշյալ ժամանակահատվածում ԱՄՆ-ում գործում էր ՀՅԴ-ի 90 կոմիտե, Կարմիր խաչի 30 մասնաճյուղ, իսկ «Հայրենիքի» բաժանորդների թիվը շուրջ 5.000 էր: Կուսակցությունը նաև *«Հայ ազատագրական փուրջ»* անունով թերթոններ է տարածել ժողովրդի մեջ՝ մինչև աշուն ակնկալելով ևս մի քանի տասնյակ հազար դոլար[112]:

Բագրատ եպիսկոպոսի զեկուցագրի համաձայն՝ 1915 թ. սկզբին Պետրոգրադի ռուսական արտաքին առևտրական բանկի միջոցով Նյու Յորքից հայերը փոխանցել էին 1.355 ռուբլի, սեբաստահայերի Ուլաշ խումբը՝ 450 ռուբլի 0.7 կոպեկ, իսկ Ազգային պաշտպանության Ամերիկայի միությունը՝ 3.409 ռուբլի 10 կոպեկ և այլն[113]:

Ըստ «Հայրենիք» պարբերաթերթի տպագրած ցուցակների՝ 1915 թ., ի նպաստ Կովկասի և ինքնապաշտպանության, ամերիկահայության շրջանում սկսված հանգանակությունն արդեն 1916 թ. հոկտեմբերին հասել էր 225.500 դոլարի, որը մաս առ մաս առաքվել էր Թիֆլիսի Ազգային բյուրոյին[114]: Ընդ որում, եթե այդ նույն ժամանակ ԱՄՆ-ում «Նպաստի օր» հայտարարելու առիթով Սիրիական/հայկական նպաստամատույց ամերիկյան կոմիտեն (The American Committee for Syrian/Armenian Relief) Միջագետքի և Կովկասի գաղթականների համար փոխանցել էր 10.000 դոլար, ապա Հյուսիսային Ամերիկայի ՀՅԴ-ն Կովկասում ապաստանած գաղթականների համար հանգանակել էր 18.000 դոլար[115]:

Ընդհանուր առմամբ ողջ ամերիկահայությունը կովկասյան կամավորական շարժմանը տրամադրել է շուրջ 342.000 դոլար, իսկ առանձին Հյուսիսային Ամերիկայի ՀՅԴ Կենտրոնական կոմիտեն 1915-1917 թթ. Թիֆլիսի Ազգային բյուրոյին էր ուղարկել 328.047 ռուբլի գումար[116]: Կամավորական շարժմանն աջակցելուց բացի, ամերիկահայությունն իր նպաստն է բերել նաև փախստականների փրկության ջանքերին: Այսպես, ԱՄՆ-ի հայ գործավորները 1-2 տարվա ընթացքում կամավորական շարժմանն ու փախստականներին ի նպաստ հանգանակել էին մոտավորապես 2 մլն դոլար[117]:

Ամփոփելով նշենք, որ 1914 թ. սեպտեմբերի 10-ից մինչև 1916 թ. օգոստոսի 25-ը Կովկասում ծավալված հայ կամավորական շարժումն իր ուրույն տեղն ունի հայ ռազմարվեստի պատմության մեջ՝ որպես նոր ժամանակահատվածում բնօրրանում և արտերկրում ցրված հայության երկու հատվածների կազմակերպված ինք-

---

111 Տե՛ս Տօնապետեան Գ., *նշվ. աշխ.*, հ. Բ, էջ 278, 280:

112 Տե՛ս «Հայրենիք», 1916, Հոկտեմբերի 7: - Տօնապետեան Գ., *նշվ. աշխ.*, հ. Բ, էջ 325:

113 Տե՛ս Կարապետյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 42:

114 Տե՛ս «Հայրենիք», 1916, հոկտեմբերի 7: Տօնապետեան Գ., *նշվ. աշխ.*, հ. Բ, էջ 325:

115 Տե՛ս Տօնապետեան Գ., *նշվ. աշխ.*, հ. Բ, էջ 333:

116 Տե՛ս *Համառօտ տեղեկագիր Հ. Կ. Ազգային Բիւրօի գործունէութեան. 1915-1917 թթ.*, էջ 7:

117 Տե՛ս Չոփուրեան Եդ., *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 79:

նապաշտպանական շարժման դրսևորման անդրանիկ փայլուն օրինակ, ինչպես նաև ռուս, կազակ և արևելահայ ու արևմտահայ զինակցության հիշարժան դրվագ:

Ընդհանուր առմամբ հայ կամավորական զորագնդերն արդարացրել են իրենց վրա դրված պարտավորությունները և ռուսական գերագույն հրամանատարության հույսերը՝ արժանանալով վերջիններիս բարձր գնահատանքին ու պարգևներին:

Թեև հայ կամավորական շարժումն իր տեղացի և արտերկրից, մասնավորապես ԱՄՆ-ից, ժամանած մարտիկներով արձանագրել է վճռորոշ հաջողություններ, իսկ աշխարհով մեկ սփռված հայության ազգային լիազոր կառույցները զգալի հանգանակիչ ու քաղաքական ջանքեր են գործադրել, այդուհանդերձ արտաքին և ներքին որոշակի ուժերի կազմակերպած դավադրության արդյունքում ցարական Ռուսաստանի կայսրության անկումը և տարածաշրջանում ստեղծված անկառավարելի իրավիճակը ճակատագրական հետևանքներ են թողել առանձնապես հայ ժողովրդի կյանքում՝ հանգեցնելով Արևմտյան և Արևելյան Հայաստանի զգալի մասի կորստի՝ քրիստոնեաթափման և հայրենազրկումի, հայ բնիկ ժողովրդի տեղահանության և ավելի քան 1,5 միլիոն հայերի բնաջնջման, իսկ օտար երկրներում ապաստանած հրաշքով վերապրածները դատապարտվել են անխուսափելի ձուլման և ուծացման:

ԱՄՆ-Ի ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ ԵՎ ՆՊԱՍՏԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԻՆ

Քնարիկ Ավագյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած Առաջին աշխարհամարտի տարիներին ամերիկահայությունը, համախմբելով իր ներգաղութային ողջ մտավոր, նյութական, հասարակական, կուսակցական և այլ կարողությունները, քաղաքական, դիվանագիտական, ռազմական, մարդկային և հնարավոր բոլոր այլ միջոցներով սատարել է հայրենի երկրի ու ժողովրդի պաշտպանությանը: Նրանք գործուն մասնակցություն են ունեցել Եվրոպայում և ԱՄՆ-ում Հայկական հարցին ի նպաստ ջանքերին:

Ամերիկահայ բոլոր ազգային կուսակցությունները (Հայ հեղափոխական դաշնակցություն – ՀՅԴ, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն – ՍԴՀԿ, Հայ սահմանադիր ռամկավար կուսակցություն – ՀՍՌԿ), ինչպես նաև անկուսակցականները ստվար խմբերով մասնակցել են կովկասյան կամավորական շարժմանը՝ իրենց նպաստը բերելով ռուսական բանակի հաղթանակին:

ԱՄՆ-ից և եվրոպական երկրներից Կովկասում կամավորական շարժմանը մասնակցել է շուրջ 3.000 հայ:

Բանալի բառեր՝ ԱՄՆ-ի հայեր, կովկասյան կամավորական շարժում, կովկասյան ճակատ, Առաջին համաշխարհային պատերազմ, Հայ հեղափոխական դաշնակցու-

թյուն, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն, Հայ սահմանադիր ռամկավար կուսակցություն:

PARTICIPATION OF THE ARMENIANS OF THE USA TO THE VOLUNTARY MOVEMENT IN THE CAUCASUS AND THEIR SUPPORT TO THE CAUCASIAN FRONT

Knarik Avakian

SUMMARY

During the years of the First World War, which were disastrous for the Armenian people, the Armenian community of the US, assembling its entire intra-communal intellectual, financial, public and political resources, has assisted the Motherland and its people by all the possible diplomatic, political, military and human means and has taken part in the enterprises aiming at the defense of the Armenian Case in the USA.

Armenian-Americans of all national parties (Armenian Revolutionary Federation – ARF, Social-Democratic Hnchakian Party – SDHP, Armenian Constitutional Democratic Party – ACDP), as well as non-partisan people, in great numbers have participated to the Caucasian Front voluntary movement, contributing to the victories of the Russian Army.

At least 3.000 Armenians from the US and Europe had participated to the voluntary movement in the Caucasus.

Keywords: Armenians of the USA, voluntary movement in the Caucasus, Caucasian Front, First World War, Armenian Revolutionary Federation, Social-Democratic Hnchakian Party, Armenian Constitutional Democratic Party.

УЧАСТИЕ АРМЯН США В ДОБРОВОЛЬЧЕСКОМ ДВИЖЕНИИ НА КАВКАЗЕ И СОДЕЙСТВИЕ КАВКАЗСКОМУ ФРОНТУ

Кнарик Авакян

РЕЗЮМЕ

В ставшими роковыми для армян годы Первой мировой войны американские армяне объединили весь свой интеллектуальный, финансовый, социальный, политический и прочий потенциал в целях оказания дипломатической, политической, военной, людской и прочей всевозможной помощи родине и армянскому народу. Они активно участвовали в акциях в защиту Армянского Вопроса в Европе и в США.

Многочисленные американские армяне всех национальных партий (Армянская революционная федерация Дашнакцутюн – АРФД, Социал-демократическая партия Гнчакян – СДПГ, Армянская конституционная партии Рамкавар – АКПР), а также беспартийные, приняли участие в добровольческом движении на Кавказском фронте, способствуя победе русской армии.

Около 3.000 армян из США и Европы приняли участие в добровольческом движении на Кавказе.

Ключевые слова: Армяне США, добровольческое движение на Кавказе, кавказский фронт, Первая мировая война, Армянская революционная федерация Дашнакцутюн, Социал-демократическая партия Гнчакян, Армянская конституционная партия Рамкавар.

ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՈՐԲԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Գոհար Խանումյան

Առաջին աշխարհամարտը մեծ փորձություն դարձավ ռազմական գործողությունների թատերաբեմում հայտնված տարածքների խաղաղ բնակչության համար, ովքեր հարկադիր լքում էին իրենց բնակության վայրերը՝ դառնալով գաղթական: Ասվածը մեծապես վերաբերում է Կովկասյան ռազմաճակատին, որտեղ ռազմական գործողությունների ծավալումը և ռազմաքաղաքական նպատակներով ռուսական զորքերի տեղաշարժերն արևմտահայության դրության էլ ավելի վատթարացման պատճառ դարձան: Արևմտահայերի մի հատվածը՝ հիմնականում Վանի և Էրզրումի նահանգներից, գաղթեց և տեղափոխվեց Ռուսական կայսրության ռազմական գործողություններից ավելի հեռավոր շրջաններ:

Արդեն 1914 թ. ամռան կեսերին Ռուսական կայսրությունում Կովկասյան և Արևմտյան ռազմաճակատներից գաղթականների թիվը վիթխարի չափերի էր հասնում:

Կովկասյան ճակատում ռազմական գործողությունները տեղի էին ունենում հիմնականում Արևմտյան Հայաստանի տարածքում: Օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ երիտթուրքական կառավարությունը ռուս–թուրքական ճակատամերձ գոտուց «վստահություն չներշնչելու» պատրվակով իրականացրեց օսմանահպատակ հայերի բռնի տեղահանությունը, որը գործադրվեց 1915 թ. մայիսին սուլթանի կողմից վավերացված «Տեղահանության մասին» օրենքի շրջանակներում: Օրենքի իրական նպատակն էր «լիովին ոչնչացնել ու վերացնել» հայերի կարծեցյալ «վտանգավոր շարժումը» և ոչ թե նրանց վերաբնակեցնել կայսրության՝ ռուսական ռազմաճակատից հեռու գտնվող տարածաշրջաններում[1]: Առաջին հայ գաղթականները Կովկասյան ռազմաճակատի սահմանամերձ բնակավայրերի հայ ազգաբնակչությունն էր: 1914 թ. նոյեմբերի 22-24-ին Բասենի թուրքական տարածքից հայությունը՝ մոտավորապես 10.000-14.000 գաղթական[2], նահանջող ռուսական զորքերի հետ գաղթեց Քյորփի-քյոյից[3]: Խոսելով Բասենի հայության գաղթի մասին՝ Կ. Սասունին գրում է. «Նահանջ բառը սարսափի ու գլխակորույս փախուստի իր իմաստով, մնաց անջնջելի հայ ժողովրդի մտքէն, ու այդ օրերէն սկսած գաղթական բառը դարձաւ թրքահայու, թշուառ ու օգնութեան կարոտ մարդուն հոմանիշ»[4]:

---

[1] Մանրամասն տե՛ս Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կառավարության որոշումը հայերի տեղահանության մասին (1915թ. մայիսի 30), *«Հայագիտության հարցեր» 1(2014),* էջ 5:

[2] *Докладъ уполномоченного Комитета въ предѣлахъ Наместничества Его Императорскаго Величества на Кавказъ Сенатора Н. Д. Чаплина*, Петроградъ, 1914, с. 8.

[3] Մանրամասն տե՛ս *Докладъ по первой поездке председателя Комитетеа А. Б. Нейдгарда комитеты Ея Императорксаго Высочества Великой Княжны Татіаны Николаевны для оказания временной помощи пострадавшимъ отъ военныхъ бедствій*, Петроградъ, 1914, с. 7.

[4] Կ. Սասունի, *Թրքահայաւրանը Ա. Աշխարհամարտի ընթացքին (1914-1918). Թրքահայոց գաղթաշարժերը եւ անոնց դերը Հայաւրանի Հանրապետութեան մէջ*, Պէյրութ: Սևան, 1966, էջ 53:

Գաղթականների երկրորդ, անհամեմատ խոշոր ալիքն սկսվեց Սարիղամիշից ռուսական զորքերի նահանջի ժամանակ, ինչի հետևանքով ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած բնակավայրերից (Սարիղամիշ, Կարս, Կաղզվան, Արդահան, Օլթի, Արդվին, Դիադին, Բաշկալե) 1914 թ. վերջին Անդրկովկասում՝ հիմնականում Թիֆլիսի և Երևանի նահանգներում ապաստանած հայ գաղթականների թիվը հասնում էր շուրջ 30 000-ի (2124 տուն)[5]: Արդվինի, Արդահանի հայ գաղթականների մի մասը հաստատվեց Բաթումում[6], մի որոշ մասն էլ՝ Քութայիսիում[7]: 1915 թ. փետրվար-մայիս ամիսներին ռուսական զորքերը գրավեցին Մանազկերտը, Բաշկալեն, Շատախը, Կոտուրը, Արճեշը և Վանը: Սակայն 1915թ. ամռանը ռուսական զորքերի նահանջի ժամանակ գաղթեցին ավելի քան 170.000 հայ Բասենից, Աղբակից, Բիթլիսից, Մուշից, Մանազկերտից, Ալաշկերտից[8]:

Արևմտահայերի երրորդ գաղթն սկսվեց 1916 թ. հուլիսի 27-ին, այն բանից հետո, երբ Թուրքիան մեծաթիվ զորքեր կենտրոնացրեց Բաղեշում: 1916 թ. ամռանը գաղթեցին Վանի, Մուշի, Բիթլիսի և Արևմտյան Հայաստանի այլ շրջանների շուրջ 50.000 գաղթականներ, որոնց գումարվեցին նաև 1916 թ. նոյեմբերին գաղթած 16.000 հայեր:

Արևմտահայ գաղթականների մեծ մասն ապաստանել էր Կովկասում: Կովկասյան ճակատի գաղթականների դրությունը կարգավորող գլխավոր մարմնի դիվանատան տվյալների համաձայն՝ Կովկասյան երկրամասում 1917 թ. սկզբին հայ գաղթականների թիվը կազմում էր 283. 063[9], որոնց մեջ մեծ թիվ էին կազմում կանայք և անչափահաս երեխաները: Վերջիններիս մեջ զգալի էր խնամազուրկ, ծնողազուրկ երեխաների թիվը[10]: Կովկասում հայտնված բազմահազար հայ գաղթականության շրջանում մոլեգնում էին տարբեր համաճարակային հիվանդություններ, քանի որ նրանք գտնվում էին տնտեսական և սանիտարական ծայրահեղ վատթար պայմաններում: Կովկասյան երկրամասում գաղթականական կարիքները բավարարելու համար 1915 թ. հոկտեմբերին Կովկասի փոխարքային կից Կովկասյան ճակատի գաղթականների տեղավորման գլխավոր լիազոր նշանակվեց գեներալ-մայոր Ալ. Թամամշյանը (Թամամշևը)[11]:

---

5 Аветисян А., *Первая мировая война и армянские беженцы (1914-1917)*, автореферат, Ереван, 1989, с. 12

6 *Докладъ уполномоченнаго Комитета…*, стр. 6.

7 Նույն տեղում, էջ 7:

8 Տե՛ս Հարությունյան Ա., Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթը, *«Լրաբեր հասարակական գիտությունների»*, № 2, 2002, էջ 56:

9 Հարությունյան Ա., Հայոց մեծ եղեռնը և հայ գաղթականությունը Կովկասում 1914-16թթ., *«Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր»*, №6, 2002, Երևան, էջ 25:

10 Ա. Խատիսովը (Խատիսյանը) 1915թ. ամռանը Էջմիածին կատարած իր ուղևորության մեջ նշում է, որ հայ գաղթականների ¾-ը երեխաներ, իսկ մնացածը կանայք և ծերեր էին: Երիտասարդ տղամարդիկ ընդհանրապես բացակայում էին: Տե՛ս նաև *Беженцы и выселенцы. Отдельные оттиски изъ № 17 известіи Всероссійскаго Союза Городовъ*, Москва, 1915, стр. 93:

11 Հարությունյան Ա., *Հայոց Մեծ եղեռնը և հայ գաղթականությունը…*, էջ 26:

Հաշվի առնելով Ռուսական կայսրության ողջ տարածքում ռազմական գործողությունների շրջաններից տեղահանված բնակիչների՝ գաղթականների զանգվածային մեծ ալիքը՝ Ռուսաստանի ներքին գործերի նախարարության կազմում 1915 թ. հուլիսին ստեղծվեց «Հակառակորդի կողմից գրավված բնակավայրերի գաղթականների ապահովման հարցով խորհուրդ»[12]:

1915 թ. օգոստոսի 30-ին հրապարակվեց «Գաղթականների կարիքների ապահովման» մասին օրենքը, որի գործադրման համար հատկացվեց 25 մլն ռուբլի[13], ինչպես նաև ներքին գործերի նախարարության կազմում ստեղծվեց «Գաղթականների տեղավորման բաժին»[14]: Ըստ այդ օրենքի՝ գաղթական էին համարվում այն անձինք, ովքեր լքել են հակառակորդի կողմից գրավված կամ գրավման սպառնալիքի ենթակա տեղանքը, կամ ովքեր ռազմական կամ քաղաքացիական իշխանությունների կողմից տարհանվել են ռազմական գործողությունների տարածքից: Օրենքը տարածվում էր ոչ միայն Անտանտի դաշնակից երկրների, այլև Ռուսաստանի թշնամի պետությունների քաղաքացիների վրա[15]: Այսինքն՝ օսմանահպատակ հայ գաղթականները, հայտնվելով Ռուսական կայսրության տարածքում, պետության կողմից ստանում էին գաղթականի կարգավիճակ: Ռուսական կայսրության տարածքում ապաստանած գաղթականներին տրվում էր գաղթականական տոմս, որը թույլ էր տալիս օգտվել փախստականին ընձեռվող բոլոր արտոնություններից (ճաշարանից, դրամական և բժշկական օգնությունից, ժամանակավոր կացարանից): Օգոստոսի 30-ի օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գաղթականների հարցը կարգավորելու համար իշխանությունից բացի ներգրավվեցին տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները[16]:

Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ որպես խորհրդակցական և դիտորդական մարմին, ստեղծվեց «Գաղթականների տեղավորման հատուկ ժողով», որի մեջ պետական գերատեսչությունների հետ մեկտեղ ընդգրկվեցին մեկական ներկայացուցիչ զեմստվոյական և քաղաքային միություններից և 7-ական հոգի՝ Պետական դումայից և Պետական խորհրդից: Ժողովի մեջ ներգրավվեցին հայկական, լեհական, հրեական և այլ ազգային փոքրամասնությունների կենտրոնական կոմիտեների ներկայացուցիչներ[17]: Բացի այդ պահպանվեց նաև Մեծ իշխանուհի Տատյանա Նիկոլաևնայի կոմիտեի[18] գործունեությունը՝ համաձայն 1914թ. սեպտեմբերի 14-ի կանոնադրության[19]:

---

12 *Земское дело*, N22, 1915, стр. 1237.

13 Տե՛ս *Земское дело*, N19, 1915, էջ 1047:

14 Տե՛ս *Руководящія положенія по устройству беженцевъ*, Петроградъ, 1916, էջ 1:

15 Տե՛ս *Законы и распоряженія о беженцахъ*, Москва, 1916, էջ 2:

16 Տե՛ս *Земское дело*, N19, 1915, էջ 1047:

17 Նույն տեղում:

18 Մեծ իշխանուհի Տատյանա Նիկոլաևնայի հովանավորությամբ գործող 1914 թ. սեպտեմբերին ստեղծված հասարակական կազմակերպություն, որը զբաղվում էր գաղթականության հարցերով:

19 Տե՛ս *Земское дело*, N19, 1915, էջ 1047:

Առաջին աշխարհամարտի հենց սկզբին պետական օժանդակությանը զուգընթաց Ռուսական կայսրության տարբեր հայաշատ քաղաքներում (Մոսկվա, Պետրոգրադ, Աստրախան և այլն) հայ համայնքների նախաձեռնությամբ ստեղծվեցին բազմաթիվ գաղթականական կոմիտեներ, միություններ՝ հայ գաղթականների համար օգնություն կազմակերպելու նպատակով, իսկ նախկինում գործող որոշ բարեգործական հաստատություններ (Հայկական բարեգործական ընդհանուր միություն, Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն, Կովկասի հայոց բարեգործական ընկերություն և այլն) վերակազմակերպեցին իրենց գործունեությունն այս ուղղությամբ և իրենց կազմում ստեղծեցին գաղթականական հարցերով զբաղվող կոմիտեներ: Այս բոլոր կազմակերպությունների և միությունների գործունեությունը հետագայում կարգավորվում էր օգոստոսի 30-ի օրենքով[20]:

Սակայն միայն հայկական կազմակերպություններն ի վիճակի չէին լուծել հազարավոր հայ գաղթականների խնդիրները, ուստի այս հարցով սկսեցին զբաղվել ռուսական միությունները և կազմակերպությունները: Դրանցից էր Համառուսաստանյան քաղաքների միությունը (ՀՔՄ), որն Առաջին աշխարհամարտի տարիներին մեծապես օժանդակեց հայ գաղթականների օգնության կազմակերպման գործին: Համառուսաստանյան քաղաքների միությունը հիմնադրվել է Ռուսաստանի՝ Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշվելու հենց առաջին օրերին: 1914 թ. օգոստոսի 8-9-ը Մոսկվայի նահանգային դումայի նախաձեռնությամբ կայացավ քաղաքագլուխների առաջին համառուսական համագումարը, որտեղ հիմնադրվեց Համառուսական քաղաքների միությունը[21]: Կարճ ժամանակ անց այն վերածվեց համառուսական խոշորագույն հասարակական կազմակերպության: Արդեն 1914 թ. օգոստոսին ՀՔՄ-ի մեջ ընդգրկված էր 140 քաղաք[22]: 1917 թ. Միության մեջ ընդգրկված էր Ռուսաստանի 790 քաղաքներից 640-ը: Սակայն Միության մեջ առաջնային տեղ ունեին ռուսական 75 խոշոր քաղաքները, որտեղ ապրում էր Ռուսաստանի ամբողջ քաղաքային բնակչության 70%-ը[23]: Միության գլխավոր առաքելությունն էր իրականացնել հասարակության բոլոր խավերի կազմակերպված օժանդակությունը թիկունքում և ռազմաճակատում: Հարկ է նշել, որ հենց ՀՔՄ-ի գործուն աշխատանքների շնորհիվ հնարավոր եղավ լուծել ռազմաճակատում բժշկական օգնության արդյունավետ կազմակերպման հարցը: Երկրորդ կարևոր խնդիրը, որով զբաղվում էր ՀՔՄ-ը, ռազմաճակատային գոտուց վիրավոր զինվորականների և ռազմական գործողությունների հետևանքով փախստական բնակչության էվակուացիայի կազմակերպումը, նրանց հետագա կեցության ապահովումն էր:

---

[20] Մանրամասն տե՛ս Հարությունյան Ա., Հայ գաղթականական կոմիտեների գործունեությունը Առաջին աշխարհամարտի տարիներին, *«Էջմիածին»*, պաշտօնական ամսագիր Հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, Յունիս-Յուլիս, 1994, էջ 111-123:

[21] Коробейников Ю. В., *Земская помощь в условиях Первой мировой войны в 1914-1917 гг. Всероссийские земский и городской союзы*, http://www.superinf.ru/view_helpstud.php?id=5468, (դիտվել է՝ 15.04.2014):

[22] Նույն տեղում:

[23] Տե՛ս Асташов А. Б., *Всероссийский союз городов. 1914-1918 гг.*, специальность 07.00.02, автореферат на соискание ученой степени кандидата исторических наук, Москва, 1994, էջ 12:

Առաջին աշխարհամարտի տարիներին ՀՔՄ-ը ռազմաճակատային գոտիներից էվակուացրեց գաղթականների շուրջ 30%-ը՝ մոտ 3.5 մլն մարդ: Միության գործունեության կարևորագույն ուղղություններից էր նաև թիկունքում համաճարակային հիվանդությունների դեմ համակարգված պայքարը[24]:

Բանակին առավել արդյունավետ օգնություն կազմակերպելու համար ՀՔՄ-ը 1915 թ. հուլիսի 10-ին միավորվեց ռուսական իրականության մեկ այլ խոշոր հասարակական կազմակերպության՝ Համառուսական զեմստվային միության հետ, ինչի արդյունքում ձևավորվեց նոր՝ միասնական կոմիտե՝ Զեմգոռ (Земгор կամ Комитет Всероссийских земского и городского союзов)[25], որի գլխավոր կոմիտե ընդգրկվեցին 4-ական անձ զեմստվոյական և քաղաքների միության կազմից[26]: 1916 թ. մարտի 16-20-ը Մոսկվայում Զեմգոռի նախաձեռնությամբ կայացավ պատերազմի ժամանակ տուժած երեխաների խնամքի կազմակերպման հարցերով համագումարը: Որոշվեց, որ զեմստվոյական և քաղաքային միությունները ստեղծելու են հատուկ մարմին, որը միավորելու էր անապաստան երեխաների խնամքով զբաղվող բոլոր հասարակական և ազգային կազմակերպությունների գործունեությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեծ թվով անապաստան երեխաներ գտնվում էին ռազմաճակատային գոտիներում, որոշվեց ռազմաճակատից երեխաների էվակուացիայի համար կազմակերպել բժշկական-սննդատու ջոկատներ, որոնց գործունեությունը կարգավորվում էր քաղաքային և զեմստվոյական միությունների գաղթականական բաժինների կողմից[27]:

Տարածքային մեծ արեալը և հարյուրավոր քաղաքների ընդգրկվածությունը հանգեցրին նրան, որ ՀՔՄ-ի կազմում ստեղծվեց 11 տարածքային մասնաճյուղ[28]: Դրանցից էր 1914 թ. նոյեմբերին հիմնադրված Կովկասյան քաղաքների միությունը, որը գործում էր ռուսական Կարմիր խաչի հովանու ներքո[29]: Իր գործունեության կարճ ժամանակահատվածում (1914-1917) այն դարձավ ՀՔՄ-ի գործող ամենահզոր տեղական կազմակերպությունը[30]: ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեի նախագահ նշանակվեց հայազգի նշանավոր հասարակական գործիչ Ալ. Խատիսովը (Խատիս-

---

24 Նույն տեղում, стр. 14:

25 Земгор – Զեմստվային (земский) և քաղաքային (городской) միությունների հապավում:

26 Տե՛ս Шевырин В.М., *Земский и гороской союзы (1914-1917)*, аналитический обзор, Москва, 2000, էջ 26-27, տե՛ս նաև՝ *Беженцы и выселенцы. Отдельные оттиски изъ N17 известіи Всероссійскаго Союза Городовъ*, Москва, 1915, էջ 18:

27 Коробейников Ю. В., *նշվ. աշխ.*:

28 Նույն տեղում:

29 Պատերազմում տուժած վիրավորներին օգնելու համար 1914 թ. սեպտեմբերին ստեղծվեց Կովկասյան քաղաքների միությունը: 1914 թ. նոյեմբերին Կովկասյան քաղաքների միության համագումարում որոշվեց Կովկասյան քաղաքների միությունն ընդգրկել Համառուսական քաղաքների միության կազմում՝ Կարմիր խաչի հովանու ներքո (տե՛ս *Краткій отчетъ о деятельности Кавказскаго отдела Всероссійкаго Союза Городовъ помощи больнымъ и раненымъ войнамъ съ момента возникновенія по 1-е февраля 1915 г.*, Выпускъ I, февраль 1915, Тифлисъ, 1915, էջ 11):

30 Коробейников Ю. В., *նշվ. աշխ.* :

յանը)[31]: Չնայած Կովկասյան կոմիտեն գործում էր ՀՔՄ-ի կազմում, այնուհանդերձ տեղական խնդիրների կարգավորման հարցում ուներ ներքին ինքնավարություն[32]: Քանի որ ՀՔՄ-ի գործունեության մեջ առաջնային աշխատանքային ուղղությունը բժշկական օգնություն ցուցաբերելն էր, միության կազմում մեծ թիվ էին կազմում բժիշկները, սանիտարները և գթության քույրերը[33]:

Գաղթականների թվի ավելացմանը զուգընթաց ՀՔՄ-ն սկսեց ակտիվորեն զբաղվել գաղթականական հարցերով: Միության Կովկասյան կոմիտեի՝ 1915 թ. (20 սեպտեմբեր-1 նոյեմբեր) հրատարակած տեղեկագրի համաձայն՝ արդեն 1915 թ. աշնանը Համառուսաստանյան քաղաքների միությունը սկսեց իր գործունեությունն ինչպես ռազմաճակատային գոտում՝ Վան, Իգդիր, Էրզրում, Բիթլիս, այնպես էլ օժանդակություն ցուցաբերեց մերձռազմաճակատային շրջաններում՝ Երևանի և Ելիզավետպոլի նահանգներում ապաստանած հայ գաղթականներին[34]: ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեի կազմում մեծ թիվ էին կազմում հայազգի գործիչները (Համո Օհանջանյան, Ռուբեն Տեր-Մինասյան, ապագա բոլշևիկներ՝ Ալեքսանդր Աթաբեկյան, Հմայակ Նազարեթյան, Դանդուրյան)[35]:

Հարկ է նշել, որ հայ գաղթականների մի մասը, ռուսական բանակի կողմից Արևմտյան Հայաստանի որոշ տարածքներ գրավվելուց հետո, վերադարձան իրենց նախկին բնակավայրերը[36]: ՀՔՄ-ի գործունեության տարածքն ընդգրկեց նաև Արևմտյան Հայաստանի՝ ռուսական բանակի գրաված հատվածը[37]:

Ռուսական բանակի կողմից Էրզրումը գրավվելուց հետո (1916 թ. փետրվար) տարածքում ակտիվորեն գործում էր Համառուսաստանյան քաղաքների միության գաղթականական բաժինը: Քաղաքների միության Էրզրումի բաժանմունքը գաղթականներին մատակարարում էր կենսական անհրաժեշտ պարագաներ, իսկ

---

[31] Խատիսյան Ալեքսանդր (1876-1945)- հասարակական-քաղաքական գործիչ, բժիշկ: 1910-1917 թթ.՝ Թիֆլիսի քաղաքապետ, 1914-17 թթ. Կովկասյան քաղաքների միության նախագահ: 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար, 1919 թ. ապրիլից 1920 թ. մայիսը՝ վարչապետ: 1920 թ. դեկտեմբերի 2-ին ստորագրել է Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելուց հետո՝ վտարանդի: 1922-23 թթ. Լոզանի կոնֆերանսում Ազգային պատվիրակության անդամ էր: Գրել է «Հայաստանի պատմության ծագումն ու զարգացումը» (1930) հուշագրությունը: (Տե՛ս «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 166):

[32] Տե՛ս Խատիսեան Ալ., *Քաղաքապետի մը յիշատակները*, Պէյրութ, 1991, էջ 239:

[33] Նույն տեղում, էջ 238:

[34] Մանրամասն տե՛ս *Краткіе сведенія о положеніи бѣженцевъ на Кавказе и оказанной имъ Союзомъ городовъ помощи за время съ 20-го сентября по 1-е ноября 1915 г., выпускъ II*, Тифлисъ, 1915, էջ 3-5:

[35] Խատիսեան Ալ., *նշվ. աշխ.*, էջ 238, 252-253:

[36] Տե՛ս *Бѣженцы и выселенцы. Отдельные оттиски изъ N17 извѣстіи Всероссійскаго Союза Городовъ*, Москва, 1915, էջ 83:

[37] Խատիսեան Ալ., *նշվ. աշխ.*, էջ 238:

Միության կենտրոնական գրասենյակը յուրաքանչյուր ամիս գաղթականներին հատկացնում էր 30-40 հազար ռուբլի[38]:

Կովկասյան կոմիտեի կազմում ընդգրկված քաղաքները գաղթականներին դրամական և պարենային օժանդակություն ցուցաբերելու համար կազմակերպում էին տարբեր բարեգործական միջոցառումներ, որոնց ընթացքում հանգանակված գումարը տրամադրվում էր հայ գաղթականներին[39]:

Դրամական նպաստի փոխարեն Էրզրումի որոշ բնակավայրերում՝ Մամախաթունում, Բաբերդում, Քղիում, Էրզրումում, գոյություն ունեին նաև ալյուրի մատակարարման կետեր, որտեղից օգնություն էին ստանում մոտ 2000 կարիքավոր գաղթականներ[40]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էրզրումի գաղթականության շրջանում մոլեգնում էին տարբեր համաճարակային հիվանդություններ՝[41] Քաղաքների միությունը բացեց 100 մահճակալով հիվանդանոց և ամբուլատորիա[42], որտեղ օրական հաճախում էին 20-30 հիվանդներ: Անդրադառնալով այս իրավիճակին՝ «Արև» օրաթերթը հաղորդում է. «Մուրադը Մուշից հեռագրում է Քաղ. Միութ. Կովկասեան բաժանմունքի լիազօրին, որ ամեն օր խմբով փախստականներ են գալիս, որոնց թւում կան հիւանդներ»[43]: Հարկ է նշել, որ Միության սանիտարական շրջիկ ջոկատի գործուն աշխատանքների շնորհիվ կասեցվեց խոլերայի համաճարակը Էրզրումում[44]:

1916 թ. նոյեմբերի վերջերին Միության Էրզրումի բաժանմունքի ջանքերով որբանոց բացվեց 9-16 տարեկանների համար, որտեղ ապաստան գտան մոտ 45 որբ[45]: Պետք է նշել, սակայն, որ Արևմտյան Հայաստանի մերձճակատային գոտիներում ստեղծված որբանոցներն ըստ էության ժամանակավոր գործող հաստատություններ էին, քանի որ այստեղ հավաքված որբերն աստիճանաբար տեղափոխվում էին ռազմաճակատից առավել հեռավոր և անվտանգ շրջաններ, մասնավորապես Կովկաս և հանձնվում հայանպաստ կազմակերպությունների խնամքի տակ գործող որբանոցների: Այսպես օրինակ, 1916 թ. հոկտեմբերի դրությամբ Բաբերդում գտնված փախստական կանայք և երեխաները տեղափոխվեցին Սարիղամիշ՝ ՀՔՄ-ի Կովկասյան բաժանմունքի լիազորի դիմումի հիման վրա[46]:

---

[38] Հարությունյան Ա., Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանում Մեծ եղեռնի տարիներին, *«Էջմիածին»*, պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, ապրիլ, 2002, էջ 84:

[39] Коробейников Ю. В., *նշվ.աշխ.*:

[40] Հարությունյան Ա., *Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանում Մեծ եղեռնի տարիներին…*, էջ 84:

[41] Տե՛ս *Армянскій Вестникъ*, N5, 1916, էջ 15:

[42] Նույն տեղում:

[43] «Արև», 29 հուլիսի, 1916թ., էջ 3

[44] Տե՛ս *Армянскій Вестникъ*, N12-13, 1916, էջ 37:

[45] Հարությունյան Ա., *Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանում Մեծ եղեռնի տարիներին…*, էջ 84:

[46] «Արև», 29 հուլիսի, 1916թ., էջ 3:

Ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքում որբահավաք աշխատանքներն ավելի արդյունավետ իրականացնելու համար Միություն ընդգրկվեցին նաև հայազգի աշխատակիցներ, որոնց պարտականությունների մեջ էր մտնում նաև հայտնաբերել անմարդաբնակ վայրերում՝ քարանձավներում, անտառներում, լքված, ավերակ տներում թաքնված անապաստան ու ծնողազուրկ երեխաների և նրանց հանձնել որբանոցների խնամքին:

Քաղաքների միության աշխատակից, երզնկացի Սողոմոն Թեհլիրյանը ռուսական զորքերի հետ 1916 թ. եկավ Էրզրում ՝ «որբեր հավաքողի» պաշտոնով[47]: Իր հուշերում, անդրադառնալով որբահավաք աշխատանքներին, Ս. Թեհլիրյանը գրում է. «Ապրիլին ռուսները գրաւեցին Տրապիզոնը, իսկ յուլիսի կէսերին՝ Երզնկան: Էրզրումի դաշտում ամէն տեղ յայտնւում էին ոսկրացած, վայրենական վիճակի մատնուած մանուկներ, որոնց մեծ մասը իր գոյութիւնն էր պահպանել աւերուած հայ գիւղերի փլատակներում: Ձեռք ընկնողները դողում էին աշնան տերեւի պէս. մեծ ջանք էր պէտք հասկացնելու, որ իրենց այլեւս վտանգ չի սպառնում: Մոռացել էին լեզու, հայութիւն, մարդկութիւն: Խնուսում դրանցից խմբուած էին շուրջ երկու հարիւր հոգի: Ամէն տեղ առաջնակարգ արժէք էր ստացել որբերի գործը. ամեն որբուկ մի նոր աղիւս էր ազգը վերակառուցելու համար»[48]:

Հավաքագրված նոր որբերի խմբերի համար Երզնկայում Կենտրոնական վարժարանի շենքը վերածվել էր որբանոց–հիվանդանոցի, որի վարիչն էր Քաղաքների միության Երզնկայի ներկայացուցիչ բժիշկ Արշակ Պողոսյանը: Նա խնամում էր իրեն հանձնված հիվանդ որբերին[49]:

1916 թ. մարտի դրությամբ ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեի աշխատակից Տիգրան Զորյանը հաղորդում է Միության ծավալած գործունեության մասին Արևմտյան Հայաստանի այն բնակավայրերում, որոնք օկուպացվել էին ռուսական զորքերի կողմից: ՀՔՄ-ի հայազգի աշխատակիցը «Армянский Вестникъ»-ին հաղորդում է, որ Բիթլիսի նահանգում հայերի թիվը 1916 թ. սկզբին հասնում էր 9000-ի, իսկ Խնուսում ապաստանած շուրջ 800 հայ գաղթականների մեծամասնությունը կանայք և որբեր են: Վերջիններիս անմխիթար վիճակը փոքր-ինչ թեթևացնելու համար Միությունը Խնուսում բացեց որբանոց, որտեղ ապաստան գտավ 40 հայ որբ[50]: Տարոնի հայկական կոտորածների ականատես Կարապետ Եղիազարյանը, իր հուշերում անդրադառնալով ՀՔՄ-ի գործունեությանը, գրում է. «Սայուզ-Գորոդովի կողմից, թե՛ Խնուսի բերդում, թե՛ անհրաժեշտ պահանջ զգացվող մի քանի գյուղերում հիմնվեցին բաժանմունքներ, որոնցից մեկը Տիգրան Զորյանի ղեկավարությամբ հիմնվեց Արոս գյուղում: Սայուզ-Գորոդովը, անցուդարձ կատարող զորքին և հայ գաղթականներին ժամանակավորապես տեղավորելու և սպասարկելու համար, Արոսում պատրաստել տվեց մարդկանց քնելատեղերը, գրաստների համար

---

47 Տե՛ս Սողոմոն Թէհլիրեան, *Վերյիշումներ (Թալեաթի ահաբեկումը)*, գրի առավ՝ Վահան Մինախորեան, Գահիրէ, 1953, էջ 75:

48 Նույն տեղում, էջ 88:

49 Նույն տեղում, էջ 90, 101:

50 Տե՛ս *Армянский Вестникъ*, N12-13, 1916, էջ 39-40:

ախոռները, հավաքվեց մեծ քանակությամբ խոտ ու վառելափայտ, գործում էին հացի փուռը, ճաշարանը, մթերային պահեստները, արհեստանոցը և խանութը»[51]:

ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեն 1915-17 թթ. ընթացքում գործուն աշխատանքներ իրականացրեց Վանում: ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեի տեղեկագրից պարզ է դառնում, որ արդեն 1915 թ. Վանում Միությունը բացել է հայ գաղթականների համար հիվանդանոց՝ 200 մահճակալով[52]:

1916թ. ապրիլին ՀՔՄ Ատրպատականի շրջանի լիազոր ներկայացուցիչ նշանակվեց ռուս նշանավոր բանաստեղծ, գրականագետ և հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկին[53], ով արդեն օգոստոսին գործուղվեց Վան[54]: Հայոց ցեղասպանության թանգարանի հավաքածուի մեջ առկա է Ս. Գորոդեցկուն ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեի կողմից տրված փաստաթուղթը, որտեղ նա լիազորվում է զբաղվել հայ գաղթականության հարցերով[55]:

Աշխատանքի բերումով նա ծանոթանում է ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեի Վանի լիազոր ներկայացուցիչ Արտավազդ Թումանյանի հետ, ում շնորհիվ սովորում է հայերեն: Իր յուրացրած լեզվական նոր գիտելիքները նա գործի է դնում Վանում իրականացրած որբահավաք աշխատանքների ժամանակ: 1916 թ. ամռանը Ս. Գորոդեցկու ջանքերով Վանում հավաքագրվում են հարյուրավոր հայ որբ երեխաներ: Նրա և ՀՔՄ-ի այլ աշխատակիցների ջանքերով հավաքագրված շուրջ 200 հայ որբ ապաստանում են Վանում գործող Միության որբանոցում: Այստեղ նրանք ստանում էին բժշկական օգնություն, տաք հագուստ և սնունդ[56], ապա տեղափոխվում Իգդիր, որտեղ գտնվում էր ՀՔՄ-ի ժամանակավոր գաղթակայանը[57]: Անդրադառնալով ՀՔՄ-ի իր գործունեության որբահավաք աշխատանքներին՝ Ս. Գորոդեցկին գրում է. «Պատկերացրեք, տառացիորեն հուր և արյան միջից հանել երեխաներին և ամեն ինչ կորցրած այդ կատարյալ որբուկների համար ստեղծել կյանքի տանելի պայմաններ, երբ շուրջը դժոխք ու մահ է»[58]:

---

[51] Եղիազարյան Կ., Տարոն-Սասուն, հուշեր-վկայություններ, անտիպ, ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բ. 8, տետր 6, այս մասին տե՛ս նաև *«Արև»*, 30 հուլիսի, 1916թ., էջ 3:

[52] Տե՛ս *Краткий отчетъ о деятельности Кавказскаго отдела Всероссійкаго Союза Городовъ помощи больнымъ и раненымъ войнамъ съ момента возникновенія по 1-е февраля 1915 г.*, Выпускъ I, февраль 1915, Тифлисъ, 1915, էջ 3:

[53] Սերգեյ Գորոդեցկի (1894-1967) – ռուս գրող, հրապարակախոս, թարգմանիչ, հասարակական գործիչ, Հայոց ցեղասպանության ականատես: Հանդես է եկել հայկական կոտորածները դատապարտող հրապարակախոսական մի շարք հոդվածներով և գրել բանաստեղծություններ՝ նվիրված Հայաստանին և հայ ժողովրդին:

[54] Զաքարյան Ա., Վանը Ս. Գորոդեցկու կյանքում և ստեղծագործության մեջ, *«Պատմաբանասիրական հանդես»*, №3 (37), 2012, էջ 35:

[55] ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բ. 21, ֆ.հ. 125:

[56] Տե՛ս *Краткий отчетъ о деятельности Кавказскаго отдела Всероссійкаго Союза Городовъ помощи больнымъ и раненымъ войнамъ съ момента возникновенія по 1-е февраля 1915 г.* Выпускъ I, февраль 1915, Тифлисъ, 1915, էջ 4:

[57] Զաքարյան Ա., *Վանը Ս. Գորոդեցկու կյանքում և ստեղծագործության մեջ…*, էջ 36:

[58] Նույն տեղում, էջ 37:

Ընդհանուր առմամբ 1916 թ. աշնանը Վանից գաղթեցին շուրջ 16.000 գաղթականներ: Երևանի նահանգի գաղթականության լիազոր Գ.Եվանդուլովին հղած իր հեռագրում ՀՔՄ-ի Վանի լիազոր Ս. Գորոդեցկին հայտնում էր. «Դիմավորեք գաղթականներին բոլոր կետերում…» և միաժամանակ անհրաժեշտ էր համարում համապատասխան միջոցներ ձեռք առնելու Նախիջևանի, Սուրմալուի և Երևանի նահանգի այլ գավառներում սննդատու կայանների աշխատանքն ապահովելու համար[59]:

Ռուսական զորքերի նահանջով ուղեկցվող Վանի հայ ազգաբնակչության գաղթի ժամանակ ՀՔՄ-ն իրականացրեց համակարգված աշխատանքներ: Այս կապակցությամբ Վան-Ջուլֆա և Վան–Իգդիր ուղղությամբ գաղթականների հոսքը կարգավորելու, նրանց շարքերում համաճարակային հիվանդությունների դեմ պայքարելու և սննդով ապահովելու համար ստեղծվեցին Միության սննդատու կայաններ: Իր գործունեությունը Միությունը կարգավորում էր՝ ռուսական ռազմական իշխանությունների հետ փոխհամաձայնեցնելով[60]:

Ռուսական զորքերի կողմից Տրապիզոնի գրավումից հետո՝ 1916 թ., ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեն սկսում է կազմակերպել թուրքական կոտորածներից և տեղահանությունից փրկված սակավաթիվ տրապիզոնահայերի օգնությունը սննդով և հագուստով, ինչպես նաև Միության գլխավոր բժշկի պաշտոնակատար Համո Օհանջանյանի կարգադրությամբ ՀՔՄ-ի Տրապիզոնի լիազոր ներկայացուցիչ Աղամալյանի գլխավորությամբ կազմակերպվում է թռուցիկ ջոկատ՝ տեղացի հայ փախստականներին Դերսիմ և Տրապիզոն տեղափոխելու համար[61]:

Բացի ռազմաճակատային գոտիներում գտնվող հայ գաղթականներին լայն օժանդակություն ցույց տալուց, Համառուսական քաղաքների միությունը նաև աջակցեց Երևանի և Ելիզավետպոլի նահանգներում ապաստանած սոցիալ-տնտեսական, սանիտարական վատթար պայմաններում գտնվող բազմաթիվ հայ գաղթականների: Միության միջոցներով այս նահանգների որոշ բնակավայրերում բացվեցին ոչ միայն սննդատու կայաններ, բուժկետեր և հիվանդանոցներ, այլև տեղերում համաճարակային հիվանդությունները կանխելու համար կառուցվեցին հասարակական բաղնիքներ, կազմվեցին դեզինֆեկցիոն ջոկատներ[62]:

Ըստ էության, ռուսական իրականության մեջ ձևավորված Համառուսական քաղաքների միությունն Առաջին աշխարհամարտի տարիներին իր հումանիտար առաքելությունն ուղղորդեց նաև հօգուտ երիտթուրքական իշխանությունների ցեղասպան քաղաքականության զոհ հայ գաղթականների և որբերի: ՀՔՄ-ն իր

---

59 Տե՛ս Հարությունյան Ա,. Վան-Վասպուրականի բնակչության և պարսկահայերի 1916 թ. գաղթերի պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1(167), 1995, էջ 175:

60 Տե՛ս *Краткій отчетъ о деятельности Кавказкаго отдела Всероссійкаго Союза Городовъ помощи больнымъ и раненымъ войнамъ…*, էջ 3:

61 *«Արև»*, 3 օգոստոսի, 1916թ., էջ 3:

62 Մանրամասն տես՛ *Краткій отчетъ о деятельности Кавказскаго отдела Всероссійкаго Союза Городовъ помощи больнымъ и раненымъ войнамъ съ момента возникновенія по 1-е февраля 1915 г.* Выпускъ I, февраль 1915, Тифлисъ, 1915, էջ 4-7:

հայանպաստ աշխատանքներն իրականացրեց Կովկասում, մասնավորապես Երևանի և Ելիզավետպոլի նահանգներում, Կարսի մարզում (Իգդիր, Սուրմալու) և Արևմտյան Հայաստանում՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի նահանգներում, հատկապես 1915-16թթ. ընթացքում:

Այսպիսով, իր գոյության կարճ ժամանակահատվածում՝ 1914-1919 թթ., հումանիտար ոլորտում իրականացրած գործունեության հաջողությունները միության անդամներին հնարավորություն տվեցին պետական նշանակություն ունեցող հարցերը լուծելու հասարակության լայն զանգվածների ընդգրկվածության շնորհիվ: ՀՔՄ-ն Առաջին աշխարհամարտի տարիներին հայ գաղթականներին մեծ օժանդակություն հատկացրեց ինչպես Ռուսական կայսրության տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ ռուսական զորքերի կողմից գրավված թուրքական հատվածում: Միության գործուն աշխատանքների շնորհիվ հայ գաղթականներն ապահովվեցին պարենով, հագուստով, ստացան անհրաժեշտ բուժօգնություն, կազմակերպվեց նրանց էվակուացիան ռազմաճակատային գոտուց: ՀՔՄ-ը հայ գաղթականներին օժանդակելու գործում համագործակցում էր ինչպես հայկական բարեգործական կազմակերպությունների, այնպես էլ ռուսական Կարմիր խաչի, Տատյանայի կոմիտեի, Զեմստվային միության և նմանատիպ այլ կազմակերպությունների հետ:

ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՈՐԲԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Գոհար Խանումյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց ցեղասպանության տարիներին Համառուսաստանյան քաղաքների միությունը՝ ռուսական հասարակական կազմակերպությունը, մեծ աջակցություն ցուցաբերեց հայ գաղթականներին ոչ միայն Ռուսական կայսրության սահմաններում, այլև Արևմտյան Հայաստանի՝ ռուսական զորքերի կողմից գրավված տարածքներում, որտեղ բացվեցին սննդատու կայաններ, որբանոցներ, հիվանդանոցներ: Միության Կովկասյան կոմիտեի անդամները, որոնց շարքերում մեծ թվով հայեր կային, 1916-17 թթ. հավաքագրեցին հարյուրավոր անօթևան որբեր՝ Վանում (Ս. Գորոդեցկի), Երզնկայում (Ս. Թեհլիրյան, Ա. Պողոսյան), Բիթլիսում (Տ. Զորյան), Տրապիզոնում (Հ. Օհանջանյան):

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Համառուսաստանյան քաղաքների միություն, գաղթականներ, որբեր, որբանոցներ, Արևմտյան Հայաստան, Առաջին համաշխարհային պատերազմ:

ASSISNANCE OF PAN-RUSSIAN UNION OF CITIES TO ARMENIAN REFUGEES AND ORPHANS DURING WWI

Gohar Khanumyan

SUMMARY

Public organization of Pan-Russian Union of Cities (PRUC) greatly assisted Armenian refugees during the Armenian Genocide both in the territory of Russian Empire and Western Armenian territories occupied by Russian troops. PRUC organized feeding centeres, orphanages and hospitals. During the years of 1916-1917 the members of PRUC Caucasus Committee, which incorporates many Armenians, gathered hundreds of homeless orphans in Van (S. Gorodetsky), Erzidjan (S. Tehlirian, A. Poghosian), Bitlis (T. Zorian) and Trebizond (H. Ohanjanian).

Key words: Armenian Genocide, Pan- Russian Union of Cities, refugees, orphans, orphanages, Western Armenia, WWI

ПОМОЩЬ ВСЕРОССИЙСКОГО СОЮЗА ГОРОДОВ АРМЯНСКИМ БЕЖЕНЦАМ И СИРОТАМ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Гоар Ханумян

РЕЗЮМЕ

Российская общественная организация Всероссийский союз городов (ВСГ) в годы геноцида оказала огромную помощь армянским беженцам не только на территории Российской империи, но и на занятой русскими войсками территории Западной Армении, где были организованы пункты питания, сиротские приюты, больницы. Сотрудники Кавказкого Комитета ВСГ (среди которых было много армян) в 1916-1917 гг. собрали сотни беспризорных осиротевших детей в Ване (С. Городецкий), в Эрзинджане (С. Тейлирян, А. Погосян), в Битлисе (Т. Зорян), в Трапезунде (А. Оганджанян).

Ключевые слова: Геноцид армян, Всероссийский союз городов, беженцы, сироты, сиротские птиюты, Западная Армения, Первая мировая война

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՐԶՆԿԱՅՈՒՄ (1916 Թ. ՀՈՒԼԻՍ - 1917 Թ. ՎԵՐՋ)

Ռոբերտ Թաթոյան

Հայոց ցեղասպանությունը վերապրածներին և փախստականներին օգնության կազմակերպումն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, այդ ուղղությամբ Արևմտյան Հայաստանի տարածքում համառուսաստանյան և Ռուսաստանում գործող հայկական բարեգործական կազմակերպությունների նպաստամատույց գործունեությունը դեռևս համեմատաբար քիչ ուսումնասիրված հարցերից են[1]: Հոդվածի շրջանակներում մենք կփորձենք դեռևս չհրատարակված արխիվային փաստաթղթերի, դեպքերին ժամանակակից մամուլի հրապարակումների, գործիչների հուշերի հիման վրա ներկայացնել նպաստամատույց աշխատանքները Երզնկայում և գավառում 1916 թ. հուլիսից 1917 թ. վերջն ընկած ժամանակահատվածում, երբ տվյալ տարածքը գտնվում էր ռուսական բանակի, իսկ այնուհետև՝ հայկական ուժերի վերահսկողության տակ:

Կովկասյան ճակատում ռուսական բանակի յուրաքանչյուր առաջխաղացմանն անմիջապես հաջորդում էր համառուսաստանյան և Ռուսաստանում գործող հայկական բարեգործական կազմակերպությունների մուտքը զբաղեցրած տարածք: 1916-1917 թթ. Արևմտյան Հայաստանում գործունեություն էին ծավալում մի շարք մարմիններ, որոնցից պետք է հիշատակել Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, Եղբայրական օգնության կոմիտեն, Մոսկվայի հայկական կոմիտեն, Քաղաքների միությունը, Գաղթականական կենտրոնական կոմիտեն, զանազան հայրենակցական միություններ:

Կարելի է առանձնացնել հետևյալ երեք հիմնական խնդիրները, որոնք ծառացել էին Արևմտյան Հայաստանում նպաստամատույց կազմակերպությունների ու մարմինների առջև.

1. կազմակերպել հայահավաք՝ որոնել և ազատագրել թուրքական հարեմներում ու քրդերի մոտ պահվող՝ ցեղասպանությունը վերապրած հայ կանանց ու որբերին,
2. կազմակերպել վերապրածների խնամքը՝ ապահովելով նրանց սննդով և բուժօգնությամբ,
3. նպաստել հայ գաղթականների՝ դեպի իրենց նախկին բնակության վայրեր վերադարձին և նրանց կենցաղի և տնտեսությունների վերականգնմանը:

---

[1] Էրզրումի նահանգի հայ գաղթականության խնդիրներով զբաղվել է ուսումնասիրող Ավետիս Հարությունյանը (տե՛ս Հարությունյան Ա.Հ., Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանում Մեծ եղեռնի տարիներին, *«Էջմիածին»*, ապրիլ 2002, էջ 81-91):

Վերոնշյալ երեք ուղղություններով աշխատանք ծավալվեց նաև Էրզրումի նահանգի Երզնկա քաղաքում և շրջանում:

Ռուսական բանակը մտավ Երզնկա 1916 թ. հուլիսի 11 (24)-ին: Քիչ անց ռազմաճակատը կայունացավ Սև ծովից՝ Քելքիտ-Երզնկա-Բիթլիս-Մուշ-Վան գծի վրա՝ անցնելով քաղաքից 70-100 կմ դեպի արևմուտք ընկած բարձունքների վրայով:

Ռուսական զորքերի կողմից Երզնկայի գրավումից հետո սկսեցին քաղաք վերադառնալ ցեղասպանությունից մազապուրծ հայերը, որոնց հաջողվել էր թաքնվել սահմանամերձ Դերսիմի գավառում: «*Կարծես գերեզման կ'ելլէին անոնք,* – գրում է իր հուշերում դեպքերին ականատես երզնկացի Խորեն Շամախյանը, – *բոլորն ալ մերկ, անօթի ու արգահատելի վիճակի մէջ*»[2]: Ըստ «Երզնկացիների միության» տեղեկագրի (այդ կառույցի մասին մենք կխոսենք հաջորդիվ)՝ 1917 թ. հունվարի դրությամբ «*թագպտոցներէն եւ մեծաւ մասամբ սահմանակից Տէրսիմեն ազատուած եւ վերադարձած*» էին շուրջ 600-750 ծնունդով երզնկացի հայ, այդ թվում քաղաքից՝ 100-150, գյուղերից՝ 500-600 հոգի[3]:

Երզնկայի գրավումից անմիջապես հետո հայահավաքի առաքելությամբ քաղաքում հաստատվեց ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչ Սեբաստացի Մուրադը: Այնտեղ նա ձևավորեց «անձնվեր, փորձված, ամեն զոհողության պատրաստ» երիտասարդներից կազմված մի խումբ, որին վստահվեց թուրքական ու քրդական գերության մեջ գտնվող հայերի ազատագրման գործը: Խմբի անդամ էր նաև Սողոմոն Թեհլիրյանը, ծնունդով Երզնկայից: Շրջանառության մեջ դրվեց հայտնի «մեկ հայ, մեկ ոսկի» ծրագիրը, որով Մուրադը ստանձնեց մեկ օսմանյան ոսկեդրամ վճարել յուրաքանչյուր փրկված ու Երզնկա տեղափոխված հայի համար: Ծրագրի իրականացման նպատակով հարաբերություններ հաստատվեցին Դերսիմի քուրդ աղաների հետ, որոնց միջոցով Սեբաստիայից, Խարբերդից, Քեմախից, Արաբկիրից, Չմշկածագից, Խոզաթից և այլ շրջաններից բազմաթիվ հայեր բերվեցին Երզնկա:

Ձեռնարկվեց նաև թուրքական հարեմների մեջ պահվող հայ կանանց ու երեխաների ազատագրման գործը: Այդ նպատակով հայ գործիչները, ըստ ժամանակակիցներից մեկի հուշերի, ստիպված էին դիմել «խորամանկ» ու «հանդուգն»

---

[2] Սիւրմէնեան Գալուստ, *Երզնկա*, Գահիրէ, տպարան Սահակ-Մեսրոպ, 1947, էջ 408:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.166, թ.23: Համեմատության համար, համաձայն Հայոց պատրիարքարանի՝ 1913-14 թթ. մարդահամարի տվյալների, գավառակն ունեցել է 38 հայաբնակ բնակավայր՝ 25,795 շունչ հայ բնակչությամբ, այդ թվում՝ Երզնկա քաղաք՝ 2,021 տուն, 13,109 շունչ հայ (տե՛ս Kevorkian Raymond H., Paboudjian Paul B., *Les Armeniens Dans l'Empire Ottoman a La Veille Du Genocide*, Editions d'Art et d'Histoire, ARHIS, Paris, 1992, էջ 59):
Համաձայն Կ.Պոլսում գործող «Եկեղեցաց վերաշինութեան միութիւն» երզնկացիների հայրենակցական կազմակերպության՝ 1919 թ. օգոստոսի 6-ին կազմած տեղեկագրի տվյալների՝ Երզնկայի գավառակում Մեծ եղեռնի նախօրյակին բնակվում էր 35,000 հայ, որից ցեղասպանությունը վերապրել էր 11,350 հոգի (ներառյալ նախքան Առաջին աշխարհամարտը Կ. Պոլիս և արտասահման՝ ԱՄՆ, Ռուսաստան և այլ երկրներ, տեղափոխվածները), այդ թվում՝ Պոլիս՝ 2,000, ԱՄՆ և Ամերիկա մայրցամաք՝ 2,000, Ռուսաստան և Պարսկաստան՝ 2,000, Եվրոպա՝ 1,000, Բալկանյան երկրներ՝ 1,000, Եգիպտոս և Ալժիր՝ 500, Անատոլիայի տարբեր գավառներում ցրվածներ՝ 1,000, իսլամացածներ՝ 1,500, որբեր՝ 500, «ներկայիս Երզնկա գաղթողներ»՝ 250, Անտանտի բանակում ծառայող կամավորներ՝ 350 (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1388, ց. 1, գ. 1, թ. 18):

քայլերի, քանի որ «Թուրքերը իրենց մօտ գտնուած հայերը կը թաքցնէին խիստ զգուշութեամբ, ռուսներն ալ հայերու ազատ գործունէութեան առիթ չէին տար»[4]: Մասնավորապես հայահավաք խմբի կին անդամները[5]՝ որպես մանր կտորեղեն վաճառողներ, մտնում էին թուրքերի տները, զրույցի բռնվում, կաշառում էին թուրք կանանց, իմանում հարեմների մեջ պահվող հայերի տեղերը և լուր տալիս Մուրադին, որն այնուհետև իր խմբով մտնում էր այդ տներն ու ազատագրում այնտեղ պահվող հայ կանանց և երեխաներին[6]:

Մեծ եղեռնը վերապրածների ազատագրման հարցում Մուրադի խումբը գործում էր Մոսկվայի հայկական կոմիտեի հետ սերտ համագործակցությամբ: Երզնկայում կառույցի ներկայացուցիչ բժիշկ Արշակ Պողոսյանի (նա Մուրադի գործընկերներից էր) խնամքին էին հանձնվում ազատագրված որբերն ու հիվանդները[7]:

Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել մի քանի վիճակագրական տվյալներ: Համաձայն Մոսկվայի հայկական կոմիտեի հաշվետվության տվյալների՝ առ 1916թ. հոկտեմբերի 1-ը որոնվել և ազատագրվել էր 4,671 հայ, այդ թվում՝ 4-12 տարեկան 450 որբ: 1917 թ. մարտի դրությամբ միայն Երզնկայի թուրքական տներից ազատագրվել էր շուրջ 200 որբ[8]: Ազատագրված հայերից 1,475-ը (հիմնականում չափահաս տղամարդիկ) ժամանակավորապես բնակեցվել են Երզնկայի շրջակա գյուղերում՝ ցորենի բերքի հավաքման համար, մնացածները տեղափոխվել են Դերջանի և Էրզրումի շրջաններ: Հետագայում ևս նպաստամատույց կազմակերպությունները ձգտում էին ազատագրված հայ վերապրածներին տեղափոխել թիկունք՝ Էրզրում, որտեղ նրանց խնամքի կազմակերպման համար ենթակառույցներն ավելի զարգացած էին[9]: Ազատագրված հայերի ցուցակները պարբերաբար տպագրվում էին հայկական մամուլում, մասնավորապես «Հորիզոն» թերթում և «Արմյանսկի վեստնիկ» շաբաթաթերթում. նույն թերթերի միջոցով կազմակերպվում է հատուկ անժամկետ դրամահավաք «Հայերի ազատության» ֆոնդի համար: 1917թ. նոյեմբերի 20-ի դրությամբ «Արմյանսկի վեստնիկ»-ի խմբագրության միջոցով տվյալ ֆոնդ փոխանցված դրամական նվիրատվությունների չափը կազմում էր 51,989 ռուբլի[10]: Համեմատության համար նշենք, որ հայի փրկագին թուրքական ոսկեդրամը (1 մեջիդիե կամ

---

4 Սիւրմէնեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 409:

5 Աղբյուրում նշվում են տիկին Զարուհու, Սրբուհի Չուգուրյանի և Գեղեցիկ Խանջյանի անունները:

6 Նույն տեղում:

7 Նույն տեղում, էջ 411:

8 Տե՛ս *«Армянскій вѣстникъ»*, 16 апрѣля 1917, №15, էջ 7: «Ինչ վերաբերվում է կանանց, ապա նրանց մեծ մասը կամավոր մնում է թուրքերի մոտ՝ կարծելով, որ եթե նրանք խայտառակված վերադառնան իրենց հայրենակիցների մոտ, ապա չեն վայելի նախկին պատիվն ու հարգանքը» (*նույն տեղում*):

9 Հետագայում՝ 1918 թ. փետրվար-ապրիլ ամիսների թուրքական առաջխաղացման ժամանակ, Մոսկվայի հայկական կոմիտեն Երզնկայից, Էրզրումից, Մամախաթունից և Բաբերդից հավաքել և տարհանել է 520 որբերի, որոնք տեղավորվել են Ալեքսանդրապոլի և Ձալալօղլուի (Ստեփանավան) որբանոցներում (տե՛ս ՀԱԱ, ֆ.239, ց. 1, գ. 13, թ. 13):

10 Տե՛ս *«Армянскій вѣстникъ»*, 26 ноября 1917, №45-47, էջ 15:

5 օսմանյան լիրա) 1916 թ. համարժեք էր 17-18 ռուսական ռուբլու, 1917 թ. կեսերին (ռուսական դրամի արժեզրկման պատճառով)՝ 35 ռուբլու:

Նշենք, որ Երզնկայում ռուսական զինվորական իշխանությունների հարուցած արհեստական խոչընդոտների պատճառով կանանց ու որբերի ազատագրման գործընթացը դանդաղ էր ընթանում: Դա էր պատճառը, որ անգամ 1917 թ. ապրիլին, այսինքն՝ Երզնկայի գրավումից ութ ամիս անց, դեռևս հաղորդվում է քաղաքի թուրքական տներից թվով 25 ազատագրվածների մասին: 1917 թ. հունիսի դրությամբ Դերսիմի միջոցով Երզնկա տեղափոխվածների, «մեկ հայ, մեկ ոսկի» ծրագրի շրջանակներում փրկվածների և թուրքական տներից ազատագրվածների ընդհանուր թիվը կազմում էր շուրջ 7,000 հոգի[11]:

Նպաստամատույց կառույցներից Երզնկայում ծավալած իր գործունեությամբ հատկապես աչքի էր ընկնում Մոսկվայի հայկական կոմիտեն: Արդեն քաղաքի գրավումից շուրջ 15 օր անց՝ 1916 թ. հուլիսի վերջին, Կոմիտեն այնտեղ է գործուղում բժշկական շարժական խումբ, որը ստանձնում է վերապրածներին բժշկական օգնության ցուցաբերման գործը[12]: Խումբը տեղում իրավիճակի ուսումնասիրությունից հետո անհրաժեշտ է համարում ընդլայնել իր գործունեությունը՝ վերապրած հայերի բոլոր կարիքները հոգալու համար:

Մոսկվայի հայկական կոմիտեն Երզնկայում իրականացնում էր գործունեություն հետևյալ ուղղություններով.

1. վերապրածների որոնում և ազատագրում՝ նրանց հետագա տեղափոխմամբ ու տեղավորմամբ: Ինչպես արդեն նշել էինք, այս ուղղությամբ աշխատանքներն իրականացվում էին Սեբաստացի Մուրադի խմբի հետ համատեղ,
2. հայաբնակ գյուղերում օգնության կազմակերպում, որը ներառում էր.
    ա. գյուղատնտեսական օգնության հատկացում,
    բ. օգնություն սննդով,
    գ. սերմացուի հատկացում,
3. բժշկական-սանիտարական օգնություն (հիվանդանոցի բացում, ամբուլատոր ծառայություններ, բաղնիքի գործարկում),
4. օգնություն սննդով. ներառում էր.
    ա. սննդի կետ, որն ընդունակ էր օրական սպասարկելու մինչև 1,200 փախստական,
    բ. թեյարան[13],
5. օգնություն հագուստով և կոշիկով,
6. ժամանակավոր վերաբաշխիչ որբանոց. այստեղ հավաքվող որբերը տեղափոխվում էին Էրզրում, իսկ այնուհետև՝ Արևելյան Հայաստան և Կովկաս,

---

[11] Տե՛ս *«Армянскій вѣстникъ»*, 25 іюня 1917, №25, էջ 10-11:

[12] Ըստ որոշ տեղեկությունների՝ 1917 թ. հունվարի դրությամբ Մոսկվայի հայկական կոմիտեն մնում էր Երզնկայի շրջանում գործող միակ նպաստամատույց կազմակերպությունը (տե՛ս *Տեղեկագիր Երզնկայի*, ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.166, թ.23):

[13] Առ 1916 թ. սեպտեմբերի 29-ը ունեցել է 48,000 այցելություն:

7. վերապրածներին և փախստականներին ցուցաբերվում էր նաև իրավաբանական օգնություն[14]:

1917 թ. մարտի 1-ի դրությամբ Երզնկան սպասարկում էր Կոմիտեի հինգերորդ բժշկական-սննդատու ջոկատը: Կոմիտեի միջոցներով Երզնկայում գործում էին վերապրած հայերին սպասարկող հետևյալ հաստատությունները.

1. հիվանդանոց՝ 25 մահճակալ,
2. ամբուլատորիա՝ նախատեսված օրական 100-150 մարդ ընդունելու համար,
3. ժամանակավոր վերաբաշխիչ որբանոց՝ 100 երեխայի համար (1917թ. մարտի 1-ի դրությամբ այնտեղ պահվում էր 98 երեխա),
4. սպիտակեղենի և հագուստի կարի արհեստանոց,
5. ջուլհականոց,
6. սայլերի և գյուղատնտեսական գործիքների պատրաստման արհեստանոց,
7. կաշվի մշակման արհեստանոց,
8. բաղնիք[15],
9. եկեղեցի,
10. որբերի համար նախատեսված դպրոց, որն ուներ 95 աշակերտ[16]:

1917 թ. փետրվարին Երզնկա է մուտք գործում նաև Արևմտյան Հայաստանում սպաստամատույց գործունեություն իրականացնող մեկ այլ կազմակերպություն՝ Քաղաքների համառուսաստանյան միությունը (Всероссийский Союз Городов), որն այնտեղ բացում է փախստականներին օրական մինչև 700 բաժին ճաշ հատկացնելու կարողությամբ օժտված սննդային կետ: Քաղաքների միության մեկ այլ ծրագրով նախատեսվում էր գյուղացիներին սերմացուի բաժանում[17]:

Երզնկայում և երզնկացիների օգնության ուղղությամբ աշխույժ գործունեություն ծավալած մյուս կառույցը երզնկացիների հայրենակցական միությունն էր: 1916 թ. հոկտեմբերի 10-ին թվով երեսուն երզնկացիներ Թիֆլիսում անցկացնում են ժողով և հիմնադրում «Երզնկացիների միությունը», որի նպատակն է հռչակվում օգնել Մեծ եղեռնը վերապրած երզնկացիներին թե՛ բուն հայրենիքում՝ Երզնկայի գավառում և թե՛ հայրենիքից դուրս («ղեկավարելու օգնության գործը Թիֆլիսում, Թիֆլիսից դուրս և արտասահմանում գտնված համակիրներու մեջ»)[18]: Հետաքրքիր

---

[14] Տե՛ս *«Армянскій вѣстникъ»*, 22 января 1917, №4, էջ 17:

[15] Դրա համար վերագործարկվել էր նախկին հայկական բաղնիքի շենքը (ինչպես նշվում է 1916 թ. վերջին Երզնկացիների միության պատրաստած տեղեկագրում. «*Երզնկայի գրաւման առաջին օրերը ...չնորհիւ Մոսկուայի Հայկական Կոմիտէտի ջանքերուն ճշտուած է անոր (բաղնիքի – Ռ.Ա.) ազգապատկան հանգամանքը: Աւերուած ջրի ճամբաները վերանորոգելէ եւ հարկ եղած ծառայողները ճարելէ վերջ նոյն Կոմիտեյը դրամադրելի ըլրած է բաղնիքը թէ զինուորականներու եւ թէ ընդհանուր գաղթականներու պէտքին*» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 166, թ. 25)):

[16] Տե՛ս *«Армянскій вѣстникъ»*, 7 мая 1917, №18, էջ 16:

[17] Տե՛ս *«Армянскій вѣстникъ»*, 12 марта 1917, №10-11, էջ 26:

[18] Տե՛ս ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.166, թ.19:

փաստ. հիմնադիր ժողովի արձանագրության տակ, ի թիվս այլոց, կա նաև Սողոմոն Թեհլիրյանի ստորագրությունը: Ժողովն ընտրում է հինգ հոգուց բաղկացած վարչություն («մասնաժողով»), որի անդամներն էին Սեպուհ Խանջյանը (Խանճեան)[19], Արամ Եանզյանը, Խաչիկ Թաթիկյանը, Համբարձում Մարտիկյանը և Ազատ Մանուկյանը: Միության վարչությունը 1916 թ. հոկտեմբերի 24-ին կայացած իր նիստի ընթացքում կազմում է գործադիր մարմին (նախագահ՝ Սեպուհ Խանջյան, քարտուղար՝ Ազատ Մանուկյան, գանձապահ՝ Խաչիկ Թաթիկյան): Միությունը նաև որոշում է կայացնում դիմել Ռուսաստանում գործող խոշոր հայկական նպաստամատույց կազմակերպություններից մեկի՝ Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը (կից կառույց՝ Պատերազմից վնասվածներին օգնող հայկական կենտրոնական կոմիտե) նորաստեղծ կազմակերպությունն իր հովանու տակ վերցնելու խնդրանքով: Կովկասի հայոց բարեգործական ընկերությունն ընդառաջում է Երզնկացիների միության խնդրանքին[20]:

[19] Սեպուհ Խանջյանը եղել է Երզնկայի ականավոր մտավորականներից, նկատելի դեր է կատարել Երզնկայի մշակութային կյանքում, Երզնկյան դպրոցին կից հիմնադրված գրադարանի հարստացման, դասախոսությունների կազմակերպման գործում: Որպես հմուտ մասնագետ՝ 1911 թ. պաշտոնի է հրավիրվել Վան, որտեղ ապրել է մինչև Առաջին աշխարհամարտի սկսվելը: Վանի մեծ նահանջից հետո ընտանիքով տեղափոխվել է Թիֆլիս, ապա եկել Խորհրդային Հայաստան, վարել տարբեր պաշտոններ: Սեպուհ Խանջյանը Նոր Երզնկա ավանի հիմնադիրներից է (տե՛ս Ստեփանյան Գ., *Երզնկա*, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2005, էջ 570):

[20] Պատերազմից վնասվածներին օգնող հայկական կենտրոնական կոմիտեն ստեղծվել է Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը կից 1914 թ. նոյեմբերի 22-ին: Կառույցի նպատակն էր հայ փախստականներին և Մեծ եղեռնը վերապրածներին օգնության կազմակերպումը:



Պատկեր 1-2. «Երզնկացիներու միութեան» հիմնադիր փաստաթուղթը, ստորագրողների թվում է նաև Սողոմոն Թեհլիրյանը (ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ. 166, թ. 19)

Երզնկացիների միության վարչությունը պատրաստում է հայությանն ուղղված կոչ, որը հրապարակվում է «Մշակ» (1916 թ. հոկտեմբերի 30) և «Հորիզոն» (նոյեմբերի 4) թերթերում: Միության ստեղծման հիմնական նպատակը *(«օգնութեան փութալ թշուառութեան մատնուած երզնկացիներուն, հայրենիքին մէջ թէ հայրենիքեն դուրս»)* ներկայացնելուց հետո կառույցը կոչ էր անում *«բոլոր անոնց, որոնց մէջ կայծ մը կայ դեռ պլպլացող եւ սիրտ մը տրոփող հայրենիքի սիրով, որ փութան իրենց բաժին օգնութիւնը բերել, համոզուած ըլլալով, որ տրուած ամէն մի կոպեկ պիտի սրբէ արտասուք մը եւ վերապրեցնէ մահամերձ կեանք մը»*[21]:

Միությունը նաև պատրաստակամություն էր հայտնում *«իր պայմաններուն ներած չափով, գոհացնել բոլոր պանդուխտ հայրենակիցներուն դիմումները, տալով անոնց ամէն մի հարկաւոր տեղեկութիւն»*[22]:

Երզնկացիների միության հաջորդ կարևոր քայլերից մեկն է դառնում Երզնկայում տիրող կացության վերաբերյալ տեղեկագրի կազմումը, որը 1917 թ. հունվարին

[21] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 166, թ. 20:

[22] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 166, թ. 20

ուղարկվում է Կովկասում գործող բոլոր հայկական նպաստամատույց կառույցներին:

Տեղեկագիրն ուշագրավ և շատ դեպքերում բացառիկ տեղեկություններ է պարունակում Երզնկայի հայերի նյութական կորուստների մասին: Այսպես, համաձայն տեղեկագրի, քաղաքում 1916 թ. վերջի դրությամբ. «*հայերու բաժինը մեծաւ մասամբ քանդուած է, շատ թաղեր գետնին հաւասարած են, միայն ազատուած են այն շէնքերը (անհատական եւ ազգապատկան), որոնք հայերու տեղահանութենէն վերջ գրաւուած են թիւրքերու կողմէ ծառայեցնելու համար այս կամ այն հասարակական պէտքին եւ կամ յատկացուած են թիւրք եկուորներու բնակչութեան: Շուկան… այժմ աւերակի վերածուած է 80 տոկոսով: Հայերու տները անցելոյն մէջ քանդուած են թիւրքերու կողմէ օգտուելու համար փայտերէն, իսկ ներկային անոնց պակասը կը լրացնեն ոուս զինուորներ: Թիւրք տներու ձեռք դպցնող չկայ*»[23]:

Տեղեկագրում նշվում էր, որ Երզնկայի հայկական եկեղեցիներից Ս. Փրկիչը «*հայերու տեղահանութենէն անմիջապէս վերջը թուրքերու կողմէ ուժանակներով քանդուած է: …Ս. Աստուածածին մատուռը եւս արժանացած է Ս. Փրկչի վիճակին: …Ս. Նշան եւ Ս. Երրորդութիւն եկեղեցիները, ինչպէս նաեւ Ս. Սարգիսը թալանուած են*»[24]: Թալանված էր նաև Ազգային առաջնորդարանի շենքը. «*Ամէնաս մնացած երկու եկեղեցիները փակ են, իսկ Ս. Սարգիս եկեղեցին Մոսկուայի Հայկական Կոմիտէտի հնորհիւ վերանորոգուած է, սոյն կոմիտէտը վարձած է քահանայ մը, որը եկեղեցական պաշտամունք կատարելէ զատ պաշտօն ունի հոգեւոր միխթարութիւն ջամբելու, արդարեւ միխթարութեան կարօտ բազմաչարչար եւ նահապակ ազգի մնացեալ բեկորներուն*»[25]:

Ըստ տեղեկագրի՝ նախքան Մեծ եղեռնը Երզնկայում գործող վարժարանների շենքերը (Ընկերական, Եզնիկեան, Կեդրոնական, Արամեան և Քրիստինեան աղջկանց վարժարանը՝ կից համանուն մանկապարտեզով). «*կը մնան քիչ թէ շատ անվնաս, բայց զուրկ դռներէ եւ պատուհաններու ապակէ փեղկերէ. անվնաս եղածները յատկացուած են գաղթականներու եւ զանոնք հոգացող մարմիններու բնակութեան*»[26]:

Տեղեկագրում առկա տվյալները վկայում են, որ երիտթուրքերը նպատակաուղղված աշխատանք են տարել Երզնկայում հայկական ներկայության հետքերի վերացման ուղղությամբ՝ ոչնչացնելով հայկական գերեզմանատունը. «*Հայերու տեղահանութենէն առաջ եւ հալածանքներու սկզբում թիւրք բարբարոս կառավարութիւնը, հայ երիտասարդներու ձեռամբ քանդել տրուած է [18]95-ի* [հայկական կոտորածների-Ռ.Թ.] *նահատակներու յիշատակին կանգնել տրուած դամբարանը եւ յուշարձանը ու նոյն այդ երիտասարդներու կռնակով քարերը փոխադրել տրուած է թրքական թաղը, ուր անոնք իբր հիմք ծառայած են …«Խթթիհատի» նորակառոյց շէնքին:*

---

[23] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 166, թ. 23:

[24] Նույն տեղում, թ. 24:

[25] Նույն տեղում:

[26] Նույն տեղում:

Բոլոր տապանաքարերը քանդուած ու Եփրատը նետուած են, ծառերը կտրտուած եւ անհետացուած ըլլալով ներկային մէջ այդ գերեզմանատունը առած է ընդարձակ դաշտի մը երեւոյթը, ուր պատահմամբ թողուած երկու առանց տապանագրի գերեզմանաքարեր միակ վկաներն ըլլալ կը թուին մօտաւոր անցեալի մը մէջ գործուած ճիւաղային արարքներու»[27]:

Տեղեկագիրը պարունակում էր հայկական նպաստամատույց կազմակերպություններին ուղղված առաջարկ. *«կազմելու… տեղւոյն մէջ Տեղական Մարմին մը, բաղկացած տեղացիներէ, եւ տեղւոյն վրայ գործող գաղթականական մարմիններու մէկ մէկ ներկայացուցիչներէ, որոնց գործը պիտի լինի վարել բոլոր ազգային բնոյթ ունեցող գործերը գլխաւորապէս հետեւեալ ուղղութեամբ:*

1. *Պատրաստել եկեղեցապատկան եւ վանքապատկան բոլոր կալուածներու եւ հաստատութեանց ցուցակը եւ տեղական իշխանութեան կողմէ հաստատել տալ ի նախապատեսութիւն ապագայ հաւանականութեանց:*
2. *Հսկել եւ պաշտպանել որ չքանդուին հայերու տները եւ Ազգային հաստատութիւնները ու կալուածները:*
3. *Հաւաքել իր մօտ ցրիւ եկած շատ մը եկեղեցական սպասքներ, զգեստներ, գրքեր եւ այլն, ի հարկին գնել զանոնք մանաւորներու ձեռքէ:*
4. *Պաշտօնական յարաբերութեան մէջ մտնելով տեղական իշխանութեանց հետ հարկ եղած թոյլատրութիւնը ձեռք բերել թիւրքերու մօտ ց'արդ պահուած կիներ, աղջիկներ եւ մանաւանդ փոքր երեխաներ դուրս բերելու համար (ց'արդ ի գործ դրուած անպաշտօն միջոցներէ ոչ միայն բաւարար արդիւնք մը չեն տուած, այլ ընդհակառակը պատճառ եղած են շատ մը անախորժութեանց, երեւան բերելով գինուորական իշխանութեան բացարձակօրէն անբարեխիղճ վերաբերմունքը հայոց այս շատ արդարացի պահանջման հանդէպ):*
5. *Ի մի հաւաքել եւ տեղւոյն վրայ ինամել ց'արդ գտնուած եւ զանազան կողմեր ցրուած որբերը եւ հետզհետէ գտնուելիքները բուն Երզնկայի մէջ ինամել՝ յատկացնելով անոնց ազգապատկան շէնքերեն մէկը կամ երկուքը իբր դպրոց – որբանոց»*[28]:

1917 թ. հուլիսի 16 (29)-ին կայանում է Երզնկացիների միության ընդհանուր ժողովը, որտեղ ընդունվում է Միության կանոնադրությունը («Ծրագիր-կանոնագիր երզնկացիներու միութեան»), և ընտրվում է գործադիր մարմինը[29]: Կազմակերպության կանոնադրական նպատակն է հռչակվում *«իր ուժերու ներած չափով բարոյապէս եւ նիւթապէս օգնութեան հասնիլ վերապրող երզնկացիներուն»* և մասնավորապես՝

«ա. Օգնել հայրենիք վերադառնալ փափաքողներուն՝ միութեան երաշխաւորութեան տակ դիւրացնելով անոնց անցագրի ինդիրը, իսկ կարօտեալներուն օգնել նիւթապէս:

---

[27] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 166, թ. 25:

[28] Նույն տեղում, թ. 28:

[29] Նույն տեղում, թ. 1:

բ. Հայրենիքի մէջ գտնուողներուն օգնել հետեւեալ կերպով՝ 1) փոխադրութեան ձեւով եւ երաշխաւորութեամբ, տալով որեւէ գումար, որ պիտի բաւարարէ անհատին երկրագործական, առեւտրական, արհեստական գործառնութիւնները, 2) ստեղծել արդիւնաբերական մեծ գործ՝ որ կարենայ աշխատանք հայթայթել տեղուոյն վրայ ապրող ազգաբնակչութեան։

գ. Իր միջոցներով որոնել եւ հաւաքել տեղուոյն մէջ թուրքերուն մօտ պահուած որբերն ու այրիները, ստանձնել անոնց հոգատարութիւնը եւ պաշտպան հանդիսանալ անոնց բռնագրաւուած կամ ոտնահարուած իրաւունքներուն։

դ. Նկատելով, որ տեղահանուած եւ տակաւին թուրքական տիրապետութեան տակ գտնուող ազգակիցներու դէպի հայրենիք վերադարձը դիւրացնող կազմակերպութիւն մը կայ[30] բաւարար ֆոնդով օժտուած, միութիւնը առայժմ վերոնշեալ կազմակերպութեանը վստահելով ապագային կը թողու իր բաժին մասնակցութիւնը բերելու իր նիւթականի համեմատութեամբ»[31]:

Կազմակերպությունն իր առջև նաև «Հայրենիքի վերաշինության» նպատակ էր դրել, որը ենթադրում էր դպրոցների վերաբացմանը, ինչպես նաև «ազգային» հաստատությունների՝ եկեղեցիների, վանքերի և հարակից հողերի մատակարարությանը և ազգապատկան կալվածքների տիրապետությանն ու օգտագործմանն աջակցելը:

Երզնկացիների միության գործունեության մասին պատկերացում կարող է տալ 1917թ. հուլիսի 16-ին կազմված հաշվետվությունը (ներկայացվել է Հայ բարեգործական ընկերությանը): Համաձայն հաշվետվության տվյալների՝ 1916 թ. նոյեմբերի 1-ից առ 1917 թ. հուլիսի 16-ը կազմակերպության մուտքերը կազմել են 7,475.85 ռուբլի, որից 5,112-ը՝ *«Կովկաս, Ռուսաստան եւ Ամերիկա գտնուող հայրենակիցներէ հանգանակուած»*: Ծախսերը կազմել են 1,937.09 ռուբլի, որից 1,500–ը՝ *«Երզնկայի կարօտեալներուն ղրկած նպաստ»*: Մնացած 5,500 ռուբլի գումարը դրվել էր ի պահ Թիֆլիսի Վաճառական բանկում՝ ապագայում Երզնկայի վերաշինությանն ուղղված ծրագրերի իրականացման համար[32]:

Ընդհանուր ժողովից հետո Երզնկացիների միությունն արդեն նախատեսում էր օրինականացնել կազմակերպությունը՝ որպես Կովկասի բարեգործական ընկերության անջատ կառույց, ինչպես նաև Երզնկա գործուղել Միության ատենադպիր Արմենակ Մելիքյանին՝ որպես կազմակերպության մշտական ներկայացուցիչ[33]:

Այսպիսով, 1917 թ. աշնան դրությամբ Երզնկայում նպաստամատույց ծրագրեր էին իրականացնում հետևյալ կազմակերպությունները՝ Մոսկվայի հայկական կոմիտեն, Քաղաքների համառուսաստանյան միությունը, Երզնկացիների միությունը, իսկ Երզնկացիների միության միջոցով՝ նաև Կովկասի հայոց բարեգոր-

---

30 Կազմակերպության անունը չի նշվում:

31 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 166, թ. 2:

32 Նույն տեղում, թ. 12:

33 Նույն տեղում, թ. 1, 7:

ծական ընկերությունը: Մեծ չափով վերոնշյալ կազմակերպությունների գործունեության արդյունք է Երզնկայում և շրջանում հայության որոշակի վերազարթոնքը, որի պատկերավոր նկարագրությունը գտնում ենք ականատես երզնկացի հայերի հուշերում: Այսպես, Սողոմոն Թեհլիրյանը գրում է. *«Աւերակ տները նորոգւում էին. ծուխը վերստին բարձրանում էր երդիքներից, դաշտերը հերկւում էին. պատրաստւում էր աշնանային ցանքը. անօրինակ կենսունակութիւն էին արտայայտում օրը օրին իրենց յարկի տակ դարձող մեր ժողովուրդի մնացորդները»*[34]: Մեկ այլ ականատես լրացնում է. *«Ժողովուրդը շուտով ինքզինքը գտաւ, շուկան՝ խանութներ բացուեցան, կեանքը սկսաւ եռալ: …Գիւղացի հայերն ալ կը տեղաւորուէին իրենց գիւղերուն մէջ ու զանոնք կը վերակենդանացնէին. ծուխը նորէն կը բարձրանար հայ գեղջուկի երդիքէն. մէկ-երկու տարիներէ ի վեր խոպան մնացած արտերը սկսան հերկուիլ ու ցանուիլ, այգիներն ու պարտէզները մշակուիլ: Գիւղերու կեանքն ալ կարճ ատենուան մէջ զգալիօրէն փոխուեցաւ»*[35]:

1917 թ. մարտի դրությամբ Երզնկայի շրջանում բնակվում էր շուրջ 3,800 վերապրած, որից 1,400-ը՝ բուն Երզնկա քաղաքում, մնացած 2,500–ը (այդ թվում՝ շուրջ 500 հույն)՝ շրջակա գյուղերում[36]: Ըստ տարբեր աղբյուրների վկայության՝ 1918 թ. սկզբին Երզնկայի շրջանում արդեն կար շուրջ 4,800 հայ քաղաքացիական բնակչություն[37]:

Դժբախտաբար, հայկական ներկայության վերականգնումը Երզնկայում երկար չտևեց: Դեպքերի հետագա ընթացքը հայտնի է: 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Կովկասյան ռազմաճակատը սկսում է կազմալուծվել. զորքերի մեջ զանգվածային ու տարերային բնույթ են ստանում դասալքությունն ու խուճապային տրամադրությունները, որոնք էլ ավելի են ուժգնանում 1917 թ. դեկտեմբերի 5 (18)-ին Երզնկայում ռուս–թուրքական զինադադարի ստորագրումից հետո: Երզնկայի ճակատի պաշտպանության ղեկավարումը ստանձնած Սեբաստացի Մուրադը 1918 թ. հունվարի վերջին կարողանում է իր հրամանատարության տակ կենտրոնացնել ընդամենը 1,200 սվին, որոնք դիմակայում էին տասնապատիկ ավելի թուրքական ուժերին: Փետրվարի 12-ին թուրքական բանակը Վեհիբ փաշայի գլխավորությամբ խախտում է զինադադարը և անցնում հարձակման: Հաշվի առնելով ուժերի միջև հսկայական տարբերությունը՝ Մուրադին այլ ելք չէր մնում, քան կազմակերպել հայկական բանակի և Երզնկայի շրջանի հայ բնակչության կանոնավոր նահանջը:

---

[34] Տե՛ս Թեհլիրեան Սողոմոն, *Վերյիշումներ (Թալէաթի ահաբեկումը)*, գրի առաւ՝ Վ. Մինախորեան, Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1953, էջ 102:

[35] Տե՛ս Սիւրմէնեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 411:

[36] Տե՛ս *«Армянскій вѣстникъ»*, 23 апрѣля 1917, №16, стр. 18. 1917 թ. մարտի դրությամբ բուն Երզնկա քաղաքում հայ բնակչության ճշգրիտ թիվն էր 1,403 հոգի (տե՛ս *«Армянскій вѣстникъ»*, 16 апрѣля 1917, №15, էջ 4-5):

[37] Տե՛ս Սիւրմէնեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 419 (*«զինուորներու թիւին հետ 6000 հոգի կը հաշուուէր նահանջողներու թիւը»*): Տե՛ս նաև Թեհլիրեան Ս., *նշվ. աշխ.*, էջ 109 (*«Երզնկայի ճակատում կար ընդամէնը 1,200 սուին, որից 200ը յատկացուած էր կապի եւ հաղորդակցութեան պաշտպանութեան»*):

Այսպիսով, եթե գնահատելու լինենք հայկական կառույցների նպաստամատույց գործունեությունը Երզնկայում, ապա պետք է նշել, որ թեև երզնկահայ փախստականների վերադարձի և հայկական կյանքի վերականգնման ուղղությամբ նրանց ջանքերն օբյեկտիվ պատճառներով ի վերջո չհանգեցրին որևէ տևական արդյունքի, ապա հայահավաքի ուղղությամբ նրանց աշխատանքը կարելի է հաջողված համարել: Հայկական կառույցների շնորհիվ (այդ առումով պետք է առանձնացնել Մոսկվայի հայկական կոմիտեի և Սեբաստացի Մուրադի խմբի գործունեությունը) գերությունից փրկվեցին և ապահով վայրեր տեղափոխվեցին Մեծ եղեռնը վերապրած հազարավոր հայեր՝ գլխավորապես Դերսիմի լեռներում ապաստանած հայ փախստականներ և թուրքերի տներում պահվող կանայք ու երեխաներ:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ և ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՐԶՆԿԱՅՈՒՄ (1916 Թ. ՀՈՒԼԻՍ - 1917 Թ. ՎԵՐՋ)

Ռոբերտ Թաթոյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի շրջանակներում փորձ է արվել արխիվային փաստաթղթերի, դեպքերին ժամանակակից մամուլի հրապարակումների և գործիչների հուշերի հիման վրա ներկայացնելու Մեծ եղեռնը վերապրած հայերի համար օգնության կազմակերպման աշխատանքները Երզնկայում և գավառում 1916 թ. հուլիսից 1917 թ. վերջն ընկած ժամանակահատվածում, երբ տվյալ տարածքը գտնվում էր ռուսական բանակի, իսկ այնուհետև՝ հայկական ուժերի վերահսկողության տակ:

Նպաստամատույց կազմակերպություններն ու մարմինները Երզնկայում գործունեություն են ծավալել երեք հիմնական ուղղություններով.

1. հայահավաքի կազմակերպում՝ թուրքական հարեմներում ու քրդերի մոտ պահվող՝ ցեղասպանությունը վերապրած հայ կանանց ու որբերի որոնում և ազատագրում,
2. վերապրածների խնամքի կազմակերպում՝ նրանց սննդով և բուժօգնությամբ ապահովում,
3. հայ գաղթականների՝ դեպի իրենց նախկին բնակության վայրեր վերադարձին և նրանց կենցաղի ու տնտեսությունների վերականգնմանն աջակցում:

Հայկական կառույցների և մասնավորապես Մոսկվայի հայկական կոմիտեի ու Սեբաստացի Մուրադի խմբի գործունեության շնորհիվ գերությունից փրկվեցին և ապահով վայրեր տեղափոխվեցին Մեծ եղեռնը վերապրած հազարավոր հայեր՝ գլխավորապես Դերսիմի լեռներում ապաստանած հայ փախստականներ և թուրքերի տներում պահվող կանայք ու երեխաներ:

Բանալի բառեր՝ Մեծ եղեռն, Երզնկա, փախստականներ, հումանիտար կազմակերպություններ:

ORGANIZING THE RELIEF FOR THE ARMENIAN GENOCIDE SURVIVORS AND REFUGEES IN YERZNKA (ERZINCAN) (JULY 1916- END OF 1917)

Robert Tatoyan

SUMMARY

An attempt is made on the basis of archival materials, information obtained from press, contemporary to events, and memories of witnesses, to present relief work for survivors of the Armenian genocide and refugees in Yerznka (Erzincan district of Erzerum province of the Ottoman Empire) and the surrounding area from July 1916 to end of 1917, when this territory was under the control of the Russian army, and then the Armenian armed forces.

Humanitarian organizations and structures functioning in Yerznka operated in three main directions:

1. Rescue of Armenian genocide survivors: search and liberation of refugees who found shelter among the Kurds in Dersim mountains, and also women and orphans who were held captive in Turkish houses;
2. Organization of care and assistance for refugees and survivors, in particular providing them with food and medical care;
3. Providing assistance to the Armenian refugees to return to their homes and to restore their household economies.

Owing to the Armenian organizations and, in particular, the activities of the Moscow Armenian Committee, as well as Sebastatsi Murad, the Armenian National Liberation Movement prominent figure, thousands of the Armenian Genocide survivors were rescued in Yerznka.

Keywords: Armenian genocide, Yerznka (Erzincan), refugees, humanitarian organizations.

ОРГАНИЗАЦИЯ ПОМОЩИ ДЛЯ ПЕРЕЖИВШИХ ГЕНОЦИД И БЕЖЕНЦЕВ В ЕРЗНКЕ (ЭРЗИНДЖАН) (ИЮЛЬ 1916 Г. – КОНЕЦ 1917Г.)

Роберт Татоян

РЕЗЮМЕ

В статье предпринята попытка на основе архивных материалов, публикаций в современной событиям прессе и воспоминаний очевидцев, представить работы по оказанию помощи для переживших геноцид армян и беженцев в Эрзинджане (Эрзерумский вилайет Османской империи) и прилегающем районе в период с июля 1916 г. по конец 1917 г., когда данная территория находилась под контролем русской армии, а затем и армянских вооруженных формирований.

Деятельность гуманитарных организаций и структур в Эрзинджане осуществлялась по трем основным направлениям:

1. организация спасения армян: поиск и освобождение переживших геноцид армянских беженцев нашедших укрытие у курдов, а также женщин и сирот, удерживаемых/находящихся в плену в турецких домах;
2. организация ухода и предоставление помощи для беженцев и выживших, в частности обеспечение их пищей и медицинской помощью;
3. помощь в возвращении армянских беженцев в места своего проживания и в восстановлении быта и хозяйства.

Благодаря армянским организациям, в частности, деятельности Московского Армянского Комитета и группы видного деятеля армянского национального движения Себастаци Мурада были спасены тысячи выживших во время геноцида армян - главным образом армянских беженцев, нашедших пристанище в горах Дерсима, а также удерживаемых в турецких домах женщин и детей.

Ключевые слова: Геноцид армян, Ерзнка (Эрзинджан), беженцы, гуманитарные организации.

THE NETWORK OF HELP FROM THE RUSSIAN ARMY TO THE USA, AND BACK PHOTOGRAPHY AND DENUNCIATION OF GENOCIDE ON THE WWI CAUCASUS FRONTLINE

Benedetta Guerzoni

During the genocide, the American diplomacy actively organized help for the Armenian refugees from the US and the Ottoman Empire. Because of the difficulties of communication with the Ottoman Empire, where censorship often caused problems in the documents mailing, the US State Dept. often communicated directly with the American missionaries in the Caucasus area. Ambassador Henry Morgenthau, James Barton[1], and others, were the major references for the help, and the archival documents show the importance of their action as mediators between the US political sphere and the missionary one in the Ottoman Empire and in the Caucasus.

The Van evacuation was widely represented in pictures, and also vehiculated in the US through the publication of illustrated articles in the press. In the same years, 1916-1918, in the Caucasus area some illustrated albums were published on the atrocities and deportations, giving space to the idea that a whole independent production of images was carried on there.

In 1916, during the retreat of the czarist army from the Eastern regions of the Ottoman Empire, the American missionaries that followed the Armenian refugees referred to the ACASR, and it is quite certain that they got to let some pictures arrive in the US at the State Dept., through the missionaries that went back home. Were these images taken from the Russian Army? Or from the missionaries themselves? Were they from the Caucasus Armenian humanitarian organizations? Was there any organization behind the picture production - like denunciation campaigns etc. - or were they the result of different individual actions?

Let's see how they contribute in reconstructing the network of help from the Russian Army to the US diplomacy, and back.

American illustrated publications about the Armenian genocide

During the diplomatic service in Constantinople, Henry Morgenthau had a central role in coordinating help and denunciation of the genocide against the Armenians; his position put him at the core of the diplomatic, political and humanitarian milieu. He was one of the founder of a new humanitarian organization and, once back in the United States (1916), active witness of the Armenian genocide, with articles and publications. At the end of 1917, he asked the President of United States, Woodrow Wilson and the Secretary of State, Robert Lansing, the permission of publication for his memories about the

[1] President of the American Committee for Armenian and Syrian Relief – ACASR - and reference of the American Board of Commissioners for Foreign Missions - ABCFM.

diplomatic experience in the Ottoman Empire.[2] It was *Ambassador Morgenthau's Story*,[3] first published into the magazine *World's Work* (from May 1918 to January 1919), and in some more thirty local newspapers in the United States; the British edition was titled *Secrets of the Bosphorus*.[4] A selection of pictures was present in the magazine publication, but the most poignant were published in the American edition (n. **1**-**4**), as we will see.

The book was born as an act of accusation against the Germany will of power, as Morgenthau says in the preface; the war situation, with the United States already participating, pushes to think about a propaganda operation against the German enemy, based on the diaries and the direct experiences of the Ambassador. The XXIII-XXVII chapters of the book are about the Morgenthau actions to denounce the violence and to try to save the most people possible. Many requests were sent to Talaat Pasha, the Minister of Interior of the Ottoman Empire. The *World's Work* pictures are now preserved at the Nubar Library in Paris, cut out from the magazine[5] (n**. 5**-**7**): they perhaps illustrated this part of the text on the magazine, and they were most probably published in the second half of 1918. The captions explicitly talk about the violence against the Armenians: one of the more interesting is the n. **7**, whose caption talks about refugees in Van. The picture could be about the Russian occupation of the town, in 1915 spring and summer, before the population followed the czarist troops retreating, when also the American missionaries abandoned Van.[6] The same picture is also present in the first edition of Morgenthau's book, with the same caption. It is one of the few pictures that were used in that edition, while the second one in 1975 was widely illustrated.

Two pictures in the first edition explicitly show the violence, and this is a quite exceptional case in the history of the Armenian genocide denunciation of the time. (n. **1**-**2**). This is actually a unique example of publication of this kind of subject in the United States and in the Western world; "atrocities" were not usually showed anywere, even if they were told and well known by a large public, through the media of the time. The pictures were probably collected by Morgenthau, but it is difficult to be sure of that, because of the lack of documents. Anyway, the n. 1 image is present in every article by the Ambassador and in every publication that presumably was linked and supervised by him: the article for the American Red Cross,[7] where also other recurring images are present (n. **8**-**11**), March

---

2 For a documented history of the first edition of the ambassador's memories see Morgenthau Henry, *Ambassador Morgenthau's Story*, edited and with an introduction by Ara Sarafian, Taderon Press Reading, UK, 2000 (by arrangement with the Gomidas Institute, Ann Arbor, Michigan).

3 Morgenthau Henry, *Ambassador Morgenthau's Story,* Garden City, N.Y.: Doubleday, Page & Co., 1918, 1919.

4 Morgenthau Henry, *Secrets of the Bosphorus, Constantinople, 1916-1919,* London: Hutchinson &Co., London 1918.

5 Bibliothèque Nubar, Paris.

6 See 'Les Américains en Arménie', "Journal del Genève", 26th October 1915.

7 'The Greatest Horror in History' "American Red Cross Bullettin", March 1918, Museum and Archives of the Red Cross, Washington DC.

1918; and some other titles by the ACASR, in 1916[8] (n. **12**). This and other documents (like n. **2**) are now present at the Armenian Library and Museum of America (ALMA)[9]: a collection of glass positives archived as "Mission Slides". On some of them it is also possible to read "Board of Foreign Missions": even if we do not have a precise date and time of production, they for sure come from the American missionary and humanitarian side; as we will soon see, they are copies of some photographic materials produced in the refugee camps of the Caucasian area, managed also by American missionaries and humanitarian operators of the ACASR. Perhaps they were the photographers, perhaps just the intermediary, because there were other humanitarian subjects in the camps: infact, what is really interesting is that the Caucasian origin of the material is confirmed by the quite contemporary publication of picture n. **2** in the "Armjanski vestnik", a Russian Armenian magazine in February 1917.[10]

The association had copies of the pictures published in the Morgenthau book and elsewhere, as witnessed by the collection preserved by the United States National Archives and Records Administration (NARA) in Washington,[11] with photographs taken and received between 1918 and 1919, when the association could not yet directly act on the field, with no direct contact and management, because of the ongoing war: the photographic materials, also about the territories of Russian Armenia – Etchmiadzin, Yerevan – had to be of different origin. They were perhaps taken by different subjects, above all the Russian Armenian humanitarian associations, as we will see: an example of this is the picture n. 40, where the caption talks about the Armenian Moscow Committee. The connection with the US government were for sure the American missions, that perhaps also produced other pictures, as probably did the Russian Army. The missions were present in this area from decades and were responsible for a large network of schools, hospitals and orphanages; they also worked strictly in contact with the American embassy. The missions followed the Armenian population that run away from the Eastern regions of the Ottoman Empire, with the czarist army after the evacuation of Van, toward the Russian Caucasus area.

The dates on the document sheets are just references: the n. **13**, for example, is dated 1918, but is present in the ACASR publications already in December 1916, see n. **14**.

---

8 "The Cry of Millions – Exiled, Destitute, Dying", December 1916, and Bullettin n. 5, "Latest News Concerning the Armenian and Syrian Sufferers", May 24, 1916 in Library of Congress, Manuscript Division, Papers of Henry Morgenthau 1795-1941 (bulk 1870-1941).

9 Watertown, MA.

10 See the Yerevan Genocide museum website:_http://www.genocide-museum.am/eng/armjanski_vstnik.php

11 76 pictures, about refugees but also about the US activity, on a sheet. The pictures were taken in Aintab (Cilicia), Urumia (Persia), Yerevan, Etchmiadzin, Erzurum, Erzingan, Van. They – US NARA, Still Picture Unit, RG 165 – WW – 559C.

How the denunciation pictures arrived in the United States from the Caucasus

In *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16* uncensored edition by Ara Sarafian (2005), the editor talk about the archival documents to certify the US contribution to the genocide denunciation: they show that the American channel of Viscount Bryce was James L. Barton[12], ACASR president and fundamental figure of the American Board of Commissioners for Foreign Missions (ABCFM), the network of American missions, in the Ottoman Empire from a century, actively working for ACASR during the first world war. Barton had complete access at the State Department documents, as Sarafian says: this mean his mediator role between the politicians and missionaries in the Ottoman Empire was extremely important, perhaps more than Morgenthau's one. The case of the American diplomatic reports published during the war, as for the one of the Harput Consul Leslie Davis, is now clearer and even more interesting in this light: it's sure that an action of concrete resistance against the genocide was present in the United States by the government, since the first days of the denunciation, with a strong support to the American diplomats in the Ottoman Empire.[13] In this kind of context, Barton was the reference to receive the pictures taken and collected by the missionaries run away in the Caucasus area. These last were for a long time cut out from the communication tools of the American delegates in the Ottoman Empire: they had to communicate directly with the US government, through the people that went back home.[14] Also Morgenthau had many problems in this sense, because of the war, that caused many difficulties and irregularities in the mail service.[15]

Some more two pictures, also present in copies at ALMA, are present in the NARA collection of the ACASR: the one that corresponds to the already seen n. 2, has this caption: "Relic of Armenian massacres at Erzingan"[16] (received 1919); another one, n. **15**, (better reproduced in n. **16**[17]), shows two covered wagons, full of people; the pic-

---

[12] Sarafian Ara, "The Archive Trail. Authentication of *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16*", in Richard Hovanissian (ed.), *Remembrance and Denial. The Case of the Armenian Genocide*, Wayne State University Press, Detroit 1998, pp. 51-65; see also Sarafian Ara (ed.), *United States Official Documents on the Armenian Genocide, Volume I: The Lower Euphrates*, Armenian Review, Watertown, MA 1993, pp. ix-xxx.

[13] See *America and the Armenian Genocide*, Jay Winter (ed.), Cambridge: Cambridge University Press 2003.

[14] See Barton James L., *Story of Near East Relief (1915-1930). An Interpretation*, New York: The Macmillian Company, 1930, pp. 79-88.

[15] See Barton James L., *Story of Near East Relief (1915-1930). An Interpretation*, New York: The Macmillian Company, 1930, pp. 58-69, on the American presence in Turkey before and after the US entry in the war. See also Cfr. Leslie Davis about the problems with the mail service, Davis Leslie A., *The Slaughterhouse Province, An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917*, edited and with an introduction by Susan K. Blair, New Rochelle, NY: Aristide D. Caratzas Publisher, 1989, pp. 20-21.

[16] This is the same caption present in the Morgenthau biography to describe this picture.

[17] At the Bibliothèque Nubar, Paris.

ture is not very clear and the scene is taken from the top, so it is difficult to identify the people. The caption says: "Refugees run away from Van. Women and children are in the wagons" (received 1919). The same picture is in the website of the Armenian Genocide Museum-Institute in Yerevan, taken again from "Armjanski vestnik", 1916, with a caption that talks about orphans transportation from Igdir to Sanahin. [18] We will see this subject again in a Georgian publication immediately after the genocide. There is also another interesting picture: perhaps of a mother, beside a corpse, dated 1918 (n. **17**); this photograph, already seen in the American Red Cross publication of 1918 (n. **8**), could have been taken at Igdir or Etchmiadzin, where also some other similar pictures were taken to document the epidemic situation in the refugees camps (see for example n. **18**).

The Russian Armenian Charities

These last pictures are collected in one album with texts and captions in Armenian and Russian, published in Tiflis from the Armenian National Council.[19] The album collects 30 photographs, the half of which about atrocities (n. **19**-**28**): note that n. 25-27 captions talk about the corpses of some Armenian worker soldiers of the Ottoma n Army in Bitlis. Often in these pictures it is possible to see the presence of Russian soldiers: this means that taking picture was legitimate and that perhaps the same soldiers had the possibility to do it; another hypothesis could be that the Russian Army had a specific policy about the denunciation of the ongoing violence. The album also shows pictures about the refugees camps (n. **29**-**35**) and the humanitarian help activity of the *Armenian Benevolent Society of the Caucasus*. This last was one of the most important Armenian charities in that area, that survived the restrictions by the Csarist régime at end of the XIX century, when many of them were suspected of being separatist organizations.

About the geographical indications, the album talks about Mush and Bitlis when showing the atrocities; Igdir, Etchmiadzin, Van and the Anatolian Eastern Regions when showing refugees.[20] Two of these last pictures are about the Van evacuation, and one, n. 30, is particularly interesting, as it seems to be part of a series if we compared it with n. 16. This could confirm the will of document and prepare some denunciation material about the violence and consequent evacuation. The caption indicates Van as the pictured place and they remind one of the glass positive of the Board of Foreign Missions: with this reference it is possible to identify the origin area of those positive with the Eastern regions of Anatolia and the Caucasus.

The album publication gives us some indications about time and place, and help us in reconstructing the documentation history. These pictures also show some other indications, like the Russian sign of the photographer in the low right corner.

---

[18] See http://www.genocide-museum.am/eng/armjanski_vstnik.php

[19] *Album des déportés*, édition du Conseil Général Arménien. I thank professor Raymond Kévorkian for the information about the album, and Vahé Tachjian for the translation of the captions.

[20] In many captions the text indicates the date of July 14th, 1915, even if it is the same for every picture and this let us think that it is just indicative of the period in which the pictures were taken. talks about.

Many pictures of the refugees camps in this album also remind to the ACASR pictures (n. **36**-**39**), where some captions explicitly talk about the "Moscow Committee" (n. **40**), as a confirmation of the origin of many pictures in the collection. Another group of pictures, preserved at the Nubar Bibliothèque in Paris (n. **41**-**48**[21]), is from this area and this is another source that confirms the wide photographic documentation during the military operations by the Russian Army and the humanitarian associations between the summer of 1915 and the one of the following year. An interesting case is the one of picture n. 42, that is also part of an anglophone illustrated publication (n. **43**), not identified, but perhaps a USA one if we think about the publishing action of the diplomatic circle in that country. Furthermore, some of these images (n. **44**-**48**) show the negative number like some others (n. **49**-**51**), taken by the Russian Army in the Batoum area.[22]

Some more pictures from this area were taken by Victor Pitchman, an Austrian that served in the Ottoman Army, then in the German one, in the Erzerum region: his collection is now preserved at the Armenian Genocide Museum-Institute of Yerevan,[23] as the one of Parakhodov, a Russian military photographer. Also Joseph Pomiankowski, an Austrian Hungarian vice marshal, published a memoir illustrated with pictures.[24]

Conclusions

We have seen so far many different subjects, actions and documents of denunciation, originated from the Caucasus area to different destinations and media. The purpose was to illustrate a sort of "map" of the pictures production and circulation, to tell the network of help beyond geography and localism.

The Caucasus area saw the presence of different nationalities representatives, at public and private level, from the political and humanitarian milieu: we know that, elsewhere in the Ottoman Empire, many German and American representatives, soldiers and civilians, took pictures of the victims of genocide, as they were in direct contact with those territories.[25] In the Caucasus, the subjects were mostly Americans, Armenians and Russians; the American diplomatic action was for sure supported by the circulation of the pictures, published or not.

As we have seen, from the research point of view the publication helped to match the pictures with archival sources and to find a confirmation of the Caucasian origin and of the intermediary role of the American missions: the same pictures published by Mor-

---

21 The last five pictures of this group are apart from the others and are dated August 3rd, 1916.

22 Nubar Library, Paris.

23 http://www.genocide-museum.am/eng/victor_pitchman.php.

24 Pomiankowski Joseph, Der Zusammenbruch des Ottomanischen Reiches: *Erinnerungen an die Türkei aus der Zeit des Weltkrieges*, Zürich: Amalthea-Verlag, 1928, and Graz: Akademische Druk und Verlagsanstalt, 1969 (reprint of the 1928 edition).

25 See Guerzoni Benedetta, *Cancellare un popolo. Immagini e documenti del genocidio armeno*, Sesto San Giovanni: Mimesis, 2013.

genthau were then found in different US Archives with notes about their geographic and institutional origin. Sometimes we also saw the same pictures in different countries like USA and Russian Armenia, as n. 2 and 16, or also n. 8 and 15 as recurrent subjects in the Us Archives and Russian Armenian publications.

All this lead us to some reflections: first, some more material had to be produced by the Russian Army, or from the other Armenian, Russian and American subjects that worked in the humanitarian circle, in the Caucasus area. Second, they lead to the conclusion that the production was probably not accidental but - even if not traditionally planned, because of the emergency war situation – perhaps someway coordinated by the different production subjects to create a network of circulation outside the frontline.

From the pictures examined we can also conclude that it is in this moment that the post war humanitarian action representation began, already *during* the war: refugees, women, orphans, victims, Western representatives bringing aid, all these are the symbols and categories that will be protagonist of the post war era, when the humanitarian milieu will be fundamental to denounce the genocide.

Finally, some of the pictures produced in the Caucasus area were so published and seen in the United States by a large public, even if after some years from the genocide. The most important characteristic of these pictures is that they are some of the few that had a public circulation, outside the Western diplomatic circles during the First World War. Even if many newspapers in the Western world talked regularly about the Armenian genocide, quite no image circulated. This is one of the paradoxes of the First World War, a war when the modern media began to be used, but the old communication attitude that preferred texts and illustrations instead of photographs still resisted.

ILLUSTRATIONS

1

2

3

4

5

6

KURDISH CAVALRY

7

REFUGEES AT VAN CROWDING AROUND A PUBLIC OVEN, HOPING TO GET BREAD

8



DESPAIR

A mother, one of thousands deported by the Turks, surrounded by the bodies of her five sons massacred by the Turks

9

REFUGEES

Prior to the deportation, the men were tied together and shot. The women and children were either burned alive or thrown into the river

10

STARVING CHILDREN

During the wholesale deportation of the Armenians by the Turks, children were thrown into the rivers or sold by their mothers to strangers to save them from starvation

11

IN THE WAKE OF THE TURK

The worst measure against the Armenians was the wholesale deportation of the entire population and their exile to the desert. The victims had to walk on foot exposed to the attacks of bands of criminals especially organized for that purpose. Homes were literally ransacked, families were separated, men killed, women and girls violated daily

12



THE AWFUL FACTS

PRESENT CONDITIONS

13



65-WW 559 25

1918

AMERICAN COMMITTEE FOR ARMENIAN AND SYRIAN RELIEF.

Nursing babies picked up from the wayside.

14



Good Will to the Hand of the Christ Child

A CHRISTIAN MINISTRY TO THE *EXILED, DESTITUTE & DYING* IN ARMENIA, SYRIA, PERSIA & PALESTINE

U.S. CHRISTMAS SHIP

THE NEED COLOSSAL AND CONTINUOUS

Martyrdom Unparalleled

Recent Cablegrams

A Christmas Check

1916

Pay to the order of American

Armenian and Syrian Relief

Dollars

For the Relief of Suffering and

in Armenia, Syria, Persia and Palestine

$

15



65-WW 559 63

1919

AMERICAN REFUGEES PLEADING From Van. Women and children are in the wagons.

16

17



18

№ 22 Թուրքի պատրաստած 1915 թ. յունիսեան հարեանիքի սպանդոտ Հայերուն դիակները.
Жертвы вандализма во время отступления 14 іюля 1915 г. въ Игдирской рощѣ.

19

№ 7 Մարդի Ազգ-Ջեհան գիւղի մէջ գտնուած սպրատուծներուն գանգերը.
Черепы заживо сожженныхъ армянъ въ сел. Али-Эрманъ

20

№ 10 Մարդի Ազգ-Ջեհան գիւղում սպանուածների գանգերն ու գլուխները.
Скелеты и трупы убитыхъ армянъ въ сел. Али-Эрманъ.

21

№ 11 Մարդի նահիջի ընթացքում նոյ գիւղի նահատակների մարմինները
Трупы армянъ мученниковъ сел. Шейхаланъ. Мушъ, долины.

22



№ 13 Մարդի գաւառի նոյ գիւղերի նահատակած կին ու երեխաների ոսկորները.
Скелеты изчученныхъ армянъ дѣтей и женщинъ около Мушскаго монастыря.

23

№ 15 Տրապիզոնի շրջակայքում սպանուած հայերի գանգերն ու ոսկորները.
Скелеты и черепы звѣрски убитыхъ армянъ Трапезунда.

24

№ 16. Մարդ համագործին քարը բանվորին Բիթլիսում։
Трупъ арм. рабочаго убитый турками на дорогѣ около Муша.

25

№ 17 Համիտեան բանտարկ զինեալ Բիթլիսում.—Убитый армянинъ—рабочій въ Битлисѣ.

26

№ 15. Բիթլիսի համագործին տաճկահայ բանտարկեալ զինուածներ.
Обезглавленные трупы рабочихъ турецкихъ армянъ, работающихъ на сооруженіи Битлисской дороги.

27

№ 16 Բիթլիսի համագործին տաճկահայ բանտարկեալ մարմինները.
Обезглавленные трупы рабочихъ турец. армянъ работающихъ на сооруженіи Битлисской дороги.

28

№ 21 Բանտարկեալ և տանջեալ տաճկահայ գիւղ զինեալ Բիթլիսում
Трупъ изнасилованной, изтерзанной и обезглавленной арменки въ Битлисѣ.

29

№ 24. Գիւղացիների հանգիստը Արարատի ստորոտում 1915 թ. յուլիսին հարկադիր ժամանակ.
Отдыхъ бѣженцевъ у подножія Арарата во время отступленія 14 іюля 1915 г.

30



№ 26. Հաւաքումն որբերի և համագործին մնացած երեխաների վանից հարկադիր ժամանակ.
Сборъ сиротъ затерявшихся дѣтей во время Ванскаго отступленія.

31

№ 27 Հաւաքում վիրաւոր և թոյլ գոյքակոծների վանից հարկադիր ժամանակ.
Сборъ больныхъ и слабыхъ бѣженцевъ во время Ванскаго отступленія.

32

№ 29 Դաշտախոհներդ ցաղատում էաց եւ քիւրտ Վահի նահանջի ժամանակ Բզնիի մօտ. –
Вылечка вшей бъежавшими на полѣ, около Игдыря, во время Ванскаго отступленія.

33

№ 30 Որբերը Բզնիի անցագնաց կայանում Վահի նահանջի ժամանակ.
Сироты въ Игдырскомъ питательномъ пунктѣ во время Ванскаго отступленія

34

№ 31 Թեոդոսիոյի Հայ եկեղեցաբարեգործական որբանոցի որբերը Բզնիում.—Сироты пріюта Астраханскаго Армянскаго Общества въ Тифлисѣ.

35

№ 32 Շարժական սանիտարական տուրքայ Ն. գնդապ. Զօրքերի Վահի նահանջի ժամանակ.
Передвижной санитарный отрядъ арм. Центр. Ком- во время Ванскаго отступленія.

36



165-WW 559541

1918

AMERICAN COMMITTEE FOR ARMENIAN AND SYRIAN RELIEF.

Women combing wool. When the wool is combed, it is carded by rolling in the hands. The girls refuses at the beds is necessary and leather for the new workers.

37

165-WW 559538

1918

AMERICAN COMMITTEE FOR ARMENIAN AND SYRIAN RELIEF.

Orphans of victims in Bitchnakhia.

38

165-WW 559556

1919

AMERICAN ARMENIAN & SYRIAN RELIEF COMMITTEES.

Refugees having supper in the woods of Bitchnakhian.

39

40

41

42

43



44

45

46

47

48

49

50

51

ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՑ ԴԵՊԻ ԱՄՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿԸ ԳՈՐԾՈՂ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԸ. ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բենեդետա Գվերցոնի

ԱՄՓՈՓՈՒՄ

Վանի հայերի տարհանումը լայնորեն ներկայացվել է ամերիկյան մամուլում նկարների, ինչպես նաև պատկերազարդ հրապարակումների միջոցով: Նույն տարիներին՝ 1916-1918 թթ., Կովկասում հրատարակվել են լուսանկարչական ալբոմներ՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության նկատմամբ կիրառվող վայրագությունների պատկերներով: 1916 թ. Օսմանյան կայսրության արևելյան շրջաններից ցարական բանակի նահանջի ընթացքում ամերիկյան միսիոներները, ովքեր հետևում էին հայ գաղթականներին, կապեր են հաստատում Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեի հետ: Սա հիմք է տալիս եզրակացնելու, որ ԱՄՆ հասած և Պետքարտուղարությունում հայտնված որոշ նկարներ ուղարկվել են հայրենիք վերադարձած ամերիկյան միսիոներների միջոցով:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, լուսանկարներ, միսիոներներ, Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտե:

THE NETWORK OF HELP FROM THE RUSSIAN ARMY TO THE USA, AND BACK. PHOTOGRAPHY AND DENUNCIATION OF GENOCIDE ON THE WWI CAUCASUS FRONTLINE

Benedetta Guerzoni

ABSTRACT

The Van evacuation was widely represented in pictures, and also vehiculated in the US through the publication of illustrated articles in the press. In the same years, 1916-1918, in the Caucasus area some illustrated albums were published on the atrocities and deportations, giving space to the idea that a whole independent production of images was carried on. In 1916, during the retreat of the czarist army from the eastern regions of the Ottoman Empire, the American missionaries that followed the Armenian refugees referred to the American Committee for Armenian and Syrian Relief, and it is quite certain that they got to let some pictures arrive in the US at the Department of State, through the missionaries that went back home.

Keywords: Armenian genocide, photos, missionaries, American Committee for Armenian and Syrian Relief.

СИСТЕМА ПОМОЩИ ОТ РУССКОЙ АРМИИ В США И ОБРАТНО: ФОТОСЪЕМКА И ОСУЖДЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН НА КАВКАЗСКОМ ФРОНТЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Бенедетта Гверцони

РЕЗЮМЕ

Эвакуация армян Вана была широко представлена в фотографиях, в иллюстрированных публикациях в прессе США. В те же 1916-1918 гг. на Кавказе были опубликованы фотоальбомы с изображениями сцен зверств в отношении армянского населения Османской империи.

В 1916 г. во время отступления царской армии из восточных районов Османской империи, американские миссионеры, которые последовали за армянскими беженцами, установили контакты с Американским комитетом помощи армянам и ассирийцам. Это дает основания утверждать, что некоторые фотографии, оказавшиеся в США и попавшие в распоряжение Государственного департамента, были пересланы через американских миссионеров, возвращавшихся домой.

Ключевые слова: Геноцид армян, фотография, миссионеры, Американский комитет помощи армянам и сирийцам.

ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՌՈՏ ՁԵՌԱԳԻՐԸ»

Նարեկ Պողոսյան

Իրավագետ Ռաֆայել Լեմկինն իր գործունեության ընթացքում թողել է հսկայական գիտական ժառանգություն, որի մեջ կարևոր տեղ է հատկացվում ցեղասպանությունների և դրանց պատմության ուսումնասիրությանը:

Պահպանվել են Ռաֆայել Լեմկինի մեծ քանակություն կազմող նամակագրությունները, հոդվածները, հարցազրույցները, լրագրային քաղվածքները, խմբագրականները, ձեռագրերը: Ռաֆայել Լեմկինի թողած արխիվային նյութերի մի մասը պահպանվում է Նյու Յորքում գտնվող «Ամերիկայի հրեական պատմական ընկերակցությունում»՝ Ռ. Լեմկինի հավաքածուի տեսքով[1]: Արխիվային նյութերն ամփոփված են 12 ձեռագրերի պահոցների և 2 մեծածավալ պահոցների մեջ: Նյութերի մի մասը մատչելի է նաև առցանց տարբերակով[2]: 8-րդ պահոցի թիվ 14 և 15 թղթապանակներում պահպանվել են Ռ. Լեմկինի ձեռագրերը Հայոց ցեղասպանության մասին[3]: Դրանցից մեկը 139-էջանոց մի ձեռագիր է, որին Լեմկինի ժառանգության համար գրացուցակ կազմող անձը տվել է «Հայկական կոտորածների վերաբերյալ գրքաչափ ձեռագիր» անվանումը: Երկրորդը 6-էջանոց նույնպես անվերնագիր ձեռագիր է, որն անվանվել է «Հայկական կոտորածների վերաբերյալ համառոտ ձեռագիր»: Երկու ձեռագրերից և ոչ մեկը թվագրված չէ:

Հետազոտության հիմնական նպատակը «Հայկական կոտորածների վերաբերյալ համառոտ ձեռագրի» ուսումնասիրությունն է: Ձեռագիրը բավարար չափով ուսումնասիրված չէ, և դրա ուսումնասիրությունը թույլ կտա ներկայացնել, թե ինչ շեշտադրումներ է արել Ռաֆայել Լեմկինն իր ձեռագրի միջոցով և հատկապես ինչ ուղերձ է փորձել փոխանցել:

Հայկական կոտորածների վերաբերյալ երկու՝ գրքաչափ և համառոտ ձեռագրերի ուսումնասիրությանը և վերլուծությանն անդրադարձել է պատմաբան, Ալաբամայի համալսարանի պրոֆեսոր Սթիվեն Ձեկոբսն իր «Ռաֆայել Լեմկինը և Հայոց ցեղասպանությունը» հոդվածում: Հոդվածում Ս. Ձեկոբսը հիմնական շեշտը դնում է «Հայկական կոտորածների վերաբերյալ գրքաչափ ձեռագրի» վերլուծության վրա, որը բավականին մեծածավալ է, իսկ «Հայկական կոտորածների վերաբերյալ համառոտ ձեռագրին» անդրադարձել է միայն թռուցիկ:

Ս. Ձեկոբսը նշում է. «Հայոց ցեղասպանությանն առնչվող կրճատ ձեռագիրն առանձնահատուկ չէ: Այն ներկայացնում է բռնությունների որոշ օրինակներ, հղումներ են արվում տարբեր աղբյուրներից, չունի ո՛չ ներածություն, ո՛չ եզրակացություն

---

1 «Ամերիկայի հրեական պատմական հասարակությունը» (American Jewish Historical Society) ԱՄՆ-ի ամենահին ազգային էթնիկ պատմական կազմակերպությունն է:

2 Guide to the Raphael Lemkin (1900-1959) Collection, http://digifindingaids.cjh.org/?pID=109202.

3 *Raphael Lemkin Collection*, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, Box 8, folder 15, Short Manuscript on the Turkish Massacre of Armenians.

և, ինչպես առաջին ձեռագրի (գրքաչափ ձեռագիր) դեպքում, հիմնավորված չէ, թե ինչի համար է այն գրվել»[4]:

Նշենք, որ Ս. Ձեկոբսի այն տեսակետը, թե Լեմկինի կրճատ ձեռագիրը ոչնչով առանձնահատուկ չէ, հիմնավորված չէ, քանի որ ձեռագրում ամփոփված օրինակներից բացի՝ ներկայացված է նաև հեղինակի վերլուծությունը, և ձեռագիրն ունի գիտական արժեք:

«Հայկական կոտորածների վերաբերյալ համառոտ ձեռագիրը» չունի նախաբան և եզրակացություն: Ձեռագրի վերջում բացակայում է նաև գրականության ցանկը, բայց տողատակերում առկա են հղումներ հինգ աղբյուրներից՝ 1) Sonnenaufgang, Oktober 1915, 2) Germany, Turkey and Armenia, 3) New York journal, «Gotchnag» August 28, 1915, 4) Treatment of Armenians, 5) Beginning Again at Ararat:

Առաջին աղբյուրը, որից օգտվել է Լեմկինը՝ «Sonnenaufgang, Oktober 1915»՝ Արևելքում քրիստոնեական բարեգործական աշխատանքի խթանման Գերմանական լիգայի օրգանի՝ Sonnenaufgang-ի (Sonnenaufgang գերմաներենից թարգմանաբար նշանակում է արևածագ) 1915թ. հոկտեմբերի համարն է: Հավանական է, որ այս աղբյուրից ձեռագրում մեջբերված հատվածը Լեմկինը վերցրել է ձեռագիրը գրելու համար իր օգտագործած փաստաթղթերի որևէ ժողովածուից:

Երկրորդ աղբյուրը (Germany, Turkey and Armenia), որից օգտվել է Լեմկինը, «Գերմանիան, Թուրքիան և Հայաստանը» անունը կրող գերմանական և այլ աղբյուրների փաստաթղթային ապացույցների ընտրանին է, որը վերաբերում է Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված բռնություններին:

Երրորդ աղբյուրը (New York journal, «Gotchnag» August 28, 1915) «Նյու Յորք» ամսագրի 1915թ. օգոստոսի 28-ի համարն է, որտեղից Լեմկինն իր ձեռագրում մեջբերում է որոշակի փաստական տվյալներ:

Չորրորդ աղբյուրը (Treatment of Armenians) բրիտանացի հայտնի պատմաբաններ Ջեյմս Բրայսի և Առնոլդ Թոյնբիի «Հայերի վիճակը Օսմանյան կայսրության մեջ 1915-1916թթ.» փաստաթղթերի ժողովածուն է, որտեղ զետեղված են բազմաթիվ հաղորդագրություններ և վկայություններ հայկական կոտորածների և տեղահանությունների վերաբերյալ, և հայտնի է «Կապույտ գիրք» անվամբ: «Կապույտ գրքի» մեջ կարևոր են հատկապես 1915-1916թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ Գերմանիայի, Իտալիայի, Նիդեռլանդների, Շվեդիայի և Շվեյցարիայի ականատեսների բազմաթիվ վկայությունները:

Մյուս աղբյուրը Մեյբլ Է. Էլիոթի «Beginning Again at Ararat» գիրքն է: Մ. Է. Էլիոթը Մերձավոր Արևելքում ամերիկյան նպաստամատույց կոմիտեի բժշկական տնօրենն էր, ով, Հայոց ցեղասպանության իրագործման տարիներին որպես բժիշկ աշխատելով Մարաշում, Կոստանդնուպոլսում և այլ վայրերում, օգնել է տեղի բնակչությանը, այդ թվում նաև՝ հայերին, և գրի է առել իր տպավորությունները:

---

[4] Jacobs Steven L., 'Raphael Lemkin and the Armenian Genocide', in Richard Hovannisian (ed.), *Looking Backward, Moving Forward:* Confronting the Armenian Genocide, New Brunswick: Transaction, 2003, p. 132.

Ռ. Լեմկինը ձեռագրում մեջբերումներ է անում վերոհիշյալ աղբյուրներից և ներկայացնում նաև իր մոտեցումները:

Լեմկինն իր ձեռագրում հատկապես հատուկ ուշադրություն է դարձնում կրոնափոխության խնդրին: Նա ձեռագիրը սկսում է Դիարբեքիրից Հալեպ ուղարկված հեռագրով. «Անդերոում գյուղի բնակիչները իսլամ էին ընդունել, և նրանց թույլատրեցին մնալ: Հաճնում 6 ընտանիք ցանկացավ մահմեդականություն ընդունել: Նրանք պատմում էին. «Հարյուր ընտանիքների կողմից ոչինչ չի ընդունվելու»»: Հեռագիրը՝ որպես փաստաթուղթ, վերցված է Արևելքում քրիստոնեական բարեգործական աշխատանքի խթանման Գերմանական լիգայի օրգանի՝ Sonnenaufgang-ի՝ 1915թ. հոկտեմբերի համարից: Այն տեղ է գտել Ջեյմս Բրայսի և Առնոլդ Թոյնբիի՝ «Կապույտ գիրք» անունով փաստաթղթերի ժողովածուի մեջ[5]:

Ռ. Լեմկինն իր ձեռագրում ներկայացնում է նաև դեպքեր հայ կանանց՝ թուրքական հարեմներ տեղափոխման, թուրքերի և քրդերի միջև հայ երեխաների բաժանման և բռնի կրոնափոխության մասին. «Տասնյակ հազարավոր կանայք և աղջիկներ, ովքեր տարվել էին թուրքական հարեմներ, և երեխաների խմբեր, որոնք հավաքվել էին կառավարության կողմից և բաժանվել թուրքերի և քրդերի միջև, հեռացվեցին քրիստոնեական եկեղեցիներից և ստիպված էին իսլամ ընդունել»[6]: Ռ. Լեմկինն իր ձեռագրի այս հատվածը վերցրել է «Գերմանիան, Թուրքիան և Հայաստանը» անունը կրող գերմանական և այլ աղբյուրների փաստաթղթային ապացույցների ընտրանուց[7]:

Ապա Լեմկինը վերոգրյալի վերաբերյալ շարադրում է իր միտքը. «Հազարավոր հայեր հրաժարվեցին մահմեդականություն ընդունելուց և քրիստոնեական հավատքը մերժելու փոխարեն, որը դարերով ընկած էր նրանց ցեղի հիմքերում, հաստատակամորեն կանգնեցին թշվառության, զրկանքների ու տանջանքների առաջ: Շատերը, այնուամենայնիվ, զգացին, որ չզոհաբերվելը շատ լավ է, եթե իրենք կարող են փրկել իրենց սիրելիներին»[8]:

Լեմկինի այս միտքը վկայում է այն մասին, որ նա հանգամանորեն ուսումնասիրել է փաստաթղթերը և վկայությունները: Նա բերում է նաև «Նյու Յորք» ամսագրի 1915թ. օգոստոսի 28-ի համարից որոշակի փաստական տվյալներ. «200 հայկական ընտանիք Օրդուից սպառնալիքների և բռնությունների ճնշման տակ իսլամ ընդունեց: Կերասունի 400 ընտանիքից 200-ը իսլամ ընդունեց՝ հետապնդումներից խուսափելու համար, մնացածներն արտաքսվեցին»[9]: (Ամենայն հավանականությամբ

---

5 Bryce James and Toynbee Arnold, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916*, uncensored edition with an Introduction by Ara Sarafian, Princeton: Gomidas Institute, 2000, p. 67.

6 *Raphael Lemkin Collection*, Box 8 folder 15, Short manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 1. http://digital.cjh.org/webclient/DeliveryCopyrights.jsp.

7 *Germany, Turkey and Armenia: A Selection of Documentary Evidence*, London: J.J Keliher and Co., 1917, p. 102-103.

8 Guide to the Raphael Lemkin (1900-1959) Collection, Box 8 folder 15, Turkish Massacre of Armenians - Short Manuscript, p. 1. (http://digital.cjh.org/webclient/DeliveryCopyrights.jsp).

9 New York Journal, "Gothchnag" August 28, 1915.

այս տվյալները բերելիս Լեմկինն օգտվել է նաև «Կապույտ գրքից»)[10]: Ապա Լեմկինը փորձում է ամփոփել. «Դա թուրքերի կողմից երեխաներին և երիտասարդ հայ աղջիկներին դեպի մահմեդականություն հավատափոխ անելու հիմնական քաղաքականությունն էր: Երեխաներին հաճախակի խլում էին իրենց ծնողներից և տալիս էին մահմեդականներին՝ իսլամիզմով դաստիարակելու համար»[11]: Պետք է նշել, որ Ռ. Լեմկինի մեջբերած այս հատվածն իր արտացոլումն է գտել Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի 5-րդ կետում, որտեղ ցեղասպանական գործողությունների շարքում նշվում է երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին[12]:

Մեջբերելով ևս մի քանի վկայություն «Կապույտ գրքից», որոնք վերաբերում են երեխաների բռնի հավաքին, կրոնափոխությանը և բռնագաղթին, Լեմկինը հանգում է հետևյալ եզրակացությանը. «Հազարավոր հայեր անկասկած կրոնափոխ եղան՝ պահպանելու համար իրենց և իրենց սիրելիների կյանքը, բայց այդ հետապնդվող ազգի կրոնական հավատքը բացառիկ ուժեղ էր»[13]:

Չեռագրի հաջորդ դրվագում Լեմկինը Մեյբլ Է. Էլիոթի «Beginning Again at Ararat» գրքից մեջբերում է Մարաշի ամերիկյան հիվանդանոցի վիրաբույժ դոկտոր Արթինի՝ 1920թ. ասած խոսքերը, որոնք, ըստ երևույթին, մեծ տպավորություն էին թողել իր վրա. «Հայկական տերությունը բաժանվեց Պարսկաստանի և Հռոմի միջև, և մենք (հայերը) հպատակ ժողովուրդ ենք դրանից ի վեր: Մենք կարող էինք անհետանալ երկրի վրայից հազար տարի առաջ, բայց դա տեղի չի ունեցել մեր եկեղեցու շնորհիվ: Այդ պատճառով էլ ես պատկանում եմ լուսավորչական եկեղեցուն: Բայց եկեղեցին Հայաստան է, Հայաստանը՝ եկեղեցի… Որպես հայեր՝ մեր պարտքն է հետևել մեր եկեղեցուն, նրան տալ ամեն ինչ, որ մենք գիտենք ժամանակակից գիտելիքներից, պահել այն կենդանի և աճող, որպես մեր ազգի սիրտը»[14]:

Ապա Լեմկինը շարադրում է նաև հայերի կողմից սեփական եկեղեցուն հավատարիմ մնալու՝ բժիշկ Արթինի խոսքի վերաբերյալ իր տեսակետը. «Հայերից շատերը գիտակցաբար տեղյակ չէին դրանից, բայց բնազդորեն զգում էին, որ Աստծուց հրաժարվելը ոչ միայն սեփական հոգիների նկատմամբ դավաճանություն կարող է լինել, այլև նրանց սեփական ազգի, քանի որ նրանց հավատքը եկեղեցու նկատմամբ միասնական է պահել հայերին՝ որպես ժողովուրդ, տարբեր ազգերի հետ ապրելու 15 հարյուրամյակների ընթացքում: Հայոց եկեղեցին պետականության այն մնացուկն է, որը շարունակում է գոյություն ունենալ»[15]:

---

[10] Bryce James and Toynbee Arnold, *նշվ. աշխ.*, p. 322:

[11] *Raphael Lemkin Collection*, Box 8 folder 15, Short manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 2. (http://digital.cjh.org/webclient/DeliveryCopyrights.jsp).

[12] *Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու մասին կոնվենցիա*, 1948 թ. դեկտեմբերի 9 http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf.

[13] Նույն տեղում:

[14] Elliott Mabel Evelyn, *Beginning Again at Ararat*, New York: Fleming H. Revell, 1924, p. 67, 68.

[15] *Raphael Lemkin Collection*, Box 8 folder 15, Short manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 3. (http://digital.cjh.org/webclient/DeliveryCopyrights.jsp).

Ռաֆայել Լեմկինի այս տեսակետը վկայում է այն մասին, որ նա ուսումնասիրել է հայոց պատմությունը: Թերևս դրանով է պայմանավորված, որ նա հայոց եկեղեցին համարում է պետականության յուրահատուկ բաղադրիչ հայերի՝ պետություն չունենալու պարագայում, ինչն էլ ենթագիտակցաբար առաջ է բերել հայերի անսահման նվիրվածությունը սեփական հավատին:

Ձեռագրում մեջբերվում է նաև մեկ այլ հատված դոկտոր Էլիոթի գրքից, երբ մի հայ աղջիկ պատմում է բժիշկ Էլիոթին, թե ինչպես է մահմեդականություն ընդունել՝ գաղտնի շարունակելով մնալ քրիստոնյա, և թե ինչ ազդեցություն են ունեցել իր վրա աքսորավայրից մոր փոխանցած վերջին խոսքերը. «Իմ մայրը ինձ ուղարկել էր այս խոսքը. «Չժխտել Քրիստոսին: Եթե դու ժխտես նրան, ես կժխտեմ քեզ»: Միայն այդ խոսքն ունեցա իմ մայրիկից: Այսպես, ես չէի կարող ասել մահմեդական բառեր, չնայած ես փորձեցի»[16]:

Ձեռագրում «Կապույտ գրքից» ներկայացվում են նաև փաստեր, թե ինչ քայլերի էին ընդունակ դիմելու հատկապես հայ կանայք հանուն սեփական հավատի. «Սրբուհուն և Սանդուխտին՝ երկու երիտասարդ կանանց Քեթչուրդից, առաջնորդում էին դեպի թուրքերի հարեմ, և իրենք իրենց գցեցին Հալիս գետը և խեղդվեցին՝ մանուկները ձեռքներին: Սրբուհուն առաջարկել էին, որ ինքը փրկի իրեն՝ իսլամ ընդունելով և ամուսնանալով թուրքի հետ: Սրբուհին առարկել էր… Նա 17 այլ հայ աղջիկների հետ, ովքեր սպանվեցին Չալամի Բելգորգեում, հրաժարվեց հավատափոխ լինելուց»[17]:

Իր համառոտ ձեռագիրը Լեմկինն ավարտում է հայերի դիմադրական պայքարի վերաբերյալ փաստերով. «Դուզասարի, Գավրայի, Խորասանի, Խանձոտի և այլ վայրերի հայերը, որոնք բոլորը տեղավորվել էին Սվազի նահանգում, երբ համոզվեցին, որ պասիվ դիմադրության գործելակերպը, որ նրանք ընդունել էին, ամեն դեպքում պիտանի չէ. նրանք զենք վերցրին և աջակցեցին Գուրինի, Գեմերեկի, Դիվրինգի իրենց հայրենակիցներին…

Շապին-Գարահիսարի և Ամասիայի հայերը, վրդովված թուրքերի վայրագություններից, դիմեցին ճնշամիջոցների: Նրանք այրեցին մահմեդական թաղամասը և համապատասխան քաղաքների կառավարական շենքերը ու ժամանակավորապես դուրս քշեցին թուրքերին: Ավելի ուշ, այնուամենայնիվ, նրանք ճնշվեցին թուրքական զորքերի կողմից և զոհվեցին տևական պայքարի ընթացքում»[18]:

Ապա ձեռագրի վերջում Ռ. Լեմկինն արտահայտում է հետևյալ միտքը. «Հայերի հերոսական գործողությունների անհամար պատմություններ կան, և սարսափելի աղետին դեմ առ դեմ նրանց ցուցաբերած տոկունությունն արժանի է հիացմունքի»[19]:

---

16 Elliott Mabel Evelyn, *նշվ. աշխ.*, էջ 33, 34:

17 Bryce James and Toynbee Arnold, *նշվ. աշխ.,* էջ 347:

18 Նույն տեղում:

19 *Raphael Lemkin Collection,* Box 8 folder 15, Short manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 6. (http://digital.cjh.org/webclient/DeliveryCopyrights.jsp).

Եզրակացություններ

- Ձեռագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս նշել, որ Ռաֆայել Լեմկինը ոչ միայն հետաքրքրվել է Հայոց ցեղասպանության փաստով, այլև զբաղվել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստերի ուսումնասիրությամբ և վերլուծությամբ:
- Ռաֆայել Լեմկինը, իր համառոտ ձեռագրում օգտագործելով մի շարք վկայություններ և փաստեր Հայոց ցեղասպանության մասին, հատուկ ուշադրություն է դարձրել Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացվող աննախադեպ վայրագություններին և կրոնափոխության քաղաքականությանը, որոնք իրենց հերթին ցեղասպանական գործողություններ են, չնայած այն հանգամանքին, որ Լեմկինը «Ցեղասպանություն» բառը չի օգտագործել իր համառոտ ձեռագրում:
- Ձեռագրում Լեմկինը հայերի՝ հանուն հավատի պայքարը պայմանավորում է հայոց եկեղեցու՝ հայ ժողովրդի կյանքում ունեցած պատմական դերակատարությամբ:

ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՌՈՏ ՁԵՌԱԳԻՐԸ»

Նարեկ Պողոսյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության է առնվում Ռաֆայել Լեմկինի «Հայկական կոտորածների վերաբերյալ համառոտ ձեռագիրը»: Հետազոտության մեջ ներկայացվում է, որ, օգտագործելով Հայոց ցեղասպանության վերաբերյալ մի շարք աղբյուրներ, դրանց հիման վրա Ռաֆայել Լեմկինը մի շարք փաստեր և վկայություններ է բերել Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացվող բռնի կրոնափոխության և մյուս ցեղասպանական գործողությունների վերաբերյալ, ապա վերլուծություններ կատարել՝ ըստ արժանվույն գնահատելով հայերի դիմադրական պայքարը:

Բանալի բառեր՝ Ռաֆայել Լեմկին, ձեռագիր, հայկական կոտորածներ, ցեղասպանություն, կրոնափոխություն, հայոց եկեղեցի, դիմադրական պայքար, ականատեսների վկայություններ:

RAPHAEL LEMKIN'S "SHORT MANUSCRIPT ON THE TURKISH MASSACRE OF ARMENIANS"

Narek Poghosyan

SUMMARY

The article is considering Raphael Lemkin's "Short Manuscript on the Turkish Massacre of Armenians". The study is presented to the Armenian Genocide on a number of

sources, Raphael Lemkin based on a set of facts and evidence carried out by the Ottoman Empire against the Armenians forcibly converting to Islam and other genocidal acts, then perform analyzes appreciating the Armenians struggle of resistance.

Keywords: Raphael Lemkin, manuscript, massacres of the Armenians, genocide, apostasy, Armenian church, resistance struggle, eyewitness testimonies.

«КРАТКАЯ РУКОПИСЬ О РЕЗНЕ АРМЯН» РАФАЭЛЯ ЛЕМКИНА

Нарек Погосян

РЕЗЮМЕ

В статье рассматривается «Краткая рукопись о резне армян» Рафаэля Лемкина. Исследование Рафаэля Лемкина на основе множестве фактов и доказательств из ряда источников представляет проводимые в Османской империи политику насильственной исламизации и другие антиармянские действий, а также анализирует их, одновременно давая оценку сопротивлению армян.

Ключевые слова: Рафаэль Лемкин, рукопись, резня армян, геноцид, вероотступничество, армянская церковь, борьба с сопротивлением, свидетельства очевидцев.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկ Դեմոյան, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի քարտուղար: Տասներեք մենագրությունների և բազմաթիվ հոդվածների հեղինակ է: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության պատմություն, Ղարաբաղյան հիմնահարց, Թուրքիայի քաղաքականությունը հետխորհրդային տարածքում:

Վիկտոր Նադեին–Ռևսկի, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող: Սևծովյա-Կասպից տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտի առաջատար գիտաշխատող: Թուրքիայի պատմության և պանթուրքիզմի վերաբերյալ բազմաթիվ գիտական հրապարակումների հեղինակ:

Արսեն Ավագյան, Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: ՀՀ ԱԳՆ Սահմանակից երկրների վարչության պետ, ԵՊՀ դասախոս: Հինգ մենագրությունների և բազմաթիվ հոդվածների հեղինակ է: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայաստանի, Թուրքիայի և Ռուսաստանի պատմություն:

Գոհար Խանումյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ֆոնդերի պատասխանատու: Ուսումնասիրության թեման է «Որբահավաք աշխատանքներն Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության տարիներին»:

Մելինե Անումյան, պատմական գիտությունների թեկնածու, Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն գիտահետազոտական հիմնադրամի թուրքերեն բաժնի պատասխանատու: Զբաղվում է Հայոց ցեղասպանության և արևմտահայության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

Սուրեն Մանուկյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն: 2012-2013 թթ. Ֆուլբրայթ հետազոտական ծրագրի կրթաթոշակառու: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության սոցիալ-հոգեբանական ասպեկտը և համեմատական ցեղասպանագիտություն:

Ռուբինա Փիրումեան (Մինասեան), PhD, գիտաշխատող՝ (Research Associate) Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի /UCLA/ համալսարանում: Վեց մենագրությունների հեղինակ է: Հետազոտության թեմաները՝ Հայ Դատ, հայոց պատմություն, Հայոց

ցեղասպանություն, հայ գրականություն և հայ կանանց վերաբերող հարցեր, Հայոց ցեղասպանության դասավանդման խնդիրներ:

Հարություն Մարության, Պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող: Երեք մենագրությունների հեղինակ: Հետազոտական հետաքրքրությունները՝ կոլեկտիվ և պատմական հիշողություն, ցեղասպանության հիշողություն և ազգային ինքնություն, պատկերագրություն, ժամանակակից ազգային շարժումներ և ազգային ինքնություն և այլն:

Թալին Փափազյան, քաղաքագիտության դոկտոր, Փարիզի Քաղաքական հետազոտությունների ինստիտուտի (Sciences Po) դասախոս: Գիտական հետազոտությունների ոլորտները՝ ռազմական բռնության և քաղաքական սուվերենության փոխկապակցվածության հարցերը, հատկապես Հարավային Կովկասում և Հայաստանում:

Վերժինե Սվազլյան, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության պատմության և տեսության բաժնի առաջատար գիտաշխատող: Ավելի քան 55 տարիների ընթացքում գրառել, ձայնագրել, տեսագրել և ուսումնասիրել է արևմտահայոց բանավոր մշակույթն ու Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների վկայությունները: Հրատարակել է 24 գիրք:

Ժոսելին Քաբո, PhD, Կանադայի Մոնքթոնի համալսարանի Նորագույն պատմության դասախոս: Ներկա հետազոտությունը վերաբերում է Առաջին աշխարհամարտի մշակութային և սոցիալական պատմությանը, հատուկ ուշադրության է արժանացրել Հայոց ցեղասպանության և Գերմանիայի կողմից իրականացրած կոտորածների լուսաբանմանը ֆրանկոֆոն մամուլում Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ:

Ռիչարդ Գոդին, PhD, Կանադայի Քվեբեքի Լավալ համալսարանի սոցիոլոգիայի և քաղաքական հաղորդակցման դասախոս: Ուսումնասիրում է մեդիայի ժամանակակից ֆենոմենը, ինչպես նաև զբաղվում է հասարակական իրադարձությունների նարրատիվ և կառուցվածքային վերլուծությամբ, մասնավորապես Կանադայի ֆրանսիական թերթերում Հայոց ցեղասպանության արձագանքով:

Սիլվա Գասպարյան, PhD, Կանադայի Մոնքթոն համալսարանի լեզվաբանության պրոֆեսոր և տեքստային վերլուծության լաբորատորիայի տնօրեն: Ուսումնասիրում է մամուլում փոքրամասնության ներկայացման, ինչպես նաև ֆրանսալեզու կանադական մամուլում Հայոց ցեղասպանության հիշողության, անվանման և որակման հարցերը:

Վալերի Թունյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Աշխատությունները վերաբերում են Ռուսաստանի քաղաքականությանը Հայաստանում և Հայկական հարցին, Հայ եկեղեցու քաղաքական պատմությանը:

Դոմինիկա Մարիա Մացիոս, Լեհաստանի Վարշավայի Վիշինսկիյ համալսարանի ասպիրանտ: Նրա թեկնածուականի թեման է Հայոց ցեղասպանությունը լեհական պատմական աղբյուրների լույսի ներքո և նրա պատկերագրությունը 1895-1939 թթ.:

Սյուզան Ռոզիտա Մերյեմ Կալայջի, Իտալիայի Եվրոպական համալսարանի ասպիրանտ: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի 2014 թ. Լեմկինի կրթաթոշակառու: Ուսումնասիրում է Հայոց ցեղասպանության ժխտողականության սկիզբը Թուրքիայի պատմության մեջ:

Խորեն Գրիգորյան Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտի հայցորդ:

Քնարիկ Ավագյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող: Զբաղվում է Հայկական Սփյուռքի, մասնավորապես ամերիկահայ էթնիկ և համայնքային ուսումնասիրություններով:

Ռոբերտ Թաթոյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Հայոց ցեղասպանության զոհերի փաստագրման և տվյալների հավաքագրման բաժնի վարիչ: Զբաղվում է արևմտահայության ժողովրդագրական հարցերի ուսումնասիրությամբ:

Բենեդետա Գվերցոնի, PhD, անկախ հետազոտող: Հետազոտական հետաքրքրություններն են՝ պատերազմի մշակութաբանությունը և մեդիայի ու պատմական իրադարձությունների միջև փոխհարաբերությունները, հատուկ ուշադրություն է հատկացնում XX դարի պատերազմներում քաղաքացիական անձանց նկատմամբ բռնությունների պատկերագրությանը՝ իբրև քաղաքական հաղորդակցության գործիք:

Նարեկ Պողոսյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ: Գիտական հետազոտության թեման է Հայոց ցեղասպանության հիմնախնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի գիտական ժառանգության մեջ:

ABOUT AUTHORS

Hayk Demoyan, Doctor of Sciences, director of the Armenian Genocide Museum-Institute, Secretary of the State Commission on Coordination of the Events for the Commemoration of the 100th Anniversary of the Armenian Genocide. He is an author of 13 monographs and a vast number of articles. His main areas of interest are the Armenian Genocide studies, Karabakh conflict, policy of Turkey in the Post-Soviet area.

Victor Nadein-Raevski, PhD in Philosophy, Senior Research Fellow at the Institute of World Economy and International Relations of RAS, Leading Researcher at Institute for political and social studies of Black and Caspian Sea region. He is an author of many publications on History of Turkey and Panturkism.

Arsen Avagyan, Doctor of Sciences, professor, head of Neighboring Countries Department at the RA Ministry of Foreign Affairs, Lecturer at Yerevan State University. He is an author of 5 books and a number of publications. He researches the history of Armenia, Turkey and Russia.

Gohar Khanumyan, Head of the Collections Department at the Armenian Genocide Museum-Institute. Her research relates to the Orphan collecting activities in the Ottoman Empire during the Armenian Genocide.

Meline Anumyan, PhD in History, Head of the Turkish Department at the Western Armenian's Research Center, Foundation. Her research relates to the Armenian Genocide and Western Armenians' affairs.

Suren Manukyan, PhD, Deputy Director at the Armenian Genocide Museum-Institute, Fulbright Visiting Scholar (2012-2013). His research interests include social-psychology of the Armenian Genocide and comparative genocide studies.

Rubina Peroomian (Minasian), PhD, Research Associate at the University of California, Los Angeles. She has authored 6 books. Her publications include issues on Hay Dat, History of Armenia, Armenian Genocide, Armenian literature and gender issues, Genocide education.

Harutyun Marutyan, Doctor of historical sciences, leading researcher at the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. He has authored 3 monographs. His research focuses on the collective and historical memory, genocide memory and national identity, iconography, contemporary national movements and national identity.

Taline Papazian, Lecturer at Sciences Po Paris and Associate Researcher at Institut des Sciences sociales du Politique (ISP). For the last ten years she has been working on the interaction between armed violence and political sovereignty, specializing on the South Caucasus, with a focus on Armenia. Her current research projects deal with historical and political aspects of this interaction regarding experiences of physical violence and political sovereignty among Armenians and Jews in the 19th and 20th centuries.

Verjiné Svazlian, Doctor of Sciences in Philology, leading researcher at the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. She has collected, recorded and studied culture of Western Armenians and the oral testimonies of Armenian Genocide survivors. She has published 24 books.

Joceline Chabot, PhD, Associate Professor on Contemporary History at Université de Moncton. Current research is on the cultural and social history of the First World War, with the focus on the media discourse on the Armenian genocide and German atrocities in the francophone press during the Great War.

Richard Godin, PhD, lecturer of sociology and political communication from l'Université Laval, Québec, Canada. The field research is media studies of contemporary phenomena such as the narrative and structural analysis of public events, particularly the Armenian Genocide in the French Canadian newspapers.

Sylvia Kasparian, PhD, Tenured Professor of Linguistics and Director of the Textual Data Analysis Laboratory at Université de Moncton, Canada. She is particularly interested in the representations conveyed by the media, on minority groups, but most of all in representations linked to the memory, denomination and qualification of the Armenian Genocide in the French-Canadian press.

Valery Tunyan, Doctor of Historical Sciences, professor. His research focuses on the Russian politics in Armenia and Armenian issue, political history of the Armenian Church.

Dominika Maria Macios, Ph.D. student at Cardinal Stefan Wyszyński University in Warsaw (Poland). Her thesis is titled "Armenian Genocide in Light of Polish Historical Sources and its Iconography, 1895-1939'.

Suzan Meryem Rosita Kalayci, Ph.D. student at the European University Institute (Italy) and Raphael Lemkin Fellow 2014 at the Armenian Genocide Museum-Institute. She studies the specific historical trajectories and the origin of the Armenian Genocide denial in the Turkish national history.

Péter Pál Kránitz, PhD student at Pázmány Péter Catholic University in Budapest, Hungary. His dissertation is on the history of the Armenian refugees in East and East-Central Europe between the two World Wars.

Khoren Grigoryan, researcher at Sardarapat Ethnography and Liberation Movement History Museum, PhD student at the Institute of Archaeology and Ethnography of NAS RA.

Knarik Avakian, PhD, Senior Research Fellow at the Institute of History of NAS RA. Her research interests focus on the Armenian Diaspora, particularly ethnic and community affairs in US-Armenian Diaspora relations.

Robert Tatoyan, PhD, Head of Department of the Study of Casualties and Materials Loses during the Armenian Genocide at the Armenian Genocide Museum-Institute. His research deals with demographic issues of Western Armenian population.

Benedetta Guerzoni, PhD, an independent scholar. Her research and studies are related to the cultural history of war and the relationship between media and historical events, with particular attention to the images of violence on civilians in the XX century wars, as instruments of political communication.

Narek Poghosyan, PhD student at the Armenian Genocide Museum-Institute. His dissertation relates to the Armenian Genocide in the scientific heritage of Raphael Lemkin.

ОБ АВТОРАХ

Гайк Демоян, доктор исторических наук, директор Музея-института Геноцида армян НАН Армении, секретарь государственной комиссии, координировавший мероприятия, приуроченные к 100-летней годовщине Геноцида армян. Автор тринадцати монографий и многочисленных статей. Сфера исследований: история Геноцида армян, Карабахская проблема, политика Турции на постсоветском пространстве.

Виктор Надеин-Раевский, кандидат философских наук, старший научный сотрудник Института мировой экономики и международных отношений Российской Академии Наук, ведущий научный сотрудник Института политических и социальных исследований Черноморско-Каспийского региона. Автор многочисленных научных публикаций по истории Турции и пантюркизму.

Арсен Авагян, доктор исторических наук, профессор. Начальник департамента сопредельных стран МИД Армении. Преподаватель Ереванского государственного университета. Автор пяти монографий и многочисленных статей. Сфера исследований: история Армении, Турции и России нового времени.

Гоар Ханумян, заведующий фондами Музея-института Геноцида армян. Сфера исследований: помощь армянским сиротам в годы Геноцида армян.

Мелине Анумян, кандидат исторических наук, ответственный турецкого отдела научно-исследовательского фонда исследовательского центра по вопросам западных армян. Занимается изучением проблем Геноцида армян и вопросами западных армян.

Сурен Манукян, кандидат исторических наук, заместитель директора Музея-института Геноцида армян НАН Армении. Стипендиат программы Фулбрайта 2012-2013 гг. Сфера исследований социально-психологические аспекты Геноцида армян и сравнительная геноцидология.

Рубина Пирумян (Минасян), PhD, научный сотрудник Калифорнийского университета в Лос-Анджелесе (UCLA). Автор шести монографий. Темы исследований: Армянский вопрос, Геноцид армян, вопросы армянской литературы, гендерные проблемы, преподавание темы Геноцида армян.

Арутюн Марутян, доктор исторических наук, ведущий научный сотрудник Института археологии и этнографии НАН Армении. Автор трех монографий.

Научные интересы: коллективная и историческая память, память о геноциде, национальная идентичность, современные национальные движения и т.д.

Талин Папазян, доктор политологии, преподаватель Парижского института политических исследований (Sciences Po), автор научных публикаций. Сфера научных исследований: вопросы взаимосвязи политического суверенитета и военного насилия, в частности на Южном Кавказе и в Армении.

Вержине Свазлян, доктор филологических наук, ведущий научный сотрудник Отдела фольклористики Института археологии и этнографии НАН Армении. Более 55 лет занимается записью и изучением устного творчества западных армян и свидетельств выживших очевидцев Геноцида армян. Автор 24 книг.

Жоселин Кабо, PhD в области социальной истории, преподаватель новейшей истории в Монктонском университете (Канада). Сфера исследований: социальная и культурная история Первой мировой войны, в частности, освещение темы Геноцида армян и репрессивных действий Германии в франкоязычной прессе того времени.

Ричард Годин, PhD в области социологии СМИ, преподаватель социологии и политической коммуникации в Университете Лаваля (Квебек, Канада). Сферы исследований: современные медийные феномены, нарративный и структурный анализ общественных явлений, в частности, темы Геноцида армян в франкоязычной прессе Канады.

Сильвия Гаспарян, PhD в области языкознания, профессор языкознания и директор лаборатории текстового анализа Монктонского университета (Канада). Изучает вопросы освещения меньшинств в прессе, а также отображение темы Геноцида армян в канадской прессе.

Валерий Тунян, доктор исторических наук, профессор. Исследования относятся к политике России в отношении Армении и Армянского вопроса, политической истории Армянской церкви.

Доминика Мария Мациос, аспирант Варшавского университета кардинала Стефана Вышинского (Польша). Темой работы на соискание ученой степени является Геноцид армян в свете польских источников и иконография темы в польской прессе 1895-1939 гг.

Сьюзан Мерием Розита Калайджи, аспирант Европейского университета Италии. Стипендиат стипендии имени Рафаэля Лемкина Музея-института Геноцида

армян НАН Армении. Изучает истоки отрицания Геноцида армян в турецкой исторической действительности.

Хорен Григорян, аспирант Института археологии и этнографии НАН Армении, научный сотрудник Национального Музея этнографии армян и истории освободительной борьбы, автор научных публикаций.

Кнарик Авагян, кандидат исторических наук, старший научный сотрудник Института истории НАН Армении. Занимается исследованиями армянской диаспоры, в частности армянской общины США.

Роберт Татоян, кандидат исторических наук, заведующий отделом по сбору данных о жертвах Геноцида армян Музея-института Геноцида армян НАН Армении. Занимается вопросами демографии западных армян.

Бенедетта Гверцони, PhD, независимый исследователь. Сфера научных интересов: культурология войны, взаимосвязь средств массовой информации и исторических событий, отображение в прессе насилий в отношении гражданского населения в войнах XX века, как инструмента политической коммуникации.

Нарек Погосян, аспирант Музея-института Геноцида армян НАН Армении. Сфера исследований: Геноцид армян в научном наследии Рафаэля Лемкина.

Հրատ. խմբագիր՝ Ազատուհի Սահակյան:

Համակարգչային էջադրումը՝ «Կոլլաժ» ՍՊԸ:

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 19 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 200:

Տպագրվել է «Կոլլաժ» տպագրատանը
Երևան, Սարյան 4 • Հեռ.՝ (+374 10) 52 02 17
Էլ. փոստ՝ collageltd@gmail.com • Էլ. կայք՝ www.collage.am